



ՅՅԼԵՅՏԵՐ
Բնագրի



Այսպիսի տարերը դուրս է գալիս ժամանակի կողմնակիցներին, նի-թեղին ցորածո-թեան աւանանշափ կա- պանկներին է- կը տանան մշտաբարձու լեզու- իտալ, պարզամ, յո-շ, ներշնչում է- Հոգեհաւաքային-մ գէղի աղագայ, գեղի նոր Հորիզոններ Հոգեհաւաք նաւահաւաններ-:

ԳԱՐԵԳՐԻ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փափաք է, որ Բոյոր լիբանանցիները, ինչպէս նաեւ- Լիբանան- նին անցնող օրարները այցելին այս Թանգարանը է- Մարեմարանը, զի այն- Համար Հայ Ժողովուրդին Բերած նպաստին՝ Լիբանանի մշակութային է- Հոգե-որ ճաւագային-մին թէ արաբական աշխարհին է- Բէ Համայն աշխարհին մէջ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

...Եւ աւանանշի, այսօր, այս Թանգարանին միջոցա- դու-ի կը Հաստատուի- որ Ժողովուրդներուն պարմո-թի-նը կէանքի է- արժանապարտ-թեան յաղթանակին պարմո-թի-նն է:


ԻԼԻԱՍ ՀՐԱՈՒԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— * * *	Բանաստեղծ հիւրը
2.— Գ. ԷՄԻՆ	Զյազեցած վրէժ
3.— » »	Վերջերգ
5.— Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Արժանի չեմ
32.— Կ. ՀԵՔԻՄԵԱՆ	Բառերուն
33.— » »	Հայերէնին
34.— Հ. ՏԱՆՔԵՐ	Կարմիր թելը
51.— Յ. ՊԱԼԵԱՆ	Բանաստեղծ կը թաղենք
52.— » »	Իմք եւ ես
53.— » »	Զննողիկ
54.— Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Ցիրուցան էջեր
71.— * * *	Յամենայնի պատկառելի...
72.— Գ. Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Խօսք՝ թանգարանի մասին
75.— Ա. Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Խօսք՝ թանգարանի մասին
78.— Ի. ՀՐԱՌԻ	Խօսք՝ թանգարանի մասին
81.— Յ. Ա.—Մ. Լ.	Տեսակցութիւն՝ բեմադիր Արրի Յովհաննիսեանի հետ
96.— ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	Սաիտ Աֆլի հետ
105.— Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ	Անյայտ վկայութիւն մը Կոստան Զարեանի մասին
107.— ՃԵՐԸԼՏ ՏԸՌԷԼ	Ընտանիքս Եւ ուրիշ կենդանիներ
113.— Ա. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Ն. Սարափեան բանաստեղծը
120.— Պ. ՄՆԱՊԵԱՆ	«Ես իմ ամուշ»ի ողիսականը
128.— Լ. ՇԱՌՈՅԵԱՆ	Գիրքերու մտերմութեան մէջ
134.— * * *	Լոյս տեսան
141.— * * *	Նշմարներ
157.— * * *	Մշակութային լուրեր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԵ՛ ՏԱՐԻ

ԹԻՒ 2

ԳԱՐՈՒՆ 1998

ՊԵՅՐՈՒԹ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀԻՒՐԸ

Քաղաքիս «Դիտակ» ամսագիրին հրաւերով հայրենի բանաստեղծ Գեորգ Էմին եկաւ Լիբանան եւ շուրջ երկու ամիս մնաց մեր մէջ, այցելելով մշակութային ու կրթական մեր հաստատութիւնները ու ընդունելով այցելութիւնը մտաւորական ու հանրային դէմքերու, բարեկամական մթնոլորտի մէջ ու միշտ սիրալիր:

Այդ առիթով, ի յարգանս իրեն, հանդիսութիւններ տեղի ունեցան եւ գեկուցական ու գրուցական հանդիպումներ Պէյրութի տարբեր թաղամասերուն թէ շրջաններուն մէջ, առանցքային ճիւղ ունենալով իր վաստակը եւ գրականութիւնը ընդհանրապէս:

Ընունցաւ քանիցս ու թող կրկնութիւն ըլլայ, երբ ընդգծենք, որ Գեորգ Էմինի մարդկային թէ գրական կազմաւորումը զուգադիպեցաւ ոչ-ձեռնասու ժամանակաշրջանի մը, «Ստալինեան մոպլին», երբ տարեց թէ գրականութեան նորընձիւդ սպասարկումներուն վիճակուեցաւ սահմանակցուցիչ լուծ մը, ըսել տալով ու գրել տալով իրենց ապրումներուն ու մտածումներուն բոլորովին ներհակ բաներ, էսպէս խորք, խորքով ու ձեռով ժամանակավրէպ, քե՛ն՝ իրենց անունին:

Գեորգ Էմին, իրեն ներնդակից միւս օժտուածներուն պէս, արւեստին ծառայական դերեր սահմանած մոյմ կարգերուն հետեւանքով «գուր կորցրած» անգին ժամեր չունեցաւ միայն, այլ ստեղծագործական իր թարմ տարիները գրեթէ ամբողջութեամբ եւ լիութեան մէջ գտնուած շրջանին կարեւոր մէկ տոկոսը շղակեզ ըրաւ մոյմ մոդաֆին, հակառակ ատոր, սակայն, տաղանդի կայծով աշխարհ եկած ճանի մը սակաւ ընտրուեալներու պէս, կրցաւ այդ անմաստ մթնոլորտին դուրս քերել քերթուածներու այնպիսի փունջ մը, որ ընթերցողին մօտ վայելած համարումին գնով պիտի դիմանայ ժամանակի գլաններուն:

Գեորգ Էմին եղաւ նաեւ Սուրիոյ հայաշատ քաղաքներուն մէջ, աւելի մօտէն ճանչցաւ իր ժողովուրդը եւ աւելի մօտէն ճանչցուեցաւ ժողովուրդէն:

Ստորեւ՝ իրմէ քանի մը բանաստեղծութիւն:

Գ. ԷՄԻՆ

ՉՅԱԳԵՑԱԾ ՎՐԷԺ

Ես համբուրում եմ
 Քո վրիժառու ձեռքն, իմ ժողովուրդ...
 Քոնը՝ Թեհիրեան,
 Քոնը՝ Շիրակեան,
 Քոնը՝ Երկանեան-
 Վրէժներ՝ մարդու կերպարանք առած...

Եւ խոնարհում եմ,
 Ձեր,-
 Անհնարին հնարից ծնուած
 Քաջութեան առաջ...

Ես համբուրում եմ
 Դահլիճների տա՛ք արիւնով օծուած
 Ձեր ձեռքերը ալ,
 Բայց եւ... մորմոքում,
 Ողբում ու լալի՛ս
 Հայ բանաստեղծի արցունքով գուլալ...

Ձեր կերած հացն ու մօր կաթը հալալ...
 Բայց... ի՛նչ դեղ անեն անբուժ իմ վէրքին,
 Ինչո՞վ սփռփեն վիրշտն իմ դառնագին
 Մի... թէկուզ սատկած Թալեաթ կամ Ճեմալ...
 Ի՛նչ վրէժ է դա,
 Կամ ի՛նչ հատուցում,
 Տիեզերական այն ոճիրի դէմ
 Եւ այն զոհերի՝ անթիւ, անքանակ,
 Որոնց մի չնչի՛ն եղունգը չարժեն
 Հազար Թալեաթ ու էնվերի դիակ...

Հազար դահլիճ էլ,
 Թէ Խոթնապատիկ պատիժ ստանայ-
 Գէթ մի հայ մանուկ
 Մորթուած մի մանուկ,
 Աչքը կը բանա՞յ...



Թէ փռուի՛ անգամ
Հարիւր հազար լէշ՝
Գորշ գայլի ու շան,
Կը ծնուի՛ կրկին
Եւ աշխարհ կը գա՛յ
Մի նոր... Վարուժան...

ՎԵՐՋԵՐԳ

Ես Ձեզ կանչե՛լ եմ, որ ասե՛մ,
Թէ ո՛ւր ո՛ր է պիտի գնա՛մ.
Վերջին «մնաք բարո՛վն» ասեմ,-
չէ՞- ո՛ւր ո՛ր է պիտի գնա՛մ.
Կանչե՛լ եմ, որ մի՛ անգամ էլ-
վերջի՛ն անգամ-տեսնենք իրար,
Ո՛վ գիտի,- էլ կը հանդիպե՞նք-
ինչո՞ւ ձեզնից կարո՞տ մնամ...
Մի թիզ հող է մեզ մնացել,
փոքրի՛կ մի բուռ՝ ազգից հայոց,
Գոնէ՛ եղա՛ծ-մնացածին
«մնաս բարո՛վ» ասեմ-գնա՛մ...
Ո՛վ-ո՛ւմ-ի՛նչն է՝ Աստուա՛ծ գիտի,-
մի ա՛զգ չենք, այլ մի... ընտանի՛ք,
Ընտանիքիս իղձը չասած,
Ինչպէ՛ս թողնեմ-անդարձ գնա՛մ:
Հրաժե՛շտ տամ իմ սէրերի՛ն,
մօտիկներին իմ հին ու նոր,
Ինձնից առաջ ճամբայ ընկած,
ընկերներիս հասնե՛մ-գնա՛մ.
Հրաժեշտ տամ... ոսոխներին,
նրանց էլ է մե՛ղքս գայիս-
էլ ո՞ւմ միսը պիտի ուտեն,
երբ ես թողնե՛մ, անդարձ-գնա՛մ...
Ով ինձ պա՛րտք է-հալա՛լ լինի,
Թէ բերի՛ էլ՝ ի՛նչ եմ անում,

Ում ես եմ պարտք՝ եկէ՛ք-տարէ՛ք,
 պարտքը վզիս ինչպէ՛ս գնամ...
 Առանց այն էլ, այս աշխարհին
 ու այս հողին այնքա՛ն եմ պարտք,
 Որ, եթէ կեանք էլ թէ ինձ տրուի՝
 միշտ պարտատէ՛ր պիտի մնամ...
 Եթէ տաղանդ էր Տէրն ինձ տուել,
 բայց գրեցի ես լուկ... մէկո՛վ-
 վեցով՝ լաւին լա՛ւ ասացի,
 իսկ վատին՝ վա՛տ, որ մա՛րդ մնամ.
 Եթե՞նապատի՛կ աւելի շատ
 ես ե՛րգ ու փա՛ռք կ'ունենայի,
 Թէ ազնիւ մարդ չլինէի՝-
 ասէի՝ «լուկ պոե՛տ մնամ...»:
 Ինչ թողնե՛մ՝ ինձ ա՛յն է մնում,
 ինչ տանո՛ւմ եմ՝ կորա՛ծ է գուր,
 Տարա՛ծս շատ է թողածից,
 բայց, ի՛նչ արած, պիտի գնա՛մ.
 Մենակ թէ դո՛ւ անփո՛րձ մնաս,
 փորձութեան գո՛հ իմ ժողովուրդ,
 Տէ՛ր լինես քո լեզուին, հողին,
 որ ես հանգի՛ստ սրտով գնամ...
 Եթե՞ր թո՛ռ եմ թողնում ազգիս.-
 ամէն մէկը թէ եթէ դառնայ,
 Ու մայրենի լեզուով խօսի՝-
 մեզ ի՛նչ փորձանք կը դիմանայ.
 Եթե՞ր երգ եմ թողնում երկրիս.-
 թէ իմ կիսատ թողած տողից
 Եթէ հայ գրող շարունակի՝
 մեր հին երգը մի՛շտ կը մնայ...
 Երբ ծնուեցի՛, աշխարհն արար
 ծիծաղո՛ւմ էր, իսկ ես՝ լալի՛ս.
 Այնպէ՛ս գնամ, որ նա սղա՛յ,
 ես ժպտալով թողնեմ-գնա՛մ.
 ...Ես Ձեզ կանչե՛լ եմ, որ ասե՛մ...
 բայց սպասէ՛ք, Աստուա՛ծ սիրէք,
 Մի նոր տո՛ղ է ծնւում կարծես-
 էս էլ գրե՛մ՝ յետո՛յ գնամ...

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Ն. ՉԱՐՈՒՈՒՏԵԱՆ



«Թրիանոն» ծաղարանը մաս կը կազմէ նորակառոյց համալիրի մը, որուն վարի յարկերը ժամանցի վայրեր են: Ծաղարանը կը գտնուի շէնքին ծովահայեաց ճակատին վրայ եւ ունի լայն քեռաս մը, ուր տեղ կ'առնեն անոնք, որ կը սիրեն բացութիւնը եւ փողոցին երթեւեկը:

«Թրիանոն» ծաղարանը կը հանդիսանայ ո՛չ միայն շրջանի, այլեւ ամբողջ քաղաքի կենցաղասէր եւ ունեւոր երիտասարդներուն ժամադրավայրը: Հոն կու գան նաեւ բարեկեցիկ ընտանիքներ՝ ըմբռնելու համար անոր հռչակաւոր պաղպաղակը եւ կարկանդակները:

Լիբանանի աշունը վայելելու համար պէտք է ճամբլ այս ծովեզերեայ պողոտային վրայ, որ յիսուն մեթր բարձրութենէ մը կ'իջի՝ վարը խայտացող ջուրերուն վրայ: Իրիկնամուտին հոս կը գիրկընդխառնուին ծովէն շողիացող գաղջութիւնը եւ լեռներէն թաւալող զովօղը: Հոս տեղի կ'ունենայ երկինքի եւ երկրի ամուսնութիւնը, որմէ կը ծնին ցամաքի արեւոյշները եւ ջուրերու ծովանոյշները: Անդին, երբ արշալոյսը իր ճկուն մատներով կը բանայ գիշերուան վարագոյրը, ծովուն փրփուրներէն ծնունդ կ'առնեն ձիւնաթոյր աստուածուհիներ:

Ծաղարանին ապակեպատ մուտքին հետեւը, երկու մանկամարդուհիներ կը զրուցէին պաղպաղակ ուտելով:

Ատեն-ատեն ակնարկ մը կը նետէին դուրսը, ուր կ'երթեւեկէր անցորդներու խուռներամ բազմութիւն մը: Իսկ պողոտային վրայ, ուր ինքնաշարժներու երթեւեկը տեղալի մէջէր, անհամբեր վարորդներ իրարմէ ճամբայ կը պահանջէին՝ իրենց ճշակները հնչեցնելով:

—Տե՛ս,—ըսաւ յանկարծ մանկամարդուհիներէն մէկը՝ ձեռքը դնելով ընկերուհիին թեւին վրայ,— ահա՛ կրկին ինքն է:

Անցորդը, որուն կ'ակնարկէր մանկամարդուհին, կանգնած էր մէջտեղի մայթին վրայ եւ կը վարանէր կտրելու պողոտային երկրորդ կէսը: Ան բարձրահասակ էր, գլուխը դէպի վար: Այս կեցուածքով ան հաւանաբար կը փորձէր մեղմացնել հասակին բարձրութիւնը: Հագուած էր խնամքով: Թէեւ հագուեստը մաքուր էր ու նեկայանալի, սակայն

ուներ քանի մը տարուան հետեւին: Ասիկա կը նշանակէր երկու բան: Կամ այն է, որ չէր ուզեր կոյր կերպով հետեւիլ նորաձեւութեան քմահաճոյքներուն, եւ կամ ալ ի վիճակի չէր տարին քանի մը ձեռք նոր հագուստ գնելու:

Երկու մանկամարդուհիները ուշի-ուշով կը հետեւէին ան-ծանօթին շարժումներուն: Անոնք շնորհալի էին ու երիտա-սարդ: Մէկը ունէր սեւ մազեր ու սեւ աչքեր: Միւսին մազերը շագանակագոյն էին, եւ աչքերը՝ ծաւի:

—Արդեօք ո՞վ է եւ ի՞նչ կ'ուզէ,— հարցուց շագանակագոյն մազերով մանկամարդուհին:

—Ո՞վ ըլլալը չեմ գիտեր: Թէ ի՞նչ կ'ուզէ, չատ պարզ է: Ի՞նչ կրնան ուզել այլ մարդիկը երիտասարդ աղջիկներէն:

—Ձե՞ս վախնար, որ այս մարդուն վարմունքը քիչ մը տարօրինակ է: Ի՞նչ պէտք ունի մեր շուրջը թափառելու ամէկոտ աշակերտի մը պէս:

Նահապետ քիչ մըն ալ սպասեց, յետոյ՝ խումբ մը անցորդ-ներով կտրեց պողոտան: Ան կանգ առաւ երկաթէ սիւնի մը քով, որուն բարձրագիւր կտուցէն կախուած ցոլակը կը լուսա-ւորէր մայիսին այն մասը, որ կը սկսէր ծաղարանին թեռասէն: Մտքին անորոշութիւնը փարատելու համար՝ փորձեց գլանիկ մը վառել: Բայց օդի յանկարծական հոսանք մը, չարաճճի մանուկի մը պէս, փչեց հրահանին բոցը: Այն ատեն կռնակը դարձուց օդի հոսանքին եւ յաջողեցաւ վառել գլանիկը: Երբ գլուխը վեր կը վերցնէր, աչքերը հանդիպեցան շագանակա-գոյն մազերով աղջկան նայուածքին:

—Իրաւունք ունիս, Արտեմիս,— ըսաւ սեւ մազերով աղջի-կը:— Ան հոս կու գայ մէկը տեսնելու, բայց ինչո՞ւ հապճեպով կ'անցնի ծաղարանին առջեւէն, եթէ իր փնտրած անձը կը գտնուի ներսը:

—Հաւանաբար ան չ'ուզեր յայտնել իր նպատակը կամ պար-զապէս անցորդ մըն է, որուն ճամբան կ'անցնի այս տեղէն,— ըսաւ Արտեմիս:

—Եթէ այդպէս է, չխօսինք իր մասին:

—Ի՞նչ է կարծիքդ, ի՞նչ տպաւորութիւն թողուց վրադ:

—Մօտէն շատ աւելի համակրելի է, քան հեռուէն: Առաջին ակնարկով երեսուննոցի տպաւորութիւն կը ձգէ, որովհետեւ բարձրահասակ է, բայց ըստ ինծի շատ աւելի երիտասարդ է: Արտաքինէն դատելով քիչ մը հին գլուխ կ'երեւի: Ինքնամփոփ ու վիպապաշտ խառնուածք մը ունենալու է: Թետոյ՝ շատ աւելի համակրելի պիտի ըլլար, եթէ դէմքին լրջութիւնը մեղ-մէլ թթեւ ժպիտով մը: Զգո՞յշ եղի՛ր, Արտեմիս, այս տեսակ մարդիկը վտանգաւոր կ'ըլլան:

—Այն ատեն, դո՛ւն ալ պէտք է զգուշանաս:

—Ես զգուշանալու պէտք չունիմ, որովհետեւ ան քեզ կը փնտռէ, քեզի համար կու գայ:

—Եթէ զիս կը փնտռէ եւ չի համարձակիր մօտենալ, ուրեմն զիս լաւ չի ճանչնար: Անոր ո՞վ ըլլալը չեմ գիտեր եւ միտք ալ չունիմ զինք հրապուրելու, շուրջս դարձողները կը բաւեն:

—Այս մէկը շուրջդ դարձողներէն տարբեր է: Վիպագաշտ ու երազող մէկը ըլլալու է: Այսպիսի մարդիկը միայն գիտեն սիրել եւ երբ սիրեն, կը դառնան վտանգաւոր:

—Սիրե՛լ, սիրե՛լ՝ բառեր, որոնք այսօր ո՛չ մէկ նշանակութիւն ունին: Մեր օրերուն, սէրը դարձած է առասպելական թռչուն մը, որով կը զբաղին միայն բանաստեղծները եւ վիպասանները: Ես որքան պիտի ուզէի ապրիլ իսկական սէր մը եւ ճանչնալ այդ առասպելական թռչունը:

—Եւ դառնալ մարդու մը ստորուկը: Այն ատեն ինչպէս պիտի ազատիս մօրաքրոջդ ձեռքէն:

*
* *

Նահապետ վերջին նայուածք մը նետեց ծաղարանին կողմը ու կորսուեցաւ բազմութեան մէջ: Այնքան տարուած էր, որ քանի մը անգամ ներողութիւն խնդրեց այն անցորդներէն, զորս հրմշտկած էր անգիտակցաբար:

Երբ մայթերը քիչ մը ամայացան, Նահապետ գլանիկ մը վառեց եւ դանդաղ քայլերով ուղղուեցաւ կողմնակի փողոց մը, ուրկէ կ'անցնէին Բաքսի-սերվիսները: Պուրճի հրապարակէն առաւ ուրիշ ինքնաշարժ մը եւ իջաւ Արաքս փողոցին անկիւնը: Նպարավաճառէ մը գնեց երկու տուփ սիկատէթ, որովհետեւ գիշերը երկար պիտի ըլլար:

Արաքս փողոցը դարձած էր Պուրճ-Համուտի Համրան:

Նահապետ կը բնակէր Նոր Մարաշի նեղիկ փողոցներէն մէկուն նորակառոյց շէնքի մը չորրորդ յարկը, կիսուած յարկարածի մը մէջ, որ բաղկացած էր բաւական ընդարձակ դահլիճէ մը, մանրատիպ խոհանոցէ մը եւ փոքրիկ ննջասենեակէ մը, որուն պատշգամէն կրնար տեսնել Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին գմբէթը:

Նստասենեակը կահաւորուած էր շատ պարզ կերպով: Երկու թիկնաթոռ, սոփա մը, ցած սեղան մը: Ապակեպատ զրադարանը գրաւած էր պատերէն մէկուն ամբողջ երկայնքը: Դէմը, գրասեղան մը եւ զտնտնիմա մը, որուն վրայ զետեղւած էր երաժշտական կազմած մը՝ իր ձայնասփիւռով, ձայնագիր գիր գործիքով եւ կրամափռնով: Զայնագրուած երիզները եւ ձայնապնակները խնամքով շարուած էին գոմոտինայի վարի դարանին մէջ:

Նահապետ նայեցաւ շուրջը, եւ դէմքին մռայլութիւնը աւելի շեշտուեցաւ: Զորս տարիէ ի վեր կը բնակէր այս աննշան տան մէջ: Այս էր իր առօրեայ աշխարհը, աւելի ճիշդ՝ իր

արգելարանը, որմէ ազատելու համար հրաշք մը պէտք էր: Մնողքը կ'ապրէին դրացի երկիր մը, եւ ինք տարին մէկ-երկու անգամ անոնց այցելութեան կ'երթար: Պէյրութ եկած էր ուսումը կատարելագործելու: Դիմած էր հայկական հաստատութեան մը՝ կրթաթոշակ ապահովելու համար, բայց մերժւած էր, որովհետեւ ազգու հովանաւոր մը չունէր, եւ որովհետեւ նիւթական պայմանները լաւ չէին, եւ ինք չէր ուզեր վերադառնալ նախկին բնակավայրը, դարձած էր ուսուցիչ:

Անհամ կիրակի մը անցընելէ ետք, պիտի արթննար առտու կանուխ, պիտի երթար դպրոց եւ մինչեւ իրիկուն շունչ պիտի վատնէր՝ բաներ մը մտցնելու համար երեսունի չափ անհանդարտ աշակերտներու ուղեղին մէջ: Կէսօրուան արձակուրդին պիտի երթար մօտակայ խանութ մը՝ ոտքի վրայ սանտուիչ մը ուտելու համար: Յետոյ պիտի վերադառնար դպրոց եւ քանի մը ժամ եւս շունչ պիտի վատնէր:

Եւ այս միօրինակ կեանքը պիտի տեւէր տարիներ, առանց որեւէ անակնկալի, առանց նորութեան: Այդ ջլատող ժամերէն ետք, միակ սփոփանքը իր համեստ տան չորս պատերն էին: Գրադարանի ապակիին ետեւը, իրեն կը սպասէին իր սիրած բանաստեղծներն ու վիպասանները, եւ գոմոտինայի դարաններուն մէջ՝ իր սիրած երաժիշտները: Բանաստեղծներու կախարդական տողերը եւ երաժիշտներուն անդիմադրելի ճախրանքները իր առջեւ կը բանային երազներու ճամբան եւ գինք կը փոխադրէին դիւթական աշխարհ մը, ուր ամէն բան պերճանք էր ու հեշտանք:

Նահապետ այսքանով չէր բաւարարուեր: Ան կը փորձէր ներսիդին խլրտացող զգացումները, պատկերները եւ գաղափարները յանձնել թուղթին՝ արձակով կամ ոտանաւորով: Թէեւ գրածները գէշ չէին, բայց կը զգար, որ անոնց կը պակսէր հուրը, որ կը ծնի ներքին խլրտումները բոցավառող արտաքին կայծէ մը:

Եւ օր մը...

Այդ տափակ ու միօրինակ օրերէն մէկը, պատուհան մը բացուեցաւ անձանթին վրայ: Յետմիջօրէի թափառումներէն մէկուն ընթացքին՝ հանդիպեցաւ ԱՆՈՐ...

Անոր ո՞վ ըլլալը չէր գիտեր, բայց իրեն այնպէս թուեցաւ, որ այս աղջիկը անձանթ մը չէր եւ զայն ճանչցած էր դարեր առաջ, ուրիշ կեանքի մը մէջ:

Օրեր սպասեց այն ճամբուն վրայ, ուր հանդիպած էր անոր: Իրիկուն մը, զայն ճանչցաւ հեռուէն, հետեւեցաւ անոր կարմրամորթի մը պէս, որ կը հետապնդէ թշնամի մը: Երբ ան դառնար փողոցի մը անկիւնը, կը վազէր խելագարի մը պէս զայն չկորսնցնելու համար: Նահապետ շունչ մը քաշեց, երբ տեսաւ անոր մտնելը «Թրիանոն» ծաղարանը, ուր ընկերուհի մը իրեն կը սպասէր:

Եւ անկէ ետք, գրեթէ ամէն իրիկուն, Պուրճ Համուտէն կու գար մինչեւ Ռաս Պէյրուիթ ու կը թափառէր ծաղարանին շուրջ՝ զայն տեսնելու համար։ Երբ նկատեց, որ աղջիկը շարաթը երկու անգամ միայն կու գար ծաղարան, ինք եւս հետեւեցաւ անոր օրինակին։

Երեք ամիս պէտք եղաւ, որպէսզի պատահմամբ իմանայ անոր անունը՝ Արտեմիս, գիշերուան եւ լուսնին խորհրդաւոր աստուածուհին։

Ամէն անգամ, որ զայն տեսնէր, կը զգար անհուն ուրախութիւն մը, եւ մանուկի մը պէս, որ գտած է գանձ մը, կը վերադառնար սենեակը երազներ հիւսելու համար։

Գրասեղանին վրայ շարուած էին տետրակներու դէզեր։ Պէտք էր գանոնք սրբագրէր եւ նոթագրէր մինչեւ Երկուշաբթի առտու։ Միօրինակ ու տաժանակիր աշխատանք մը, որ կը խլէր կեանքին լաւագոյն ժամերը, եւ որուն առջեւ պիտի ընդվզէր նոյնինքն Միգիփոսը։

Նահապետ նստաւ գրասեղանին առջեւ, բայց ձեռք չտուաւ տետրակներուն։ Գորոցէն հանեց կապոյտ կողքով կաշեկազմ տետրակ մը ու աչքէ անցուց էջերուն վերի թուականները։ Երբ հասաւ կոյս էջ մը, քիչ մը ամփոփուելէ ետք, գրիչը սահեցուց թուղթին վրայ։

4 Նոյեմբեր 1972

Քեզ տեսնելու առիթը չփախցնելու համար, կը սպասեմ ձեր փողոցիմ անկիւնը։ Այդ փողոցը, ուրկէ յամախ կ'անցնիս, արդիական տուներով սովորական փողոց մըն է։ Բայց այն օրէն ի վեր, երբ քեզ ցանցայ, այդ սովորական փողոցը դարձաւ հեփիաթայիմ վայր մը։

Սպասե՛լ, համբե՛լ վայրկեանները, ժամերը եւ օրերը, գիտեա՛լ, որ կ'ապրիս այս թաղիմ մէջ եւ չկարենալ քեզ տեսնել։

Սպասե՛լ, թափառի՛ր, սպասե՛լ...

Եւ յամկարծ, ի՞նչ անակնկալ։

Նստած ծաղարանի մը սեղանիմ առջեւ, ընկերուելի մը հետ։ Ատեմ-ատեմ գլուխդ վեր կը վերցնէիր՝ ինծի մերկայացնելով աչքերուդ անպեղծ խորհուրդը։ Էութիւնդ կը ստեղծէր մագնիսական այնպիսի՝ հոսանք մը, որ գիս կ'անջատէր միջոցէն եւ ժամանակէն։

Դո՛ւմ, օտարուելի մը չէիր ինծի համար։ Քեզ ցանցած էի անցեալիմ, բայց չէի կրնար ճշդիլ ինքնութիւնդ։ Երբ իմացայ անունդ, ամէն բան յստակացաւ։ Դո՛ւմ, գիշերներու կայս որսորդուելի էիր, հպարտ Արտեմիսը, որ լուսնի լոյսիմ տակ կը հետապնդէ գեղեցիկ որսը։

Դո՛ւմ, յաւիտենապէս մերկայ էիր, կը շնչէիր, կը խօսէիր, կը

խնդայիր, եւ ճայնդ կը կարկաչէր խիճերուն վրայ ցատկոտող ջիւնջ առուակին պէս:

Այս իրիկուն, կրկին քնդ տեսայ «Թրիանոն» ծաղարանին մէջ: Նստած էիր նոյն սեղանին առջեւ, նոյն ընկերուհիիդ դիմացը: Բայց դէմքդ չդարձուցիր իմ կողմս: Ջղագրգիռ վիճակ մը ունէիր: Ամէն անգամ, որ աչքերուդ մէջ կը մայէի, կը տեսնէի տխրութեամբ եւ յուսարեկութեամբ ճախններ: Կ'ուզէիր վիշտդ պատմել ընկերուհիիդ: Բայց կը զգայիր, որ ամ չէր կրնար հասկնալ քեզ: Ես ալ անկարող էի փարատելու վիշտդ, որովհետեւ տակաւին անծանօթներ էինք: Խօսէ՛ ինծի, ա՛ն ձեռքս ու գիս առաջնորդէ սրտիդ գաղտնի մամբաներէն:

Երբ տեսնեմ գեղեցիկ հասակդ, սիրտս կը բաբախէ, արիւնս կ'արագանայ երակներուս մէջ:

Եթէ կ'ուզես, ես կը մնամ անանուն մամբարդը, որուն պատահմամբ հանդիպեցար օր մը: Երբ քնդ տեսայ առաջին անգամ, հասկցայ, որ դուն էիր ա՛ն, որուն կը սպասէի ժամանակներու սկիզբէն ի վեր: Աշխարհի մէջ կամ եղբիներ, որոնք ստեղծուած են իրարու համար, բայց զիրար չեն մանջնար: Դո՛ւն, Նախախընձ մամբան կողմէ ինծի սահմանուած բոլոր-եղբիւն, դո՛ւն, իմ տառապանքս եւ անհուն երանութիւնս:

Ես անոնցմէ եմ, որոնք կը սիրեն առանց ակնկալութեան: Հաւանարար արդէն ընտրած ես կեանքի ընկերդ: Այն ատեն ինծի կը մնայ սիրել, երազել ու տառապիլ, ատեն-ատեն հեռուէն վայելելով գեղեցիկ աչքերուդ մայուածքը, բերնիդ ժպիտը եւ մազերուդ կախարդամբ:

Նահապետ գոցեց տետրակը, ոտքի ելաւ ու քիչ մը երթեւեկելէ ետք սենեակին մէջ, վերադարձաւ գրասեղանին առջեւ, առաւ ճերմակ թուղթ մը ու քիչ մը խոկալէ ետք, շարագրեց հետեւեալ նամակը:

Ազնիւ եւ սիրելի օրիորդ,

Կը ներէք անծանօթի մը համարձակութեան, որ կը փորձէ սպորդիլ ձեր կեանքէն ներս: Ձեզմէ բաց չեմ ակնկալեր, միայն կը յուսամ, որ այս նամակս չըլլայ վերջինը:

Այն վայրկեանէն, երբ ձեզ տեսայ, դարձաւ ցերեկներուս երազը եւ գիշերներուս յաճախանքը: Ձեր մասին ոչինչ գիտէի եւ չէի ուզեր ալ գիտնալ, որովհետեւ դո՛ւք կատարելութիւն մըն էք ինծի համար, եւ սիրտս կը լեցուի երանութեամբ ամէն անգամ, որ ձեզ տեսնելու բախտը ունենամ:

Երբ ձեր անունը արտասանեմ, հագար աստղեր կը ծնին երկնիքին մէջ, եւ դրախտային կղզիներ կը պարեն ձվկիւնքս իմ վրայ:

Ըսէ՛ք ինծի, ո՛վ իմ արեւս, ո՛վ իմ կեանքս, եթէ գագացումներս ձեզ կ'անհանգստացնեն, ինծի կը մնայ լռել ու անհետանալ:

Բայց իմ չոր ալ ըլլայ ձեր կեցուածքը ինծի հանդէպ, անկա-

րելի է, որ ձեզ մտնամ, որովհետեւ դուք պիտի մնաք միշտ այն
ավաստիսը, որ կրնայ յագեցնել սրտիս անհուն ծարաւը...

Անկեղծօրէն ձերդ՝ Նաեապետ Գրիգորեան

—Բ—

Մովսէսի տան պոռտէի վրայ կը յորդէր անցորդներով:

Նահապետ հասած էր պոռտէի անկիւնը, բայց կը վարա-
նէր անցնելու միւս մայթին վրայ, որովհետեւ երկու մանկա-
մարդուհիները նստած էին իրենց սովորական տեղը, եւ ինք
չէր ուզեր տեսնուիլ անոնցմէ:

Որպէսզի անցքը չնշմարտուի, քալեց մինչեւ քառուղին, ուր
կանաչ-կարմիր լոյսեր կը կանոնաւորէին երթեւեկը: Երբ
լոյսերը կարմիրի վերածուեցան, խուճը մը անցորդներով
կտրեց պոռտէի անկիւնը եւ կանգ առաւ ցոլակի մը երկաթէ սիւնին
քով, «Թրիանոն» ծաղարանէն քանի մը մեթր առաջ:

Նահապետ ձեռքը բռնած էր թափանցիկ թուղթով ծրար-
ւած եւ տասներկու նորաբողոք վարդերէ բաղկացած ծաղկե-
փուռ մը: Ան քիչ մըն ալ սպասեց եւ, զոյգի մը հետեւելով՝
մտաւ ծաղարան ու տեղ առաւ սեղանի մը առջեւ՝ մանկամար-
դուհիներէն երեք շարք հեռու:

Սպասեակը կ'ուշանար, եւ մակամարդուհիները իր կողմը
կը նայէին: Գլանիկ մը վառեց բան մը ըրած ըլլալու համար:
Գոնէ օրաթերթ մը բերած ըլլար:

Սպասեակը քանի մը անգամ անցաւ քովէն ու վերջապէս
կանգնեցաւ դէմը: Նահապետ սուրճ մը ապսպրեց եւ ծաղկե-
փուռը տեղափոխեց աջէն ձախ: Աչքին ծայրովը ակնարկ մը կը
նետէր մանկամարդուհիներուն կողմը եւ ինքնիրեն կ'ըսէր.

—Այս ծաղկեփուռն ինչպէ՞ս եւ ե՞րբ: Կ'ուզեմ որ ան առանձին ըլլայ:
Կէս ժամ ունիմ առջեւս:

Անդադար կը նայէր ժամացոյցին՝ սպասելով յարմար առի-
թին, որ պիտի ստեղծուէր անպայման:

Երկու ընկերուհիները զինք տեսնելով պահ մը դադրեցու-
ցած էին իրենց խօսակցութիւնը:

—Արդեօք, որո՞ւ համար են այդ վարդերը,— ըսաւ սեւ
մազերով աղջիկը,—անպայման սիրային ժամադրութիւն մը
ունի այս կողմերը, կամ սիրուհիին կը սպասէ: Ինչպէս բոլոր
սիրահարները, ան եկած է ժամանակէն շատ առաջ: Այսպէս
կ'ընէին անցեալ դարու վիպապաշտ երիտասարդները, որոնց
համար սիրային ժամադրութիւն մը մեծ արարողութիւն մըն
էր: Անոնք կ'նամենար էին ու սիրելի գիտէին: Այսօրուան
երիտասարդները սիրելի չեն գիտեր, որովհետեւ երազ չունին
եւ սէրը կը նկատեն երկու մարմիններու շփումը:

—Ռիթա՛, դուն երբեք երիտասարդէ մը ծաղկեփունջ ստացած ես,— Հարցուց յանկարծ Արտեմիս։

—Այս տեսակ ծաղկեփունջ, երբեք։ Երբ մանուկ էի, տարեդարձիս, մայրս սեղանիս վրայ կը դնէր փոքրիկ ծաղկեփունջ մը՝ կապուած մեխակէ եւ մանուշակէ։ Վարդերը տարբեր նշանակութիւն ունին։

—Մինչեւ այսօր, ինծի ո՛չ ոք ծաղիկ նուիրած է, ո՛չ մեխակ, ո՛չ մանուշակ եւ ո՛չ ալ վարդ։

—Իւրաքանչիւր ծաղիկ եւ իւրաքանչիւր գոյն ունի իր նշանակութիւնը։ Վարդը սիրոյ ծաղիկն է, կարմիր վարդերը խորունկ սիրոյ արտայայտութիւնն են։

—Անոր բռնած վարդերը կարմիր են։

—Անոր համար շատ անհամբեր ես տեսնելու, թէ որո՞ւն համար են այդ կարմիր վարդերը, եւ ո՞վ է այս երիտասարդին երանելի սիրուհին, որուն կը սպասէ այնքան երկիւղածութեամբ։

—Բայց կրնայ ըլլալ, որ ան սիրուհի չունի եւ այս վարդերը գնած է զարդարելու համար իր սեղանը։

—Ձեմ կարծեր։

—Իսկ եթէ սիրուհին չյարգէ իր ժամադրութիւնը, ան ի դուր գնած պիտի ըլլայ այդ վարդերը։

—Այն ատեն կ'առնէ ծաղկեփունջը եւ կը մեկնի։ Քիչ մըն ալ սպասենք։ Եթէ սիրուհին կէս ժամէն չայտնուի, կը մեկնինք։ Եւ որպէսզի տունէն չմտահոգուին, երթամ հեռաձայնեմ։

Ռիթա ոտքի ելաւ եւ ուղղուեցաւ ծաղարանին երջնամասը, ուր կը գտնուէր հեռաձայնի խցիկը։

Ասկէ յարմար առիթ չէր կրնար ներկայանալ։ Բախտը կը ժպտէր։ Նահապետ անմիջապէս կանչեց սպասեակը եւ անոր արիւն մէջ թղթադրամ մը սահեցնելէ ետք, ականջին բաներ մը փսփսաց։

Մինչ սպասեակը ծաղկեփունջը բռնած կը մօտենար Արտեմիսին, Նահապետ ոտքի ելաւ եւ դուրս սպրդեցաւ։ Ան կը վախնար, որ Արտեմիս մերժէ հրապարակաւ իրեն նուիրուած ծաղկեփունջը եւ զայն վերադարձնէ իրեն։

Սպասեակը ծաղկեփունջը դրաւ Արտեմիսի առջեւ եւ ցոյց տուաւ այն սեղանը, ուր Նահապետ նստած էր քիչ առաջ։ Արտեմիս առաւ ծաղկեփունջը, նայեցաւ սեղանին կողմը եւ զարմացաւ, երբ հոն չտեսաւ երիտասարդը։ Նահապետ, չհեռացած, դուրսէն նկատեց այս բոլորը։

Ռիթա վերադարձաւ, երբ ամէն ինչ վերջացած էր։

—Հեռաձայնեցի,— ըսաւ,— կրնանք կէս ժամ մըն ալ մնալ։

Եւ յանկարծ ծաղկեփունջը տեսաւ Արտեմիսի առջեւ։

—Ծաղկեփունջը հոս է, բայց ո՞ւր է երիտասարդը։

—Մեկնեցաւ քիչ առաջ, հաւանաբար ծանձրացաւ սիրուհին սպասելէ։

—Այն ատեն ծաղկեփունջը պէտք է հետը տանէր, զարդա-
րէր գրասեղանը, կամ ծանօթի մը նուիրէր:

—Վարդերը շատ դիւրաբեկ կ'ըլլան, եւ առանց խնամքի
չուտ կը խամրին: Ան չէր ուզեր ծաղկեփունջ պտոցնել իրեն
հետ, սիրուհին չգալէն ետք:

—Ո՞վ քեզի յանձնեց ծաղկեփունջը:

—Սպասեալը ծաղկեփունջը բերաւ ու դրաւ առջեւ:

—Հիմա՛ հասկցայ: Ուրեմն ան հոս կու գար քեզի համար:
Սպասեալը ծաղկեփունջին հետ թղթիկ մըն ալ չբերա՞ւ:

—Ո՛հ, — ըսաւ Արտեմիս ու ծաղկեփունջը առնելով հետեւե-
ցաւ ընկերուհիին:

Նահապետ, ծաղարանէն բաւական հեռանալէ ետք, դան-
դաղեցուց քայլերը: Մեծ թեթեւութիւն մը կը զգար: Կորսուած
անցորդներու բազմութեան մէջ, ան աչքերը չէր հեռացներ
ծաղարանին մուտքէն: Երկու մանկամարդուհիները դուրս
ելան: Արտեմիս աջ ձեռքով բռնած էր ծաղկեփունջը: Անհուն
ուրախութիւն մը զգաց: Արտեմիս չէր մերժած իր նուէրը:

Առանց ժամանակ կորսնցնելու վերադարձաւ իր աղքա-
տիկ բնակարանը, գգրոցէն հանեց կապոյտ կողքով տետրակը,
էջերէն մէկուն վերը գրեց օրուան թուականը ու, պահ մը
ամփոփուելէ ետք, գրեց հետեւեալ տողերը:

Այսօր ապրեցայ կեանքիս երջանկագոյն պահերէն մէկը:

Նոր կապ մը ստեղծուեցաւ քու եւ իմ միջեւ: Այդ ծաղկեփուն-
ջը քեզի պիտի պատմէ երազներս:

Մնայլ էր կեանքս, եւ դուք յայտնուեցար անակնկալ գարնան
մը պէս: Անօրեաւ աղջամղջայիմ էր, գայն լուսաւորեցիր մէկ
մայուածքովդ եւ վարդեմիի փոխեցիր սրտիս չոր տատասկնե-
րը:

Բայց ինչո՞ւ կը քողարկես էութիւնդ: Արդեօք իմ երեւակա-
յածէս տարբեր մէ՞կն ես, գոր կ'ուզեմ պատշաճեցնել իտեալ կնոջ
այն պատկերին, որ իւրաքանչիւր մարդ կը կրէ իր սրտին մէջ:

Արտեմիս գիտէ, որ գիմֆ կը սիրեմ: Երբ մեր մայուածքները
իրարու հանդիպին, ամօր քիթերուն մէջ կը տեսնեմ սիրոյ աղօտ
ցալքը: Արտեմիս կը խօսի, կը խնդայ, կը կատակէ իր ընկերուհի-
ին հետ, քայց երբ գիս տեսնէ, կը լռեցնայ, կը լռէ:

Կիները քնազդաբար կ'երկնչին այն անգէն, որ գիրեմֆ կը
սիրէ ու կ'ըզայ: Այս առեւակաւ վախը կու գայ դարերու
խորերէն, երբ տեմչախար արուն կը հալածէր էգը՝ գայն քեղմ-
նաւորելու համար: Սիրաբանութիւնը մեմամարտ մըն էր, որ կը
վերջանար էգին քոնաբարումով:

Նահապետ տետրակը գոցեց: Տակաւին գրելիք չատ ունէր,
բայց այնքա՛ն յուզուած էր, որ նախընտրեց զգացումները
նամակով արտայայտել:

Սիրելի օրիորդ,

Շնորհակալութիւն՝ ձեր ազնուութեան համար, որովհետեւ չմերժեցիք ծաղկեփունջս։ Ասիկա կը մշտնակէ, որ ես քան մը կը մերկայացնեմ ձեզի համար։ Հաւանաբար վարդաշաղկերպս ձեզի զարմանք պատճառեց, երբ դիմեցի հետքի մը, որ ուրիշի մը համար ծիծաղելի պիտի թուէր։ Հարկաւ կրնայի մօտեմալ ձեր սեղանին եւ ձեզի յայտնել յարգանքս եւ հիացումս՝ ձեր ընկերութեան մերկայութեան։ Բայց վախճայ հետեւանմանքն։

Վերջի վերջոյ ես անձամօթ մըն էի ձեզի համար։ Երբեք պիտի չուզէի արատ րելոյ ձեր համբաւին եւ կաշկանդել ձեր համգիտութեան ազատութիւնը։ Զեզմէ փոխադարձութիւն չեմ ակնկալեր։ Միայն արտօնեցէք, որ շարունակեմ ձեզ սիրել... հեռուն։ Զիս նկատեցէք պատահական անցորդ մը, որ, անապատի կիզիչ արեւին տակ, կը հանդիպի կենսատու ռվասիսի մը։

Զեզ չէի ճանչնար քանի մը ամիս առաջ։ Զէի գիտեր մոյմիսկ, որ ձեզի պէս էակ մը կրնայ գոյութիւն ունենալ։ Երբ ձեզ տեսայ, անմիջապէս հասկցայ, որ դուք ստեղծուած էք ինծի համար...

Ձեր մասին ոչինչ գիտեմ։ Դուք արդէն կրնաք գտած ըլլալ ձեր կեանքի ընկերը, քայց գիտցէ՛ք, որ ա՛յ ո՛ք պիտի կարենայ ձեզ սիրել ինծի չափ, եւ ա՛յ ո՛ք պիտի հասկնայ ձեր հոգիին խորհուրդը եւ ձեր երազներուն աշխարհը։

Ես կ'ապրիմ ուրիշ ժամանակներու մէջ եւ ունիմ վիպապաշտ հոգի մը։ Ինծի համար սէրը երկու մօրթերու շփումը չէ, այլ՝ երկուքով ապրուած երազ մը։

Ես անոնցմէ եմ, որոնք կու տան՝ առանց քան մը պահանջելու։ Ինչ որ եմ եւ ինչ որ ունիմ ձեզի կը պատկանին։ Փոխարէնը պիտի գտնանամ շատ քիչով՝ ձեր աչքերուն մայրածէով, ձեր բերնին ժպիտով եւ ձեր ձայնին մեղեդիով։

Անկեղծօրէն եւ հաւատարմօրէն ձերդ՝
Նահապետ Գրիգորեան

— Գ —

Այդ օր, Արտեմիս սովորականէն աւելի կանուխ իջած էր վաճառատուն։ Մինչեւ կէսօր գործերը թեթեւ կ'ըլլային։ Մօրաքոյրը, այդ պահէն օգտուելով, շուկայ կ'իջնէր կարգադրութիւններ ընելու համար։

Նամակարաշխը կ'անցնէր 11ի մօտերը եւ անպայման կը հանդիպէր իրենց հաստատութիւնը, որովհետեւ միշտ յանձնելիք ծրար մը կամ պահարան մը կ'ունենար։

Նահապետին առաջին նամակը ստանալէ ետք, ակնդէտ կը սպասէր նամակաբաշխին, ուրիշ նամակի մը յոյսով։

Այդ օրուան թղթատարը բաւական ճոխ էր: Արտեմիս մէկ կողմ դրաւ ծրարները եւ քաթալոնները եւ աչքէ անցուց պահարանները: Անոնց մէկուն ձեւը եւ գոյնը ուշադրութիւնը գրաւեց: Պահարանին վրայ ճանչցաւ Նահապետին գիրը եւ զայն դրաւ պայտուակին մէջ:

Թէեւ անհամբեր էր իմանալու նամակին պարունակութիւնը, սակայն կը դիմադրէր փորձութեան: Կ'ուզէր զայն կարդալ իր սենեակին մտերմութեան մէջ, հեռու մօրաքրոջ խուզարկու աչքերէն: Նահապետին ծաղկեփունջը, մօրաքրոջ ցոյց չտալու համար, փաթեցած էր հին օրաթերթի մը մէջ ու պահած էր մահճակալին տակ:

Երբ տիկին Սիրուհի վերադարձաւ շուկայէն, Արտեմիս ելաւ վեր ու փակուեցաւ սենեակին մէջ, որպէսզի մէկը զինք չխանգարէ:

Գոմոտին զգրոցէն Հանեց Նահապետին առաջին նամակը եւ զայն կրկին կարդաց: Այդ նամակը ստանալէն ի վեր՝ տեսակ մը անհանգստութիւն կը զգար: Ամբողջ գիշերը չէր կրցած քնանալ: Կեանքին մէջ այնպիսի նամակ չէր ստացած եւ զայն կարդալէ ետք, չփոթի մատնուած էր, կարծելով, որ ան ուղղուած է ուրիշի մը եւ սխալմամբ ձեռքը անցած է:

Սակայն նամակին հասցէն ճիշդ էր եւ պահարանին վրայ գրուած անունը իր անունն էր:

Ուրեմն անոր մէջ գործածուած փաղաքական բառերը իրեն ուղղուած էին: Ինքն էր անոր հեղինակին երազներուն մարմնացումը, կեանքը, արեւը, ովասիսը: Կը գուշակէր անոր հեղինակը: «Թրիանոն» ծաղարանին առջեւէն անցնող լուրջ ու համակրելի երիտասարդն էր:

Բայց ինչո՞ւ փոխանակ իրեն մօտենալու, իրեն հետ սեղան նստելու եւ խօսելու, ան կը մնար հեռու եւ զգացումները կը յայտնէր նամակով, ինչպէս կ'ընէին հին օրերու սիրահարները:

Այդ անակնկալ նամակը իր մէջ ստեղծած էր անբացատրելի հոգեվիճակ մը, որուն մէջ չէին պակսեր ուրախութեան բացատներ:

Երկրորդ նամակը նոյնքան հմայիչ էր: Երիտասարդին բառերը կը ստեղծէին առասպելական եւ անիրական մթնոլորտ մը, որ կը պատշաճէր իր խառնուածքին: Առաջին անգամն էր, որ մարդ մը այսքան փափկանկատութեամբ եւ այսքան անկեղծ զգացումով կը մօտենար իրեն:

Ան չէր ուզեր արատ բերել իր համբաւին, չէր ուզեր կաշկանդել իր ազատութիւնը եւ հանգիստը: Կը հասկնար իր հոգիին խորհուրդը եւ փոխադարձութիւն չէր ակնկալեր: Զինք սիրած էր մէկ անգամէն, առաջին նայուածքով, առանց գիտնալու, թէ ինք ո՞վ էր:

Եւ Արտեմիս ոգեկոչեց այն տարիները, երբ կ'ապրէր մա-

քուր մթնոլորտի մը մէջ, աշխարհի ապականութենէն եւ մարդոց ախորժակներէն հեռու: Միշտ երազած էր անկեղծ սէր մը, որ ըլլար երկու հոգիներու միաձուլումը եւ երկու սրտերու ներդաշնակ զուգերգը:

Ահա այդ երազը կ'իրականանար, ահա իրեն կ'առաջարկը-ւէր այդ անկեղծ ու մաքուր սէրը: Բայց աւա՛ղ:

Հակառակ իր բնածին մելամաղձոտութեան, Արտեմիս կը զգար անբացատրելի հրճուանք մը, հոգեկան թռիչք մը, ինչ-պէս նորապսակ հարս մը, որ ճերմակներ հագած դուրս կ'ելլէ եկեղեցիէն:

Սակայն Արտեմիս գիտէր, որ այդ բանը անկարելի էր եւ ինք երբեք պիտի չհագնէր հարսանեկան սպիտակ շրջագոյն-տը եւ պիտի չկանգնէր խորանին առջեւ, իր սիրած տղուն կողքին, որովհետեւ ճակատագիրը իր առջեւ փակած էր եր-ջանկութեան դարպասը:

Արտեմիս նամակները կարդաց բազմաթիւ անգամ, յետոյ զանոնք պահեց փոքրիկ գզրոցի մը մէջ, որուն բանալին միշտ վրան կը պահէր:

Արդուզարդի սեղանին վրայ, երկարավիզ անօթին մէջ, տասնեւերկու կարմիր կոկոնները սկսած էին բացուիլ ու կ'արտաբերէին իրենց շափրակներուն մէջ արգելափակուած բոյրը:

Արտեմիս քանի մը անգամ երթեւեկեց իր սենեակին մէջ, յետոյ մօտեցաւ պատուհանին:

Սենեակը կը գտնուէր նորակառոյց շէնքի մը վերի յարկը: Որմնապակին կը բացուէր լայն պատշգամի մը վրայ, ուրկէ կարելի էր տեսնել Միջերկրականը, ալ կողմի ծովափը եւ անոր վրայ իշխող լեռներու զանգուածը:

Տանիքներուն վրայէն կը տեսնուէր ծովուն կապոյտը, որուն վրայ կը սահէին փոքրիկ առագաստանաւեր: Լեռները կը կազմէին տեսակ մը ամփիթատրոն, որուն կեդրոնը Ճունիի ծովածոցն էր: Այդ ամփիթատրոնի կեդրոնական եւ վերի աստիճաններէն մէկուն վրայ բազմած էր Աստուածամօր սպիտակ արձանը եւ անոր մերձակայ գիւղերը՝ Հարիսա, Ղոսթա, Տարուան, ու քիչ մը աւելի վերը՝ Չմմառ:

Վանքը կը տեսնուէր իր ամբողջ զանգուածով, բայց ոչ որբանոցը, որ կ'իյնար բլրակի մը ետին՝ Աչքութ տանող ճամբուն դարձուածքին վրայ:

Անարատ Յղութեան Հայ Քոյրերու որբանոցը...

Արտեմիս յիշեց մանկութիւնը, եւ գեղեցիկ աչքերը տամ-կացան:

*
* *

Հայրը եւ մայրը մեռած էին ինքնաշարժի արկածէ, եւ ինք
մնացած էր որը: Մօտիկ ազգականներէն ոչ մէկը ուզած էր
զբաղիլ իրմով: Բարի դրացուհի մը զինք յանձնարարած էր
Անարատ Յղութեան Քոյրերուն, որոնք որբանոց մը ունէին
Չմմառու վանքին վերերը, Աշքութի ճամբուն վրայ:

Սկիզբները Արտեմիս քիչ մը խրաչած էր այս նոր միջավայ-
րէն: Մնողքին մահը եւ ազգականներուն վերաբերումը ծանր
կերպով խոցած էին սիրտը ու դառնացուցած էին հոգին:
Ջրօսանքներուն ան կը մեկուսանար իր ընկերուհիներէն, կը
քաշուէր անկիւն մը, կը նայէր քաղաքին կողմը ու կը թափէր
աղի արցունքներ: Ան դարձած էր կորսուած թռչուն մը, որ կը
փնտռէ իր քանդուած բոյնը:

Բարի Քոյրերը կը հասկնային անոր վիճակը եւ ճշում չէին
բանեցնել: Ժամանակի ընթացքին ան սկսաւ ընտելանալ եւ
վերագտաւ իր նախկին անդորրութիւնը:

Արտեմիս խելացի եւ ուշիմ էր, ան նաեւ համեստ էր ու
երախտապարտ: Քոյրերը, առանց կողմնակալութիւն ցոյց
տալու, յատուկ գուրգուրանք մը ունէին անոր հանդէպ:

Երբ որբանոց մտաւ ինը տարեկան էր:

Կիրակի եւ տօնական օրերը քաղաքէն այցելութեան կու
գալին որբուհիներու ազգականները եւ բարեսիրտ անձեր՝
իրենց հետ բերելով նուէրներ եւ ուտեստեղէն: Այդ օրը,
որբուհիները կը ճաշէին իրենց ազգականներով եւ բարերար-
ներով, չըջափակին կամ մօտակայ պուրակի ծառերուն տակ:

Կիրակի օրերը, Արտեմիս կը սպասէր դարպասին առջեւ՝
յուսալով, որ ազգականներէն մէկը կամ միւսը կու գայ զինք
տեսնելու: Բայց միշտ յուսախար կ'ըլլար:

Եւ այսպէս անցան տարիներ: Արտեմիս հասակ նետեց,
գեղեցկացաւ: Որբանոցը դարձած էր իր տունը: Իր հարազատ-
ները այս որբուհիներն էին եւ այս բարեսիրտ կրօնաւորուհի-
ները: Հոս կը տիրէր խաղաղութիւն՝ հեռու դուրսի աղմուկէն
եւ ապականութենէ: Եթէ կարելի ըլլար, Արտեմիս պիտի
ուզէր իր ամբողջ կեանքը անցընել այս հաստատութեան մէջ:

Եւ ամէն օր կը տուայտէր, թէ ի՞նչ պիտի ընէր, երբ հասնէր
չափահասութեան տարիքին եւ ստիպուէր բաժնուիլ կրօնա-
ւորուհիներու հովանիէն:

Կիրակի առտու մը մեծաւորուհին զինք քովը կանչել տուաւ:
—Աղջիկս՝ Արտեմիս,— ըսաւ,— Սիրուհի մօրաքոյրդ եկած
է քեզ տեսնելու: Ան ինձմէ խնդրեց, որ քեզ պտոյտի տանի
քաղաք: Ես ընդդիմացայ, որովհետեւ մեր կանոնին դէմ է: Ան
դաշխօնի մէջ քեզի կը սպասէ:

—Մըր էր մինչեւ հիմա: Ես ո՛չ ազգական ունիմ եւ ո՛չ

(40-800)



հարազատ այլեւս. ծնողքս եւ մօրաքոյրներս դուք էք, եւ ընկերուհիներս՝ քոյրերս են: Ես չեմ ուզեր զինք տեսնել:

—Աղջիկս, քէն մի պահեր ոչ ոքի հանդէպ: Մեր հաստատութիւնը բանտ չէ եւ չենք կրնար արգիլել ամէնէն մօտիկ ազգականուհիդ, որ քեզ տեսնէ: Գնա՛, հետը խօսէ, քաղաքավար եղիր:

Տիկին Սիրուհի մէկ նայուածքով ճանչցաւ Արտեմիսը, հակառակ, որ զայն չէր տեսած եօթը տարիներէ ի վեր: Լուրջ կերպարանք մը ունէր: Հագած էր մութ գոյնով շրջագոյն մը, սեւ կօշիկներ ու սեւ գլխարկ, եւ զէմքին վրայ շաւարի հետք չկար:

Տիկին Սիրուհի գրկեց ու համբուրեց զարմուհին ու մատին ծալրովը սրբեց աչքին ծալրը:

—Մեծաւորուհիէն արտօնութիւն խնդրեցի, որ այս օրը քեզի հետ անցընեմ: Համեղ կերակուրներ բերած եմ: Կը նստինք ծառի մը տակ ու կը ճաշենք:

Արտեմիս հետեւեցաւ մօրաքրոյր: Նստեցան մեկուսի ծառի մը շուքին: Տիկին Սիրուհի բացաւ ծրարները: Կերպրեցաւ զոց ամաններուն վրայ գլուած էր Պէյրութի ամէնէն նշանաւոր ճաշարանին անունը:

Արտեմիս որդեգրած էր վերապահ կեցուածք մը: Ան միավանկ բառերով կը պատասխանէր մօրաքրոյ հարցումներուն եւ մեծ ախորժակ ցոյց չէր տար համադամ կերակուրներուն հանդէպ:

Տիկին Սիրուհի կը քաջալերէր զարմուհին, կը գովէր այն ճաշարանը, ուրկէ ապսպրած էր կերակուրները: Ան բնական կը գտնէր աղջկան պաղ վերաբերումը եւ ոչ մէկ ակնարկութիւն կ'ընէր այդ ուղղութեամբ:

Վերջապէս հասաւ բացատրութեան ժամը:

—Աղջիկս, Արտեմիս,— ըսաւ ճարպիկ ու փորձառու կինը,— գիտեմ, որ անժամանակ կը գտնես այցելութիւնս. իրաւունք ունիս: Քու ամէնէն մօտիկ ազգականդ ես եմ, պէտք էր երկրորդ մայրդ ըլլայի: Բայց կեանքը այնպիսի պահանջներ ունի, որ մեզի մոռնալ կու տայ մեր ամէնէն նուիրական պարտականութիւնները:

—Այդ պահանջները չէին արգիլեր, որ ներկայ գտնուէիր ծնողքիս յուղարկաւորութեան:

—Դուն տակաւին անփորձ ես եւ կը կարծես, որ բոլոր մարդիկը բարի են քեզի պէս: Ո՞վ չ'ուզեր ներկայ ըլլալ իր հարազատ քրոջ յուղարկաւորութեան, բայց ես չկրցայ, որովհետեւ ներկայութիւնս անբաղձալի էր: Մեր հարազատներուն եւ ազգականներուն համար, ես ընտանիքին քոսոտ ոչխարն էի: Ոմանք նոյնիսկ զիս կը մեղադրէին, որ քրոջս մահուան պատճառը եղած էի: Որքան լացի այդ օրը:

—Բայց ինչո՞ւ առաջ չեկար զիս տեսնելու: Եօթը տարիներ անցած են ծնողքիս մահուան վրայէն:

—Այն ատեն առանձին ու լքուած կին մըն էի եւ ապրելու միջոց չունէի: Եթէ այն ատեն քեզ քովս առնէի, դուն ալ ինծի պէս պիտի դժբախտանայիր: Միւս ազգականներուն վիճակը շատ աւելի լաւ էր, անոնցմէ մէկը կրնար քեզ որդեգրել, բայց չըրաւ: Որքանոցը չարիքներուն փոքրագոյնն էր: Հիմա լաւ ուսում ու կրթութիւն առիր: Եթէ քովս մնացած ըլլայիր, պիտի չկարենայի նոյնիսկ քեզ դպրոց դրկել:

—Լաւ որ այսպէս եղաւ: Հոս գտայայն՝ որ չէի կրնար գտնել ուրիշ որեւէ տեղ: Հոս են իմ հարազատներս եւ ընտանիքս:

Տիկին Սիրուհի, գլուխը շարժելով, աչք մը պտտացնց շուրջը: Հասկցած էր, որ այս առաքելութիւնը կարծածէն շատ աւելի դժուար պիտի ըլլար: Իր խօսքերը բախած էին աղջկան անտեղիտայի կեցուածքին:

Պարտէզին մէջ կը տիրէր մեծ խանդավառութիւն ու եռուզեռ: Ծառերու տակ շրջանակ կազմած՝ այցելուները եւ որրուհիները կը ճաշէին, կը զրուցէին, կը խնդային, կ'երգէին:

—Ես շատ սիրեցի այս մթնոլորտը,—ըսաւ Տիկին Սիրուհի,—Հոս մարդ ինքզինքը կը զգայ տարբեր աշխարհի մը մէջ: Հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ կը սիրես այս վայրը եւ այս մթնոլորտը: Սակայն, աղջիկս, հոս չես կրնար մնալ մինչեւ կեանքիդ վերջը: Երկու տարիէն կը դառնաս չափահաս:

—Այնքան ատեն, որ կը փափաքիմ հոս մնալ, գիտ դուրս չեն դնել:

—Գիտեմ: Բայց ի՞նչ պիտի ընես հոս: Դուն գեղեցիկ ես ու զարգացած, պէտք է աշխարհ տեսնես, ապագայ շտկես:

—Ընելիքս կ'որոշեմ երկու տարիէն: Հոս իմ տունս է: Որո՞ւն տունը պիտի երթամ այս տեղէն: Այս տարիքիս ազգականներէս ո՞ր մէկը կ'ընդունի զիս, երբ անոնցմէ մերժուեցայ մանուկ հասակիս:

Տիկին Սիրուհի չպատասխանեց, ոչ թէ որովհետեւ ըսելի չունէր, այլ կը զգար, որ որդեգրած ռազմավարութիւնը սկսած էր արդիւնք տալ: Այսպիսի պարագաներուն, լաւ խաղցող մը ցոյց չի տար իր քարտերը:

—Երբ մանուկ էիր, որքան քեզ կը սիրէի,— հառաչեց տիկին Սիրուհի,— որովհետեւ շատ կը նմանէիր մօրդ: Զաւակիս պէս էիր: Մօրդ մահէն ետք, պէտք էր քեզ որդեգրէի, բայց պարագաները թոյլ չտուին: Նոյնիսկ քեզի այցելութեան չէի գար, որովհետեւ առաջարկելիք չունէի:

—Ուրեմն, հիմա պարագաները փոխուած են:

—Այո՛: Հիմա վիճակս շատ աւելի լաւ է: Ունիմ անձնական տուն, գործ եւ դրամ: Պատրաստ եմ քեզ որդեգրելու: Կու գաս տունս եւ կ'ապրինք միասին իրրեւ մայր եւ աղջիկ: Կը դառնաս հարազատ զաւակս:

Արտեմիս մտորումի մէջ էր: Մօրաբերով այս սիրալիրութիւնը զինքը կը զարմացնէր:

— Հիմա պատասխան մի՛ տար, խորհէ՛, չափէ՛ եւ յետոյ ոորոշէ՛: Ես ամէն կիրակի քեզի այցելութեան կու գամ: Երբ համոզուիս եւ ընելիքդ որոշես, պէտք եղած կարգադրութիւնը կ'ընեմ մեծաւորուհիին հետ: Ես գիտեմ օրէքները. որքուհի մը որդեգրելու համար պէտք է ըլլալ անոր ամէնէն մօտիկ ազգականը եւ մանաւանդ պէտք է ունենալ անոր պատշաճ եւ հանգստաւէտ կեանք մը ապահովելու միջոցները: Սնեակդ պատրաստ է արդէն: Զայն միասին կը կահաւորենք, որպէսզի ամէն բան ըլլայ քու ճաշակիդ համեմատ:

Ամիս մը ետք, հարցը կարգադրուած էր:

Արտեմիս հրաժեշտ առաւ մեծաւորուհիէն, բարի քոյրերէն եւ ընկերուհիներէն, եւ փոքրիկ պայուսակ մը ձեռքը, բարձրացաւ որբանոցի դարպասին առջեւ սպասող ինքնաշարժը:

*
* *

Տիկին Սիրուհի իր ծանօթներուն եւ անծանօթներուն պատմեց իր ազգասիրական արարքը եւ բոլորը գովեցին իր բարեսիրութիւնը եւ վեհանձնութիւնը:

Տիկին Սիրուհի կը բնակէր ծովամերձ թաղամասի մը նորակառոյց եւ արդիական շէնքերէն մէկուն մէջ: Ան ո՛չ միայն սեփականատէրն էր իր բնակած ընդարձակ յարկաբաժնին, այլեւ գնած էր երկու ուրիշ յարկաբաժնիներ, զորս վարձու կու տար: Իսկ շէնքին վարը ունէր վաճառատուն մը, ուր կը ծախէր գեղեցկագիտական արտադրութիւններ, անուշահոտեր, կնոջական արդուզարդեր ու նուրբ ճերմակեղէններ: Վաճառատունը այնքան ընդարձակ էր, որ տիկին Սիրուհի զայն բաժնել տուած էր միջնորմով. ներսի մասը վերածած էր գեղեցկագիտական սալոնի մը՝ իր բծախնդիր յաճախորդուհիներուն համար:

Հակառակ իր քառասուն գարուններուն, տիկին Սիրուհի այնքան խնամք կը տանէր իր մարմնական երեւոյթին եւ արդուզարդին, որ երեսուննոց կնոջ մը տպաւորութիւնը կը թողուր: Շատ մը երիտասարդներ կը դառնային շուրջը, սակայն ինք, փորձառու եւ խոհեմ կին, չատ երես չէր տար անոնց: Ան գիտէր ընտրել իր տարփածունները: Անոնք ընդհանրապէս հասուն տարիքով, բարձր դասակարգի եւ ամուսնացած մարդիկ էին, որովհետեւ անոնք կ'ըլլան գաղտնապահ եւ առատաձեռն, մինչդեռ երիտասարդները կ'ըլլան պահանջքոտ, փոփոխամիտ եւ անձնասէր:

Այո՛, տիկին Սիրուհի փորձառու եւ գործունեայ կին մըն էր:

Պզտիկ տարիքին ամուսնացած էր աղքատ երիտասարդի մը հետ, որ իրեն սիրահարած էր: Սկիզբները համակերպած էր այդ անշուք ու միօրինակ կեանքին, բայց շուտով յուսախաբ եղած էր: Խառնուածքով փառասէր էր ու նախանձոտ: Իրմէ նուազ գեղեցիկները կնքած էին աւելի լաւ ամուսնութիւններ եւ կ'ապրէին աւելի լաւ կեանք մը:

Տարի մը չանցած, տիկին Սիրուհի սկսած էր խարել իր երիտասարդ ամուսինը: Բայց անծանօթներու հետ այդ գաղտնագողի հանդիպումները չէին բաւարար գինք: Տիկին Սիրուհի չէր արհամարհեր մարմնական հաճոյքը, բայց փնտռածը այդ չէր: Ինք այն կիներէն էր, որոնք կ'ուզեն իրենց տեղը ունենալ մարդկային ընկերութեան մէջ, մեծարուիլ եւ նախանձը գրգռել իրենց շրջապատին: Ամուսնութեան լուծը կը կաշկանդէր ճիգերը եւ կը սանձէր ձգտումները: Եւ որովհետեւ մեծ բան չէր ակնկալեր իր ամուսինէն, զայն համոզեց, որ գաղթէ ուրիշ երկիր մը, ուր կրնար աւելի լաւ ապագայ մը կերտել: Մէկ խօսքով՝ ան որոշած էր բաժնուիլ իր ամուսինէն եւ ապրիլ իր միջոցներով:

Խնայողութիւններ չունենալով՝ դրամ փոխ առաւ ծանօթներէն եւ հոգաց գաղթող ամուսինին ճամբու եւ կեցութեան առաջին ամիսներուն ծախքերը:

Սկիզբները, սակայն, տիկին Սիրուհի չկրցաւ արժեւորել ձեռք ձգած անկախութիւնը: Ատեն մը կենակցեցաւ երիտասարդ վարորդի մը հետ, անկէ անցաւ միջին տարիքով պաշտօնեայի մը, բայց նիւթական վիճակը չբարելաւեցաւ: Նկատելով, որ այդ մարդիկը գինք կը շահագործէին, փոխեց իր ռազմավարութիւնը: Երկար փնտռումներէ ետք, վերջապէս գտաւ իր ուզածը, բաւական տարիքոտ, բայց հարուստ վաճառական մը, որ կը գոհացնէր իր բոլոր քմահաճոյքները:

Վաճառականը իրեն համար վարձած էր կոկիկ յարկաբաժին մը եւ կապած էր ամսաթուակ: Ան իրեն կ'այցելէր շաբաթը երկու անգամ եւ հետը կը մնար քանի մը ժամ միայն, որովհետեւ ամուսնացած ըլլալով, չէր ուզեր դժգոհ ձգել իր օրինաւոր կողակիցը, որ շատ ծանօթ եւ հարուստ ընտանիքի մը գաւազն էր, բայց գուրկ մարմնական հրապոյրէ:

Բացի ամսաթուակէն, վաճառականը կը հոգար հոմանունիին բոլոր ծախքերը եւ որոշ առիթներուն դրամական նուէրներ ալ կ'ընէր: Անոնց յարաբերութիւնը տեւած էր երեք տարի: Վերջին օրերուն, ան խոստացած էր կարեւոր գումար մը դնել դրամատան մը մէջ Տիկին Սիրուհի անունով, բայց յանկարծամահ եղած էր խոստումը կատարելէ առաջ:

Անկէ ետք, Տիկին Սիրուհի ունեցած էր քանի մը ժամանակաւոր տարփածուններ, որոնք տարիքոտ էին ու հարուստ: Արդէն ինքն ալ տարիքը առած էր: Իր տարփածուններէն ստացած գումարները իրարու վրայ բարդելով՝ ունեցաւ բա-

ւական կոկիկ դրամագլուխ մը, զոր փոխ կու տար բարձր տոկոսով: Յետոյ յարկաբաժին մը գնեց մասնավճարով նորակայուց շէնքի մը մէջ, ու նոյն շէնքին վարի յարկը վարձեց ընդարձակ խանութ մը, որուն ճակտին գրել տուաւ:

ՆՈՒՎՈԹԷ ՓԱՐՖԻԻՄԸՐԻ ԺԻՋԷԼ

Տիկին Սիրուհի խանութը շուտով դարձաւ վաճառք տիրակիներու եւ օրիորդներու ժամադրավայրը, ա՛յնքան՝ որ քանի մը տարիէն, ան արդէն գոցած էր իր պարտքերը եւ գնած երկու ուրիշ յարկաբաժիններ:

Տիկին Սիրուհի գլուխ քերելու ժամանակ չունէր: Հաւատարիմ ու գործունեայ օգնականուհի մը անհրաժեշտ էր: Այն ատեն յիշեց, որ ունէր զարմուհի մը:

—Մէկ քարով երկու թռչուն կը զարնեմ: Արտեմիսը տուն բերելով՝ կ'ունենամ հաւատարիմ, գործունեայ եւ աժան օգնականուհի մը: Միւս կողմէ՝ կ'արժանանամ բոլորի գովասանքին եւ բերանը գոցած կ'ըլլամ այն բոլոր ազգականներուն եւ ծանօթներուն, որոնք օրն ի բուն զիս կ'այլալեն ու կը բամբասեն:

—Դ—

Տիկին Սիրուհի վարդազոյն ռոպ տը շամպր մը անցուց թափանցիկ գիշերանոցին վրայէն եւ մօտեցաւ հայելիին: Դէմքը ճմռթկուած էր, մազերը՝ ցիրուցան, եւ աչքերուն կոպերը՝ ուռած: Մազերը կարգի դրաւ, այտերը շփեց, չպարուեցաւ ու անցաւ խոհանոց՝ առտուան սուրճը պատրաստելու համար:

Երբ ջուրը սկսաւ եռալ, քալեց մինչեւ միջանցքին ծայրը, մատնահարեց գոց դուռ մը եւ մեղմ ձայնով մը կանչեց.

—Արտեմիս, հոգի՛ս, սուրճը պատրաստ է:

Ներսէն լսուեցաւ աղջկան դժգոհ ձայնը՝ ան շատ յոգնած էր ու քնանալու պէտք ունէր:

—Արտեմիս, աղջիկս, ինչո՞ւ փակուած կը մնաս սենեակիդ մէջ. եթէ հիւանդ ես, բժիշկ կանչեմ:

—Շատ յոգնած եմ եւ քնանալու պէտք ունիմ:

—Երէկ իրիկուն պարոն Սելիմը հեռաձայնեց, ան կ'ուզէ քեզի հետ ըլլալ այս գիշեր:

—Այսօր շատ յոգնած եմ եւ չեմ կրնար ո՛չ ոքի հետ ըլլալ:

—Բայց պարոն Սելիմ մեր լաւագոյն յաճախորդներէն մէկն է: Ղրկած ծաղկեփունջը դահլիճի սեղանին վրայ է: Ինծի հասկցուց, որ բացի դրամականէն, քեզի աղուոր նուէր մը պիտի ընէ՝ աղամանդով մատանի մը: Գիտես որքա՛ն առատածերն է Պարոն Սելիմը, ան նոյնիսկ նպատակ ունի քեզի հետ շրջապտոյտի երթալու Եւրոպա:

—Զիս հանգիստ ձգէ՛, — պոռաց յանկարծ աղջիկը:

—Ի՞նչ պատահեցաւ յանկարծ, երէկ բան մը չունէիր: Սկիզբ-

ները աւելի լաւ կը վարուէիր յաճախորդներուն հետ, յետոյ դարձաւ աւելի պահանջոտ: Իրաւունք ունէիր, քեզի պէս զարգացած ու գեղեցիկ աղջիկ մը արժանի է միայն բարձր դասակարգի մարդոց: Հիմա բոլոր յաճախորդներդ բարձր դասակարգի մարդիկ են. Պարոն Սեդրակ դրամատան տնօրէն է, Պարոն Իպրահիմ՝ մեծահարուստ վաճառական, Պարոն Սամիր՝ նախարարի քարտուղար, Պարոն Սելիմ անոնցմէ ետ չի մնար: Ի՞նչ պատասխան տամ, ուրիշ ժամադրութիւն առաջարկե՞մ:

Արտեմիս չպատասխանեց: Տիկին Սիրուհի հեռացաւ՝ ճարահատ:

—Նախաճաշը պատրաստ է,— ըսաւ,— ըսածներս մի մոռնար, ես եկեղեցի պիտի երթամ:

Երբ մօրաքրոջ ոտնաձայնները անհետացան, Արտեմիս ելաւ անկողինէն: Այս լուսաւոր ու հանգստաւէտ սենեակը իր վրայ կը ձգէր մութ գնդանի մը տպաւորութիւնը: Լայն ու կակուղ այս անկողինը չարչարանքի սեղան մըն էր, ուր երիտասարդ մարմինը կը յանձնէր պատահական մարդոց, որոնք կրնային իր հայրը կամ մեծ հայրը ըլլալ: Եւ որպէսզի արժանապատուութիւնը չխոցուի, մօրաքոյրը կ'որոշէր ժամադրութիւնները եւ կը գանձէր իր մեղքերուն վարձքը:

Քանի՜ քանի՜ անգամներ, Արտեմիս մտածած էր իր որբանոցի փոքրիկ ճամբրուկը առնել եւ հեռանալ այս սենեակէն, որուն պատերը լուռ վկաններն էին իր ստորնացումին: Բայց ո՞ւր երթալ, որո՞ւն ապաւինիլ: Դուրսի աշխարհը պղտոր ու վերանոս մըն էր, ուր կը վիստային շանձուկեր, ութբազկեաններ եւ արիւնդուռ տղրուկներ: Նոյնիսկ չէր սորված արհեստ մը, գործնական գիտելիք մը, որպէսզի կարենայ պարկեշտ կերպով ապահովել իր ապրուստը:

Եթէ որբանոց մնացած ըլլար, ուսումը կ'ամբողջացնէր եւ կը մտնէր ուսուցչական ասպարէզ: Կ'ունենար շրջանակ, բարեկամներ, կ'ամուսնանար պարկեշտ երիտասարդի մը հետ:

Բայց իր միամտութեան եւ անճարակութեան պատճառով կորսնցուցած էր պատիւ ու պարկեշտութիւն, դարձած էր պերճադիճ, թէեւ թաղին մէջ, ոչ ոք տեղեակ էր իր ապրելակերպին: Մօրաքոյրը, որմէ շատեր կ'ակնածէին, այնքան լաւ կը պաշտպանէր զինք չար լեզուներէ: Նոյնիսկ շատ մը երիտասարդներ, բոլորն ալ օտար, խնդրած էին ձեռքը:

Այդ երիտասարդներուն համար Արտեմիս կը մարմնաւորէր գեղեցկութիւն ու երջանկութիւն, բայց անոնք ոչինչ կը ներկայացնէին իրեն համար, որովհետեւ մէկ հոգի միայն սիրած էր զինք՝ առանց բան մը ակնկալելու իրմէ: Բայց ինչպէ՞ս անոր հետ պիտի մտնէր երջանկութեան սեղանին առջեւ, երբ իր հարսանեկան ճերմակ հագուստով չէր կրնար կանգնիլ անոր քով եւ գլխուն կրել երկու սիրտերը կապող հարսանեկան նարօտը:

Այսօր ժամագրութիւն ունէր Նահապետին հետ: Բայց փոխանակ ուրախանալու, կը մռայլէր մէկու մը պէս, որ պիտի ներկայանայ ատեն՝ դատուելու համար:

Նահապետ իրեն մօտեցած էր անհուն գուրգուրանքով, որովհետեւ չէր գիտեր իր անցեալն ու ներկան, եւ մանաւանդ իր վարած մեղաւոր կեանքը:

Այս ժամագրութիւնը կրնար ըլլալ առաջինը եւ վերջինը:

—Մեր յարաբերութիւնը չի կրնար երկար տեւել, որովհետեւ հիմնուած պիտի ըլլայ սուտի եւ կեղծիքի վրայ: Առաջին վայրկեանին պէտք է անոր պարզեմ ճշմարտութիւնը: Պէտք է գիտնայ, թէ ո՞վ է սիրած աղջիկը:

Նահապետ առաջարկած էր, որ հանդիպումը տեղի ունենայ «Թրիանոն» ծաղարանին մէջ, որովհետեւ հոն է, որ առաջին անգամ տեսած է Արտեմիսը, հոն է, որ անոր ծաղկեփունջը դրկած էր: Բայց Արտեմիս կը նախընտրէր բնութեան գիրկը, որովհետեւ այդ ծաղարանը իր մեղքերուն ժամադրափայրն էր, եւ անոր սպասեակները գիտէին իր ո՞վ ըլլալը:

Նահապետ անմիջապէս ընթացք տուած էր Արտեմիսի փափաքին ու, թաքսի մը վարձելով՝ ուղղուած էին դէպի Նահր Գելպի գետափնեայ ճաշարանը:

Նահապետ ուրախ էր. երազը կ'իրականանար: Անմատչելի կարծած այս աղջիկը, ահա՛ իր կողքին էր: Ան ալ իրեն պէս կը սիրէր բնութիւնը, ծովուն անհունութիւնը, երկինքին կապոյտը, ծառերուն կանաչը, ծաղիկներուն ժպիտը: Ան կարդացած էր իր սիրային նամակները:

Ճաշելէ ետք, միասին քալած էին պատմական կիրճին մէջ: Նահապետ կը խօսէր, Արտեմիս մտիկ կ'ընէր:

Նահապետին անկեղծութիւնը, անոր խօսքերուն ջերմութիւնը կը գտնանէին աղջկան պապական սիրտը՝ զուլալ ու ջինջ աղբիւրի մը ջուրերուն պէս:

Ի՞նչ լաւ կ'ըլլար, եթէ ամէն օր, ամէն ժամ, այսպէս միասին ըլլային, ճեմէին ծովեզերեայ պողոտաներու վրայ, ձեռք ձեռքի բռնած, եւ իրիկունը միասին վերադառնային նոյն բնակարանը, կարդային նոյն գիրքերը, ունկնդրէին նոյն երաժշտութիւնը եւ միասին նստէին երջանկութեան սեղանին առջեւ...

Բայց, աւա՛ղ, այս երազը կրնար երբեք չիրականանալ: Այսօր, մութը կոխելուն պէս, պիտի բաժնուէին իրարմէ: Նահապետ պիտի երթար իր տունը, իսկ ինք պիտի մտնէր իր սենեակը, պիտի շարունակէր, պիտի զարգարուէր Պարոն Սալիմին հաճոյք պատճառելու համար:

Այս գաղափարը խոցեց Արտեմիսի սիրտը թունաւոր դաշոյնի մը պէս, աչքերը մթագնեցան եւ շուրջի գեղեցիկ տեսարանը նմանեցաւ լքուած գերեզմանատան մը:

Յանկարծ, դառնալով Նահապետին, Արտեմիս ըսաւ.

—Բոլոր իմաստունները եւ բանաստեղծները սէրը կը նկատեն զգացումներուն գերագոյնը, որ հաճոյքէ աւելի տառապանք կը պատճառէ, երկնատուր պարգեւ մը, որ կը շարժէ տիեզերքը: «Սէրը մահուան պէս զօրաւոր է», կ'ըսէ իմաստուն մը: Բանաստեղծ մը կ'արձագանգէ. «Սէրը տխուր է, աւա՛ղ»: Բոլորն ալ զայն կը նկատեն երկնատուր տառապանք մը եւ կը վերլիչեն անոր ստեղծած յուզումները եւ կ'ողբան անոր պարգեւած կարճատեւ երջանկութիւնը: Սիրային բոլոր մեծ վէպերը ողբերգական միջնորդութեամբ տունին եւ կը վերջանան սիրահարներուն բաժանումով կամ անոնցմէ մէկուն մահով: Ուրիշ իմաստուն մը ըսած է. «Երջանիկ կեանքերը պատմութիւն չունին»: Բանաստեղծները եւ վիպասանները գիտեն այդ, ուստի կ'ընտրեն զգայացունց նիւթեր՝ հարուստ վերլիպարումներով եւ պայքարներով, որոնք կը ծնին սիրահարներու միջեւ ցցուող մարդկային, ընկերային, բարոյական եւ նիւթական անյաղթահարելի խոչընդոտներէն:

—Ի՞նչ տեսակ խոչընդոտներ:

—Այդ խոչընդոտները փոխուած են դարէ դար: Անցեալին անոնք կը ծնէին ընկերային մակարդակի տարբերութենէն: Հարուստ եւ աղքատ, ազնուական եւ ռամիկ, կրօնական եւ ցեղային պատկանելիութիւն: Կար նաեւ բարոյական կողմը. ենթականերէն մէկը կրնար ունենալ պղտոր անցեալ մը: Բայց անկեղծ սիրահար մը կ'անտեսէ այս խոչընդոտները եւ կ'արհամարհէ հանրային կարծիքը, բայց շատեր զոհը կ'ըլլան անոր:

Հասած էին պոզոտային ծայրը:

—Ե՞րբ կրկին իրարու պիտի հանդիպինք,— հարցուց Արտեմիս:

—Որովհետեւ կը խօսինք սիրոյ տառապանքներու մասին, թո՛ղ մեր գալ հանդիպումը ուխտագնացութիւն մը ըլլայ: Մենք կ'ապրինք առասպելներով եւ խորհրդանշերով հարուստ երկրի մը մէջ: Կ'ուզէի, որ միասին այցելենք Աֆրիկայի քարայրը, ուրկէ ծնունդ կ'առնէ Նահր-Իպրահիմ գետը, զոր հիները կը կոչին Ադոնիս: Պէտք է շատ կանուխ ճամբայ ելլենք: Ես օր մը առաջ կ'ապահովեմ թաքսի մը:

—Թաքսի ապահովելու պէտք չկայ: Մէկ օրուան համար փոխ կ'առնեմ մօրաքրոջս ինքնաշարժը:

—Ե—

Արտեմիս, Արտեմիս, կը լիչե՞ս գարնան այդ առաւօտը, երբ երկինքը կը թրթռար մեր գլխուն վերերը՝ անշուշտփելի ադամանդի մը պէս:

Անթիլիասի նարնջենիները օդին մէջ կը սփռէին իրենց

զգլխիչ բոլորերը՝ մեզ արեցնելու համար, իսկ իրենց գիշերա-
յին թմբիրէն արթնցած ծովանոցները չարածճի խաղեր կը
խաղային ջուրերուն հետ: Յնծութիւն կար երկինքի մէջ եւ
երկրի վրայ եւ բնութիւնը, գիշերուան սեւ պատմութեանը
թօթափելէ ետք, իր ամբողջ մերկութեամբ պիտի յանձնուէր
կենսատու աստղի ջերմ համբոյրին:

Նահր Քելպի հազարամեայ արձանագրութիւնները մեր
հտին ձգելով, շեղելով դէպի ձախ, կանգ առինք ծովեզերեայ
բարձրադիր ժայռի մը առջեւ, որուն վրայ կայնած էր համեստ
մատուռ մը, ուր կիները ուխտի կու գային, որպէսզի Ասպետ
Սուրբը, որ իր ձիուն սմբակներուն տակ ճգմեց սեւ վիշապին
գլուխը, կատարէ իրենց ուխտը, ինչպէս փրկած էր այդ ժայ-
ռին շղթայուած կոյս իշխանուհին:

Մեր առջեւ կը տարածուէին ճունիի ծովածոցին գմբուխտ
ջուրերը, չրջապատուած բլուրներու մշտադալար մահիկով
մը: Մեր աջին, կանաչ բլուրներուն փակած կղմինտրածածկ
գողտրիկ տուններ կը զարդարէին եղեւնիներու զանգուածը՝
իրենց բոսոր յակինթով:

Տուներու այդ մեծ ու պզտիկ հոյերը ունէին խորհրդաւոր
ու գեղեցիկ անուններ, Հարիսա, Ղոսթա, Տիւթա, Տաֆնի,
Ժիթիթա, Ղազիր, Արամուն, Անթուրա...

Ահա վերջապէս Նահր-Իպրահիմ, առասպելական Ադոնիս
գետը:

Ինքնաշարժը իր չորս անիւներով կը կառչէր մագլցող
ճամբուն ասֆալթին եւ կը հնազանդէր մատնետուղ թիթեւ
հպումներուն՝ մարզուած նոյգի մը պէս: Ո՛չ մէկ դանդա-
ղում, ո՛չ մէկ վարանում, կարծես ճամբուն տիրուհին էիր եւ
գոց գիտէիր անոր նենգ դարձուածքները: Կը սուրայիր այս
օձապտոյտ ու նեղ ճամբուն վրայ փորձառու վարորդի մը
ինքնավստահութեամբ:

Արտեմիս, ո՛վ աչքիս լոյսը, ո՛վ անքուն գիշերներունս
անմար լապտերը, որքա՛ն գեղեցիկ էիր այդ օր: Կարծես
բնութիւնը կը պատրաստէր հեթանոս տօնահանդէս մը, որուն
աստղը դուն պիտի ըլլայիր:

Ու նստած քով քովի՝ կ'ըմբռնէինք բնութեան զարթնու-
մը, որ թռչուններուն երգն էր: Միասին կը չափէինք խորու-
թիւնը անդունդներուն: Երբեմն յաւիտենական Միջերկրա-
կանը մեր աչքին կը պարզէր իր ջուրերուն յարափոփոխ
խորհուրդը:

Բայց գոյութիւնդ միայն կը գրաւէր ուշադրութիւնս:
Առանց քեզի բնութիւնը այնքան գեղեցիկ պիտի չըլլար: Թար-
թիչներուդ իւրաքանչիւր շարժումը համանուագ մը կը յօրի-
նէր հեռաւոր աշխարհներու մէջ, եւ մագնետի իւրաքանչիւր
ծփանքը կը միացնէր իրարմէ հեռացած միգամածները:

Պահ մը անհետացար տեսողութեանս դաշտէն՝ դառնալու

Համար տիեզերքի հոգին: Միջերկրականը սկսաւ ողորալ լքուած ալրիի մը պէս, եւ տեսայ երկինքը, որ կ'իջնէր ծովուն վրայ՝ զայն արգասաւորելու համար:

Երկինքին եւ ջուրերուն սիրարանութիւնը արթնցուց տեն-
չանքս, եւ ակնարկ մը նետեցի քու կողմդ: Կրնմանէիր Միւոյի
վենիւսի արձանին: Կուրծքիդ ցցուածքները կը պաղատէին
երկու անտէր որբուկներու պէս եւ իգութեանդ խորհրդաւոր
ծալքը կը հանգչէր նորածին կոկոնի մը պէս:

Աննման դէմքդ կրկին նիւթականացաւ եւ խափանեց ամ-
բողջ տեսարանը, եւ երբ մազերդ հովուն գգուանքին տակ
տարածուեցան եւ աւլեցին միջոցը, երկինքը, ծովը եւ լեռները
անհետացան անժամանակ ամպերու պէս:

Գոյութիւնդ կը համակարգէր տիեզերքին կեանքը, եւ սրտիդ
զարկերը իրենց դանդաղ ու ամպարագիծ կշռովքը կը պար-
տադրէին աստղերու շուրջպարին:

Ասֆալթէ երիզը անցաւ գիւղերու նեղ փողոցներէն ու
վերջացաւ դարատափի մը վրայ, որուն մէկ անկիւնը, պուրակ
մը խնձորենիներ զգեցած էին ճերմակ ծաղիկներով հիսուած
իրենց պատմութեան:

Գահավիժող ջուրի ձայն մը կը լեցնէր ամբողջ տեսարանը:
Մեր ձախին, լերան ցից կողին մէջ կը բացուէր քարայրի մը
մուտքը: Աւելի վերը՝ լերան գագաթին ծերպերուն մէջ ձիւնի
չերտեր կը նշմարուէին:

Քաղցինք մինչեւ դարատափին ծայրը, որուն տակէն գա-
հավիժող ջուրը, հաւաքուելէ ետք աւազանի մը մէջ, պահ մը կը
հանդարտէր:

—Ահա՛ Աֆրկայի հռչակաւոր քարայրը, ուրկէ կը ծնի Ադո-
նիս գետը: Դարեր առաջ այս վայրին մէջ երկինքը միացաւ
երկրին: Գեղեցկութեան դիցուհին սիրեց երիտասարդ Ադոնի-
սը, որ որսորդ էր:

—Մեր օրերուն մարդիկ չեն հաւատար առասպելներու,
որովհետեւ կորսնցուցած են իրենց նախնական անմեղու-
թիւնը եւ անկեղծութիւնը:

—Բանաստեղծ մը րսած է. «Մարդը ինկած աստուած մըն է,
որ կը յիշէ երկինքը»: Հին ժողովուրդները կը հաւատային, որ
աստուածներ երբեմն մարդու կերպարանք կ'առնէին ապրե-
լու համար անոնր հետ: Մենդոցի առաջին գլուխներէն մէկուն
մէջ գրուած է. «Աստուծոյ որդիները, մարդոց աղջիկներուն
գեղեցիկ ըլլալը տեսնելով, անոնց մէջէն իրենց կիներ ընտը-
ցին»: Նոյնպէս աստուածուհիները սիրահարեցան եւ միացան
գեղեցիկ տղամարդերու: Անոնց գաւակները եղան կիսաստ-
ւածներ, այսինքն՝ արտակարգ հակներ, հերոսներ, սուրբեր,
բանաստեղծներ եւ արուեստագէտներ: Երբեմն այդ սէրերը
ունեցան ողբերգական հետեւանքներ, երբ գրգռեցին միւս
աստուածներուն նախանձը:

Հասած էինք քարայրին առջեւ, ուրկէ ջուրը կը գահավիժէր աւազանի մը մէջ եւ անկէ յորդելով ծնունդ կու տար սրբազան գետին: Աւազանին քովը կային փլատակ պատեր, պառկած սիւններ եւ քարէ սեղան մը, որ տակաւին կանգուն է: Խորանին վերը, ապակեպատ խցիկի մը մէջ, կանգնած է Տիրամօր արձանը, որուն առջեւ գիւղացիները մոմ կը վառեն կամ վայրի ծաղիկներ կը դնեն:

—Այս գիւղացիները, որոնք այսօր ծունկի կու գան Աստուածամօր արձանին առջեւ, զաւակներն են այդ նոյն փլունիկեցիներուն, որոնք կը պաշտէին Աֆրոտիթէն, Ասթարթէն անունին տակ, Աֆրոտիթէ կը խորհրդանշէր մարմնական գեղեցկութիւնը, իսկ Մարիամ՝ հոգեկան գեղեցկութիւնը եւ մայրութիւնը:

—Մայրութիւնը աստուածային շնորհք մըն է, որուն քիչեր արժանի են, ըսիր: Երբ պզտիկ էի, հոս քանի մը անգամ պտոյտի եկանք, որովհետեւ ծառեր կային, ջուր կար, խաղաղութիւն կար:

—Այս փոքրիկ դարատափը հին աշխարհին սրբատեղիներէն մէկն է: Ժամանակին այս լեռները, ձորերը, հովիտները եւ սարահարթները ծածկուած էին խիտ անտառներով, որոնց մէջ կ'ապրէին ամէն տեսակ կենդանիներ եւ երէններ: Ադոնիս, Կիպրոսի թագաւորին եւ Միլրոս թագուհիին զաւակը, կը սիրէր որսալ այդ անտառներուն մէջ: Օր մը, երբ յոգնած կը նիւնէր ծառի մը տակ, Աֆրոտիթէ զայն տեսաւ եւ սիրեց: Անոնք կենակցեցան այս գեղեցիկ բնութեան մէջ: Սակայն Ողիմպոսի աստուածները նախանձեցան եւ որոշեցին մէջտեղէն վերցնել այդ բախտաւոր երիտասարդը: Օր մը, երբ սովորականին պէս Ադոնիս որսի ելած էր, ահարկու վարագ մը խոյացաւ վրան եւ Ժանիքի մէկ հարուածով փորատեց զայն: Աստուածունհին լսեց երիտասարդին մահուան ճիչը եւ շտապեց անոր օգնութեան: Լուաց անոր վէրքերը իր արցունքներով եւ սրբեց իր հրաշալի մագերով, բայց չկրցաւ կեանքի կանչել իր սիրելին: Այն ատեն Գեղեցկութեան Աստուածունհին իջաւ մեռելներու աշխարհը եւ յաջողեցաւ իր աւաչներով եւ ողբերով մեղմացնել Մուիթ Աշխարհներու թագաւոր՝ անգուլթ Հատէսին սիրտը: Ադոնիս աչնան եւ ձմրան վեց ամիսները պիտի մնար մեռելներուն հետ, իսկ գարնան եւ ամրան վեց ամիսները՝ ողջերու աշխարհը: Ադոնիս կը խորհրդանշէր կեանքին հոյովնութիւնը, գարնան սկիզբը, ան կը յայտնուէր ողջերու աշխարհը եւ բնութիւնը կը զարթոնէր իրեն հետ, իսկ աչնան սկիզբը, ան կը վերադառնար մեռելներու աշխարհը եւ բնութիւնը կը սկսէր մեռնիլ:

Ջիս մտիկ կ'ընէիր յափշտակութեամբ ու միասին կը սաւառնէինք դարերուն վրայէն մինչեւ այն երանելի ժամանակները, երբ աստուածները կը սիրէին կենակցիլ մարդու աղջիկներուն հետ:

— Հին ժամանակներուն, Պիպլոս աշխարհի ամէնէն նշանաւոր քաղաքներէն մէկն էր եւ ան պատիւը ունի մարդկութեան նուիրուած ըլլալու իր այրուքները։ Հիմա ուժ տանք մեր երեւակայութեան եւ ոստում մը ընենք դէպի հեռաւոր անցեալը, տարուան այն եղանակին, երբ անցնելով Հասարակածին վրայէն, արեւը կ'իջնէ դէպի այծեղջիւրի զուգահեռականը։ Պիպլոս քաղաքը կը յորդի ուխտաւորներով, որոնք եկած են աշխարհի բոլոր կողմերէն։ Մանկամարդուհիներ եւ նոր հարսեր կը կրեն սպիտակ պարեգօտ։ Անոնց մազերը զարդարուած են ծաղիկներով։ Արդէն անվերջանալի թափօրը կը սողայ օձապտոյտ արահետին վրայ, ուրկէ եկանք։ Առջեւէն կը քալեն Աֆրոտիթի քրմուհիները՝ երգելով եւ պարելով։ Պատանիներ կը քալեն հարսերուն ետեւէն՝ ծարնարեռնուած ծաղիկներով եւ պտուղներով։ Ժողովուրդը կը կազմէր թափօրին վերջաւորութիւնը։ Քրմուհիները արդէն հասած կ'ըլլան գետի նուիրական ափին, մինչ թափօրին պոչը մղոններով կը քաշքշուի ծովափի աւազներուն վրայ։ Ուխտատեղին սա փլատակ տաճարն է, որուն խորանին վրայ կը բազմէր աստուածուհին մարմարակերտ արձանը։ Հարսերը եւ մանկամարդուհիները իրենց նուէրները մատուցանելէ ետք սիրոյ տիրուհին, կը քաշուէին մէկ կողմ։ Իսկ այրի եւ լքուած կիները կը մտնէին տաճար եւ կը միանային քրմուհիներուն՝ ողբալու համար իրենց դժբախտութիւնը։ Ոմանք կը քաշքշէին իրենց մազերը, կը պատուտէին իրենց հագուստները, ուրիշներ սուր քարերով կը վիրաւորէին իրենց կուրծքը եւ որովայնը։ Անոնք կ'ողորային Ադոնիսի մահը, որուն վէրքէն հոսող արիւնը կարմիրով կը ներկէր գետին վարարող ջուրերը։ Ուխտաւորները կը գիշերէին ծառերուն տակ եւ յաջորդ օրը պարելով եւ ողբերգելով կ'իջնէին դէպի քաղաք։

Այս պատմութիւնը յուզեցզգայուն սիրտդ, չրմներդ սկսան դողալ, կուրծքդ ելեւէջել, եւ արցունքի կաթիլներ մարգարտացան թարթիչներուդ վրան, եւ սկսար մանուկի մը պէս հեկեկալ, կարծես դուն եղած ըլլայիր Ադոնիսի մահուան պատճառը։

Նստած էինք քարէ փոքրիկ պատշգամի մը վրայ, որ հին կամուրջի մը մնացորդն էր։ Գետը կը հոսէր մեր ոտքերուն տակէն հեղուկ օձի մը պէս, որ կը փնտռէ Եղեմի ճամբան՝ նոր Եւա մը խարելու համար։

Օրը կիրակի ըլլալով, դարատափը ամալի չէր։ Քաղաքէն եւ ծովափնեայ շրջաններէն ընտանիքներ հոս կու գային՝ հաճելի օր մը անցընելու համար։ Խորովածին հոտը առած էր մթնոլորտը եւ թաւուտներուն մէջէն կը լսուէին պարի եղանակներ եւ ծափեր։

Որքան երազած էի այս վայրկեանը։ Նստած էիր քովս եւ շողացող ու ճկուն ձեռքդ դրած էիր ձեռքիս մէջ։ Գլուխդ կը

Հանգչէր ուսիս վրայ եւ մագերդ կը շոյէին այտերս: Ու ես ցած ձայնով քեզի կը պատմէի, թէ ինչպէս սիրեցի սեւ ու խորունկ աչքերով աղջիկ մը, երբ զայն առաջին անգամ տեսայ նստած ծաղարանի մը սեղանին առջեւ: Թէ ինչպէ՞ս, ամէն անգամ որ քեզ կը տեսնէի, կը փակուէի սենեակիս մէջ եւ ամբողջ գիշերը կ'ապրէի պատկերովդ: Դուն ինծի համար մաքրամաքուր եւ անարատ կոյսն էիր, երջանկութեանս պարիկը, անհասանելի իշխանուհին, որուն մէկ նայուածքը երանութեան տարիներ պիտի պարզեւէր ինծի:

Միւս ձեռքդ ալ առիւտիս մէջ ու նայեցայ երեսիդ: Շրթներդ կը դողային եւ արցունքի կաթիլներ բաժնուելով թարթիչներէդ կ'առուակէին այտերէդ վար: Կու լայիր յանցանքի վրայ բռնուած մանուկի մը պէս:

Յանկարծ ձեռքերդ քաշեցիր ձեռքերէս եւ «Նահապետ, ես քու սիրոյդ արժանի չեմ» ըսելով հեռացար: Զգացի, որ վիրաւորած էի արժանապատուութիւնդ: Կը հեռանայիր ինձմէ պահելու համար խռովքդ:

Երբ ոտքի ելայ քեզի հետեւելու համար, արդէն կորսուած էիր ուխտագնացներու բազմութեան մէջ: Կրնայի արագ քայլերով քեզի հասնիլ, բայց անտեսանելի ուժ մը կ'անդամալուծէր զիս:

Քեզ նկատեցի, երբ աստիճանաւոր արահետէն կը բարձրանայի դէպի քարայրը եւ կարմիր շրջագգեստդ նոր բացուած վէրքի մը տպաւորութիւնը կու տար:

Որքան ալ խորհրդաւոր, Աֆկայի քարայրը յատուկ հրապոյր մը չունի: Ուղեցի քեզ կանչել եւ զգուշացնել, բայց արդէն քարայրին երախը քեզ կու տուած էր: Ի՞նչ ընելու գացիր այդ աղմկոտ ու մութ խռոչին մէջ, ուր անցեային, Ադոնիսի քրմուհիները կը խօսէին ոգիներուն:

Կնոջական քմահաճոյք մը ըլլալու է, մտածեցի, զիս պատժելու համար թերեւս: Բայց կ'ուշանայիր: Առանց լոյսի կարելի չէր շատ հեռուները երթալ այդ փապուղիէն, որ կը խորանայ լերան ընդերքին, մանաւանդ երբ ջուրերը առատ են, ինչպէս այսօր, եւ կ'ողողեն եզերքները: Եւ յանկարծ յիշեցի Եւրիտիկէի առասպելը, որ Որփէոսի կողմէ փրկուելէ ետք, սխալ շարժումի մը պատճառով, երկրորդ ու վերջին անգամ իջած էր մեռելներու աշխարհը: Ոտքի ելայ ու խենթի մը պէս սկսայ վազել դէպի քարայրը:

Յանկարծ ամէն կողմէ աղաղակներ բարձրացան եւ քարայրին բերնէն ջուրին հետ դէպի վարի աւազանը գահավիժեց կարմիր կերպարանք մը: Կանչեցի անունդ եւ վազեցի դարատափին ծայրը, ուր կը գտնուէր աւազանը: Մարմինդ ծփալով կը դառնար ջուրին մէջ: Նետուեցայ աւազանին մէջ եւ կը ցայ սառն ջուրէն հանել իմ սիրելի Եւրիտիկէս:

— 2 —

Սակայն նոր Եւրիտիկէն երկրորդ անգամ պիտի չվերադառնար Մեռեղներու աշխարհէն, եւ այդ պիտի ըլլար իր սիրած աղջկան հետ Նահապետի առաջին եւ վերջին գիրկընդխառնումը։ Ան երբեք չհասկցաւ, թէ ինչու Արտեմիս ըսած էր. «Ես արժանի չեմ քու սիրոյդ»։

Արտեմիս կը հանգչի Հայոց Գերեզմանատան մէկ անկիւնը, ճերմակ շիրիմի մը մէջ, որ իր երազած հարսանեկան հագուստին գոյնը ունի։

Եւ ամէն կիրակի, Նահապետ ուխտի կ'երթայ եւ ճերմակ շուշաններու ծաղկեփունջ մը կը պտտեղէ անոր շիրիմին վրայ։

ՆՈՒՊԱՐԶԱՐԽՈՒՏԵԱՆ



ԿԱՐՊԻՍ ՀԷԶԻՄԵԱՆ

Բ Ա Ռ Ե Ր Ո Ւ Ն

Կեանքիս երկայնքին զուգահեռ զացող
Ստուերիս նման,
Բառեն՝ փրկեցիք զիս ամէն վայրկեան.
Դեռ վաղ մանկութեան տրտում օրերէս
Իմ պատանութեան, իմ հասունութեան
Իմ այս լիութեան եւ երջանկութեան
Օրերս մինչեւ եղաք դուք ի սպառ
Սփռփանքներու եւ զբօսանքի
Անսպառ ակունք, անվերջ թարմութիւն:

Բառեն, անճրելի նման տեղացիք
Իմ խաղամութեան եւ ամայութեան
Դաշտերուս վրան,
Եւ թարմաբուրեան առատօտներու
Նման բացուեցաք խոնջէնքիս վրան:
Արեւիկներու նման շողացիք
Մթութիւններու մռայլ, խաւարին:
Յուսահատութեան վիհերուս վրան
Աստղեր տեղացիք:
Իմ երջանկութեան եւ երանութեան
Անզուսպ պահերուն
Սահմաններ դրիք եւ զգաստութիւն:
Իմ ամեւութեան վայրկեաններուս դուք
Ուղղաթիւ ելքով փրկարար եղաք
Եւ ձեր ինքնաբաւ թեթեւ թեւերով
Դուք զիս վերստին
Հասցուցիք լոյսին:

Դուք՝ մասնիկներ մասնայատուկ
Վիճակներու, եղելութեանց,
Յուլացումներ՝ բիրտ, իրական աշխարհներու,
Միշտ գթասիրտ, պատրաստ եղաք
Զիս աանելու, փոխադրելու
Խռյանքներէ այլ խռյանքներ.
Անվերադարձ ճամբաներէ
Հաւաքելով մատուցներս



Ձիս ետ քերիք այն իրական
Յաւերժական ներկայութեան
Անվե՛րջ, անբա՛ւ
Ուր բառերը ալ կը լռեն
Եւ կը տիրեն խոր լռութիւն
Անդորրութիւն
Տիեզերքի-ժամանակի
Խորքերուն ծով
Եւ նոյնացած անոնցմով:

Հ Ա Յ Ե Ր Է Ն Ի Ն

Անօթութեան մէջ մեր անբաւ
Եւ ծարաւին
Շնչեցինք քեզ քու քաղցրաբոյր
Շունչդ տաքցուց մեր ցրտահար
Մարմինները եւ հոգին:
Եւ քաղցրահամ քաղցրահնչիւն
Բառերդ մեզ կերակրեցին
Եւ ընպեցինք այն էին զինին
Ակունքներդ հասնող մեզի
Մարաններէն մեր անցեալի:
Քեզմով տարուած
Քեզմով զինով
Մենք զիշերներ լուսցուցինք:
Մեր ցրտահար հոգին քեզմով
Ջերմացուցինք.
Օտարութեան անծայրածիր
Կայաններուն մէջ անվերջ
Երգեցինք քեզ անընդմէջ
Եւ մեր սիրտը քու սրտիդ
Եղաւ այնքան մօտ ու սերտ
Այնքան քեզմով լիացանք
Որ մեր մորթէն
Քու սեփական
Բոյրդ կու գար:



ԿԱՐՊԻՄ ՀԷՔԻՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՄԻՐ ԹԵԼԸ

ՀԵՂԻՆԱԿ
ՀԱՆՐԻ ՏԱՆՔԵՐ

ՊԱՏՇԱՃԵՑՈՒՄ
ՓՕԼ ՊԷՆԹԷՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

(Տասնհինգ օր ետք, յետմիջօրէ: Էլիզապէթ երկա-
րած է տիւանի մը վրայ: Ֆրէճօյտ, անոր դիմաց, կը
փորձէ հիւանդին ուշադրութիւնը սեւեռել տալ փայ-
լուն առարկայի մը վրայ, որ կը նմանի աթոռի մը
վրայ դրուած երաժշտական գործիքի մը, մինչ նոյն
ատեն փորձելով հիպնոսացնել զայն):

ՖՐԷՅՏ.— Կեղքոնացիր... Աչքով հետեւէ այս շարժումին: Հիմա
կը քնանաս, յոգնած ես, կ'ուզես քնանալ, քնանալ,
քնանալ... Լա՛ւ: Հիմա երկինքը մոռալ է... Գիշեր
պիտի ըլլայ, դուք կը ծփաս մութին մէջ, կը ծփա՛ս:
(Ֆրէճօյտ ուշադիր է, որովհետեւ առաջին անգամն
է, որ Էլիզապէթ պիտի քնանայ): Էլիզապէ՛թ, կը
լսե՞ս զիս: (Էլիզապէթ գլխու նշան մը կ'ընէ այն-
պէս՝ ինչպէս կ'ընեն հիպնոսացած անձերը): Բարձ-
րացուր աջ ձեռքդ... Վար իջեցուր: (Էլիզապէթ կ'եր-
կարէ պրկուած ձեռքը: Վստահ ըլլալու համար՝
Ֆրէճօյտ կը կռթնի Էլիզապէթի բազուկին, բայց
Էլիզապէթ կ'ընդդիմանայ): Հիմա, երբ ես կը հրա-
հանգեմ, պիտի բարձրացնես սրունքներդ: Եւ այս
ամբամ որեւէ ցաւ պիտի չգգաս: Կը հասկնաս: Որեւէ
ցաւ: Լա՛ւ: Վերցուր սրունքներդ: (Ֆրէճօյտ կը կեդրո-
նանայ): Վերցո՛ւր սրունքներդ:

ԷԼԻԶԱՊԷԹ (կը բանայ աչքերը).— Ձեմ կրնար: Կարելոր չէ.
գիտե՛ք... Շատ կարեւորութիւն կ'ընծայե՛ք ատոր, տո՛ք-
թոր: Եւ յետոյ, քնաւ քուն չունիմ: (Աւելի լայն կը

բանայ աչքերը: Ֆրէօյտ բացարձակապէս չի մասնակցիր կատակին): Կարծէք քարկացած կը թուիք ինծի դէմ:

ՖՐԷՅԸՅՏ.— Այո:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Կը ցաւիմ: Գիտե՛ք, որ կը փորձեմ, դժուարութիւն ունիմ: Բայց... ինչո՞ւ այս մէկը չի յաջողիր: Ինչո՞ւ չի յաջողիր ինծի հետ:

ՖՐԷՅԸՅՏ. *(Ժածկելու համար իր սեփական անձկութիւնը եւ վատահոգութիւնն ներշնչելու համար էլիզապէթին).*— Որովհետեւ դուք չէք օգներ ինծի... Եւ ապա կան ըմբոստութիւններ, ինչ ընենք:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Ուրեմն, ոչինչ կարելի է ընել անոնց, այնպէս չէ՞:

ՖՐԷՅԸՅՏ.— Տեսած եմ մարդեր, որոնք ապստամբ էին օր մը եւ յաջորդ օր նոյնը չէին:

ԷԼԻԶԱՊԵԹ. *(յանկարծ ձգտուած).*— Երկու շաբաթ է, որ կը տեսնեմ այս փորձերը եւ դուք ինծի միշտ վազը կ'ըսէք: Եւ ոչինչ կը պատահի:

ՖՐԷՅԸՅՏ. *(կը բռնէ էլիզապէթի ձեռքը).*— Լա՛ւ, այսօր հոս կանգ կ'առնենք:

(Կը դառնայ էլիզապէթին՝ վերադարձնելու համար անթացուպէրը, բայց այս կապը մասնաւոր ազդեցութիւն մը միայն կ'ունենայ վրան: Ուշացնելու համար մեկնումի վայրկեանը, էլիզապէթ կը հարցնէ).

ԷԼԻԶԱՊԵԹ.— Երբ դուրս կու գամ ասկէ, ի՞նչ կ'ընէք դուք:

ՖՐԷՅԸՅՏ.— Ի՞նչ կ'ընեմ:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Այո: Ձեր մնացեալ ժամանակին... Ի՞նչ կ'ընէք ձեր միւս օրերուն... գիշերներուն:

ՖՐԷՅԸՅՏ.— Օ՛հ, մարդիկ միշտ կը կարծեն, որ թիշկները հրապուրիչ կեանք մը ունին: Մենք կ'ապրինք՝ ինչպէս քոյրը,— աշխատանք, բիշ մը ընթերցում, ատենատեն քատրոն. քաղաքական տարտամ խօսակցութիւն մը, եւայլն:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Նոյնիսկ ձեր կնո՞ջ ներկայութեան:

ՖՐԷՅԸՅՏ. *(աւելի գուսպ).*— Կը պատահի:

(Կ'ուզէ մեկնել, բայց էլիզապէթ բառով մը կը կեցընէ գինը):

ԷԼԻԶԱՊԵԹ.— Երբեք մտածած է՛ք, թէ ես ի՞նչ կ'ընեմ, երբ կը քաժմուիմ ձեզմէ:

ՖՐԷՅԸՅՏ.— Բանաստեղծութիւն կը գրէք, կը նկարէք, կար կ'ընէք՝

աղփատներում համար՝ ձեր սպիտակ ձեռքերով, եթե յիշողութիւնս չի դաւանանք ինծի:

(Ֆրէճօյտ կ'անդրադառնայ, թէ էլիզապէթ յուսահատական ճիգ մը կ'ընէ մնալու):

Էլիզապէթ.— Պէտք է որ անցնիմ խոստովանութիւններում... Իմ բանաստեղծութիւններս այնքան ալ լաւ չեն:

ՖրէճօՅՏ *(կը նայի անոր)*.— Բայց համալսարանի ձեր բարեկամները...

Էլիզապէթ.— Անոնք բարեկամներ են: Ու ես կը վախճամ ատկէ: *(Յանկարծ կը փոխէ նիւթը)*: Երբեմն, երբ ներքմաւսնեալը ձեզի կը սպասեմ, ամ կ'անցնի դիմացէս այնպիսի՝ հանդիսաւորութեամբ մը, որ հիացում կը պատճառէ ինծի:

ՖրէճօՅՏ.— Անոր մասին խօսուած ատեն՝ «հանդիսաւորութիւն» բառը երբեք չի պատկերանար ինծի:

Էլիզապէթ.— Իրապէ՞ս:

ՖրէճօՅՏ *(խօսելով կ'առնէ անթացուպերը)*.— Ան բռնաւոր մըն է: Առանց հետը խորհրդակցելու՝ հագի՛ւ թէ կը համարձակիմ հիւանդ մը ընդունիլ: Սակայն կ'արժէ որոշ գիշումներ ընել իրեն: Դեռ չեմք համարձակիր վնասել իրեն ինչ որ իրապէս կ'արժէ:

Էլիզապէթ.— Բայց ես Գաթիին մասին չեմ խօսիր:

ՖրէճօՅՏ.— Օ՛հ, ուրեմն խօսքը կ'ըն՞չս մասին է:

Էլիզապէթ.— Այո:

ՖրէճօՅՏ.— Հետաքրքրական է, որ իր հանդիսաւորութիւնը գրաւած է ուշադրութիւնդ:

Էլիզապէթ.— Երբ կիմ մը գտած է իր սիրած անձը, ոչ մէկ բան կրնայ չարիք հասցնել իրեն:

(Ֆրէճօյտ անթացուպերը կ'երկարէ, բայց էլիզապէթ չ'առնէր զանոնք):

ՖրէճօՅՏ.— ...Բնաւ սիրահարուած էք:

Էլիզապէթ *(համարձակօրէն կ'անդիտանայ հարցումը)*.— Առաջին անգամ ռուր հանդիպած էք ձեր կնոջը:

ՖրէճօՅՏ.— Հոս... Իր կողմէ քիչ մը համարձակութիւն կ'ենթադրէ այդ հանդիպումը, այդպէս չէ՞: *(էլիզապէթ կը թօթոտէ ուսերը)*: Մի նեղէ՛ք դուք ձեզ: Սկած էր քոյրս տեսնելու: Միակ ակնարկ մը մտնեցի վրան եւ արդէն կորսուած էի:

Էլիզապէթ *(չէզոք)*.— Ահա թէ ինչպէս պէտք է ծնունդ առնէ սէրը: Բացարձակ: Յանկարծակի:

*(Լուսինն: էլիզապէթ կը սկսի վար առնել սր-
բունքները, բայց այդ շարժումը յայտնապէս ցաւ կը
պատճառէ իրեն):*

ՖՐԷՅԸՍ.— Այսօր աւելի՞ շատ կը ցաւիմ սրտմմներդ:
ԷԼԻԶԱՊԷԹ.— Ո՛չ, ո՛չ:
ՖՐԷՅԸՍ.— Այն ձեռով, որ կը շարժի...

*(Ֆրէյտը կը ծռի՝ քննելու համար էլիզապէթի
սրունքները:
էլիզապէթ հտ կը քաշէ զանոնք):*

ԷԼԻԶԱՊԷԹ.— Ոչ, կ'աղաչեմ: (Ֆրէյտը չի պնդեր իր տպաւորու-
թեան վրայ ու հտ կը քաշուի: էլիզապէթ ոտքի
կ'ելլէ):

ՖՐԷՅԸՍ.— Հարցումիս չպատասխանեցիր:
ԷԼԻԶԱՊԷԹ.— Ողջ կեանքիս մէջ միակ անձ մը սիրած եմ, Շարլո-
թը:

ՖՐԷՅԸՍ.— Ձեր բո՞լորը:
ԷԼԻԶԱՊԷԹ.— Միաժամանակ քարեկամուհիս: Եթէ միա՛յն մանչ-
ցած ըլլայիք գիմք: Շուքուցիչ էակ էր: Եւ այնպիսի՝
մեծ ազդեցութիւն մը ունէր մարդոց վրայ: Աւելի ուշ,
երբ սկսաւ տառապիլ, մերողամտութիւնը համակեց
գիմք, ուրախութիւնը, մաշու համբարատարութիւնը:
Իր մահէն ասդիմ, ես...

ՖՐԷՅԸՍ (մեղմօրէն).— Առանձին:
ԷԼԻԶԱՊԷԹ.— Նոյնիսկ հիմա, յաճախ առտումները, առանց բռն-
քովիմ արթննալու... Ես կը գգամ, որ ան հոն է:
Ուտումով մը կը շտկուիմ ա՛յնպէս՝ որ կարծես կը
սպասեմ իրեն... Բայց, ամշուշտ, ան չի գար: (Յան-
կարծ կը նայի Ֆրէյտին: Լուսինն): Ինչ ձախող
գաղափարներ պիտի յայտնեմ քեզի իմ մասին, հը՞:
Դուք գիտիք պիտի կարծե՞ք անհամբոյր անձ մը, աշխար-
հէն կտրուած: Մարդ մը՝ իր բոյնիմ մէջ: Վստահա-
բար: (Ֆրէյտը սեւեռաբեր կը նայի իրեն): Ես այդպէս
չեմ: Գիտե՞ք: Համանուագներու կը յաճախեմ: Թատ-
րոն կ'երթամ: Մեմք բազմաթիւ հիւրեր կ'ընդունիմք:
Տունը միշտ կը յորդի մարդոցմով, խնդուքի փայլակ-
ներով, երթեւեկներով, երաժշտութեամբ: Եւ մար-
դիկ, շատ մարդիկ...

ՖՐԷՅԸՍ (յետին մտքով).— Նրիտասարդներ:
ԷԼԻԶԱՊԷԹ.— Այո: Եւ երբ օդը գեղեցիկ ըլլայ, մեմք... ես...
վերջապէս, մարդիկ կ'ըսեն. «Նրբամբ վոն Ռիթթը-
րենց թէյ մը առնեմք եւ հիանամք իրենց վարդերով»:

ՖՐԷՕՅՏ.— Ձեր մախադասութիւնը սկսաք «Մեմֆ» ըսելով...
 ԷԼԻՋԱՊԷԹ.— Որովհետեւ մեմֆ, Շարլոթը եւ Ես, ունինք սովորութիւնը... Կը հասկնաք, իր սիրտին վիճակը կ'արգիլէր իրեն ամէն յոգնութիւն... Կ'արգիլէր մոյմիսկ թեթեւ յոգնութիւն մը, հետեւաբար ես իմֆս կ'ընէի գործերը... իսկ իմֆ կը մատեր հնձուած խոտին մէջ եւ հիւրերը կը բոլորուէին շուրջը: *(Երազելու ձեւ մը կ'առնէ)*: Շարլոթ կը սպասարկէր անուշեղէններ եւ պիծակները կը թռչկոտէին իր ձեռքերուն շուրջը, մօտը՝ կապոյտ, կանաչ ու մանիշակագոյն հղրեւանիներու: Ամէն ինչ կը դառնար շուրջը... *(Թանկարծ կանգ կ'առնէ)*: Հիմա ես իմֆս կը մատիմ մոյմ տեղը, թէյը եւ կը լեցնեմ եւ ուրիշներ կը մատուցանեն բաժակները... Եկէք օր մը հոմ մեր տեսութեամբ: Իմֆ— մաշարժը կը ղրկեմ... Տիկին Յրէյոյսը եւս կրնայ գալ: *(Յրէյոյս, ինչպէս վարժ է հիմա, կ'երթայ կը բանայ դուռը: Բայց էլիզապէթ կը կեցնէ զինք)*: Կ'ուզէի ըսել ձեզի... Այդ արձանիկներուն հաւաքածոն չափազանց մեծ հիացում կը պատճառէ ինծի:

(Էլիզապէթ ցոյց կու տայ արձանիկներու հաւաքածոն):

ՖՐԷՕՅՏ.— Սիկարէն ետք, իմ միակ մոլութիւնը:
 ԷԼԻՋԱՊԷԹ.— Կը խորհէի, թէ ամենք մուրներ էին... *(Կարծադար մը)* ձեր կմոջ կողմէ:

(Կ'երթայ դէպի հաւաքածոն եւ կ'առնէ արձանիկ մը):

ԷԼԻՋԱՊԷԹ *(կ'ընդմիջէ զինք)*.— Իսկ այս մէկը ձեր գրասեղանին վրայ էր առաջին օրը: Այնպէս չէ՞:

ՖՐԷՕՅՏ.— Վերջերս Նանսիէն բերի գայմ:

(Յրէյոյս կ'առնէ Ժանիւսը: Եւ քանի որ էլիզապէթ երկու ձեռքերով բռնած է անթացուպերը, զգուշութեամբ զայն ցոյց կու տայ անոր):

ԷԼԻՋԱՊԷԹ.— Ժանիւսի գլուխ մը: Կամ աւելի ճիշդը՝ իր յրկու գլուխները: Թերը եւ դէմը: *(Կը հիանայ անոր վրայ)*: Էրբիւրօսք արձանիկ է:

ՖՐԷՕՅՏ.— Գիտէք, իմ հաւաքածոն... կը մտնի ձեր բամաստեղծութիւններուն, ըսել կ'ուզեմ՝ ոչ ամբողջականօրէն վաւերական: Լաւ կրկնօրինակ մըն է:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Շատ լաւ կրկնօրինակ մը: *(Միշտ հիասթափանք՝ անոր հանդէպ: Երկուքը իրարու շատ մօտ կանգնած են: Էլիզապէթ, յանկարծ):* Քանի որ մենք կը գտնուինք խոստովանութիւններու մթնոլորտի մը մէջ... ըսեմ, որ ես բազմաթիւ քանաստեղծութիւններ գրած եմ: Զեզի համար:

ՖՐԵՅԵՏ.— Ինձի՞ համար: Պիտի ուզէի կարդալ զանոնք:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Իրապէ՞ս:

ՖՐԵՅԵՏ.— Իրապէս...

ԷԼԻԶԱՊԵԹ.— Աւարտած չեմ դեռ, եւ միւսներէն աւելի լաւ չեմ: Տասնմէկ քանաստեղծութիւն եւ ոչ մէկ աւարտուն գործ:

ՖՐԵՅԵՏ.— Երբ օր մը աւարտին՝ կու տա՞ք ինձի կարդալու:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Թերեւս... Այնպիսիներ կան անոնց մէջ, զորս ոչ ոք պէտք է տեսներ: Ոչնչացուցի բոլորը:

ՖՐԵՅԵՏ.— Ինչո՞ւ: Ինչէ՞նք կը վախճայիք:

ԷԼԻԶԱՊԵԹ. *(կը զգայ անձկութեան տապալակ սաստկացումը):*— Զեմ կրնար քացատրել ձեզի:

ՖՐԵՅԵՏ.— Փորձեցէ՛ք:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Պիտի չհասկնայիք: Ոչ ոք կրնայ հասկնալ:

ՖՐԵՅԵՏ.— Եթէ փորձէիք, թերեւս ես հասկնայի:

ԷԼԻԶԱՊԵԹ. *(նոյն խաղը):*— Կ'աղաչեմ... Շունչս կը հատնի... Կը խեղդուի՞մ... Այն տպաւորութիւնը ունիմ, որ պիտի իյնամ... Այո՞, կ'իյնամ:

ՖՐԵՅԵՏ. *(Հանգստացնելու համար գինք):*— Այլեւս հոգը չէ՛ք զգար ձեր ռոմիմ տակ... Հաստատուն ոչ մէկ քան, այնպէս չէ՞: Դատարկութիւնը... Անշուշտ: Դուն միմալդ չես, որ այդ տպաւորութիւնը կ'ունենաս:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Օ՛հ, Տէ՛ր Աստուած... Ցաւ ունիմ, այնքան խոր ցաւ...

(Էլիզապէթ այնքան կը դողայ, որ ձեռքէն վար կ'իյնան անթացուպերը: Սակայն Ֆրէյցտ կը վերցընէ գինք ու վայրկեան մը կ'առնէ բազուկներուն մէջ: Կը մօտեցնէ քանակէին: Արագ մը կը ծռի եւ կը քննէ անոր ոտքերը):

ՖՐԵՅԵՏ.— Էլիզապէ՛թ: Ի՞նչ եմ այս կապոյտ տեղերը:

ԷԼԻԶԱՊԵԹ. *(նախ՝ ցած ձայնով, որ աստիճանաբար կը բարձրանայ):*— Այդ գիշերը... կը գտնուէի երկար ու մութ նրբանցի մը մէջ, աղտոտ... Միւս ծայրէն՝ դուռ մը բացուեցաւ: Լոյսիմ մէջ տեսայ մարդ մը, որ նշան մը ըրաւ ինձի: Զէի կրնար շարժիլ: Ապա տեսայ, որ դուք էիք: Զեք կողմը դարձած էի: Երբ դուռը հասայ՝ գայն զոցեցիք երեսիս: Այն ատեն սկսայ դուռը զարնել

ամբողջ ուժովս: Ըսի. «Համի՛ք, թո՛ղ տուե՛ք իմծի մերս մտնել»: Բայց դուք չբացիք դուռը: Արթնցայ: Մտածեցի. «Պիտի շարունակեմ առանց իրեն: Պիտի քայլեմ առանձինս»: Ելայ անկողնիս: Ոտքի կանգնեցայ: Նոյնիսկ քայլ մը առի... Ապա ամէն ինչ մուղեցաւ: Մնացի տախտակամածիմ վրայ ուժասպառ, միմակ: Ատեցի սրումքներս... ծեծեցի գանձոք, գանձանք: Կռծեցի՛: Ծեծեցի՛... Ե՛ս պէտք է մեռնեի եւ ոչ թէ քոյրս: Մարդիկ թաղեցին այն քոյրը, զոր պէտք չէ թաղելիմ:

(Ֆրէճօյտ օգնութեան ո՛չ շարժում մը կ'ընէ, ոչ ալ կը փորձէ հանգստացնել զայն: Վերջապէս, երբ էլիզապէթ կը փղձկի, կը մօտենայ անոր եւ ձեռքը կը դնէ ուսին: էլիզապէթ կը սարսուռայ, ապա կը բարձրացնէ գլուխը, կը նայի Ֆրէճօյտին եւ կը սեղմուի անոր, պահելով դէմքը:
Ֆրէճօյտ կ'երթայ բերելու գաւաթ մը եւ դեղահատ կու տայ էլիզապէթին):

ՖրէճօՅՏ.— Առ ասիկա (էլիզապէթ գլխով նշան մը կ'ընէ: Ֆրէճօյտ կը քաշուի եւ կը մօտենայ Ֆարատէի մեքենային եւ կը տեղաւորէ ապակիի ճիւղտը էլիզապէթի սրունքներուն երկայնքին, կայծեր ցայտեցնելով): Հիմա ի՞նչ կը զգաք:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Ոչինչ:

ՖրէճօՅՏ (կ'ուժեղացնէ հոսանքը).— Հիմա՞:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Ապստեղէք: Այո: Աւելի լաւ է:

ՖրէճօՅՏ.— Էլիզապէթ... Վստա՞հ ես, որ ասիկա կը մեղմէ ցաւդ:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Օ՛հ, այո՛: Երկար ատենէ ի վեր առաջիմ անգամն է, որ գրեթէ ցաւ չեմ զգար: Այո՛: Այո՛: Կը սիրեմ այս դարմանումը: (Կը հնչէ մուտքի դրան զանգը: Ֆրէճօյտ կը կեցնէ մեքենան եւ տեղը կը դնէ ապակիի ճիւղտը): Վաղը մօրէմ պէտք պիտի ունենամք ասոր: Եւ ամէն օր: Այնպէս չէ՞: (Մարթա կը բանայ մուտքի դուռը եւ ներս կ'առաջնորդէ Ֆրեդերիկը):

ՖրէճօՅՏ.— Բնակամարար:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Դուք յայտնաբերած էք միշտ այն, որ պէտք է իմծի: Վստահ եմ ատոր:

ՖրէճօՅՏ.— Շատ լաւ, եթէ ասիկա կը համզատացնէ քեզ:

(Կը բանայ դուռը եւ Մարթա, Ֆրեդերիկի հետ, կը մտնէ գրասենեակ):

ԷԼԻԶԱՊԵԹ (չէր նկատած անոնց մուտքը).— Օ՛հ, շա՛տ: Ամիսներէ ի վեր այսքան լաւ չեմ զգացած իմ գիմքս:

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Սքանչելի է, Լիզբլլ: Ինչպէ՞ս կ'ըլլայ, եթէ այս յետ-
միջօրէին պտոյտ մը ընենք Փրաքերի մէջ:

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Ինչո՞ւ չէ, Լիզբլլ:

ԷԼԻԶԱՊԵԹ.— Եթէ բժիշկը ինք արտօնէ ինծի...

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Հրաշալի: Ի դէպ, էլիզապէթ ըսա՞ւ ձեզի, որ անց-
եալ գիշեր ընթրեցիմք Տոքթոր Թոսիկի մօտ: Թոսիկ
շատ աւելի լաւ գտաւ զինք:

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Իրապէ՞ս: Լաւ, շատ լաւ:

(Ֆրէժօյտ կը վերադառնայ իր գրասենեակը):

ԷԼԻԶԱՊԵԹ.— Յտեսութիւն, տոքթոր. Տիկին Մարթա...

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Յտեսութիւն, էլիզապէթ:

ՄԱՐԹԱ.— Օրիորդ... *(էլիզապէթ եւ Մարթա կը փոխանակեն
կտրուկ բարեւներ, մինչ Ֆրետերիք դէպի ելքի դու-
ռը կ'առաջնորդէ էլիզապէթը: Մարթա կը մտնէ
գրասենեակ, ձեռքին՝ բուրդէ կարմիր կծիկ մը եւ
Հիւսելու ծառայող միկեր):* Հրաշալի է, չէ՞:

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Հրաշալի՞:

ՄԱՐԹԱ *(գրադած ըլլալով իր բուրդը աթոռի մը վրայ դնելու
գործով, չի տեսներ ամուսինը):*— Այո, թող աւելի լաւ
զգայ ինքզինք:

*(Մարթա կը տեղաւորէ բուրդը, բայց Ֆրէժօյտ չի
նայիր իրեն):*

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Աւելի լաւ չի զգար ինքզինք:

ՄԱՐԹԱ *(մխրճուած ըլլալով իր գործին մէջ, կը խօսի առանց
ուշադրութիւն ընծայելու ինք իր ըսածին):*— Այն
ատեն, ինչո՞ւ այդպէս կ'ըսէ:

(Ֆրէժօյտ խուսափուկ շարժում մը կ'ընէ):

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Ինքզինք ապահով զգալու համար:

ՄԱՐԹԱ.— Եթէ դու յաջողիս այս մէկուն մէջ, արդէն շատ աւելիմ
ըրած կ'ըլլաս, քան միւս բժիշկները:

ՖՐԵՏՏՆԵՐԻՔ.— Ատիկա մամաւանդ իմ ապահովութեան համար էր:
Ի՛մ: Ահաւասիկ դարմանումի տեսակ մը, զոր կը
կիրարկէ բուսականութիւնը, Մարթա: Հիւանդն է, որ կը
հանգստացնէ իր բժիշկը, որովհետեւ բժիշկ կոչուած
ապուշը որեւէ քանի վստահութիւն չունի:

ՄԱՐԹԱ *(միշտ իր աշխատանքով տարուած):*— Նայէ: Օրօրացիմ
համար լաւ է այս ծածկոցը, չէ՞: Թաւիշի մը կամ մուրր
կտաւի մը փոխարէն: Բայց եթէ ծնողը մամշ մը ըլլայ,
պիտի աւելցնեն պզտիկ օղակ մը, քիչ մը աւելի գեղեց-

կացնելու համար ամբողջութիւնը... (Վստահ ըլլալով, որ Ֆրէճօյտ որեւէ ուշադրութիւն չ'ընծայեր իր ըսածին, Մարթա, կը շարունակէ նոյն ոճով): Եթէ աղջիկ մը ըլլայ, կ'առաջարկեմ խեղդել զինք: Ինչպէս կը խեղդեն կատուները: Ի՞նչ կը մտածես այդ մասին:

ՖրէճօՅՏ (մտաջիւր).-- Այո՛: Այո՛: Ինչպէս որ կ'ուզես:

ՄԱՐԹԱ (յանդիմանական շեշտով).-- Սիկմը՛նտ:

ՖրէճօՅՏ.-- Ըսածս կատակ էր: Այսուհանդերձ, էլիզապէթ ձեռացուց, որ իմ կիրարկած բժշկութիւնս կազդուրեց զինք...

(Շուտով ջղայնութեան ու ձախողութեան մէջ կը խորի:

Կ'առնէ ճիւղտը գործիքէն ու կը նետէ գետին:

Մարթա կը ծռի՝ հաւաքելու համար ապակիի կտորները):

ՄԱՐԹԱ.-- Սիկմը՛նտ: (Մարթա վար կը դնէ կծիկը եւ սպասուհիի մը պէս կը հաւաքէ ապակիի կտորները):

ՖրէճօՅՏ (կը փորձէ արգիւել անոր).-- Մի՛ դալճիր ատար... Կը վիրաւորես մատներդ:

ՄԱՐԹԱ.-- Օ՛հ, պիտի նկատէի՞ր այդ մէկը:

ՖրէճօՅՏ.-- Դեհ, Մարթա՛...

(Քաթի ներս կը խուժէ՝ աղմուկին ի լուր):

ՔԱԹԻ.-- Տէր Աստուած, ի՞նչ տեղի կ'ունենայ: Օ՛հ, կոտրեցի՞ք զայն: (Ինք եւս կը ծռի): Ինծի ձգեցէ՛ք այս գործը:

(Քաթի կը մէկտեղէ կտորները քուրջի կտոր մը մէջ):

ՖրէճօՅՏ.-- Երկուքդ ալ ուշադրութիւն ըրէ՛ք: (Ջանգը կ'ընդհատէ զինք): Հոս սպասեցէ՛ք: Ես կ'երթամ:

ՔԱԹԻ.-- Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Բժիշկ մը, որ կը փութայ անձամբ բանալու դուռը:

ՖրէճօՅՏ.-- Բայց ես գիտեմ պահել իմ արժանաւորութիւնս:

(Պրէճօրի մուտքը կ'ընդմիջէ զանոնք):

ՊՐԷՃՕՐ.-- Կը կարծէի, որ կը լսէ՞ք դրան գանգը:

(Քաթի կը հաւաքէ սրբիչը ու դուրս կ'ելլէ):

ՖրէճօՅՏ.-- Ինչպէ՞ս ես, ժողով:

- ՊՐԷՕԸՐ.— Բարի իրիկուն, Մարթա:
 ՄԱՐԹԱ.— Դաւաթ մը սուրն կ'առնէի՞ք:
 ՊՐԷՕԸՐ.— Ոչինչ կրնամ մերժել ձեզի: *(Մարթա կը մեկնի):* Խօսքը
 մեր մէջ, Սիկմընտ... պիտի մախրնտրէի...
 ՖՐԷՕՅՏ.— Այո, գիտեմ: Քոնեա՛ք մը, ըստ սովորութեանդ:
 ՊՐԷՕԸՐ.— Ճիշդ: Մտազբաղ երեսոյթ մը ունիս: Ինչպէ՛ս է Օ—
 րիորդ վոն Բիթթըրը:
 ՖՐԷՕՅՏ *(կ'առնէ շիշ մը եւ բաժակները)*.— Ի դէպ, կարդալու
 վրայ եմ ձեր թղթածրարը, Աննա Օ.ի նշանաւոր
 պարագան: Արտասովոր պատմութիւն մըն է ասիկա:
 Եւ ասիկի տարօրինակը՝ էլիզապէթի պարագային հետ
 ունեցած զգայացումնց միանութիւնն է: Բայց ի՞նչ
 թղթածրարդ թերի է: Բոլոր տուեալները արձանագրե—
 ւած չեն հոն:
 ՊՐԷՕԸՐ.— Խօսեցա՞ր Մէյնըրի հետ: *(Բաժակները կը զարնեն
 իրարու):*
 ՖՐԷՕՅՏ.— Այո: Բայց ո՞ր է նոթերում շարունակութիւնը:
 ՊՐԷՕԸՐ.— Ի՞նչ ըսիր անոր:
 ՖՐԷՕՅՏ.— Որո՞ւն:
 ՊՐԷՕԸՐ.— Մէյնըրին:
 ՖՐԷՕՅՏ.— Ժամանակին խմամած էր Օրիորդ վոն Բիթթըրը:
 Նստեցէ՛ք: Պիտի ուզէի գիտնալ, թէ ի՞նչ ըրած է ան...
 սիկար մը կը ծխէ՞ք: Հիմա ըսէ՛ք ինծի, ո՞ր եմ մնաց—
 եալ նոթերը:
 ՊՐԷՕԸՐ *(յանկարծակիի եկած)*.— Առաջին անգամ ո՞վ խօսած է
 հիպնոթիզմի մասին, ա՞ն, թէ դուն:
 ՖՐԷՕՅՏ.— Կը խորհիմ ես:
 ՊՐԷՕԸՐ.— Դուն ըսի՞ր անոր, որ հիպնոթիզմով պիտի բուժես
 Օրիորդ վոն Բիթթըրը:
 ՖՐԷՕՅՏ.— Այո, ինչո՞ւ չէ:
 ՊՐԷՕԸՐ.— Բայց, Տէ՛ր Աստուած, Սիկմընտ: Ամբողջ Վիեննան
 ծանօթ է հիմա այդ հարցին: Հիւանդանոցին մէջ
 այսօր երրորդ անգամ ըլլալով կը լսեմ այդ մասին:
 ՖՐԷՕՅՏ.— Եւ ի՞նչ:
 ՊՐԷՕԸՐ.— Որ բժշկական քառարանին մէջ հիպնոթիզմը դատա—
 պարտուած բռն մըն է: Եւ դուն ժամանակդ կ'անցընես
 գայն կիրարկելով այնպէս՝ որ կարծես խնդիրը կը
 վերաբերի փոնչուկի կամ թրնջտտի ջուրին:

(Գրասեղեանին վրայէն կ'առնէ թղթածրար մը):
 ՖՐԷՕՅՏ.— Ժողէ՛ք, դուն գիտ ձե՞ռք կ'առնես:
 ՊՐԷՕԸՐ.— Եւ ինչպէ՛ս: Երէկ դուն հանդիպեցար Մէյնըրին, որ
 պարզապէս Օրէնսդրական խորհուրդին ատենապետն
 է, եւ պիտի խօսիս հետը հիպնոթիզմի մասին... Վաղը

ի՞նչը պիտի արգիլէ քեզի առաջին եկողին առջեւ փոխուի ինչ որ կայ այդ թղթածրարին մէջ:

ՖՐԷՅԵՏ.— Խօսք տուի քեզի:

ՊՐԷՅԵՏ.— Ո՛հ, ո՛հ, սիրելիս: Ասիկա շատ վտանգաւոր է: Ես վտանգը յանձն չեմ առնիր:

ՖՐԷՅԵՏ.— «Ես յանձն վտանգը...»: Մեմք ռեպրազըններ չենք, ժողով: Մեր պաշտօնակիցները իրաւունք ունենին ճանաչելու թղթածրարին բովանդակութիւնը: Ասիկա արտակարգ պարագայ մըն է: Անմաստնութեամբ:

ՊՐԷՅԵՏ.— Ահա թէ ի՞նչ, կը տեսնե՞ս: Դու ապրիլն երբ գտնուիս իմ պարագաս անոնց պատմելու ընթացքին մէջ եւ կը մտածես, որ ասիկա ամէն քանի առաջ քու պարտականութիւնդ է:

ՖՐԷՅԵՏ.— Բո՛ւ պարտականութիւնդ է: Դու լաւ դիրքի վրայ ես: Հանրածանօթ: Պարտաւոր ես ըսել ամէն ինչ:

ՊՐԷՅԵՏ.— Այդ աղջկան պատահածը կը յանգեցնէ միայն սխալ եզրակացութիւններու: Նշմարեցիր հարկաւ, որ թղթածրարը ամբողջ չէ: Ուրեմն, իրաւունք չունիս եզրակացնելու:

ՖՐԷՅԵՏ.— Ամբողջ կամ ոչ, կ'ապացուցանէ քան մը: Դու յաղթահարած ես այն ախտանշանները, որոնք անգոր կը դարձնեն ինծի պէս բժիշկները: Դու յաղթահարած ես:

ՊՐԷՅԵՏ.— Մեմք դեռ հոն եմք: Դու առաջինն ես գայն դատաւարտող, բայց ուրիշներու պէս մայրը կ'ընես:

ՖՐԷՅԵՏ.— Ի՞նչը:

ՊՐԷՅԵՏ.— «Բուժել» քաղը:

ՖՐԷՅԵՏ.— Եւ ինչո՞ւ չէ: Նշեցի հոն... (Կը բանայ թղթածրարը, կը գտնէ էջը): Դարձեալ կարդամ քեզի: «Այս վայրկեանէն սկսեալ, Աննա կը վերսկսի խմել հեղուկները»: Ասիկա բուժում մըն է, չէ՞: Եւ քիչ մը աւելի անդին. «Եւ անգամ մը, որ մտային պատճառը յայտնարեալի, եագերը բոլորովին կ'անհետին»: Բուժում մը կատարուած է:

ՊՐԷՅԵՏ.— Ես բնաւ պետք չէ քեզի յանձնելի թղթածրարը: Ասիկա գիտական ուսումնասիրութիւն մը չէ: Պարզ օրագրութիւն մըն է, օրը օրին պահուած կապ մը: Եւ բոլոր իրողութիւնները չի բովանդակել:

ՖՐԷՅԵՏ.— Պակասները: Թուէ ինծի պակասները:

ՊՐԷՅԵՏ.— Ո՛հ, մոռցիր այս ամբողջ պատմութիւնը, Սիկմը՛նտ: Ասիկա բացառիկ պարագայ մըն է, մի չափազանցեք անոր տարողութիւնը:

ՖՐԷՅԵՏ (Համբերատար).— Բո՛ւ երանդդ կը ներկայացնէր որոշ ախտանշաններ: Դու բաժնեցիր զանոնք: Ո՞ւր է չափազանցութիւնը հոս:

ՊՐԷՍԸՐ.— Հո՛մ՝ ուր դու՞ն կ'երեւակայես, որ ասիկա կրնայ ծառայել ուրիշ պարագայի մը համար եւս։ Օրինակ, բուժիկ պատկեր։

(Ֆրէճօյտ կը լռէ եւ կը նայի Պրէսըրին, ինչպէս երբեմն կ'ընէր էլիզապէթի հետ)։

ՖՐԷՍԸ.— Երկու պարագաները իրարու կը մտնեն, չէ՞։ Բուժարագրած հիւանդո՞ղ խելացի, մանկամարդ կի՞ն մըն է, շատ գեղեցիկ, որ չէ ամուսնացած։

ՊՐԷՍԸՐ.— Զէ ամուսնացած անո՞ր համար, որ պարտաւոր էր խնամել հիւանդ եղբայր մը։

ՖՐԷՍԸ.— Ճիշդ ու միշտ էլիզապէթի պարագան։

ՊՐԷՍԸՐ.— Ո՛չ, խնդիրը կը վերաբերի երկու տարբեր պարագաներու։ *(Ֆրէճօյտ կը լռէ)։* Այս խնդիրը այնքան պարզ չէ, որքան կը թուի ըլլալ։ Ոչ ալ այնքան անվնաս... Եթէ միայն գիտնայիր, թէ ի՞նչ բարդութիւններու մէջէն անցաւ այդ երիտասարդ աղջիկը։

ՖՐԷՍԸ.— Նկարագրէ ինձի այդ բարդութիւնները, Ժազէֆ։ Ըսելիքդ թերեւս ոչ մէկ տեղ առաջնորդէ։ Բայց եթէ ոչինչ ըսես ինձի, այդ պարագային՝ քացարձակապէս ոչ մէկ տեղ։

ՊՐԷՍԸՐ *(վայրկեան մը հտը)։*— Խոստացիր, որ հապենայ եզրակացութիւններ պիտի չարձակես։

ՖՐԷՍԸ.— Խոստացայ։

ՊՐԷՍԸՐ.— Ի՞նչ կ'ուզես գիտնալ։

ՖՐԷՍԸ.— ...Ի՞ր յիշատակները։ Ահա՛ թէ ինչ քան կը հետաքրքրէ գիւս։ Ի՞ր յիշատակները։ Որովհետեւ ասիկա ռադակալօրէն Շարքոյի տեսութեան մէջ կ'իյնայ։ Շարքօ միշտ կ'ըսէր. «Այդ մարդերը կը տառապին իրենց անցեալէն»։ Հետեւաբար, այն օրը, որ բուժիկ հիւանդո՞ղ կ'ազատի իր յիշատակներէն՝ կը փրկուի։

ՊՐԷՍԸՐ.— Ահա թէ ի՞նչ։ Հապենայ եզրակացութիւններ։ Անել։ Ի՞մ հիւանդս երբեք չէ բուժուած։

ՖՐԷՍԸ.— Իրաւունք ունիս... եւ սակայն...

ՊՐԷՍԸՐ *(կ'ընդմիջէ գիտք)։*— Ո՛չ։ Հիպնոթիզմի տակ ան երբեք չէ պատասխանած իմ հարցումներու։ Ի վերջոյ երաժարեցայ հարցումներ ընելէ։ Թոյլ տուի, որ խօսի այնպէս՝ ինչպէս կը փափաքի։ Եւ երբ վերջապէս յիշատակ մը յայտնուեցաւ մտքին, պարզուեցաւ, որ տրամաբանական ոչ մէկ կապ կար այդ յիշատակին ու իր ցաւին միջեւ։

ՖՐԷՍԸ.— Անշուշտ։ Որովհետեւ յիշատակները ունին իրենց տրամաբանութիւնը։ Հագները կը սկսէին ամէն անգամ, երբ երաժշտութիւն մը կ'ունկնդրէր։ Այս մասին

- չորս անգամ կարդացի: Կը կարծէի, թէ սխալած ես: Դուն գիմք տարած ես մոյմիսկ համերգի:
- ՊՐԷՕԸՐ.— Այո, համերգէն առաջ, անհամգստութեան ոչ մէկ մշան կը յայտնէր: Երբ երաժշտութիւնը սկսէր, կը հագար քիչ մը: Բայց երբ երաժշտութեան թափը իր գագաթնակէտին հասնէր, հագերը ա՛յնքան ուժգին կը դառնային, որ կը ստիպուէի հետը միասին դուրս ելլել, այլապէս կընար տեղւոյն վրայ խեղդուիլ: Երաժշտութեան հետեւ, դարձեալ կը խաղաղէր: Այսպէս կը պատահէր ամէն անգամ, որ համերգի մը տանէի գիմք:
- ՖՐԷՕՅՏ.— Քանի՞ անգամ տարած ես գիմք համերգի:
- ՊՐԷՕԸՐ (աննշմարելիօրէն կը վարանի).— Խնչ կարեւորութիւն ունի ատիկա:
- ՖՐԷՕՅՏ.— Հաւանաբար ոչ մէկ:
- ՊՐԷՕԸՐ (կարճ ժամանակ մը ետք).— Ուր անգամ:
- ՖՐԷՕՅՏ.— Ի վերջոյ, ինչպէ՞ս յայտնեց իր հագերուն ծագումը:
- ՊՐԷՕԸՐ.— Գործադրուած հիպնոթիզմներէն մէկուն ատեն, որուն իմք մախաճեռնած էր:
- ՖՐԷՕՅՏ (թեթեւ ժպիտով մը).— Ձեռքդ բռնելով, չէ՞:
- ՊՐԷՕԸՐ (բիչ մը ջղային).— Ինչո՞ւ կը հարցնես ատիկա:
- ՖՐԷՕՅՏ.— Դուն հոն գրած ես, որ ընդհանրապէս անկարող կ'ըլլար խօսելու, եթէ ձեռքը չբռնէիր:
- ՊՐԷՕԸՐ (սոյն խաղը).— Այո: Այդ օրը ձեռքս բռնեց: Գո՞հ ես:
- ՖՐԷՕՅՏ.— Շարունակէ:
- ՊՐԷՕԸՐ.— Ապա սկսաւ օրօրուիլ, կարծես երաժշտութեան մը կշռոյթին հետ, գոր միմակը կը լսէր...
- ՖՐԷՕՅՏ.— Իբրեւ թէ վա՞րս մը կը պարէր:
- ՊՐԷՕԸՐ.— Յանկարծ ժպիտը դարձաւ ծամածռութիւն մը եւ սկսաւ շատ ուժգին հագալ: Նայեցաւ ինծի՝ գիս օգնութեան կանչելու երեսոյթով...
- ՖՐԷՕՅՏ.— Եւ սկսաւ մանրամասնօրէ՞ն մկարագրել տեսարանը:
- ՊՐԷՕԸՐ.— Այո: Գիշեր էր, կը հսկէր եղջօրը վրայ, որ շատ գէշ վիճակի մը մէջ էր: Կը քնանար: Այդ պահուն դրացի տունէ մը լսեց երաժշտութիւն մը, որ անդիմադրելի թունցաւ իրեն: Եւ սկսաւ վալս մը պարել, տեղւոյն վրայ, ինքն իրեն մրթմրթալով: Յանկարծ տեսաւ եղբայրը, որ իրեն կը մայէր՝ աչքերը լայն բացած, եւ անակնկալի եկած ըլլալու իրողութիւնը շնչահեղձ ըրաւ գիմք: «Խնչ կ'ընէիր, Ամմա՛» «Ոչիմչ, կը հագայի: Հա՞գս արթնցուց էնգ: Ոչիմչ: Նորէն քնացիր»: Քանի մը վայրկեան ետք եղբայրը մեռած էր արդէն:
- ՖՐԷՕՅՏ.— Ջարմանալի բան: Եւ այդ օրէն ի վեր, երաժշտութիւնը արթնցնելով իր մէջ այդ մեղաւոր յիշատակները, կը շղթայագերծէ այդ սոսկալի հագերը: Անհեթեթ տրա-

- մարանութիւն մըն է ատիկա: Բայց աւելի տարօրինակը ա՛յն է, որ ԱՍՏԱ կը բուժուի այդ տեսարանը նկարագրելով ինչի:
- ՊՐԷՍԸՐ.— Կը բուժուի՞, Սիկմընտ:
- ՅՐԷՍՅՏ.— Այո:
- ՊՐԷՍԸՐ (*բառերը կոտորակով*).— Երբեք չբուժուեցաւ: Առանձին պատահար մըն է ատիկա: Բոլոր պարագաներում, եթէ այդ արկածախնդրութիւնը մէկ քան մը ստրվեցուց ինծի, ատիկա եղաւ ա՛յն՝ որ հիւանդը պէտք է օգնէ մեզի: Եւ հարցումներ կ'ուղղէի: Ան չէր պատասխաներ: Բայց իր ձեռով, իրեն յատուկ եղանակներով կ'ըսէր ինչ որ կ'ուզէի գիտնալ: Միայն թէ՛ այդ մէկը տեղի կ'ունենար աստիճանաբար: Կամաց-կամաց ան կը պարզէր իր մտածումը, յիշատակները: (*Կը նշմարէ Մարթայի ձգած բուրդէ կծիկը*): Տե՛ս, բուրդէ կծիկի մը պէս, որ կը փակուի: Կը յանձնարարեմ ինչի...
- ՅՐԷՍՅՏ (*Հակադրելով*).— Ինչպէ՞ս: Ի՞նչ ըսիր...
- ՊՐԷՍԸՐ.— Ըսի. «Սիկմընտ, կը յանձնարարեմ ինչի...»:
- ՅՐԷՍՅՏ.— Ո՛չ: «Բուրդէ կծիկի մը պէս, որ կը փակուի...»:
- ՊՐԷՍԸՐ.— Այո՞: Յետոյ ի՞նչ:
- ՅՐԷՍՅՏ.— Ատիկա ոչի՞նչ կ'ըսէ ինչի... Մէկը կը փակէ թելը... Բայց այո: Առասպելը: Թէզէն թելը կը փակէ ետին՝ լարերիմքոսի մէջ իր համբան վերագտնելու համար: Միմեքորի փայլը:
- ՊՐԷՍԸՐ.— Սիկմընտ, առանց դիցարանութեան:
- ՅՐԷՍՅՏ.— Ըսել կ'ուզես, որ քու հիւանդդ բուրդէ կծիկի մը պէս պէտք է մանրամասնօրէն «պարզէ» իր մտածումը, մխրճուելու համար իր յիշատակներում մէջ: Ժողով... Երեսակայէ միտքը իբրեւ լարերիմքոս մը, որ գաղտնի կը պահէ իր յիշատակները եւ այդ համագամմէն կ'օգտագործէ՝ մեզ չարչարելու համար: Գնացող օձի մը պէս:
- ՊՐԷՍԸՐ.— Սիկմընտ:
- ՅՐԷՍՅՏ.— Նման յիշատակներու մասին է, որ Շարֆօ կը խօսի միշտ: Զուգադիպութիւն է, չէ՞: Զե՛ս տեսներ: Յայտնաբերած եւ գաղտնիքը, ժողով, յայտնաբերած եւ:
- ՊՐԷՍԸՐ.— Ո՛չ, ո՛չ: Զգո՛ւյշ:
- ՅՐԷՍՅՏ (*Կ'անդիտանայ Պրէօրի բողոքը եւ կը դառնայ անոր կողմը*).— Ե՞րբ պատահեցաւ ատիկա:
- ՊՐԷՍԸՐ.— Վեց տարի առաջ:
- ՅՐԷՍՅՏ (*Հանձնարար*).— Վե՞ց տարի: Բայց Շարֆօ դեռ կ'ապրէր այն ատեն: (*Շարունակելով*): Ամբողջ կեանքին մէջ այդ մէկը փնտռեց ան:
- ՊՐԷՍԸՐ.— Սիկմընտ, մտի՛կ ըրէ:

ՖՐԷՅՏ.— Դու յայտնաբերած ես գաղտնիքը եւ ոչ ոքի չես ըսած ատիկա, ժողէ՛ք,— անտեսանելի վերքը, բայց անիկա թերեւս պարզապէս յիշատակ մըն է, մեղաւոր յիշատակ մը:

ՊՐԷՕԸՐ.— Ձեմ ուզեք, որ դուս...

ՖՐԷՅՏ (*առանց ձգելու, որ խօսի*).— Ահաւասի՛կ: Յիշատակն է, որ մարդերը կը դարձնէ ընկնուած, անգոր, կոյր...

ՊՐԷՕԸՐ.— Սիկմը՛նտ: Անհեթեթ եզրակացութիւն մը եւս դուրս կու տաս:

ՖՐԷՅՏ.— Ուրեմն չես հասկնար, որ հիւանդին մահէն առաջ դու յաջողած ես դիագնոստիկը յայտնաբերել: Դու գտած ես վերքը: Բուժած ես գայն: (*Պրէօըր կը բողոքէ*): Ատիկա ճիշդ բառն է,— բուժում... Սի դու ալ մտնէ՛ս պահած ես քեզի՛ համար... ժողէ՛ք, խեղճութիւնը ի դէմս քեզի թերեւս յայտնաբերած է հոշակաւոր բժիշկ մը: Բայց այսօր եղիր մեծ բժիշկ մը:

ՊՐԷՕԸՐ (*ձայնին մէջ կայ բան մը, որ կը ստիպէ իրեն վերջապէս ուշադիր ըլլալ*).— Սիկմը՛նտ, կ'ուզեմ, որ մտիկ ընես զիս՝ մտնելէ առաջ գործի մը մէջ, որ կրնայ ճակատագրական ըլլալ քեզի համար: Իրողութիւններ կան, որ արձանագրուած չեն այս տեղեկագրին մէջ: Հաւանաբար ամէնէն կարեւորները: Սի ես երբեք պիտի չուզէի զանոնք ըսել քեզի... մինչեւ անգամ հիմա...

ՖՐԷՅՏ.— Անկասկած: Բայց այդ բոլորին ետին կայ իրողութիւն մը, ա՛յն՝ որ վայրկեանի մը մէջ, կարճ վայրկեանի մը մէջ ան բուժուեցաւ:

ՊՐԷՕԸՐ.— Մտի՛կ ըրէ... Կ'ուզե՞ս որ ըսեմ, թէ ինչ եղաւ ան. կ'ուզե՞ս գիտնալ, թէ ո՞ւր կը գտնուի ան հիմա... Կը գտնուի ապաստանարանի մը մէջ: Խեղճ է: Բոլորովին խեղճացուցի զինք...

ՖՐԷՅՏ.— Ժողէ՛ք... Ի՞նչ կ'ըսես:

ՊՐԷՕԸՐ.— Դժբախտաբար՝ մշմարտութիւնը: Շատ յաճախ կ'երթայի տեսնել զինք, եւ երկար ժամանակով: Ան կ'ապւած էր իմ այցելութիւններու: Բայց ինծի համար ատիկա իմ ասպարէզիս ամէնէն հետաքրքրական պարագան էր: Կը մտնէր մանրադիտակին տակ քննելու արարքին: Հակազդեցութեամբ լեցուն ուղեղ մը: Մեր տան մէջ ես միայն այս մասին կը խօսէի: Մինչ հիւանդս աստիճանաբար կը լաւանար, կինս կը դառնար տխուր, դժբախտ: Ան սկսաւ մախանձիլ այդ աղջկան, որ, անկախ ամէն ինչէ, շատ հրապուրիչ էր: Այն օրը, երբ հաստատեցի, որ այդ պատճառով կինս անհամբեր կ'ըլլար, որոշեցի վերջ տալ դարմանումին: Հիւանդս բոլորովին չէր բուժուած, բայց աւելի լաւ էր: Յետմի-

ջորէի մը, գացի տեսնել զինք եւ յայտնեցի, որ վերջին
այցելութիւնս կու տայի իրեն։
ՅՐԷՅՍՏ.— Ի՞նչ հակագոյնացում ունեցաւ որոշումդ։
ՊՐԷՕԸՐ.— Շատ խաղաղ։ Ուրեմն տուն վերադարձայ հանգստա-
ցած... Եւ գիշերը մայրը շտապով կանչել տուաւ զիս։
Աննայի բոլոր տագնապները կրկնուած էին։
ՅՐԷՅՍՏ.— Բոլորը։
ՊՐԷՕԸՐ.— Բոլորը, առանկէ՝ *փսխոտութիւնը*։
ՅՐԷՅՍՏ.— Ձգայիմ գերագոյնութիւն։
ՊՐԷՕԸՐ.— Այո՛։ Վերջին աստիճանը։ Մկանայիմ կծկում։ Ձգածը-
գում։ Բոլոր ախտանշաններով։ Եւ ինծի կը խօսէր
այնպէս, որ կարծես ես էի իր գաւկիմ հայրը։
ՅՐԷՅՍՏ.— Ա՞յդ աստիճան... սիրահարուած էր քեզի...
ՊՐԷՕԸՐ.— Այն աստիճան, որ իր կեանքը իմ ձեռքս էր... Եւ ես չէի
ուզեր ատիկա։
ՅՐԷՅՍՏ.— Ի՞նչ քրիւր։
ՊՐԷՕԸՐ.— Յաջորդ առտու...
ՅՐԷՅՍՏ. (*բառացիօրէն կը ստիպէ իրեն*)— Յաջորդ առտու...
ՊՐԷՕԸՐ. (*դանդաղօրէն*)— Հեռացայ վիեննայէն։ Կի՞նս տարի
երկրորդ մեղրալուսինի մը։
ՅՐԷՅՍՏ. (*դալմատացի*)— Ժողովք, դուն... լեցի՛ր...

(*Չ'ուզեր, բայց գրեթէ կ'ըսէ բառը*)։

ՊՐԷՕԸՐ.— Շարունակէ, ըսէ բառը։ «Դուն լեցի՛ր հիւանդ մը՝ իր
տագնապներուն գագաթնակէտին»։ Ըսէ՛։ Իրաւունք
ունիս։ Ան կրնար կատարելապէս անձնասպան ըլլալ։
Ես գիտէի ատիկա։ Բայց ես շա՛տ կը վախնայի ատկէ՛,
եւ փախուստ տուի։
ՅՐԷՅՍՏ. (*մեղմօրէն*)— Եւ հիմա...
ՊՐԷՕԸՐ.— Խեղճ է։ Բացարձակօրէն խեղճ։ Ու խեղճութիւնը
պիտի տեսնէ միջեւ իր մահը։
ՅՐԷՅՍՏ.— Աստուած իմ։
ՊՐԷՕԸՐ. (*կարճ լռութենէ մը հտը*)— Տարօրինակ է։ Ըսին ինծի,
որ օրուն ընթացքին ան գրեթէ քնականո՞ւ է։ Բայց
գիշերն է, որ կը վերադառնան իր բոլոր տագնապնե-
րը։ Կը ցնորի։ Անունս կը կանչէ։ Թող այս պատմու-
թիւնը օրինակ ծառայէ քեզի, Սիկմընտ։ (*Այս բառին
վրայ Մարթա սուրճով ներս կը մտնէ։ Երկար լռու-
թիւն մը։ Կը սպասարկէ*)։ Ատրճին չեմ դիմանար,
Մարթա՛։ Ձեմ ուզեր մերժել։ Մեկնելէ առաջ կը խմեմ
գաւաթ մը։ Դուն կը պատրաստես վիեննայի լաւ-
գոյն սուրճը։ (*Կը նայի ժամացոյցին*)։ Բոլորովին
մոռցած էի։ Հիւանդի մը ժամադրութիւն տուած եմ։
Արդէն ուշացած եմ։ (*Կ'առնէ իր թղթածրարը, կ'ըսէ*

դուրս: Կանգ կ'առնէ սեմին): Այս հարցով չէի ուզեր մտահոգութիւն պատճառել քեզի, Սիկմընտ: Բայց ամէն ինչ ըսի, որովհետեւ վերջին հաշուով ասիկա կրնայ ցաւ պատճառել քեզի: Նաեւ քեզի, Մարթա:

(Պրէօրը դուրս կ'ելլէ):

ՄԱՐԹԱ *(ոչինչ հասկցողի երեւոյթով)*.-- Այդ ազդարարութիւնը քեզի համար էր, Սիկմընտ, թէ ինծի:

ՖՐԷՅԵՏ.-- Իր հիւանդներէն մէկուն տագնապը դարձեալ սկսած է սաստկանալ: Կը վախճայ: Հասկնալի է իր պարագան... Բայց երբ մարդիկ վտանգէն անդին կը նային... Տեսնես ինչ կը պատահի ելիզապէթին: Ինքզինք դանդաղօրէն խորտակելու վիճակի մը մէջ կը գտնուի: Եւ մենք թոյլ կու տանք ատիկա: Հոս ինք ու կը դիտենք, մինչ պէտք է փնտռենք, հետազօտենք, յայտնաբերենք հաւանարար: Վտանգին գնով...

ՄԱՐԹԱ.-- Վտանգի՞ն...

(Առանց աչքը վրայէն հեռացնելու՝ կը լեցնէ սուրճը):

Ֆրէօյտ ձեռք կ'առնէ բուրդէ կծիկը, կը քակէ զայն: Մարթա գաւաթը կ'երկարէ անոր: Ֆրէօյտ չի նկատեր մատուցուածը: Ձի շարժեր: Մարթա վար կը դնէ գաւաթը, կը նայի անոր վայրկեան մը եւս ու դուրս կ'ելլէ:

Դրան աղմուկը կը ցնցէ զինք):

ՖՐԷՅԵՏ.-- Ի գին ամէն քանի, Մարթա...

(Ֆրէօյտ չ'անդրադառնար, որ Մարթա հոն չէ այլեւս, եւ կ'երթայ վերցնելու գաւաթը, բայց յանկարծ կը նետէ կծիկը գետին, մէկ ձեռքին բռնելով թելին ծայրը: Կը դիտէ անոր քակուիլը: Ապա դանդաղօրէն կը սկսի փաթթել զայն):

(Ընդմիջում)

(Ետ. 2)

ՀԱՆՐԻ ՏԱՆՔԵՐ

Յ. ՊԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԿԸ ԹԱՂԵՆՔ

Աղօթք կ'ըսեն դպիրք մեքենարար վերնատունէն
եկեղեցիի անցքին սեւածածկ դագաղն է գրուած
բանաստեղծին
Ժօռատ բերան է բացուած նստարաններու վրայ
ցաք ու ցրիւ բուռ մը անձեր տխրադէմ եւ անխօս

Անտարագելի ձայնը վերնատունէն կը գեղգեղէ
չարական Տէր Ողորմեա Տէրը կը թեւածէ մնջիկ
բանաստեղծին
յիշատակը եւ անանուն պատրանք վերապրումի
երբ կը բացուի անլոյս ճանապարհ անծայրածիր

Արձագանգն շարական անտարբեր քահանային
մարմնի հիւր են մեղեդիներ բառերը լուկ ձայներ
բաց թմբուկին
Բառերու մոգը քուն է եւ խօսքեր ուր ակնապանք
կը նաւարկեն մոռցած մարդ եւ ժամեր ընդդէմ
ծիր կաթինին

Երբ անժպիտ արարածները դագաղով մեկնեցան
համանուագին
Թրթռացումներ ողողեցին տաճարը դատարկուած
քարը քար է եւ հոգին ալ վերջնական անկաշկանդ
հիւր անհունին

ԻՆՔ ԵՒ ԵՍ

Ինք ինք էր, ինքնատիպ, խորհրդաւոր, հմայիչ
ես ես էի, բոլուն, անհանդարտ ունկդնիր նորին

գալիքի

սէրերու ծարաւի հայրենիքի մտքի գեղեցիկին
ինք ինք էր անկրկնելի եւ զմայլանք անմեկին
ինք ինք էր ունկնդիրը անտառային ձայներուն
ցոլացումը աչքերուն մէջ ծովերէ բխող կանաչ

հրաշքի

արուեստական լինին կոհակներուն յանդիման
կը պեղէր հոգիս ուր սէրերս կային անբարբառ
ընդերքի նուազը հորիզոններուն կարկամած
ինք ինք էր անպարագիծ հմայքովն անկատար

առաջին

երկնայինէն կեանքին եկած մարդացած Եւային
ինք ինք էր երբ ներկայի ջերմութիւնը կը պեղէր
հրայրքի ակնկառու սպասող էութիւնս կ'ողողէր
ես ես էի երկրի եւ երկնի սնունդներու տոչորած

Աղամին

ժառանգորդը մոլորակի վրայ գոհ գլխակորոյս
ինք ինք էր եւ ես էի անցորդներ անթափանց
երկրին:



ՉՆԾԱՂԻԿ

Երէկ առաջին ձնծաղիկը իր երկչոտ գլխիկը ցցեց
ցուրտէն թրթռացող պարտէզին մէջ՝ ընդարմացած
դեղին ինչպէս ճուտիկը որ կտուցովն կը ճանչնայ
ձուէն դուրս փռուող աշխարհն արեւային շողերով

Ձնծաղիկն հողի ընդերքի գաղտնասաց խորհուրդ
կեանքի խորհուրդի անյեղի կոչնակին հնազանդ
չրթներն բացած է ձմրան ամօթխած եւ յոյլ արեւին
պապակներով շառայներու ծաղիկներու մահերու

Ձնծաղիկն ազազուն անհուն խանդով ու հրայրքով
պատուհանիս տակ բուսած կ'երազէ օրերը գալիքի
պիտի բացուին փերթեր լուսէ դեղին կանաչի ծոցէն
մէկիկ մէկիկ պիտի խամրին ու տեւեն սպասելով որ

դարնան խելագար հովն անջատէ շողեր մեղրամոմ
ձնծաղիկ որ ծնած ամէն դարնան լուսամուտի տակ
երբ մենք կ'անցնինք միայնակ ուղիներէն մթազնած
ասֆալթին վրայ ձգելով սէր ու կիրքեր եւ նախանձ

Փարիս, 1995

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ



Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՑԻՐՈՒՑԱՆ ԷԶԵՐ

Սէրը ո՛չ միայն յուզական վիճակ մը ու խոյանք մըն է, այլեւ ստեղծագործութիւն մը, հրաշալի մանուկի մը պէս՝ հարկ է գուրգուրալ իր նորընծիւղ երիտասարդութիւնը։ Հեշտութիւնը եւս կրնայ պայծառանալ ու ծաւալիլ, եթէ մարդ իր ներքին կարողութիւնները ի սպաս դնէ անոր ինքնեկ սաստկութեան։ Մեր ներքին թրթռուն իրականութիւնն է, որ կեանքին կը պարզեւէ բարախուն գեղեցկութիւն մը։ Արդ, երազը անբաժանելի մէկ մասն է, մէկ ցոլարձակումը մեր ներքին էութեան։

Ի՛նչ որ կը կարծես գերադասել իրականութեան,՝ մեր սիրոյն ու մեր հեշտութեան՝ երազդ, որ կ'ելլէ արարչօրէն մաքուր, գիշերային մենութեանդ խորունկէն, որքան ալ անհական ու անշօշափելի, կը բխի այսուհանդերձ մեր իրականութենէն։ Ո՛չ մէկ երազ կրնայ իրապէս գլխի-անցնիլ իրականութիւնը սիրոյ մէջ։

Ինձ կը թուի, թէ կրնամ ժամերով կենալ, դիւթեալ ու պակուցեալ, մարդկային դէմքի մը առջեւ, պաշտելու համար խորին պարզութեամբ ու խուլ կրքով մը հակի մը իրական արտայայտութիւնը։ Վասնզի սէրն է, որ կը լուսաւորէ երկիրը։ Աչքերուն նշոյլն է, մեղմ կամ սաստիկ, օրուան լոյսերուն պէս՝ տարբեր ժամերու, որ կ'ողողէ դէմքդ ու անոր կը պարզեւէ նոր քաղցրութիւն մը, որ քուկդ ու իմս է միանգամայն։ Օ՛, կոյսի մը խորին զմայլանքը, հոգեկան գինովութիւնը եզակի ու սուրբ պատկերին առջեւ, Նազովրեցիի անճառահրաշ կերպարանքին դիմաց։ Մարդ կրնայ հմայուիլ մարդկային դէմքէ մը, պաշտել զայն՝ ինչպէս մթին եկեղեցիի մը մէջ, լեռան մը ոտքը, խոպան գիւղացիներ կ'երկրպագեն։ Սուրբ կոյս Մարիամին՝ խորին, յամառ, համր սաստկութեամբ մը։ Յայնժամ բոլոր միւս դէմքերը կը դադրին գոյութիւն ունենալէ,՝ վասնզի լոկ մեր սիրականին քաղցր երեսին վրայ կը շողան կեանքին լոյսերը։ Վասնզի սէրը կը սրբէ նոյնիսկ արատներն ու մթին հետքերը։

Ամբողջական նուիրումը մարդկային էակի մը, պարզ, հասարակ նոյնիսկ, իր անձնատուութիւնը սիրոյ, միշտ հրաշալի թուած է ինձ: Յաճախ երբ կը ճեղքեմ քաղաքը, կը կենամ սալալատակի մը վրայ ու մեծ համբերութեամբ մը կը դիտեմ անցորդները: Վասնզի հոգիս ցաւագին, խորին սաստկութեամբ մը կը սիրէ մարդիկը: Եղբրականօրէն, ողորդականօրէն, գեղեցիկ կը գտնեմ զանոնք, նոյնիսկ երբ տգեղ են: Թշուառութեան, զրկանքի, տառապանքի ու միջակութեան սեւ լոյսը այնքան սրտառուչ կ'ընծայէ զանոնք:

Անկեղծ, նուիրեալ սիրոյ արարքը միշտ անգնահատելի ընծայ մը թուած է ինձ: Աղջիկ մը, որ կ'ընծայուի ազատօրէն, մեզ կը պարգեւէ մեծագոյն, եզակի նուէրը, որ հակ մը կրնայ ընել ուրիշ էակի մը: Վասնզի միակ իրական հարստութիւնը մարդուն՝ իր մարմինն է:

Մայրդ բաբախուն, անասելի սիրով մը պահած է քեզ իր որովայնին մէջ ինը ամիս: Տառապած է քեզմով իր էն հեռաւոր բջիջներուն ու իր էութեան էն ծածուկ մասերուն մէջ, քեզ յղացած է ցաւով ու կողկողանքով: Հսկած է քունդ ու երբ գիշերները անապի կը թուէին, երբ կեանքը լոկ վրադ էր, լոկ փխրուն մարմնիդ շուշ: Յետոյ գարունը պագած է քեզ, հարս ելած ծառի մը նման, ճարձակ աղջիկ մը եղած ես ու հեշտանքով սիրած ես մարմինդ, տարիներով խնամած ես զայն: Ճանչցած ես տենդը՝ որ կը բանի մեր ձգաններուն մէջ, գաղտնօրէն երջանիկ չս եղած ծիծերուդ մէջ, երբ կեանքը ելած է հոն ներքին թուալումներով: Զեռքերդ գգուած են ծաղիկները, շոյած հիւսնդի մը ճակատը, ճանչցած են աշխատանքը, որ դժուար է յաճախ: Աչքերդ տեսած են մարդոց թշուառութիւնը, իրիկային լոյսը մանկան մը բիրերուն խորը, օրը որ կը նուաղի պատի մը տակ, թռչնակ մը, որ կը մսի, վիրաւոր, արահետի մը նկերքը: Ձայնդ, որ քաղցր է ու եղբայրական, տարիներէ ի վերկը ծառայէ մանուկներու, կ'արթնցընէ անոնք յամառութեամբ մը նորածագ իմացականութիւններ, որ ի նինջ են դեռ: Ինչպէս գարնան առաջին ջերմ ալիքները, որ կը պատեն լուր սերմերուն կեղեւները, ձայնդ կանչած է ի կեանք առաջին յուզումներն ու առաջին գգացումները մանուկներու մօտ՝ որ յանձնուած են բարի խնամքիդ: Փուցէ նուրբ ձեռքովդ փրցուցած ես դիւթանքին վարագոյրը, ապագայ բանաստեղծի մը դեռ փակ, դեռ կոյր ականարկին առջեւ: Արդ, այս բոլորդ կու տաս ինձ: Եթէ նոյնիսկ տգեղ լըյլայիր, այս ընծան պիտի գտնէի հրաշալի:

Այլ քաղցր է երեսասարդութեամբ դէմքդ, սիրելիս: Փարունը գեղեցիկ է վրադ: Մարմինդ կը դողայ սիրոյ հովէն, ինչպէս երէ մը, որ կը պագնէ արշալոյսը: Ցանկութիւնս կը

Թափառի շուրջը, կը պլլուէի իրանիդ՝ ինչպէս գարնան սիւքե-
րը կը փաթթուին ծառերուն: Մակընթաց ջրերուն պէս, որ
կ'ոռոգեն երկիրը, մեր սէրը պիտի բարձրանայ եղանակին
հետ: Վերստին եկո՛ւր, սիրելի՛ս ու թող մարմինդ ընդունի
ցանկութիւնս, որ աւելի՛ յաղթական է ու խանդավառ, քան
գարունը: Եկո՛ւր ու թող մեր տենդը, իր բոցավառ ալիքներուն
մէջ, տանի օրունան խոնջէքն ու ձանձրոյթը: Եկո՛ւր...

●

Ձեռքերուն վրայ տակաւին կը զգամ ծաղիկներուդ աղօտ
բուրումը, կը գրեմ քեզի, այլ ներկայութիւնդ այնքան բաբա-
խուն է, որ աւելորդ կը թուին բառերը: Այժմ ահա՛ ծաղիկներդ,
իրենց նուրբ բաժակները ափերուն մէջ,՝ պզտիկ ծաղիկները
սիրականիս, սիրուն էք, սիրուն:

Ո՛ր, պզտիկ ծաղիկները սիրականիս:

●

...Ու այս բոլոր՝ անաւարտ էջերը, վերստին քեզի ըսելու
համար ցանկութեանս բուն սաստկութիւնը,՝ հեշտութեան
ծարաւս, որ կը մտրակէ թիկունքներս, երբ գիշերուն կի-
սուն մարմինս կը զարթնու ու կը յիշէ պայծառ մերկութիւնդ:
Պիտի ըլլաս իմս վերստին, ինչպէս իմս է տենդահար շողը
աչացս: Ձեռքերուն համար՝ պիտի ընծայ բերես բոլոր՝ ողկոյզ-
ները ու բերնիս համար բոլոր՝ ծարսները: Պիտի գաս ինձ,
ինչպէս գարունը կու գայ, շէն գուարթութեամբ, ինչպէս
աղջիկները կ'երթան աղբիւր, ինչպէս գետերը կարկաչելէն կը
վազեն ծովուն: Յայնժամ գիշերը մեղօրէն պիտի իջնէ քաղա-
քին վրայ ու մեղմօրէն պիտի փակէ մեր դուռը, մեղմօրէն
պիտի փակէ պատուհանները: Այսպէս փափկանկատ պիտի
ըլլայ գիշերը:

Ինչպէ՛ս աւելի կամ նուազ արատաւոր, ապականեալ
զգայարաններով կարելի է ճաշակել մաքուր հրճուանքները,
որ կեանքը տակաւին կրնայ պարգեւել մեզի: Ահա՛ հարցումը,
որ վաղ այգուն, կ'ելլէ քանի մը օրերէ ի վեր ու կը սպասէ
պատասխանի:

Այս առաւօտ, ժամը վեցին, ոսկիայ թափանցիկ ամպեր կը
դողային քաղաքին վրայ: Քաղաքը կը խայտառ հրճուանքէ:
Անորոշ ուրախութիւն մը կը ծփար վրաս: Օրը տօնական էր,
ինքս ինձ կ'ըսէի, ՝ ինչպէ՛ս երիտասարդ մը կրնայ զգաստ մնալ
կենաց հրաշքին դիմաց: Այլ ինչո՞ւ չ'է մէկ այգ կրնայ լուսա-
ւորել մռայլ ներքին դաշտանկար մը կնոթ մը ձեռքը կրնայ է՛ն
դողահար, է՛ն գորովալի, է՛ն անգնահատելիօրէն թանկագին

առարկան ըլլալ ու միաժամանակ է՛ն գարշելին: Մեր ներքին լոյսն է, որ կը պայծառացնէ մեզ, կ'ըսէ ձայն մը տարիներէ ի վեր, մեղմօրէն գլգլալէն: Այլ կեանքի յաղթական ուժերուն ու առաջին անկումին հետ՝ տրտմութիւնը կը սողոսկի ներս մեր էութենէն, կասկածը կը կրծէ մեր ներքին գեղեցկութիւնը:

Մարդը ընդունակ է իր ներքին փտութեամբ, արատաւորել է՛ն անաղարտ ու յաւերժական գեղեցկութիւնը, խեղդել ցեխի մէջ է՛ն սլացիկ խանդավառութիւնը, չիջել է՛ն արու ու զուարթ բարեկամութեան բոցը: Վասնզի անողոք է ներքին ոսոխը: Յառաջացող տարիքին հետ, գիտութիւնը կը վերածուի դառնութեան աղբիւրի մը: Դաժան նախապաշարումներ, ընկերային անմիտ սովորոյթներ կը շղթայեն մեր ներքին հրաշք տղան: Զանճրոյթին անմաքուր նաչիւր կը դառնայ մեր հանապազօրեայ հացը: Լոկ մեր ներքին կրակն է, որ կրնայ յաղթել կեանքի վատթար ուժերուն:

Կեանքի վատթար ուժերը... Այնքա՛ն դժուար է զգեստնել զանոնք, ինչ որ մեզ կը ծերացնէ յամբօրէն, անդառնալիօրէն՝ տարապարհակ աշխատանքը չէ միշտ, այլ՝ երկիւղը մահէն: Օ՛, օրուան հետ, որ կը ծագի ճաճանչաւութիւն, ըլլա՛լ զուարթ, եռանդուն: Ամէն օր քիչ մը աւելի տիրանալ կեանքին, մտածել, թէ ուրիշ առաւօտներ կան դեռ, աւելի՛ զրգանուշ, աւելի՛ վարդամառն, աւելի՛ մեղմահոս:



Փոքր, չնչին, ամէնօրեայ վատութիւններ կան, որ անգլխիօրէն հաշուեյարդարի կ'ենթարկեն մեր ներքին գարունը: Գէշ հանգուցուած փողկապի մը համար ընդունակ ենք արհամարհել մարդկային էակ մը, հանգստեան թշուառ թօշակի մը փոխարէն՝ կրնանք հաշիւը մաքրել Յեղափոխութեան: Ապագայի երկիւղը կը բաւէ մեզի ընդունիլ տալու համար ներկայի դասալքութիւնը:

Դեռ մանուկ, կեանքի մռայլ ուժերուն դէմ, ելած ենք ոտքի, կենդանի բողոքի մը պէս, զայն ընդունած հոգւոյս խորը ու կեանքիս մէջ, կենդանի ուժերու յետին խնայողութիւնը: Մարդիկ իրաւունք ունին միթէ ապարդիւն կերպով կուտակելու երկրին արթուն ուժերը: Կիրակի առաւօտ մը Լիւքսէնպուրկի պարտէզին բազրիքներէն մէկուն կ'ըմբռնած տեսայ գերազանցօրէն գեղեցիկ աղջիկ մը: Մարմինը չքեղ էր յունական արձանի մը պէս: Խաղաղ, անտարբեր՝ աղօտ ցրտութեամբ մը կը դիտէր ամպերը, որ կը սահէին: Ոսկեշող պարանոցին վրայ կը խաղար մոլայր ճառագայթ մը, բարակ սարսուռի մը պէս: Ինքս ինձ կ'ըսէի, ինչպէ՞ս կրնայ վատնել այդ ուր մը պէս: Ինքս ինձ կ'ըսէի, ինչպէ՞ս կրնայ վատնել այդ քաղցր ժամը, այս առասպելական պարտէզին մէջ, պաղ ակնարկով մը դիտելով ամպերը: Իրաւունք ունի՞ միթէ ապար-

դիւն ձգելու իր երիտասարդութիւնը, զոր կ'ուզէի յորդանոսան, շուայլ, ալեկոծ:



Խոյանքը ամէն բանէ վեր, խոյանքը, որ սուսերամերկ կ'ելլէ:

Ես եւս կը սպասեմ անգուսպ անհանգստութեամբ մը դիւթական շունչը սիրոյ: Ու հակառակ իր դարաւոր մաշու-մին, այս բառը դեռ իր երանքներուն մէջ կը կրէ ինձ համար ողջ պայթուցիկ ուժը երկրին, կենաց անպարտելի ելքը: Լոկ հեշտամոլ ու ծերունի աթամարդ մը չեմ դեռ: Ամէն բանէ վեր արու բարեկամութիւնը, ընկերական ոգին, որ մեզ կ'ազատէ մեր ներքին գիշերէն, ամէն բանէ վեր սէրը, որ դարուն է, որ հրաշք է: Ողջ էութիւնս վայրագ երիտասարդութեամբ մը կը սիրէ կիները: Երբեմն գիշերուան դիմաց կը բանամ դուռս ու պատուհաններս ու կը դիտեմ երկրին խորունկ նինջը: Երկա-րորէն ու բուռն զօրութեամբ մը կը մտածեմ այն բոլոր աղջիկներուն, որ սիրած եմ այս ալեկոծեալ կեանքիս ընթաց-քին: Այն, որ դղրդազին կը քով մը սիրեցի, ամէն ինչ տուաւ ինձ, ինչ որ երիտասարդ աղջիկ մը կրնայ տալ առանց գեղջուե-լու: Այսուհանդերձ ամէն առաւօտ սէրս աւելի սաստիկ կ'ըլ-լար, քան նախորդ օրը: Այլ այդ աղջիկը մեկնեցաւ անսարկով իր ճակատագրի ձայնին: Ամուսնացաւ իր երկրէն տղու մը հետ: Ու երբ կը մտածեմ, թէ իր ողջ սիրային փորձառութիւնը, տենդահար ու գիտուն, կը դնէ ի սպաս այդ պաշտօնական սիրականին,՝ արիւնս, խուլ բողոքով մը, կը ծեծէ երեսս:

Տարիներ առաջ, գաւառական քաղաքի մը մէջ էր,՝

Խաւքով քանդարան գացիմք ու Արեգակը

Տաք հովի մը պէս կը պլուէր մեր մատղաշ իրաններում:—

Նորածիլ աղջիկներ էինք,՝ մորաքոյրք ի սէր,՝

Կը թուէր, թէ մերկ էինք այնքան ծանր է ակնարկը

Այդ վայելուչ ծերուկին, որ մեզ կը դիտէր

Ստուերին մէջէն, կոթմած պատին:

Մեր թեթեւ չփականերում տակ

Ծաղկեալ կտրծֆեր ունէինք, արծաթաձափ

Ու մեր գիտները դեռ չէին գիտեր

Գեղեցկութիւնը արեւմարեւոտ առնականութեան: Գիշերը

Նրիտասարդ աստուածներ կ'այցելէին ի մեզ ու գողունի

Կը համարձակէին անխոստովանելի արարքներ

Մեր մարմիններում եւտ գարմանային: Արեգակը

Կը դեգերէր մեր թիկունքներում շուրջը հարուստ,

Մեր կիսանդրիներում շուրջ հեշտօրէն իգական,

Կը պագնէր մեր ծունկերը: Արձան մը կը դիտէր մեզ իր ակնարկովը ցուրտ: Մէկէն, հանելի սարսափով մը, Տեսայ մետաղային, խանդավառ ու պզտիկ Աստուածը: Ո՛ր, ի՛նչ փայլում էր, ռդորկ ու տարօրինակ: Աչքերս թրջեցան յուզումէ յեղակարծ, աջ ձեռքս կուրծքիս վրայ Դողդոջում, կարի դողդոջում մօտեցայ,–

այլ երկշտութիւնս
Մեծ էր ու ցանկութիւնս անկարող:

... Այդ գիշերը խորունկ էր, խաւարը թանձր էր շուրջս, երբ խորին լրջութեամբ մը, դողաճար, ձգեցի գետին
հագուստներս,–
Գերազանցօրէն բարախում առաջին սարսուռով ելայ շտֆի Ու ծայրագոյն անձնատուութեամբ մը գրկեցի զայն:

Ձգացի
Արձանը ցուրտ, այլ երաշալիօրէն մերկ,
որ կը թափանցէր զիս կարծես:
Աղաղակեցի երկիւղէս, այլ արձանը
վայրագ ցրտութեամբ մը
Կը շարունակէր թափանցել զիս: Ո՛ր, այդ գիշերը
Առասպելական, մղձաւանջային, ամօռանալի: Այժմ
Գիշերը արձանը միշտ կու գայ վրաս,– երբ մէկը կը սիրեմ
Սիրով ու գայն կը վերածեմ արձանի՝
թանգարանին մէջ գաւառական ֆաղափի մը:

Ո՛ր, սիրէ՛ զիս, սիրէ՛ զիս տակաւին,– վասնզի գեղեցիկ եմ,
դաշն, բաքախում ու դողաճար բան մը գիշերուան մէջ
խորին: Ու պզտիկ Աստուածը մետաղային է ու փայլում,–
Ո՛ր, գիշերուան մէջ գեղեցիկ եմ գարմանալիօրէն
Ու կը սարսուռամ, կը թրթռամ հեշտութեամբ:

*Գիշերը խաղաղ ու մեղմահոս է վերստին: Խոնջ է քաղա-
քը:*

*Կը բանամ պատուհաններս, յուսալով, որ երգի ծուէն մը
կու գայ ինձ, կ'ելլէ վեր պատերէն ու կ'իյնայ վրաս:
Քանի մը ժամէն պիտի գայ առաւօտը: Ու լոյսին գուր-
գուրանքը քմահաճ պիտի ըլլայ ու դորովայի կոպերուս վրայ:
Ու յետոյ պիտի գան ուրիշ օրեր ու ուրիշ գիշերներ: Ուրիշ
օրեր ու ուրիշ գիշերներ տակաւին: Ու միշտ պիտի բնակիս
Հետս, նո՛յն յարկին տակ: Պիտի ըլլաս Հոս, այլ պիտի չկարե-
նամ հպիլ ձեռքերուդ, որ երբեմն ճերմակ են ցօղաթաթախ*

չուշաններու պէս, պիտի չկարենամ այդուն լոյսը խմել հեշտասէր շրթանցդ վրայ, պիտի չկարենամ գրկել լի իրանդ:

Երէկ, ծովեզերքէն վերադարձիս, կը դիտէի ոսկեայ հեռակարը, այլ հովը չէր, որ կը համբուրէր երեսս,- չունէր էր, որ կը լուար աչքերս: Յետոյ աստիճանաբար գիշերը ինկաւ վրաս: Կ'երթայի մոլար ճամբորդի մը պէս փողոցներէն ու կը փնտռէի, հոգւոյս աչքերովը, բնակարանդ: Ի վերջոյ գտայ զայն ու պարտէզիդ մէկ անկիւնը նստայ, դալարիքին խորը, վայելելով աննիւթական ներկայութիւնդ: Աստղերը կը պլպլային ու կը թափէին վրաս: Գիտէի, թէ անկողինիդ վրայ էիր ու քունը զով մարմնիդ վրան էր: Մեղմաճայն նամակէդ տողեր կ'արտասանէի ու ցանկութիւնս թիկունքներս կը ծեծէր: Յայնժամ ելայ ոտքի ու ցանկութիւնս ելաւ ոտքի,- բռնակալ ու անտեղիտալի: Մազլցեցայ պատը, արիւնելով սրունքներս ու թաց պատուհանէդ սահեցայ ներս: Մեղմօրէն, այլ յոյժ մեղմօրէն հանուցեցի քեզ ու թափանցեցի ի քեզ, խորին քունիդ մէջ, խուլ խանդավառութեամբ մը: Երբ աչքերդ բացիր՝ հաճոյքը առասպելական պայծառութեամբ մը լուսաւորեց դէմքդ: Յայնժամ յուզումէ խզուած ձայնով մը ըսիր,- Վանի, համբուրէ՛ գիս ծունկերուս վրայ, համբուրէ՛ գիս կուրծքերուս պտուղներուն վրայ...

Իսկ ես կ'ըսէի ինքս ինձ, յուսահատութեամբ կ'ըսէի,- ինչո՞ւ բոլոր յանդգնութիւնները զուր են, ինչո՞ւ սահմանափակ է մարդը: Անցի՛ր առաջ, կ'ըսէի ու ցատկէ՛ անդին բոլոր նախապաշարումներէն: Եղի՛ր մարդ մը, որ կ'արհամարհէ երկիրդ:

Կ'ըսէի,- կ'երեւակայեմ քեզ պատանուհի, գիշերօթիկի կարծր սաւաններուդ մէջ, անել գիշերներու ընթացքին: Ամուլ հեշտութիւններովդ, ծարաւներովդ, որ անյագ մնացին, երգերովդ, որ չծլեցան: Միւրեւի՛ս, այժմ պիտի սիրեմ քեզ այդ բոլոր կորուսեալ գիշերներուն, այդ միթիւ տարիներուն փոխան: Այգուն՝ շրթներովս պիտի բանամ բիւրեղեայ կոպերդ ու սարսուռն թարթիչներուդ վրայ պիտի զգաս բերնիս գորտովը: Ողջո՛յն, պզտիկ աղջիկս, պիտի ըսեմ, այս առաւօտ քեզ երէկուընէ աւելի կը սիրեմ, փակէ՛ աղուոր աչքերդ ու թո՛յլ տուր որ ցանկութիւնս պահնէ պայծառ մերկութիւնդ: Յաւիտենականութիւնը լոկ բառ մըն է, վայրկեանն է, որ հրաշալի է միայն, թո՛յլ տուր սիրել քեզ ողջ օրը: Ու գիշերը թող մերը ըլլայ: Ու անդերը թող մերը ըլլան: Լուսակարկաչ ջրեր թող վազեն մեզ քշելով իրենց հոսանքն ի վար: Թո՛ղ ելլենք առաւօտեան ափը, ոսկիի հետ ու ցօղաթաթախ առաւօտեան, լոգանքէ ելող մանուկներու պէս զմայլելիօրէն մաքուր: Մանուկներու պէս վերստին անմեղ:

Այսպէս կ'ըսէի ինքս ինձ: Ու գիշերը մտիկ կ'ընէր գիս:

Նոնջ էի, խոնջ էի այս երեկոյ,- անդերէն վերադարձող վաստակարեկ ու ծանրամարմին եզան մը պէս: Նոշոր քարի մը պէս տապալահար ինկայ անկողնիս վրայ ու ողջ գիշերը յիշեցի քեզ, ինչպէս յաճախ կը յիշեմ ծովը, մեղմօրէն կապոյտ,- կաղամախները, որ գիշերն ի բուն կը սօսափեն, Արեւելքի ջրերուն եզերքը, կիրճ մը, ուրկէ կը հոսի վազկատուն վտակ մը, արահետ մը, զոր շատ կը սիրէի, երբ մանուկ էի, այդ կորուսեալ քաղաքին մէջ:

Բարակ, նիհար, օճազալար, մթին արահետ մը: Ու յետոյ յեղակարծօրէն կ'իյնայիր զարմանալիօրէն պայծառ մարդագետնի մը խորը,- մարդագետնի մը, որ այդուն յոյսին մէջ կը շողար, Անգլիոյ ազնուապետական պարտէզներուն պէս:

Օ՛, կարելի է, կարելի է ասիկա: Քեզ կը տեսնեմ մերկ, ճերմակ ու դիւրահոս, աղուոր գետակի մը պէս: Մերկ՝ կռթնած ես ծառի մը ու ակռաներովդ խածած հրաշէկ վարդ մը: Անտարակոյս, մեղմահոս ու քաղցր էր գիշերը: Գիշերը կ'իյնար բակին վրայ թաւշեայ սաւանի մը պէս, կը պագնէր ծառերուն կատարները, կը տնտնար պատերուն շուրջ, ասդին-անդին, կը վերածուէր մռայլ բեկորներու:

Պատուհանէս կը տեսնէի լիովին չորս գեղասլաց, բարձրահասակ ծառեր, որ հետզհետէ կը մթնէին,- մինչ խիճերը դեռ կ'արձակէին աղօտ պայծառութիւն մը: Թռչունները, որ խօլ ճիւղեր կ'արձակէին, արտոյտնե՞ր էին միթէ: Ո՛, ինչ անէ-ական էր գիշերը:

Կը յիշե՞ս այժմ,- երբեմն կը գգուէի յոյժ դանդաղօրէն հարուստ թիկունքներդ,- յոյժ դանդաղօրէն: Այսպէս կը սիրէի քեզ, մտածելով խորունկ պարտէզիդ ծառերուն, ցորենի ալետատան արտերուն, որ կը շրջապատեն գիւղդ, կաղամախեաց բուններուն:

Եթէ զանգակը չհնչէր՝ կրնայի երկարօրէն գրել քեզի: Այլ բոլոր զանգակները կը հնչեն միշտ, ապաժամու կամ վաղաժամու:

Գիշերը յեղակարծօրէն կը խորունկնայ: Որոտն է, որ կ'ելլէ իր մթին երանքներէն: Այլ կը սիրեմ այսօր երկրին ու երկնքին զայրոյթը: Կը բանամ պատուհանս ու կը դիտեմ քաղաքը, այս թաղին կատարէն: Կը մտածեմ անոնց, որ քիչ մը երջանիկ են՝ վասնզի խաղաղ, ու անոնց, որ կը թրթռան գորովով, կը մտածեմ սիրոյ մեղմիկ բառերուն, ճիւղերուն, որ կը խեղդուին, քաղցրահունչ ծիծաղներուն, որ ծափելէն կ'ելլեն: Հրաշայի մանուկ մը պիտի ծնի՝ արդեօք մեծ յաղթանակի:

Բարձրացուց իր գլուխը: Յայնժամ շնչատու խոռովեալ
 Նետեցի ձայնս մութին, գոռացի՝
 —Աւրժեքդ հոտաւէ՞տ եմ ու երիտասա՞րդ եմ...
 —Այո՛, քաղցր կը բուրեմ առաջին պտուղներու պէս
 Ու փափուկ եմ, երբ կը դողամ սիրով, բա՛ց դուռդ...
 —Դե՛ստը հեշտութեան, բարձեքդ ի՞նչ եմ ու ճկուն եմ...
 —Այո՛, յաջողակ եմ մանաւ սիրոյ մէջ ու թաւշեայ մորթով...
 —Ըսէ՛ ինձ, ցայգային այցելուի, շրթներդ կը խմե՞ն միթէ
 Զովութիւնը գիշերուան, դողահար եմ մեղսակցութեամբ...
 —Շրթներս գիտեմ հանդիմանալ սիրոյ, ունիմ
 Ճաշակը մութը հեշտութեանց, կը բարախեմ ինչպէս
 վերջ մը անուշ,—
 Կը դողամ բաժակներու պէս ծաղկեալ, բա՛ց դուռդ ինձ,
 —Աչքերդ կը պարփակե՞ն միթէ անհունութիւնը,
 կոպերդ ուռա՞ծ եմ
 Յանկութեմէ, երկա՞ր եմ արտեւանումքդ,
 յօնքերդ կե՞ն եմ
 Թրի մման բարբարոսի, մոգեա՞լ է միթէ ակնարկդ...
 —Աչքերուս մէջ կը մշուի լոյսը յանդակաւ, գիշերս
 Ողորդեալ է ծաղիկներով, բա՛ց դուռդ...
 —Գիտե՞ս միթէ խորին հանդիմանալ սիրելի՛
 պերճադիմի մը պէս յոյն,
 Որովայնդ կը սարսռա՞յ սիրոյ ծարաւէ...
 —Բառերդ կը վերաւորեն գիս, այլ իմացի՛ր,
 որ թիկունքներս
 Այնպէս եմ, երաստանս հեշտագրգիտ,
 երբ լայն կը թաւալիմ՝
 Կը տաքնայ արիւնը ծերերում,—
 երբեմն մարմինս կ'ալեկոծի
 Ծովու մը պէս խորունկ: Նախանձատ ու գիտուն
 աստուածներ
 Լգեցին մարմինս գմայլելի, ինչպէս էգ կատու մը կը լցէ
 Իր ձագը նորածին, բա՛ց դուռդ, սրունքներս ջղուտ եմ,
 Անթերի է իրենց կաղապարը, անօթներու պէս թանկագին:
 Մարմինս կշռոյթն ու ամանակը ունի
 Յաւիտեանական սիրոյ, բա՛ց դուռդ...
 —Գոռեիկ սէրը կը ծնծէ կողբոս, կ'ուզեմ մերձեանալ ի քեզ
 Ոտքի, գէշ ճամբաներու դատարկապարտի մը պէս,
 պատի մը տակ,
 Նաւամատոյցի մութին մէջ, վատահամբաւ
 փողոցի մը անկիւնը,
 Հնազա՞նդ է մարմինդ պերճ, թիկունքներդ
 Կրնա՞ն տուալ սանձակոտոր բռնութեան...
 —Տարօրինակ տղայ մըն ես, գուցէ անմեղ ու գէշ լեզուդ
 Կրնայ ծածկել տենդդ անուշ, օ՛, մանկութիւն,

բա՛ց դուռդ իմօ՛,
կ'ուզեմ սիրել մարմինդ խօլ սրումքներովս՝
Արաք կմոջ մը պէս մոյի, որ կը վառի հովերէ տաք,--
կ'ուզեմ սիրել քերամդ եեզ՝ շրթումքներովս Մայիսեան,
հայիլ ուսիդ Ամտալուզեան ծիծերովս, կ'ուզեմ սիրել
Քեզ լռութեամբ եիւսիսայիմ կմոջ մը պէս խարտիշահեր,--
Ո՛ր, բա՛ց դուռդ, կու գամ քաւշեայ գիշերներէ,
Գիշերներէ մոլորագոյմ,-- կը բռնկիմ, կը բռնկիմ...

Վաղ այգուն, երբ երկիրը կը զարթնու, կ'որոնեմ մատ-
ղաշ երիտասարդութիւնդ: Կ'որոնեմ քեզ կարենալ յամենայնու
Համար մարմնիդ քով, ըմբռնելու Համար կէս-քունի աշն
Հեշտասէր վիճակը, որ կու գայ գիշերէն, Հաւելու Համար
մեղմօրէն աղուոր ուսերուդ, գուրգուրալու Համար ծուն-
կերդ, ձգելու Համար ձեռքս մարմնիդ վրայ յուլօրէն: Երեկոյ-
եան, անկողնիս մէջ վերստին կ'որոնեմ քեզ, վերստին բռնկեալ
տենդով մը ու ակնարկս կը պարուրէ իրանդ իր անձկալի, իր
անյագ նշուլումին մէջ:

Յանկութիւնս կը դեգերի շուրջդ աւազակի մը պէս:
Զգաններս կը խզուին իր սաստկութենէն, իր սանձակոտոր
բարկութեան տակ կը տապալիմ կայծակնահար ծառի մը պէս:
Գէշ գորութեան մը պէս ցանկութիւնս կը սարսէ գիւս: Կ'ուզեմ
սիրել քեզ բազմապատիկ փորձառութեամբ մը:

Կ'ուզեմ սիրել քեզ արեւելեան գիտուն Հեշտութեամբ,--
նուրբ ալլ բարբարիկ երբեմն, ինչպէս ծեր մահմետականներ
կը սիրեն իրենց Հարճերը: Պիտի յենած ըլլաս Հանգստաւէտ
բազմոցներու, ներքին բակի մը խորը, ծովահայեաց դղեակի
մը մէջ: Յայտադրուր մը բակին մէջտեղը: Լուսնկան ճերմակ,
դիւթեալ, լի՝ կախարդեալ մերկութեանդ վրայ: Սպիտակ ու
դեղին յասմիկներ կը բուրաւէտեն օդը: Բարձրուն վրայ
Հրաշէկ վարդեր կը պայթին: Արեւելեան ծանր բուրումներ կը
յամենան ընտանի իրերու վրայ: Յայնժամ դանդաղօրէն կը
բանամ ծածուկ վարագոյներ ու երկարօրէն կը դիտեմ պայ-
ծառ մարմինդ, ինչպէս օրը որ կը ծագի: Պիտի ըլլաս անյարիւր,
պառկած որովայնի վրայ: Օ՛, ուսերդ, որ ողորկ են, կռնակդ՝
ճերմակ ու անաղարտ, իր Հեշտաւէտ ակօսովը, թիկունքներդ՝
ուր երկիրը կը պտղի իր խոնջէնքէն: Տիրապետելով տենդա-
հար անհամբերութեանս, ծունկի, ծարաւի շրթունքներովս
կը Հալիմ ծոծրակիդ: Սարսուռ մը կը վազէ ասդրերդ ի վար,
ինչպէս ջրի երիզ մը, սրսիւն: Յայնժամ կը ծածկեմ Հրաշալի
իրանդ մերկ մարմնովս, ինչպէս տերեւ մը տերեւի մը վրայ:
Կ'ընդունիս գիւս՝ ինչպէս վայրագ էգեր կ'ընդունին իրենց
զարհուրելի արուները ու մարմինդ կը ճարճատէ Հեշտութեան

բողոքի, կ'ընդունին զիս ցանկայայրոյց ու յամբ թաւալումովը մարմնիդ, վայրի գալարումներովը ձերբազատեալ իգութեանդ: Կ'ընդունին զիս՝ ինչպէս կակուղ փայտը կ'ընդունի մետաղեայ բեւեռը, ինչպէս մայր երկիրը կ'ընդունի փայլուն խոփը արօրին, խոսքան աղաղակներով կը մերձենամ ի քեզ, մինչ լուսնկան կը խեղդուի աւազանին խորը:

-Լոյսը երջանիկ աչացս, չա՛րդ Պենարէսի, մտի՛կ ըրէ զիս, աղբի՛ւր դամասկեան, ցայգաթիթեռ, մտի՛կ ըրէ զիս: Կը սիրեմ յորդաթաւալ իգութիւնը թիկունքներուդ, ինչպէս անհաւատները կը պաշտեն կլոր գմբէթները իրենց ճերմակ մզկիթներուն: Ելի՛ր այժմ ու թաւալէ՛ իրանդ ակնարկիս բոցավառ նշուլումիններքեւ, եղի՛ր ճերմակ՝ ինչպէս վարդերը արեւմտեան, ինչպէս կիները հիւսիսի,- Օ՛, թաւալէ՛ իրանդ, ալեկոծեալ, նետէ՛ մերկութիւնդ լուսնին: Պարտէ՛զ Սպահանի, բա՛ց դարպասներդ ու թող, որ բոլոր բարբարոսները զան ի քեզ, համբոյրի մը մէջ ըմպէ՛ նախաճաշակը անուշ մահուան, անաղարտ համը բանաստեղծութեան, որ կու գայ անէութեան սահմաններէն: Ձգէ՛ ողկոյզները կուրծքերուդ ծունկերուս վրայ, ոտքերուս վրայ՝ քնարական նուէրներու պէս, ի նշան հաւատարմութեան, եղի՛ր ճկուն, ճարտար ու կախարդիչ, եղի՛ր բարախուն ու ծարաւի սիրով: Յայժմամ մերձենամ պիտի ի քեզ, չրթանցս վրայ քնքուշ ու մեղմ բառերով,- թեթեւ՝ ինչպէս արտոյտները, որ կ'ելլեն առտուան ափերէն, թեթեւ՝ ինչպէս բարակ հովերը հարաւի, բուրաւէտ՝ ինչպէս ծաղիկները արեւելեան: Ափերուս մէջ պիտի սեղմեմ ձեռքերդ՝ դիտելով գիշերը, որ պիտի իյնայ վրանիս՝ ինչպէս քունը բարի, ինչպէս խոնջէնքը քաղցր, ինչպէս հանգիստը: Ու գիշերուան խորէն՝ պիտի ելլէ երգ մը յոյժ տխուր ու յոյժ անուշ՝ ինչպէս կեանքն է,- յոյժ տխուր ու յոյժ անուշ:

Կը հայցեմ քեզ, վաղ այգում, ինչպէս հովիկը մեղմ
Կը պաղատի համբայրը դալարի՛քին,- կը հայցեմ քեզ
հացի պէս բարի, լի արեւում կրակով,-
ինչպէս հեղեղները խօլ կը հայցեմ հիւրընկալութիւնը
ամպերում՝

Աղմուկներով մեծ, երգերով, որ կը պատռեմ
լուսթիւնը գիշերային,
կը վիրաւորեմ գայմ: Կը հայցեմ քեզ
Ձեռքերովս ամյազ մառուկի՛ մերթ հեղգ ու մերթ
երամայական,-

Ձեռքերովս ապարարայ, որ կ'ընդունիմ
ամէն հարստութիւն,
Ամէն գամձ, որ կը գրկեմ բոլո՛ր ձեւերն

ու կորուսիւմները դաշմ' գիտում խանդավառութեամբ մը,
կը հայցեմ քեզ, ինչպէս մարմինս կը ցանկայ
Մարգագետինները զով, կաղամախեաց սօսափիւմը,—
ժամերը լուրջ, գետեզերքն ի վեր,— ակնարկիս տակ
մեղսակից՝

Ելի՛ր մերկ, մատդաշ ու վախկոտ, վիթի մը նման,
Ելի՛ր թեթեւ:
Կ'որոնեմ քեզ քաղուկներովս այգում, կը բախիմ դեմքիդ
Ու զովութիւնդ անուշ գիւ կը լուայ մեղքերէս,— Ելի՛ր
մերկ,— ինչպէս բունը ներմակ բարտիի մը,
Մերկ,— ինչպէս ցանկութիւնս կ'ուզէ քեզ, գերեալ ի սէր,
Պիտի թողում տեղը քերամոյս փսսիմ վրայ ուսիդ,
Կռակերդ վրայ պիտի համբուրեմ ծոյլ

տրամութիւնը աչացս,—
Ելի՛ր, ինչպէս առաւօտը կ'ելլէ, ինչպէս եովը կ'ելլէ
Մաքուր ու գարնանային: Ոտքի՛ պիտի շողաս
ճառագայթարձակ,
Ելի՛ր, Ելի՛ր,— թրթռում ու պատրաստ սիրոյ
Կռոյսի մը պէս անձկալի, Ելի՛ր մերկ,— Ո՛ր, վարդ Պեմարէսի...

Երբ մահը գայ վրաս, հովի մը պէս սեւ,—
Արտոյտները պիտի չխմեն լոյսի գիւնիմ, այգում
Պիտի լոռն ծաղիկները,— Երբ մահը գայ վրաս
Մեղեդիներով խօլ ու լուսնկամ դալուկ պիտի ընկղմի
Հորի մը խորումը: Զրբը պիտի հոսիմ, հոսիմ
Յոյժ անաղմուկ ու երբ մահը գայ վրաս
Ցաւի պէս չարաշուք՝ շրթներս պիտի վառիմ

շրթներդ վրայ,—
Կեռասնիկները ամօթաւար պիտի դողան,— այլ միշտ
Պիտի բանաս դուռդ գողումի, պիտի կենաս լուռ
Այծտերեւի թփերում մէջ, ընդունելու համար

պարտեզիդ մէջ
Այցը սիրոյ: Երբ մահը գայ վրաս մառախլապատ
Մշուշը մանիշակ պիտի ծածկէ երկիրը,—

Երբ մահը գայ վրաս
Ոստերում մէջ ու շափիւներում յետամնաց ննջողակներ
Պիտի չնռուողիմ: Այգը պիտի չծագի գուցէ,
Պիտի չծագի գուցէ ամէ՛ն օրումս պէս քաղցրաթրթիւ,—
Երբ մահը գայ վրաս՝ իր մանգաղովը կեռ:

*Երկար ու ցաւագին զրկանքէ մը յետոյ՝ ձեռքերուդ գո-
լովը կը նմանի արթայական ընծայի մը: Ի՛նչ քնքուշ ու ի՛նչ
բաբախուն է ափիս մէջ ձեռքդ, ո՛վ սիրեցեալ: Ափդ կը վառի*

Հաւատարմութեամբ: Մատեներդ նուրբ են ու խոնջ ծալրագոյն գործովէ ու գունատ՝ կերոններու պէս, երբ ցանկութեան կրակը կը պազնէ իրանդ:

Օր մը գուցէ պիտի մոռնաս, այն, որ առաջինն էր ու այն, որ վերջինը եղաւ: Ինձմէ առաջ: Խանդավառութիւնս պիտի լուայ դէմքդ իր յոգնութենէն, իրանդ պիտի յիշէ իր է՛ն զգայուն բջիջներով, յետին գուրգուրանքս: Պիտի յիշես վա՛րագ համբոյրները բերնիս, ձեռքերուս խօլ հպումները: Պիտի յիշես ձայնս, որ երբեմն կու գար գիշերուան խորունկէն:

Կը յիշե՞ս գաւառական քաղաքի այն լուսակայակ գիշերը: Անհամբեր սպասելէ՝ կայարանը, վհատ, վերադարձայ մեր սովորական պանդոկը: Պանդոկապետուհին սիրալիր շարժումներով ընդունեց զիս ու յարեց, թէ վերն էիր արդէն: Շնչատ բարձրացայ, բախեցի դուռը, այլ ո՛չ ոք կը պատասխանէր անձկութեանս: Զայրոյթէ՛ դողահար մտայ ներս ու յեղակարծօրէն արիւնս տաքցաւ,՝ վասնզի հոդ էիր, մօրէ մերկ, կոթնած պատի մը ու Սէրը շրթներուդ վրայ կը բողբոջէր: Ծունկի համբուրեցի դաստակներդ, համբուրեցի ծունկերուդ կափարիչները, համբուրեցի ծիծերդ, որ կը ցայտէին եւ որ կ'ընծայէիր ափերուս անօթութեան:

Մ, աղաղակեցի շնասպառ, մարմինդ մտանգի մը պէս է, անխուսափելի ու երկիւղալի: Վտանգ մըն ես ճամբուս վրայ, որ զիս կ'առինքնէ ինչպէս մահը, ինչպէս անբանաձեւելի քաղցրութիւնը անէութեան:

Յայտնամ գիշերը ծածկեց մեր մարմինները: Բազմոցին վրայ գիշերը չոքեցաւ մեր կուրծքերուն ու հեշտութեան չոր ուրականը սարսեց մեզ: Կը յիշե՞ս այդ ժամերը, սիրեցեալ:

Գունը պիտի գայ երգի մը պէս, քեզ պիտի գտնէ խոնջ՝ քաղմոցի մը վրայ ցած,՝ քունը պիտի ըլլայ յոյժ թեթեւ վրադ, շրջագգեստի մը պէս նուրբ: Յիշատակները պիտի սրբաւիճ ընդմիշտ,

պիտի ըլլաս մաքուր:

Այն որ առաջինն էր պիտի կորսնցնէ իր ծածուկ

իշխանութիւնը

Ու վերջին պիտի սպասէ յիշատակի ժամուն: Պիտի սպասէ՝ ինչպէս մեմֆ կը սպասեմք մահուան, փրկութեան:

Պիտի յարես մեղմիւ,՝ Ձեռքերդ քարեհամ էին ու ազմիւ, Շնորհակալութիւն, անոնց քարութեան համար:

Սրբաբանքդ

շղուտ էին ու պիրկ սիրոյ մէջ, շնորհակալութիւն:

Ու թող ըլլան աւելի արու, աւելի սիրահար:

Շրթումքերդ թեթեւ ու անուշ էին գարնան հովի պէս,

մտերիմ՝ ինչպէս երգ մը մայրենի: Գիշերը

թող անաղարտ ըլլայ ամէն օր օտար այցէ: Ակնարկդ

յագեցեալ է սիրով, ցանկութիւնդ եւս: Որովայնս
կը սարսռայ իգութեամբ, ձեռքերս կը դողդոջին:
Ո՛ր, տուր ինձ
հայս համապագորդ, մաշիս՝ քաղցր, ո՛վ սիրական:

Ու մառախուղը ռսկեայ էր ու յոյժ թեթեւ
քաղաքիմ վրայ, բոլոր ցաւերս կը ննջէին
թռչուններու պէս գլխահակ թռած ուսերուս,—
իրենց բոլոր եւս թեթեւ էր, հոգիս եւս: Այլ մարմինս
կը բարախէր ամուշ տրտմութեամբ մը՝
կնոջ մը պատմառաւ:
Կնոջ մը պատմառաւ կը մսէի: Ո՛ր, խնձորենիներ
ընծիւղեալ,
ծաղիկներով թեթեւ քաղէ՛ք մեր անկողինը:
Գիշերը թող ըլլայ
կարմ ու լուս: Ինչո՞ւ տրտում է մարմինս
կնոջ մը պատմառաւ: Միմչ գարունը
կը բացուի, կը բացուի մանիշակ նշայներով:

Ծանկութիւններս կը դեգերին շուրջդ
գիշերներու պէս խօլ, մեղսակից: Անցեալը
հանգուցեալ է, վասնզի կը հնչէ ժամը հեշտութեամբ:
Այս երեկոյ հանդիսութեամբ թաղեցի պատմութիւնը
կեանքիդ
ու պատմութիւնս,— տղամ որ էի ես
ու խօլ աղջիկը, որ էիր, դուն,— կորուսեալ եմ ընդմիջտ:
Ամպեր

պատեցէ՛ք պարտեզներում վրայ, ամպեր
թրջեցէ՛ք երկիրը բարութեամբ: Նրկիրը մահի՞ն մըն է
հանգստաւետ, եղի՛ր թագուհի այս արքայութեան,
սիրեցեալ:
Ահա՛ կ'ընծայեմ քեզի ողջ հարստութիւնս,— այս մարմինը,
դալար մոգեալ, աչքերս ուր կը ննջեն
ծովեր, քաղաքներ մեռեալ, յիշատակներ: Ահա՛ քեզի
քաղցր տրտունջը շրթներուս, գգուամբներս մորածիլ,—
Ձայնիս մեղմ լրջութիւնը, շեշտը ծանր: Որախութեամբ
կ'ընծայեմ քեզի ողջ կեանքս ներքին,— ընդունէ՛ գայն՝
իմչպէս հողը կ'ընդունի անձրեւը, իմչպէս տկարները
կ'ընդունին զԱստուած, կ'ընդունին ճակատագիրը:

Թո՛ղ գիշերը պտղի բերկրութեամբ, ըլլայ դողաւար
իր ծառերովը սրսփում: Թաւառներում մէջ
թող թռչունները ննջեն: Ո՛ր, եղեգները կը դողան,
վերերը խօլ կը սուրան, ամպերը արծաթագոյն եմ
վասնզի տեմդը երկրին կը փչէ գամռմբ: Նաւերը,

որ կը մեկնիմ,
 հեռաւոր ծովերու վրայ, մաւստիմերը կամշոտ,-
 հովմ է, որ կը վարէ գամմէ,- Աստուածը թեթեւ:
 Առագաստները կ'աւտին, հողը բեղում
 կը սպասէ տաք համբոյրը միջօրէին, քիչ մը տօնէ գիւս,
 շա'տ սիրեցեալ, գոի'ր գիւս, Ո', տիկին լուսնկայ,
 ծածկէ երեսդ գումատ, վասնզի
 կը ծագի ժամը հեշտութեամբ:

Կը սպասէի քեզմէ լուրի, այլ անհամբերութիւնս մեծ էր՝
 նամակի մը արժանի ըլլալու համար: Պզտիկ հաճոյքներու
 պէս, որոնց վայելքը կը սպառենք նախօրօք եւ որ տաժանելի-
 օրէն հասարակ կը թուին յետոյ,- գոհացումին յաջորդող
 ժամուն:

Այժմ մարմինս խիստ ծանր է՝ անաղարտ հաճոյքներ
 կարենալ կրելու համար: Մեր ցանկութիւնները կը գոհակաց-
 նեն բոլոր գորովայի զգացումները, վասնզի կը բխին մեր
 մարմիններուն միջին անկիւններէն:

Կը յիշեմ անգլիական քնքուշ վէպ մը: Տարիներ առաջ էր,
 զարնան, երբ կարդացի զայն ու ամիսներ ապրեցայ անոր
 նրբօրէն բարախուն միջնորդութիւն մէջ: Կը սիրէի Անգլիոյ
 ազնուականական լուրջ ու շքեղ պարտէզները, իրենց լուին
 ածուներով: Բարձրահասակ ու յոյժ խարտեաշ աղջիկ մը կը
 դեգերէր մեղմ քայլերով: Շատ կամաց, իրիկունը, որ կ'իջնէր,
 կը գետնէր ոսկեայ համբոյր մը անոր պարանոցին վրայ:
 Դաւարիքին վրայ ուղեկորոյս ու յամեցող ճառագայթ մը կը
 զգուէր ծաղկի մը ճերմակ բաժակը: Երիտասարդ պարմանու-
 հին կը կարդար Շելլիէն սրտամորմոք երգ մը: Նուրբ ու ազնիւ
 բարակ մը իր քնքուշ դուռնը կը դնէր անոր ոտքերուն վրայ:
 Յայնժամ տղայ մը կու գար, իրիկուան խորունկէն, երիտա-
 սարդ ազնուական պարոն մը, յոյժ խարտեաշ՝ ինչպէս աղջի-
 կը: Ան սլացիկ էր ու գեղանձնեայ եւ իր կապոյտ աչքերուն
 խորը ուժեղ անմեղութիւն մը կը նոյնանար սիրոյ հետ:

Երկարօրէն կրեցի այս երազը վրաս, մինչեւ որ ընկեր մը
 արտառոց պատմութիւն մը ըրաւ ինձ, անգլիացի ուսանողու-
 հիներու վերաբերեալ: Այժմ ամէն անգամ, որ այս երազը
 վերադառնայ ինձ՝ բերանս կը պրկուի անգութ հեղնութեամբ
 մը:

Այս բոլորը կ'ըսեմ քեզի առանց պատճառի,- ինչպէս
 մէկը կը նուազէ մեղեդի մը առանց բառերու, առանց որոշ
 եղանակի:


Երէկ գիշեր սիրով մտածեցի վրայ: Ժամը հաճելի էր այդ ընդարձակ սրճարանին վրայ: Ընկերոջ մը հետ էիք, երբ երրորդ մը եկաւ իր ուսանողուհի-բարեկամուհիին հետ: Ինձ ըսած էին, թէ այդ աղջիկը գեղեցիկ էր, - այսուհանդերձ քիչ մը գարուն ու եղբւանինը բերաւ հետը: Սրամիտ մանկուհիի աչքեր ունէր ու պզտիկ, կարմիր բերան մը: Երկարօրէն ջանացի նեղել գիշերը ու յետոյ յաղթել իր դժկամակութեան: Ուշադրութեամբ մտիկ կ'ընէր գիտ, արմուկները սեղանին, սիրուն կզակը ամբերուն մէջ ու աստիճանաբար հաճութեան անուշ ժպիտ մը կը ծլէր շրթանցը վրայ: Դէմքիս վրայ, բարակ հովի մը պէս, կը զգայի ակնարկին մաքուր զովութիւնը:

Բաժանումի պահուն երկարօրէն սեղմեց ձեռքս, կապոյտ հայեացքը ձգելով վրաս: Այլ իր բիրեբուն խորը՝ քու քաղցր դէմքդ էր, որ կ'ուրուագծուէր: Վրայ մտածելով է, որ երկարօրէն ընդլայնեցի այդ գաղափարը, թէ սեռային արարքը լոկ բարեկամական պէտք է ըլլայ: Ինքս ինձ կը կրկնէի՝ թէ ճամբուս վրայ վտանգ մըն էի, թէ պիտի կորսնցնէի ներքին խաղաղութիւնս, վասնզի սէրը անձկութիւն է ու անստուգու-թիւն: Դուն հեշտութիւն ես այժմ ու վէրք ես: Եթէ սաստկօրէն չսիրես գիտ՝ վէրքի պէս պիտի արիւնիս վրաս:

(Շաբ. 2)

ՎԱԶԳԷՆ ԾՈՒՇԱՆԵԱՆ





ՅԱՄԵՆԱՅՆԻ ՊԱՏԿԱՌԵԼԻ...

Ընդհանրապես Լիբանանի եւ մասնաւորապէս մեր հատ-
ւածին մշակութային կեանքին մէջ 30 Մարտին տեղի ունեցաւ
մշակութային իրադարձութիւն մը, կրօնական, պետական, մշա-
կութային ներկայացուցիչներու ու մշակութասէր հոծ բազմու-
թեան մը ներկայութեան՝ բացումը կատարուեցաւ Կիլիկիոյ Հա-
յոց Կաթողիկոսութեան վանքի Թանգարան-Մատենադարանին,
որում կը սպասուէր տարիներէ ի վեր, նախորդ Կաթողիկոս
Գարեգին Բ.ի գահակալութեան օրերէն սկսեալ:

Հայ մշակոյթին մօտիկ անձները գիտէին, որ տասնամեակ-
ներու ընթացքին գորովալիւր խնամքով ու հետեւողական նա-
խանձախնդրութեամբ Թանգարանային արժէք ներկայացնող
թանկ հարստութիւններ կուտակուած են ու կը շարունակեն կու-
տակուիլ մայրավանքին մէջ, քայք քիչեր, շա՛տ քիչեր գաղա-
փար ունէին այն անփոխարինելի ամբողջին մասին, որ այսօր,
նորայարդար մասնաշէնքի կամարներուն տակ կը յանձնուի հա-
նուրի վայելումին:

Անքիլիասի Թանգարան-Մատենադարանը...

Եթէ մէկը պատկառանք բառը իր խորախորհուրդ ու նրբե-
րանգային ամբողջութեանը մէջ ըմբռնելու պատենդութիւն չէ ու-
նեցած, թող հեղ մը այցելէ արդէն սրբավայր դարձած այս կա-
ռոյցը, ուր ըստ ինքեան արժէք ներկայացնող անկրկնելի գան-
ձերուն զուգահեռ՝ համակող եւ անոնց անաղարտ պահպան-
ման օգտին կիրարկուած ճաշակը, քծախնդրութիւնը, մաքրու-
թիւնը, խոր յարգանքը, որոնք ի միասին կը զգացնեն շունչ մը,
որ անցեալին միայն չի պատկանիր, ոգի մը, որ վարակիչ է
դարձեալ, խորհուրդ մը, որ ամենագրաւ է, յամենայնի պատ-
կառելի:

Գիր, գոյն, ձեւ, լոյս, խորհուրդ՝ մասունքներու հետ, նշխար-
ներու հետ, դարերու հետունքներէն թէ մեր մօտ ու հեռուն շնչող
նոր արուեստագէտներու յայտնութիւններուն հետ:

Յաջորդող էջերուն կու տանք գոյգ վեհափառներուն ու
Հանրապետութեան նախագահին խօսքերը, որոնք յաջորդաբար
արտասանուեցան բացման հանդիսութեան ընթացքին:

**ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍԲԸ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ԹԱՆԳԱՐԱՆ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ**

Որքան կը ցանկանայինք անձամբ ապրիլ Անթիլիասի Թանգարան-Մատենադարանի Հանդիսաւոր բացման այս հոգեկից պահը: Բայց հարկեցուցիչ պարտաւորութիւններ թոյլ չտուին այդ երջանկութիւնը անձնական ներկայութեամբ վայելել: Թող այս գիրը ըլլայ Մեր ներկայութեան ձայնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պատուիրակներու կողմէ փոխանցուած:

Գարնան եղանակին, բնութեան այս վերափոխութեամբի օրերուն, նոր այգի մըն է, որ կը ծաղկի Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի Անթիլիասեան շրջանի նորագոյն պատմութեան անդաստանին մէջ: Այսօր, կը զգանք ու կ'անդրադառնանք, որ Հայ մշակոյթի նոր ու պերճախօս վկայութիւն մըն է, որ կ'ընծայուի մեր Հայ ժողովուրդի զաւակներու վայելքին եւ բարիքին համար:

Երէկուայ պէս վառ կենդանութեամբ կը յիշենք, թէ ինչպէս Լիբանանի մէջ տիրող ռազմական բախումներու աւարտին, որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ մտայղացումը ունեցանք ի մի հաւաքելու գեղարուեստական արժէք ունեցող այն բոլոր գործերը, որոնք համատեղուած էին Անթիլիասի մէջ, ոմանք բերուած ըլլալով Կիլիկեան Հայաշխարհէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր նստավայր՝ Սիւ մայրաքաղաքի Կաթողիկոսարանէն, եւ ոմանք ձեռք բերուած ըլլալով Լիբանանի օրհնեալ հողին վրայ վերահաստատուած Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ, Կիլիկեան Աթոռի գաւակալներուն նախաձեռնութեամբ եւ քաջալիրանքով: Անմիջապէս գործի լծուեցանք եւ ամակցութեամբը Ազգային Կեդրոնական Վարչութեան եւ օգնութեամբը ար-

ւեստասէր ու մասնագէտ բարեկամներու եւ ազնիւ ու առատաձեռն բարերարներու՝ կարելի եղաւ հիմնովին վերակառուցել Անթիլիասի մայրավանքին կիւլպէնկեան շէնքը՝ արդիական, ըստ Թանգարան-Մատենադարանի յատուկ նպատակաւարմար չափանիշներու եւ գեղագիտական ճաշակի:

Անհունօրէն ուրախ ենք, որ Մեր սիրելի յաջորդին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրով գործը հասաւ իր լրումին եւ նախածրագրուած դասաւորումի համաձայն՝ արուեստի գործերը գտան իրենց արժանավայել տեղն ու դիրքը եւ սկսան իրենց անբարբառ լեզուով խօսիլ բոլոր այցելողներուն, նոր ու պատուաբեր նուաճում մը արձանագրելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Լիբանանեան Հայրենիքի պատմութեան մէջ:

Թանգարան-Մատենադարանը պահեստանոց, աւանդատուն ու շտեմարան չէ: Դպրոց մըն է, անգրասեղան, անդասագիրք, բայց ոչ նուազ դասատու եւ հոգեշէն: Այնտեղ դարերը դուրս կու գան ժամանակի կղզանքներէն, նիւթեղէն տարածութեան սահմանաչափ կապանքներէն եւ կը դառնան մշտաբարբառ լեզու, խօսք, պատգամ, յուշ, ներշնչում եւ հոգեճառագայթում դէպի ապագայ, դէպի նոր հորիզոններ հոգեմտաւոր նուաճումներու: Այնտեղ կերպարուեստի յատուկ գործերը դուրս կու գան իրենց տախտակեղէն կամ մետաղաշէն շրջանակներէն, մանրանկարները կը թողուն մագաղաթներու մութ ու տօգոյն խորքային էջերը, մետաղեայ առարկաները կ'անդրանցնին իրենց ծիսական կամ դրամական-գնողական տարածքները, գիրքերը կ'ազատագրուին գիրի, մելանի, թուղթի ու պահարանի կաղապարներէն, եւ բոլորը կը լեցունին ապրող մարդոց միտքերուն, սիրտերուն եւ հոգիներուն մէջ: Անոնք կեանքէն են եկած եւ Թանգարան-Մատենադարանի անպարագիծ ճամբով կ'երթան կեանքին: Անոնք մահ չունին: Մենք է, որ առանց անոնց՝ կ'երթանք իմացական-հոգեկան-բարոյական աղբատութեան ու մահուան:

Քաղաքակիրթ ազգերու համար Թանգարան-Մատենադարանը միանգամայն վկայանիշ է, ցուցանիշ եւ յառաջանիշ: Անցեալը ապագային կապող կամուրջ: Նոյնիսկ թշնամութեան մէջ բռնուած ազգեր պատերազմի ժամանակ կը խնայեն Թանգարաններուն, մշակոյթի կոթողներուն, ինչպէս կրօնական սրբազան հաստատութիւններուն: Մեր մեծատաղանդ գրագէտներէն Յակոբ

Օչական խորթափանց դիտարկումով եւ խիտ բնորոշումով կ'ըսէ. «Քաղաքը կը կործանի, բայց արձանիկը կը մնայ»

Մենք կը հաւատանք, որ Անթիլիասի Թանգարան-Մատենադարանը պիտի դառնայ ոչ սոսկ ցուցանիշ մեր հայ քաղաքակերտական ստեղծագործականութեան քաղաքակրթական օրրան Լիբանանեան պատմահարուստ հողին վրայ, այլ պիտի դառնայ քաղաքակրթող օճախ մեր նոր սերունդին համար: Նոր արուեստագէտներ եւ արուեստասէրներ այնտեղ պիտի գտնեն հարազատ տուն մը, որ զիրենք պիտի մղէ նորանոր ստեղծագործութիւններու՝ ի սէր եւ ի զարգացումն հայ արուեստաշէն ժողովուրդին, որուն բնօրրանը, Մայր Հայաստանը մշտաբարբառ ու «անլուելի գանգակատուն» է արուեստի, մշակոյթի, գիրի, գրականութեան, տեղի դպրութեան եւ օճախ քաղաքակրթութեան:

Մեր խօսքը փակելէ առաջ սրտի պարտ կը գգանք Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռէն՝ Էջմիածնէն Մեր շնորհաւորութեան, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսքն ուղղել բոլոր այն անձերուն եւ կազմակերպութիւններուն, որոնք իրենց լայն բաժինը բերին այս մեծ գործի իրականացման: Բարեբարներուն, Լիբանանէն եւ արտասահմանի այլ երկիրներէն՝ Եւրոպայէն ու Ամերիկայէն, չէնքի վերակառուցման ճարտարապետական շինարարութեան եւ արուեստի գործերու գիտական ու գեղարուեստական դասաւորման իրենց կարեւորագոյն բաժինն ընծայած անձերուն եւ բոլոր այլ սատարողներուն:

Թող Բարձրեալն Աստուած վարձահատոյց ըլլայ համան սպասաւորաց եւ վաստակողաց: Թող Հայ Հոգին աղբերանայ Մայրիներու Երկիրին բերելով իր հայասնունդ ջրտուօր:

28 Մարտ 1998
Ս. Էջմիածին

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՄԸ՝
«ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԵՒ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ
ԱՌԹԻԻ**



Չերդ Վսեմութիւն Պր. Նախագահ Լիբա-
նանի Հանրապետութեան, Հոգեւոր առաջ-
նորդներ, Նախարարներ, դեսպաններ,
երեսփոխաններ եւ յարգելի հիւրեր,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը այսօր
ձեր բոլորին ներկայութեան կ'ապրի ժամանակակից իր
պատմութեան կարեւոր պահերէն մէկը: Հոգեւոր իր
առաքելութեան կողքին այս Կաթողիկոսութիւնը միշտ
եղած է կռուան եւ պաշտպան մշակութային արժէքնե-
րու: Այս իրողութեան շօշափելի արտայայտութիւններն
են ահաւասիկ Կիլիկիա Թանգարանն ու ԽԱՉԻԿ ՊԱ-
ՊԻԿԵԱՆ Մատենադարանը:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական
կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած այս Թանգա-
րանին մէջ ցուցադրուած են Կիլիկիոյ Հայկական Թագա-
ւորութեան օրերէն մեզի հասած թանկագին իրեր: 1915ի
Հայկական Ցեղասպանութենէն ետք այս թանկարժէք
իրերը փրկուեցան եւ Սիսի պատմական Աթոռէն Լիբա-
նան բերուեցան ի գին մեծ դժուարութիւններու եւ զոհո-
ղութիւններու:

Արդարեւ, այս Թանգարանը եւ Մատենադարանը կենդանի պատմութիւնն են Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ Ժողովուրդին: Անոնք նաեւ խօսուն վկաներն են պատմական այն իրողութեան, որ Յեղասպանութենէն անմիջապէս ետք Հայ Ժողովուրդը մայրիներու այս երկրին մէջ գտաւ իր ապաստանը եւ այստեղ ապրեցաւ հոգեւոր եւ մշակութային իր վերագարթօնքը:

Կիլիկեան Աթոռը իր բազմակողմանի գործունէութեամբ եւ իր թեմերով կարեւոր տեղ ունի Հայկական Սփիւռքին մէջ: Սփիւռքի մեր գաղութներուն մէջ ծառայող հոգեւորականներու մեծամասնութիւնը՝ քահանաներ, եպիսկոպոսներ թէ արքեպիսկոպոսներ, ինչպէս նաեւ Համայնքային ղեկավարներ, մտաւորականներ, ուսուցիչներ, կազմաւորուեցան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին մէջ: Սա պահուն, Միացեալ Նահանգներու, Քանադայի, Անգլիոյ, Կիպրոսի, Յունաստանի, Հունգարիոյ, Իտալոյ, Գերմանիոյ, Սուրիոյ, Քուէյթի եւ Ծոցի Երկիրներու եւ Հայկական Սփիւռքի այլ շրջաններէն եկած պատուիրակութիւններուն, ներկայացուցիչներուն եւ հրաւիրեալներուն ներկայութիւնը այստեղ ինքնին շօշափելի արտայայտութիւնն է մեր Ժողովուրդին ունեցած ամուր կապուածութեան այս Կաթողիկոսութեան եւ Լիբանանին նկատմամբ:

Յարգելի Պր. Նախագահ, դուք կը գտնուիք Համայնքի մը զաւակներուն հետ, որոնք ամբօրէն կապուած են Լիբանանին, անոր արժէքներուն եւ անոր սրբազան դատին: Դուք կը գտնուիք Համայնքի մը զաւակներուն հետ, որոնք միշտ հաւատարիմ կը մնան Համակեցութեան Լիբանանին, գերիշխան եւ միացեալ Լիբանանին, ազատութեան եւ այլազանութեան երկրին: Դուք կը գտնուիք Համայնքի մը հետ, որ ամբողջականօրէն եւ գործնապէս մասնակից է Լիբանանի վերակառուցման հրամայական գործին:

Երախտապարտ ենք Ձեզի՝ Ձեր անձամբ ներկայութեան եւ մասնակցութեան ընդհանրապէս Լիբանանի Հայ գաղութին եւ մասնաւորապէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին մէջ կարեւոր տեղ գրաւող այս դէպքին:

Այս առիթով կ'ուզեմ շնորհակալութիւնս յայտնել բոլոր անոնց, որոնք ազնուօրէն մասնակից դարձան այս Թանգարանին ու Մատենադարանին կառուցման եւ հարստացման: Կ'ուզեմ յատկապէս յիշել իմ հոգեւոր

եղբայրը եւ իմ նախորդս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը, ածմ Ամենայն Հայոց Կաթողիկոս, որ յղացաւ այս Թանգարանը կառուցելու գաղափարը եւ գործադրութեան մէջ դրաւ անոր ծրագիրը:

Սիրելի՛ բարեկամներ, ազգերը միայն իրենց բանակներով եւ նիւթական հարստութեամբ չէ, որ կը զօրանան ու կը բարգաւաճին, այլ նաեւ ու մանաւանդ՝ իրենց մարդկային, հոգեւոր ու մշակութային հարստութիւններով եւ արժէքներով: Եւ այս փոքր երկիրը, Լիբանանը, այս իրողութեան պերճախօս վկան է:

Փափաքս է, որ բոլոր լիբանանցիները, ինչպէս նաեւ Լիբանանէն անցնող օտարները այցելին այս Թանգարանը եւ Մատենադարանը, վկայելու համար Հայ ժողովուրդին բերած նպաստին՝ Լիբանանի մշակութային եւ հոգեւոր ճառագայթումին՝ թէ՛ արարական աշխարհին եւ թէ՛ համայն աշխարհին մէջ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՆԱԽԱԳԱՀ ԻԼԻԱՍ ՀՐԱՌԻԻԻ ԽՕՍԻԸ՝ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԵՒ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելիներ,

Կը շնորհաւորենք ձեզ՝ մշակութային եւ հոգեւոր
այս ամբողջ կառուցման համար.

զարթոնքի ժամանակաշրջանին, հայրենիքը կեր-
տելու համար բանականութեան եւ հաւատքին վստահելէ
աւելի վեհ բան գոյութիւն ունի՞...

Առիթը զիս տարաւ այն դէպքերու շարանին,
որոնց ենթարկուեցաք, եւ ըսի.

«Աստուծոյնը արդեօք միայն հալածանքներու,
պատերազմներու եւ յեղափոխութիւններու՞ պատմու-
թիւնն է.

յետոյ, ինչո՞ւ չենք սորվիր պատմութեան դասե-
րէն եւ, դէպքին պատահումէն առաջ, չենք ձգտիր հայրե-
նիքի հաշուոյն մենք զմեզ մեծցնելու՝ փոխանակ փոքրա-
նալու պարագայական շահերով:

Նահատակներուն արիւնը եւ անմեղ զոհերը
կ'աղաղակեն բոլորին խղճմտանքին մէջ, եւ հաւատար-
մութիւնը՝ անոնց հանդէպ, կը կայանայ պետութիւնը
մորթելու փորձերուն չհետեւելուն մէջ: Եւ ասիկա, ինչ ալ
ըլլայ, տեղի պիտի չունենայ:

Եւ իմացէ՛ք, սիրելիներ, որ ո՛չ մէկ հայրենիք ուղի
կը կանգնի, եթէ մեծ որոշումներու ժամանակահատուա-
ծին անիկա զուրկ է մեծ այրերէ: Եւ, փառք Աստուծոյ,
Լիբանանի մէջ կան բազում մեծ այրեր:

Եւ ահաւասիկ, այսօր, այս թանգարանին միջոցաւ
դուք կը հաստատէք, որ ժողովուրդներու պատմութիւնը
կեանքի եւ արժանապատուութեան յաղթանակին պատ-
մութիւնն է:

Դուք վեր բարձրացաք ձեզ հարուածած ողբեր-
գութեանց վէրքերէն եւ այս թանգարանին դուռները

բացի՞ք՝ իբրեւ ձեր ներկայութեան վճռակամութիւնը չեղ-
տող վկայութիւն:

Գեղարուեստական ճառագայթումը, որմով հա-
րուստ է ձեր քաղաքակրթական ժառանգը, իր հոգեւոր
որակին կողքին կը ներկայացնէ ձեռարուեստային ար-
ժէք մը, որ հիացում կը խլէ: Նայեցէ՛ք այս սրբազան
մասունքներու գանձերուն, ոսկեղէններուն, ադաման-
դեղէններուն, ասեղնազործութիւններուն, մանրանկար-
ներուն, ձեռագիրներուն եւ պատմական արժէք ներկա-
յացնող բազում նմոյշներուն:

Սիրելիներ,

Եթէ ձեր պապերը չստեղծագործէին, դուք պիտի
չհրճուէիք ու չէիք կրնար հրճուիլ այս ժառանգով՝ ինչ-
պէս մենք կը հպարտանանք ձեզմով:

Եւ Լիբանան կը մնայ մեծ՝ իր զաւակներուն ընծա-
ներով:

Եւ հաւատացէ՛ք, որ ազատները միայն կը ստեղ-
ծագործեն, որովհետեւ անոնք ունին բազում գանձեր,
զորս կու տան իրենք իրենց եւ աշխարհին:

Կը յիշէ՞ք...

Մեր երկիր ձեր առաջին ժամանումին հասցէն
Զահլէն էր:

Հաստատուեցաք հոն, անոր բնակիչներուն մէջ՝
իբրեւ սիրելիներ, եւ ձեր տուները խառնուեցան անոնց
տուններուն: յետոյ՝ բաժնուեցաք Պէյրութի եւ միւս շրջան-
ներուն մէջ:

Սիրելիներ,

Դուք սորվեցուցիք, որ ճնշումն ու հալածանքը
չեն կրնար ժողովուրդներէն արմատախիլ ընել իրենց
ազնուական էութիւնը:

Եւ Լիբանանը սորվեցուց, որ ազնուական էութե-
թիւնները ազատութեամբ իրարու կը հանդիպին:

Ո՛չ ահաբեկչութեան եւ զրգռութեանց, այո՛՝ ազա-
տութեան եւ ժողովրդավարութեան:

Ո՛չ աղանդներու փոքր պետութիւններուն, այո՛՛
արդի պետութեան:

Եւ ողորմի Աստուած այն մարդուն, որ իր սահմա-
նը գիտցաւ եւ հոն կանգ առաւ:

Կեցցէ՛ք եւ կեցցէ՛ Լիբանան:

ԻԼԻԱՍ ՀՐԱՈՒԻ

**ՆԱԽԱԳԱՀ Ի. ՀՐԱՌԻԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ**

Այս թանգարանին ցրո՝ աշ ալլէլո՝ թի՝նս
յիշողո՝ թեանս մէջ Գրոշմէց ամենալա՝ է՝
աշնո՝ ագոյնս զգացո՝ մեբը, վասնչի էս Գրոշ
վաղա՝ վաղա՝ թառանգ մը, որ վկան է
Բարիին Յգրոշ է՝ աշնոյն ժողովո՝ Գրոշ մը
աշնո՝ թեան, որ Լիբանանի մէջ Գրոշ աշնո՝
էն իր աշնո՝ թեան է՝ Գրոշ՝ որ թանկագին
թառանգին: Այլ շնորհա՝ որեմ Լալ Լամայնի
աշնո՝ մէջ իրագործո՝ մին Լամար, որ, ան-
կողմա՝, աշնոյն ըլլալ մէկ մասնիկը լիբանանեան
մէջ ո՝ թանկագին թառանգին:

30-3-998

ԻԼԻՍ ՀՐԱՌԻ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԵՍԱԴԻՐ ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Արքի Յովհաննիսեան ծանօթ անուն մըն է ֆրանսահայ քառեր-
աւարներուն համար: Իր քննադրած գործերէն յիշենք «Թէ ինչպէս
մօրս ասեղնագործ գողոնցը կը սփռուի կեանքիս մէջ»ը (1983) եւ
«Շղթայաւոր» (1988), որոնք խոր տպաւորութիւն ձգեցին քառերա-
ւար հասարակութեան վրայ: Տարիէ մը ի վեր, «Համագայիմ»ի «Դի-
մակ» քառերախումբին եւ Հայ Թատրոնի Ընկերակցութեան հետ
համագործակցաբար, ան կը ներկայացնէ հայ քառերագիրներու
նոյիշուած քառերակամ ընթերցումներու շարքեր, որոնց նպատակն
է ծանօթացնել հայ հասարակութեան մոռացութեան ենթարկուած
կամ շնորհալոյսացուած կտորներ: Նախածնունդիմը թէ՛ իր ներկա-
յացուած ձեւով եւ թէ՛ իր նպատակով գրուած է համակրանքը եւ
զնախատանքը հայ թատրոնի սիրահարներուն: Այս առիթով ուզե-
ցիմք տեսիլ մօտէն ծանօթանալ Արքի Յովհաննիսեանի անձին եւ
գործին:

Յ.Ա.Մ.Լ.



ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչըն ձեզ մղած է դէպի թատրոն:

ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.— Զիս ամենաշատ տպաւորողը
եղած է թատրոնի կախարդական եզրը: Փոքր տարիքէս (ծնած
եմ Նոր Զուղա, Իրան) անդրադարձած էի, որ թատրոնին մէջ
կրնային պատահիլ դէպքեր եւ երեւոյթներ, որոնք առօրեայ
կեանքին մէջ անկարելի էին: Թատրոնը ձեռով մը անկարելի
կարելի կը դարձնէր: Այս խորհրդաւոր երեւոյթը զիս ամբողջն
կապեց թատրոնին, երբ տակաւին մանուկ էի: Հետագային
զբաղեցայ տիկնիկային թատրոնով ներկայացումներ կազմա-
կերպելով փոքրիկներուն համար: Ահա՛ մաս կազմեցի Շահէն
Սարգսեանի ղեկավարած «Արմէն» թատերախումբին իբրեւ

տեքորներու եւ հագուստներու ձեւակերպիչ (1960): Շահէն Սարգսեան ուսանած էր Փարիզ եւ ծանօթացած ծագումով հայ՝ Ժորժ Փիթոյէֆի բեմադրական աշխատանքին: Ունէր արդիական մտածելակերպ թատրոնին նկատմամբ եւ կրցաւ բեղուն գործունէութիւն ունենալ թէ՛ հայկական եւ թէ՛ պարսկական միջավայրերուն մէջ:

Նպատակս շարժարուեստ ուսանիլն էր, բայց նոյն ատեն թատրոնը կը նկատէի կարեւոր փորձառութեան դաշտ: Հասարակութեան մօտ շարժարուեստ ուսանիլը դեռեւս լուրջ կը թուէր ինձ: Հէր համարուում: Մնողներս, որ երկուքն ալ բարձր կը թուէին տէր էին, առանց որեւէ առարկութեան համաձայնեցան եւ, ըստ որոշումիս, 1963ին շարժարուեստ ուսանելու համար մեկնեցայ Լոնտոն, ուր այդ տարիներուն գտնւում էր անգլերէն լեզուով գործող շարժարուեստի միակ մասնագիտական դպրոցը: Հոն մնացի երեք տարի: Այս հարցում ես երախտապարտ եմ ծնողներիս:



Հ.— Ինչպէ՞ս անցաւ ձեր ուսամոդութեան շրջանը:

Ա. Յ.— 1964ը Շեքսպիրի մահուան 400 ամեկան էր եւ այդ առիթով բազմաթիւ անուանի բեմադրիւններ եւ թատերախումբեր հրաւիրուած էին Լոնդոն: Ինծի համար առիթ մը եղաւ մօտից ծանօթանալու թատրոնի զանազան եւ երբեմն հակադիր դպրոցներու, ինչպէս, օրինակ, Մտանիսլաւսկու Մոսկուայի Գեղարուեստական թատրոնին եւ Բրեխտի Բեռլինէր Անսամբլին: Շարժարուեստի դպրոցում եւս մեր դասախօսները միջազգային բեմադրիւններն էին: Ճոն Հիւսթոն, Ֆրանսուա Թրուֆօ, Անտոնի Ասքուիթ եւ այլ հանրալստ դէմքեր մեզ դասախօսում, կամ մասնակից էին դարձնում իրենց նկարահանող ֆիլմերու աշխատանքներին:

Իբրեւ ուսումնական աշխատանք, անձամբ նկարահանեցի երեք կարճամետրաժ ֆիլմեր: Առաջինը խաղարկային էր, քաղուած՝ Գրիգոր Զօհրապի «Իմական» պատմուածքէն, երկրորդը Ռոյալ Բալէ Սքուլին նուիրուած փաստագրութիւն էր, որի գեղարուեստական ղեկավարն էի, իսկ երկրորդը՝ Յովհաննէս Թումանեանի պոեմի հիման վրայ իմ ձեւաւորմամբ ու ղեկավարութեամբ նկարահանուած «Փարւաճա»ն էր: Վերջինս 1966ին Անգլիան պաշտօնապէս ներկայացուց Գերմանիոյ Օբերհոլզէն փառատօնին եւ գնահատուեցաւ ժիւրի յա-

տուկ մրցանակով: Ուսումնա երբ աւարտեցի, Ռիչարդ Ուիլյամս-
զի գծանկարչական ֆիլմերի ստուդիոյի կողմէն ինձ աշխա-
տանք առաջարկեցին, սակայն նախընտրեցի իրան վերադառ-
նալ, կը զգայի, որ պարտականութիւնս հոն էր:



Հ.— Ինչպէ՞ս անցաւ ձեր յետ ուսանողութեան շրջանը:

Ա.Յ.— Թեհրան վերադառնալէս ետք, Շահէն Սարգսեան
առաջարկեց, որ ներկայացում մը պատրաստեմ իր թատերա-
խումբին հետ: Ընտրեցի «Մեծապատիւ Մարագկանները»: Փոր-
ձերը սկսելէն մի քանի օր ետք, Շահէն Սարգսեան յանկարծա-
մահ եղաւ (56 տարեկանին): Իր հայկական եւ պարսկական
թատերախումբերը ինձի դիմեցին, որպէսզի շարունակեմ իր
աշխատանքը: Հայաստան խումբին հետ աւարտեցի իր ներկա-
յութեամբ սկսածս, իսկ պարսկաստան խումբին հետ բեմադրե-
ցի Սթրինդերգի «Օր. Ժիլիկ»:

1967ին ծրագրի մը պատրաստուած էր պետութեան կող-
մէ՝ Շիրազի մէջ ամէն տարի միջազգային արեւելեան արուես-
տի եւ արդի արեւմտեան արուեստի միջեւ: 1968ին մասնակցե-
ցայ այդ փառատօնին՝ ներկայացնելով կտոր մը գրուած Ար-
բաս Նալբանդեան անունով պարսիկ թատերագրին կողմէ: Ան
նախապէս երբեք թատրոն չէր տեսած: Կտորը, որ շատերու
կողմէ անբեմադրելի դատուած էր, ունէր արդիական խորք:
Վերնագիրը շատ երկար է՝ «Նորիմ, խորն ու լայն հետազոտու-
թեան քսանհինգերորդ դարու քաղաքներու մէջ»: Խաղի բե-
մադրութիւնը շահեցաւ հեռատեսիլի առաջին մրցանակը եւ
հրաւիրուեցաւ Ֆրանսայի Ռուայան քաղաքի արդի արուեստի
փառատօնին: Այն դիտուեցաւ նաեւ մի շարք այլ երկիրներու
բեմերուն վրայ, ինչպէս, օրինակ, Լոնդոնի Royal Court
THEATRE:

1970ին Փիթըր Պրուքի կողմէ հրաւիրուեցայ Փարիզ, իր
Centre International de Recherche Theatre հիմնադրման աշխա-
տանքներուն մասնակցելու: Բեմադրութիւններու բերու-
մով ծանօթացայ նաեւ լեհ բեմադիր եւ թատերական լաբորատ-
ուարի ղեկավար՝ Երժի Գրոտովսկիին: Վերջինս մեծ յեղաշր-
ջում կատարած էր արդի թատրոնին մէջ: Նշուած երկու
բեմադիրներուն հետ գործակցելը որոշիչ եղաւ իմ թատերա-
կան կեանքին մէջ: Երեք լեզուով՝ պարսկերէն, հայերէն եւ
անգլերէն, շարունակեցի թատերական աշխատանքս ու բե-

մագրեցի մի շարք դասական եւ արդիական խաղեր: Այդ օրերուն էր նաեւ, որ մի երկու ընկերներու հետ, Թեհրանի մէջ, հիմնեցի թատերական աշխատանոց մը, ուր հնարաւորութիւն տրուեցաւ երիտասարդութեան փորձեր կատարելու:

Աշխատանոցը հսկայ ներդրում ունեցաւ իրանի արդի թատրոնին համար եւ ծնունդ տուաւ հինգ թատերախումբերու, որոնք ղեկավարուցեան տարրեր բեմադիրներու կողմէ: Մեր խումբը, մինչեւ իր աշխատանքներու դադարը 1979, հրաւիրուեցաւ բազմաթիւ միջազգային հիւրախաղերու Ֆրանսա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Եուկոսլաւիա, Լեհաստան, Պրագայի, Վենեզուելա եւ Théâtre des Nations: Այդ հրաւերները զաղութային մակարդակով չէր, որ կը կատարուէին, դրանք մասնագիտական եւ ստեղծագործական լուրջ հանդիպումներ էին: Մեր բեմադրած Ա. Քամուի «Կալիգուլա» ամբողջ ամիս մը շրջեցաւ Լեհաստանի մի քանի կարեւոր քաղաքները եւ Սաօ-Պաուլոյի թատերական փառատօնին շահեցաւ Պրագայի թատերական քննադատներու յատկացրած մրցանակը:

Հ.- Խոնչ եղաւ ձեր աշխատանքը հայկական գեոմի վրայ:


Ա.Յ.- Զուգահեռաբեր՝ կը շարունակէի բեմադրել հայկական բեմերու վրայ: Միտումնաւոր կերպով աշխատած եմ միայն հայ հեղինակներու գործեր բեմ հանել: Օրինակ՝ Շանթի որ շատ գնահատուած «Ճամբում վրայ»ն եւ «Ուրիշի համար»ը: Վերջերս, Հայստան, թատերադէտներին մէկը յայտնեց՝ Ուրիշի համար»ի բեմադրութիւնը 1973ին, հայ թատրոնի պատմութեան մէջ, փառացիօրէն այդ թատերկի անդրանիկ բեմադրութիւնն է, երկի գրութիւնից աւելի քան եօթ տասնեամեակ յետոյ:

Զեխովի «Շնիկով տիկինը» միակ ոչ հայ հեղինակի պատկան գործն է, որ բեմադրած եմ հայերէն: Դա Զեխովի համանուն մէկ պատմուածքի հիմա վրայ կազմուած իմ բեմականացումն էր: Այդ խաղի ֆրանսերէն տարբերակը, 1979ին Փարիզի Աշխանային Փառատանօնին հրաւերով բեմադրեցի Ժորժ Պոմպիդույի կեդրոնին մէջ, անուանի բեմադիր ու դերասան՝ Սաշա Փիթոյէճի մասնակցութեամբ: Բեմադրութենէն ետք, մի խումբ երիտասարդ ուսանողներ գիմեցին ինծի, իրենց հետ թատերական աշխատանք տանելու: Համաձայնուեցայ ու Փարիզ Հայ Ուսանողներու Տան մէջ սկսանք համախմբուիլ:

Ջանազան երկիրներէ եկած Հայ երիտասարդներ էին: Միասնաբար կրցանք թատերական աշխատանք տանիլ եւ երեք տարուայ պատրաստութենէ ետք, ներկայացուցին Արշիլ Գորկիի պատառի անունով գործը՝ «Թէ ինչպէս մօրս ասեղնագործ գոգմօցը կը սփռուի կեանքիս մէջ»: Ներկայացուցեալ 15 օր Հայ եւ օտար հանդիսատեսներու: Յետոյ հրաւիրուեցաւ Նանսիի Միջազգային արդի թատրոնի փառատօնին: Առաջին անգամն էր, որ Հայկական թատրոն մը անկախօրէն կը ներկայանար միջազգային փառատօնի մը: Հարց էր, թէ ո՞ր երկրին անունով պիտի ներկայացուէր ան:

Հայերէնը այդ օրերուն Սովետական Միութեան մենաշնորհը կը համարուէր: Մասնակցող խումբերը, ըստ կանոնադրման, պիտի ներկայացնէին երկիրներ կամ պետութիւններ: Մենք պարզապէս Սփիւռքի համախմբում մը լինելով՝ ոչ մէկ պետութեան չէինք պատկաներ: Մշակոյթի նախարար, Ժաք Լանգի առաջարկով ի վերջոյ մեզ ծրագրի մէջ ներկայացուցին Diaspora Armenienne անուն տակ: Հետագային կարգ մը օտար եւ Հայ բարեկամներու օգնութեամբ կրցանք գործը նաեւ Հայաստանի ֆիլմի վերածել:

1988ին՝ Համազգայինի 60ամեակին առիթով, Փարիզի թատերական ուժերու եւ մեր Հայ թատրոնի Ընկերակցութեան միասնական ջանքերով ներկայացուցինք Լեոն Շանթի «Սղփայումը» իր ամբողջութեամբ, Chapelle Saint-Louis de la



Լեոն Շանթի ռեալիզմ վրայ չէն տեսարան մը, Բնադրութեամբ՝ Արքի Յովսէփ Խանթի

Salpetriereի մէջ: Հակառակ տարուած աշխատանքին, ժամանակին կազմակերպիչները չկրցան այն գիտակցաբար օգտագործել, որպէսզի հայ թատրոնը միջազգային ճանաչում ստանայ: Այս բեմադրութենէն հատուած մը (խաղին երրորդ արարը), Սփիւռքահայ թատրոններու Երեւանեան անդրանիկ փառատօնի օրերուն (1991), ներկայացուեցաւ Սունդուկեան թատրոնի բեմին վրայ, «Լեւոն Մանթը եւ Քատերակամ մտածողութիւնը» վերնագիրն կրող թատերաբախօսութեանս ընթացքին:



Հ. Ինչո՞ւ ընտրեցիմք Մանթի գործերէն «Շղթայուածը»:

Ա. Թ. - Կը խորհիմ որ «Շղթայուածը» Շանթի ամենակարեւոր եւ ամենախոր գործն է: Կը ներկայացնէ հակադրութիւնը հայ հաւաքական կեանքի, հայ հոգեւոր կեանքի եւ համամարդկային հարցերուն միջեւ: Հակառակ ընդհանրացած կարծիքին կը գտնեմ, որ ան ոչ-ռոմանթիկ գործ մըն է: Պատմականը, առասպելականը եւ ժամանակակիցը սեղմօրէն շաղկապուած են իրարու: Այն յետ մահու, Պէյրութի մէջ, բաւական կրճատումներով եւ գաղութային մակարդակով, բեմադրուեցաւ Ժորժ Սարգիսեանի կողմէ: Անձամբ տեսած եմ այդ հնաբոյր ներկայացումը: Այդ օրերուն ըսուեցաւ, որ հեղինակի տկար գործնէն է: Ես սակայն տարբեր ձեւով կը գնահատեմ այդ խաղը:

1988ին՝ Ղարաբաղեան շարժման ծնունդը «Շղթայուածը» խաղին տուաւ աւելի եւս այժմէական բնոյթ: Փարիզի բեմադրութիւնը հետաքրքիր կերպով փաստեց, թէ Շանթ ինչպիսի հեռանկարներ առաջադրող թատերագիր է: Յիշեմ նաեւ, որ Փիթըր Պրուք մեծ հետաքրքրութիւն ցոյց տուած էր «Շղթայուած»ի նիւթի եւ կառոյցի նկատմամբ եւ իր անձնական միջոցներով, 1970ին անգլերէնի թարգմանել տուած էր գործը: Անկէ էր ներշնչուած անոր Orghast, համբաւաւոր բեմադրութիւնը: Փարիզի թատերական հետազոտութիւններու կեդրոնին մէջ, զանազան ազգերու պատկան դերասաններ, գոց սովորել էին թղթակներու երգն ու հայերէն կ'արտասանէին «Թողէ՛ք, քո-ղէ՛ք...»-ն իր ամբողջութեամբ:

Հ.— Ինչպե՞ս կը գնահատե՞ք հայկական քաղաքացիական պատերազմը Արևելայիս:

Ա.Յ.— Դժբախտաբար մշակութային գետնի վրայ Հայաստանն եւ Սփիւռքն ենթակայ են մշտական դարձած հիւանդութեան մը. դա ստեղծագործական ջիղի բացակայութիւնն է: Այսօր թէ՛ Հայաստանին եւ թէ՛ Սփիւռքի մէջ, հայ ժողովրդի դիմագիծը փոխուած է: Այս փոփոխութեան տուեալներն ու հետեւանքները չեն գիտակցուած ու իւրացուած մեր մշակոյթի կողմէ: Առնենք մէկ օրինակ: Սփիւռքէն բազմաթիւ ստեղծագործ տարրեր կ'արտայայտուին օտար լեզուներով, սակայն խորքին մէջ անոնք արդիւնքն են մեր պատմութեան հոլովոյթին եւ կարեւոր մաս կը կազմեն հայ մշակոյթին: Այս երեւոյթը անհրաժեշտ ձեւով չի գիտակցուիր ու չ'օգտագործուիր Սփիւռքին կողմէ:

Առնենք ուշադրութեան արժանի երկու անուններ՝ Արթուր Աղամով եւ Ուիլեմ Սարոյան: Այս երկու հեղինակներու գրական եւ թատերական գործերը, հակառակ իրենց վաւերական մակարդակին, չեն արժէքաւորուիր միջազգային գետնի վրայ համապատասխան ձեւով: Երկուքին ալ կեանքն ու տառապանքը չեն ընկալուիր իբրեւ համամարդկային ապրումներ. անոնք կը նկատուին իբրեւ մասնայատուկ երեւոյթներ: Թատերական շուկայում անոնց գործերը այսօր «յաճախորդ» չունին, իսկ մշակութային առումով հայութեան կողմէ պէտք եղած քայլերն չեն առնուիր:

Աղամով իր թատերականներով, քսաներորդ դարու մարդը բեմ հանած է այնպէս՝ ինչպէս Քաֆկա ըրած է իր գեղարուեստական գրականութեամբ: Այդ մարդը գրականութենէն բեմ տանելը, արդի թատրոնը Աղամովին կը պարտի: Սակայն այս յոյժ կարեւոր երեւոյթը ընդհանրապէս լուրջի չէ առնուած: Ֆրանսացի մտաւորականը այսօր յանձն չէ առած Աղամովը ծանօթացնել, հայ մտաւորականութիւնն ալ չէ կրցած անոր գործը ըմբռնել: Համեմատութեան համար նկատի առնենք, որ Պեքէթ, Իոնեսքօ եւ Աղամով երեակէն, միայն առաջին երկուքի գործերն են, որ տարիներէ ի վեր կը կրկնուին միջազգային բեմերուն վրայ: Հայաստանի մէջ ալ երբեք փորձ չէ եղած Աղամովը ներկայացնել, հակառակ անոր, որ դեռ Սովետական շրջանում արդէն՝ թէ՛ ռուսերէն եւ թէ՛ հայերէն թարգմանուած էր ան:

Նոյնն է պարագան Ուիլեմ Սարոյանի: Ան մուտք գործեց համալսարանական թատրոնէն ներս, բայց ժխտուեցաւ արհեստավարժ (փրոֆեսիոնալ) թատրոնին կողմէ: Ունի ութսունէ աւելի թատերական գործեր, որոնց մէկ երրորդը տակաւին անտիպ է: Այսօր գրեթէ մոռացուած թատերագիր մըն է:

Նոյնիսկ շատ բեմադիրներ տեղեակ չեն անոր գործերէն։ Աշխատանք չի տարուիր անոր թնտրոնը միջազգայնօրէն ծանօթացնելու։ Հայաստան եւ Սփիւռք, վերջին տարիներու ընթացքին անոր տողերը լռաւմզներու վերածելով, խեղաթիւրած են հեղինակ Սարոյեանը։



Հ.— Բայց Ի՞նչ ձեռով հայութիւնը կրնայ ազդեցութիւն գործել միջազգային թատրոնի վրայ։ Ի՞նչ ուժ կը մերկայացնենք։

Ա. Յ.— Կը խորհիմ, որ նախ եւ առաջ ծրագրումի եւ մօտեցումի հարց է։ Անհրաժեշտ է համապատասխան կառոյցներ ստեղծել, որպէսզի ուժերը յայտնաբերուին։ Այսօր Հայաստանի անկախացումով կացութիւնը աւելի նպաստաւոր է։ Վերջերս, օրինակ, Երեւանի Փորձառական Թատրոնը փորձած է Քաֆկա բեմադրել։ Խաղը կը կոչուի «Հաշուետուութիւն»։ Վերջերս, առանց նկատելու արդէն վերը նշածս, ան մասնակցեցաւ Գահիրէի երիտասարդ փորձառական թատրոնի փառատօնին։ Միջազգային հասնելու համար անհրաժեշտ չէ անպայման մեր մշակութի զարգացման ընթացքն ժխտել։ Ուրիշին կապկելով ու նմանուելով չէ, որ պիտի քաղաքակիրթ եւ առաջնահամարում համարուինք։ Ուշիմ ներկայութեամբ է, որ կրնանք միջազգային բեմերու վրայ մեր խօսքն ասել, մեր ազդեցութիւնը բանեցնել։

Միւս օրինակը «Ուրիշ Սարոյեան» հիմնարկն է, որուն կոչումը բառ հեղինակի կտակին, անոր գործերը տարածելն է։ Հիմնարկը կրնայ շնչին գումարով մը Հայաստանի մէջ մնալուն թատրոն մը ստեղծել, որպէսզի ամառային փառատօնի մը ընթացքին, հայերէն եւ անգլերէն լեզուներով, Սարոյեանի գործերը ներկայացնէ։ Այս ձեւով թէ՛ հայը եւ թէ՛ օտարը կը ծանօթանան անոր գործերուն, խաղերը կ'ապրին։

Նոյնպիսի աշխատանք մը կարելի է տանիլ հայ ուսանողութեան մօտ, Հայաստան եւ Սփիւռք։ Նկատած էք, Հայաստան, ուր հիմա ազատութիւն կայ, մեր բեմադիրները ինչպիսի նիւթեր կ'ընտրեն։ Մեծամասնութեամբ կը դիմեն Խորհրդային վարչակարգի ժամանակ բեմադրուող գործերու մակարդակէն աւելի ցած գրութիւններու։ Կառոյցի բացակայութիւնն է, որ թոյլ չի տար արժէքաւոր մտաւորականներ դուրս գան իրենց մեկուսացումէն։ Սփիւռքի մէջ ալ միայն քանակը կը հետաքրքրէ միութիւններուն ու կը գոհն մակարդակը։

Ասիկա աւերիչ է: Ժամանակը կ'ընթանայ եւ մշակութային առումով նոր, առողջ մտեցմամբ ստեղծագործ սերունդներ չեն ստեղծուիր:



Հ.— Կըցա՞ք վերջին տարիներում կապ հաստատել Հայաստանի քաղաքներում հետ:

Ա. Յ.— Այո, մի քանի անգամ: Վերջինը՝ 1996ին էր, երբ Հայաստանի Մշակութային Նախարարութեան հրաւերով քանի մը շաբաթ Երեւան գտնուեցայ: Հոն մասնակցեցայ Սուրեն Ղուկեանի անուան թատրոնին եւ միւս թատերական միաւորներուն վերաբերող հարցերու քննարկման: Մօտէն ուսումնասիրեցի Հայաստանի թատրոնին կացութիւնը: Վերադարձիս, Մշակութային Նախարարութեան հետ նախօրօք որոշուած համաձայնութեամբ, Հայաստանի մէջ կիրառելու նպատակով, պատրաստեցի ծրագրային մշակում մը թատրոնի վերակառուցման, խաղացանկային հարցերի եւ թատերական արուեստի ուսուցման համար: Գրաւոր պարզեցի վերլուծումներս Հայաստանի թատրոնի այսօրուայ կացութեան մասին եւ տուի բարելաւման գծով համապատասխան առաջարկներս: Անհրաժեշտ համարած ու ընդգծած եմ խաղացանկի ընտրութեան կարեւորութիւնը:

Փորձառութեամբ համոզուած եմ, որ առանց բժախնդրօրէն կազմուած խաղացանկի, անհնար է դերասանական առողջ միջավայր ու թատրոն զարգացնել: Հայաստանի թատրոնը նախ պարտաւոր է ապրեցնել ազգային ինքնութիւնը մշակովի: Նախընտրելի է ուշադրութիւն դարձնել, ժամ ու աշխատանք նուիրել «միջակ հայ թատերագութեան», քան միջակ մակարդակի թարգմանութեամբ, միջազգային «գլոխ-գործոցներ» բեմադրել: Ինքնութիւնը գրականութիւնը, առնուազն լեզուի եւ հոգեբանութեան տեսակէտէն, թէ՛ գեղարուեստական կազմին եւ թէ՛ հանդիսատեսին շատ աւելի «խօսք» ունի փոխանցելու, քան միջակութեան մակարդակի իջեցուած «գլոխ-գործոցը»: Կարեւոր է յիշել նաեւ, որ միջազգային խաղացանկէն, թարգմանաբար հայ բեմ կը բարձրանան ո՛չ միայն միջակ, այլեւ մշակութային տեսակէտէն, ընդհանրապէս միանգամայն ամուլ գործեր: Գալով միջազգային խաղացանկին, անհրաժեշտ է ընտրել այնպիսի խաղեր, որոնք հոգեբանօրէն կարող են աւելի մօտ ըլլալ հայ դերասանին, բեմադիրին ու հասարակութեան:


Հ.— Ի՞նչ արձագանգ գտան ձեր առաջարկները:

Ա. Յ.— Տարիէ մէկ աւելի անցաւ առաջարկներու թուակա-
նէն ու, ցաւօք սրտի, անոնք չկիրառուեցան: Պիտի ըսեմ՝
գրեթէ միանգամայն անոնց հակառակ ընթացք մը որդեգր-
ուած է այսօր: Գիտէ՞ք անկարելի է հիւանդ մը բուժել, եթէ ան
իր բժիշկի արտորոշման նկատմամբ հաւատք չունի եւ չի
ենթարկուի անոր խորհուրդներուն ու ցուցմունքներուն:

•

Հ.— Ինչպէ՞ս մշակութային աշխատանք կարելի է տանիլ
Սփիւռքի մէջ:

Ա. Յ.— Այսօր կարելի չէ Սփիւռքը եւ Հայաստանը իրարմէ
անջատել, հակառակ անոր, որ իւրաքանչիւրը ունի իր հարցե-
րը: Անոնք կրնան իրարու օգնել: Սփիւռքը ունի իր իւրայա-
տուկ խնդիրները, որոնց ուսումնասիրութեան համար մաս-
նագիտական որոշ մօտեցում մը անհրաժեշտ է: Պէտք է նկա-
տել, որ ասիկա միայն թեքնիք հարց մը չէ: Անհրաժեշտ է
ծրագրային ընդհանուր մօտեցում մը ունենալ:



Լևոն Շանթի խճամուրն վրայ ձեռնարկում են: Բնագրութեամբ՝ Արթի Եովհաննիսեանի:

Կարելոր է նաեւ սրբագրել որոշ թերիւններ, որոնք մէջտեղ կու գան մեր աշխատանքներու ընթացքին: Շատ անգամ ծրագրային աշխատանք կը տարուի՝ առանց նկատի առնելու անցեալէն եկած փորձառութիւնը կամ անցեալին կատարուած աշխատանքը: Օրինակ, կրթական գետնի վրայ Շանթ եւ Աղբալեան Ճեմարանը հիմնելով պատրաստեցին նաեւ ուսումնական ծարգիր մը, որ այսօր մոռացուած է եւ չի գործադրուիր: Հոն կարելի է գտնել կարգ մը լուծումներ մեր այսօրուայ հարցերուն համար:

Նոյնպէս, մեր մշակութային միութիւններն ու կազմակերպութիւնները ընդհանրապէս կը գործեն փակ շրջանակի մէջ, իրենց քննարկումները վերապահելով միայն իրենց անդամներուն, մինչ հարցը հասրակական է ու համազգային բնոյթ ունի, բառիս բուն իմաստով եւ ոչ թէ «խրացուած» նեղ առումով: Կը խորհիմ, որ աւելի լայն շրջանակով կատարուած քննարկումները աւելի կու տան, որ զանգան տեսակէտներ իրարու ծանօթանան եւ աւելի ամուր հիմնաւորելով համադրումի հասնին: Ներկայ հանգրուանին, Հայաստանի եւ Սփիւռքի մշակութային ապագային համար ընդհանուր ծրագրում մը անհրաժեշտ է:



Հ.— Վերադառնալով միջազգային համրաւի տիրացած հայ արուեստագէտներու նիւթին, քանի մը տարի առաջ առիթը ունեցամք ձեր մէկ յօդուածը կարդալու ANI հանդէսին մէջ, տեսակցութեամ մը մասին, որ ունեցած էիք շարժանկարի քննադրիչ Ռուբէն Մամուլեանի հետ: Շատերու համար Մամուլեան առասպելական դէմք մըն է: Ի՞նչ ձեռք կրցաք հանդիպիլ իրեն: Ի՞նչ եղան ձեր տպաւորութիւնները:

Ա. Բ.— Նախ յուշեմ, որ Մամուլեան միայն շարժարուեստի բեմադիր չէ, այլ նաեւ թատրոնի: Այս վերջին մարզին մէջ եւս իր ներդրումը խիստ կարեւոր է: Ամերիկեան երաժշտական թատրոնին մէջ մեծ եղած է իր ստեղծագործութիւնը: Առաջին բեմադրիչը եղած է այսօր դասական համարուող Porgy, Oklahoma, Carrousel եւ Lost in the Stars: Մամուլեան ծնած էր Թիֆլիս եւ փոքր տարիքէն իսկ հետաքրքրուած թատրոնով: 1918-20 թուականներուն Թիֆլիս, Հայերէն եւ Ռուսերէն լեզուներով, բազմաթիւ ուսունասիրական եւ քննադատական յօդուածներ գրած է, հայ թատրոնի բեմադիրներուն մասին:

Ջանոնք ստորագրած է ծածկանունով: Ի միջի այլոցց պիտի լսեմ, որ այդ բոլորը փնտռել, հաւաքել եւ թարգմանել տուած եմ, որոնք կը մնան անտիպ: Գրութիւններէն մէկը, օրինակ, կը վերաբերի Թիֆլիս կայացած, Շանթի «Հիմ աստուած-նեք»-ու բեմադրութեանը:

Պիտի նշեմ, որ Մամուլեան իր կեանքի վերջին տասնամեակին բաւականին մեկուսացած կեանք կը վարէր եւ շատեր զարմացան, երբ ան համաձայնեցաւ ինձ հետ տեսակցիլ: Կը կարծեմ իր մասին կատարածս հետազոտութիւններն եւ ունեցած տեղեկութիւններս էին, որ ոգեւորեցին զինք: Մամուլեանին նախապէս հանդիպած էի երկու անգամ: Նախ՝ ուսանողութեանս տարիներուն, Լոնդոն եւ ապա 1973ին՝ Իրան, ուր հրաւիրուած էր իբրեւ Թեհրանի Ֆիլմերու Միջազգային փառատօնին ժյուրիի անդամ: 1984ի Դեկտեմբերին, երբ Փարիզ նիւթ մը կը պատրաստէի իր մասին, անդրադարձայ որ 87 տարեկան է արդէն: Անհրաժեշտ էր որոշ մասնագիտական հարցեր՝ կորուստի չմատնելու համար, տեսակցութիւն ունենալ հետը: Հեռաձայնով կապուեցայ: Հիւանդ էր եւ նոր էր վիրահատուած: Նմանապէս լաւ չէր նաեւ ըստ կնոջ առողջական վիճակը: 1986ին՝ Մամուլեան ինքզինք աւելի լաւ կը զգար: Երկու անգամ մեկնեցայ Հոլիվուտ, ուր կը բնակէր եւ քանի մը



Լեւոն Շանթի մշտնջենական վրայ: Էմմա Երանյան մը: Բնադրութեան Այդրի Յովհաննիսեանի

շարժումայ ընթացքին կրցայ հետը գրեթէ ամէն օր տեսակցիլ: Շատ դրական կեցուածք մը ցուցաբերեց եւ կրցանք խօսիլ պէտք եղած հարցերու մասին: Ան իր վերջին Ս. Մենդեան տօնը անցուց ինձ եւ բարեկամներուս հետ: Յաջորդ շարժուման ընթացքին նկարահանուեց՝ ընթերցելով իր քանաստեղծութիւններէն եւ գրութիւններէն, ինչպէս նաեւ պատասխանեց մի շարք հարցումներու, 1987 թուի շեմին, այդ եղաւ նրա վերջին ծաւալուն տեսակցութիւնն ու նկարահանումը: Նկարուած նիւթերը, ինչպէս նաեւ մեր երկարատեւ զրոյցները, նիւթական հարցերի պատճառով, դեռ մինչ օրս մնում են չմոնտաժուած եւ անտիպ:

Մամուլեան կառչած կը մնար իր հայկական արմատներուն, հակառակ անոր, որ իր ֆիլմերուն կամ թատերական ներկայացումներուն մէջ ուղղակի հետք մը կամ ակնարկ մը կարելի չէ գտնել: Մասունքի պէս պահած էր իր ընտանիքին հայկական յիշատակները: Այստեղ հարկ է նշել, որ ան ժամանակին մերժած էր իր հայկական անունը փոխել, հակառակ ֆիլմարտադրիչներու կողմէ եղած ճնշումներուն: Մշակութային հսկայ պաշար ունեցող մէկն էր եւ հաճելի գրուցակից: Իր գործունէութեան ընթացքին կրցած էր հաւաքել հարուստ արխիւ մը, արուեստագէտներու եւ գրագէտներու հետ ունեցած իր յարաբերութիւններուն բերումով: Այդ արխիւին մէջ կը գտնուին հազուադիւս եւ պատմականօրէն խիստ կարեւոր նիւթեր: Դրանց մեծ մասն այսօր կը պահուի Ամերիկայի Library of Congressին մէջ:



2.—Տարիէ մը ի վեր թատերական ներկայացումի նոր ձեւ մը ըմտրած էք: Համագգայիմի «Իմական» թատերախումբին եւ Հայ Թատրոսի լնկերակցութեան հետ համագործակցաբար կը ներկայացնենք թատերական ընթերցումներու շարքեր, նուիրած հայ թատերագիրներու ամօժանօք գործերուն: Ի՞նչը ձեզ մղեց գործունէութեան այս ձեւը որդեգրելու:

Ա. Յ.- Ընդհանրապէս հասարակութիւնը թատերգութիւն չի կարդալ, իսկ դերասաններն ու բեմադիրները թատերգութեան կը դիմեն, երբ իրենց աշխատանքին համար «հում նիւթ» կը փնտռեն: Թատերական գրականութեան նկատմամբ եղած անհետաքրքրութիւնը չի կրնար թատերական կեանքի զարգացման նպաստել:

Թատերական ամէն գործ գրուած է տարածքի մէջ լսուելու եւ մարմնաւորելու համար: Տարածքը թատերական գրականութեան գործօն տարրերէն մէկը ընդունելով եւ ընթերցանութեան մէջ ներառելով է միայն, որ կարելի է դրուած խաղի թատերական արժանիքները շօշափել եւ հաստատել: Թատերական որեւէ գործ գրուած է նաեւ միաժամանակ մէկէ աւելի անհատներու կողմէ լսուելու եւ դիտուելու համար: Թատերական ընթերցումը պարզապէս միայն տարբեր ձայներով կարդացուող, հորիզոնական ընթացքի մէջ դրուած, շարժում չի հետապնդեր: Ան, որոշ տեւողութեան ընթացքին, որոշ նիւթ շօշափող, տարածքի մէջ դրուած, կեդրոնացուած գործողութիւն է: Իրրեւ յղացք ան թատերական բազմակողմանի հարցեր կը հետապնդէ:

Թատերական ընթերցումներով կարելի է մշակել գեղարուեստական կազմերու եւ հանդիսատեսներու ընկալումը: Կարելի է թատրոնի սրահներուն վերադարձնել ստեղծագործական միջնորդութիւն համար խիստ անհրաժեշտ «ներքին լուծութիւն»ը, որը տրուեցաւ ընթերցումի ձեւին, որովհետեւ ան թէ՛ մշակութային եւ թէ՛ տնտեսական առումով կը համապատասխանէ մեր այսօրուան հնարաւորութիւններուն, կարիքներուն եւ իրականութեան: Ընթերցումներու շարքերու նպատակն է նաեւ մոռացութենէ փրկել կորստեան դատապարտուած գործեր: Շատ անգամ հայ բեմադիրներ արդարացնելու



Արամ Եանթրի՝ մանկուկներու վրայ խաղալու համար: Բեմադրութեամբ Արճի Յովհաննիսեանի


Համար օտար թատերախաղերու ընտրութիւնը, կ'ըսեն, թէ Հայերէն արժեքաւոր գրութիւններ չկան: Ժիշդ չէ այս Հաստատումը: Մեր ընթերցումներու շարքերը եւ անոնց նկատմամբ ցուցաբերուած հետաքրքրութիւնը կու գան փաստելու, որ եթէ Համեստ գտնուինք ու փնտռենք, արժեքաւոր եւ իւրօրինակ գործեր կ'ընանք գտնել: Այդ մեր բեմագիրներու առաջնահերթ պարտականութիւնն է:

Փարիզի զանազան մշակութային կեդրոններուն մէջ, մինչ այսօր ներկայացուցած ենք տասնեմէկ հեղինակներ, ներառուած չորս շարքերու մէջ: Առաջին շարքը կ'ընդգրկէր Նշան Տէստէկիւլի «Նկարները», Կոստան Զարեանի «Տեսիլք» եւ Յակոբ Օշականի «Կմախայրը»- երկրորդ շարքը՝ Միքայէլ Կիւրճեանի «Տուրքը», Վահան Թէքէեանի «Մայրերը», Վահան Թոթովենցի «Նրկաւ սուր» եւ Եղիա Գասպարեանի «Նրկաւի վէշը»- երրորդ շարքը՝ Զարեհ Որբունիի «Յուդարկաւորութիւն մը», Աղասի Ալվազեանի «Առիւթ» եւ Ծուշան Պարտիզպանեան-Ֆանուսի «Պատը»- իսկ չորրորդը՝ կեդրոնացուած մէկ հեղինակի վրայ, կը շօշափի Լեւոն Շանթի «Ուրիշի համար», «Ճամբուն վրայ» եւ «Սաի մարդը» թատերակաները:

Վերջիններս, որոնք կը ներկայացնեն դարու սկզբի Շանթի ժամանակակից կեանքը, մինչ օրս երբեք միասնաբար չեն դիտուած: Յատկապէս պիտի ընդգծեմ՝ մեր թատերագէտներէն ու բանասէրներէն ոչ մէկը նկատած է, որ այդ գրութիւնները տարբերակներ ունին: Դրանք բոլորն ալ հրատարակուած են Շանթի տնօրինութեամբ: Չորրորդ շարքի միջոցով, այս կարեւոր փաստը թատերական գործիչներու եւ Հասարակութեան ուշադրութեանը յանձնուեցաւ եւ Շանթ աստիճանաբար իրեն Հարազատ թատերական դիմագիծն վերագտած՝ փոշիաթափ, հեռու չքեղամորութենէ, բիւրեղացած Հասարակութեան ներկայացաւ:


Հարցազրոյցին տեսակցութեան մասնակցեցան՝
ՅԱԿՈԲ ՍԱԶՄԵԱՆ եւ ՄԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ





Ձ

ԾԱՀԱՆԴՈՒՄՏ



Իր կեանքը չաղուած ու չաղախուած է Լիբանանի կեանքով: Զաւակն է Զահլէի՝ Պեքաայի հարսին: Իր մանկութեան խաղացած է Պարտունիի ջուրերուն հետ, իր սէրերը երգած Զահլէի խորհրդաւոր ու ջրառատ ձորին՝ Վատիի մէջ: Իր պոռթկումները նման են իր գիւղի ակնաղբիւրներու բխումին, որ քաղցրաձայն հոսանքով, երբեմն ջրվիժային անզուսպ գահավիժումով կ'ոռոգէ համայն Պեքաան, զովացնելով ալրած արտերը, որոնք սիրավառ սիրտերու նման կը սպասեն մշակին գուրգուրոտ ափերուն, վասն հունձքին ու բերքին վաղուան:

*

* *

Ո՞վ չէ լսած իր անունը: Միայն Լիբանանով սահմանափակ-
 ւած համբաւ մը չէ, ամբողջ Արաբական Արեւելքին մէջ,
 ինչպէս նաեւ Եւրոպայէն մինչեւ գոյգ Ամերիկաները լսուած
 ու մեծարուած անուն մը, որուն անձնապէս հանդիպած ենք
 քանիցս:

Իրեն հետ ունեցած մեր բազմաթիւ գրոյցներէն բաժին մը
 կը ներկայացնենք հոս:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ
 ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՋ,
 ԱՅՆ ՈՇՄՄԵՆԻ

Երկու ժամ անցած է արդէն, ու դեռ ականջ կու տամ այս
 ինքնուրոյն յեղափոխականին, զարմանքով ու հիացումով:
 Զէնքով կատարուած յեղափոխութիւն մը չէ իրը, այլ՝ գրիչով,
 խօսքով, ճառերով, որոնց դիմաց ապշած էն լիբանանցին եւ
 այլ երկրացիներ:

Շատ խանդավառ է իր նոր գիւտով, այնքա՛ն հաւատացած
 է անոր, որ գիտ ալ կը վարակէ իր հաւատքին խորութեամբ:
 Վերացումով կը բացատրէ իր նպատակը, որ տկարութիւն
 պիտի չճանչնայ, քանի որ «ոչ մէկ վատ միտում ունի իր մէջ»:
 Ազգային ըլլալով հանդերձ, է՛ նաեւ համամարդկային, որ կը
 ձգտի մշակոյթի զարգացման, լեզուի ժողովրդականացման՝
 հայրենիքի անցեալին մեծ իրականութեան հաւատարիմ մնա-
 լու, ու նաեւ լեզուական ինքնուրոյն դիմագիծ մը ունենալու
 պահանջին:

Մեր օրերու Լիբանանի «լուսաւորիչը» կարելի է նկատել
 գինք, որ մեծ ներշնչումի տէր է եւ կը վարակէ իր շուշուփ,
 հոգեյից խօսքով: Ու օր մը, սերունդները գալիք, օրհնենք
 պիտի կարդան իր հոգիին համար, հոգիին՝ Սաիտ Աբլ բանաս-
 տեղծին, որ իրենց համար դիւրացուցած ըլլալ կը թուի արա-
 բերէն լեզուի դժուար բնոյթը, հարթելով ճանապարհները
 անհարթ: Հայրենիքի երախտաւոր գաւակները միշտ պիտի
 պահեն գինք իրենց սրտերուն, որպէս հայրենական հերոսի,
 իրրեւ պատմութիւն ստեղծող գիտնականի:



«Այն լեզուն, որ չ'ապրիր շրթունքներու վրայ, մեռեալ լեզու մըն է: Իսկ մեռեալ լեզու մը գործածող ժողովուրդը դատապարտուած է մահուան», կ'ըսէ Սաիտ Աքլ, բացատրելով իր հնարած լիբանանեան նոր լեզուին, լիբաններէնին նորութիւնները, անկէ ստանալիք օգուտը:



Այդքան ալ դիւրին չեղաւ լիբանանցի ականաւոր բանաստեղծ Սաիտ Աքլէն ժամադրութիւն մը առնելը, տեղեկանալու համար իր նորաստեղծ գիւտին: Մօտ երկու ամիսներէ ի վեր կը հետապնդեմ գինք, սակայն չեմ յաջողիր գտնել ո՛չ իր գրասենեակին մէջ, ոչ ալ իր բնակարանը, Պէյրութ թէ Զահլէ: «Շատ գրադած է», կը պատասխանէր քարտուղարուհին, ամէն անգամ որ Ըսթեգին մասին տեղեկութիւն խնդրէի:

Ուրիշ օր մը քարտուղարուհին կ'ըսէր. «Այսօր գիւղ գնաց՝ դպրոցները այցելելու»: Այս ձայնն է երկրորդ քարտուղարուհիի մը, որ կ'աւելցնէ. «Իր նոր գիրքին՝ լիբաններէնի մասին դասախօսութեան մը հրաւիրուած է»:

Ու վերջապէս, այսօր, յաջողած եմ գտնել այս նշանաւոր մարդը, որ կը կոչուի Սաիտ Աքլ:



Զիս ընդունեց իր գրասենեակին մէջ, սիրալիր, կրկնելով. «Հազար ներողութիւն, որ ձեզի այսքան տաղտուկ պատճառեցի, երկար ատեն սպասցուցի ձեզ: Հաւատացէ՛ք, որ շատ գրադած էի...»

Արդիական, նորակառոյց բազմալարկ շէնքի մը ներքնամասին կը գտնուէինք: Արդիական էր նաեւ կահաւորումը, զոյգ քարտուղարուհիներով պաշտպանուած: Պատերը գրեթէ անպաճոյճ, բացի իր սեղանին դիմաց դրուած աթոռին ետեւի պատէն, ուր իր գլխավերեւը կախած են արծաթափայլ խոշոր աստղ մը, մէկ նմանակը այն աստղին, զոր տեսած էին Արեւելքի երեք մոզերը, Քրիստոսի ծնած վայրը առաջնորդուելու համար: Ասիկա աւուր պատշաճի տօնական տե՛քը մըն է անշուշտ, բայց բաւական խորհրդանշական: Չմոռնամ յիշելու, որ Դեկտեմբերի 24ն էր, Եւրոպական ծնունդի նախօրեակը: Այդ օր բանաստեղծին խթումն էր:

ՓԻՒՆԻԿԵՐԵՆ ՆՈՐ ԼԵՁՈՒՆ

-Եկած եմ ձեզմէ իմանալու ձեր նոր գիրքերուն ու գիրքերուն մասին, որոնց շուրջ կը խօսին ամբողջ Պէյրութի մամուլը եւ գրասէր հասարակութիւնը: Ի՞նչ ներշնչումէ տարուած նման գաղափար մը յղացաք:

-Լեզուի հարցը զիս վաղուց կ'անհանգստացնէ: Այսինքն՝ արաբերէն լեզուն մենք կը գրենք գրաբար, իսկ կը խօսինք այլ լեզուով: Իմ միակ մտասեւեռումն է գիւրացնել հայրենակիցներուն լեզուական կնճռոտ հարցը եւ ստեղծել մեր սեփական լիբաներէնը, արդի փիւնիկերէնը: Պէտք է մարդ ըլլայ նախ՝ ուղիղ ու ճշգրիտ, տրամաբանող: Ինչ իմաստ ունի կառչած մնալ լեզուի մը, գոր չենք խօսիր: Այն լեզուն, որ չի գտնուիր շրթունքներու վրայ, մեռեալ լեզու մըն է, իսկ մեռեալ լեզու մը գործածող ժողովուրդը դատապարտուած է մեռնելու: Հիմա դուք՝ հայերդ, Սայաթ-Նովայի լեզուն կը խօսիք...: Ինչո՞ւ չէք խօսիր, տգե՞ղ է այդ լեզուն: Ո՛չ, այլ՝ իր ժամանակին արտայայտութիւնն էր: Ներկայիս, Պուրճ Համուտի մէջ ամենապարզ հայուն խօսած հայերէնը աւելի բարձր կրնանք նկատել, քան Սայաթ-Նովայինը, որովհետեւ... Հիմա դուն մեծ մօրդ հագուածքի՞ն պէս կը հագնիս. ո՛չ անշուշտ...: Դուն կ'ապրիս՝ քու ժամանակիդ մէջ: Դուն կը հետեւիս ժամանակի պահանջին: Ուրեմն՝ լեզուն ալ նոյնն է: Պէտք է գրել այնպէս՝ ինչպէս կը խօսինք: Աշխարհ կ'ապրի մեծ հոլովոյթի շրջան մը, ու ըստ վիճակագրութեանց, օրական 138 նոր բառեր կը ստեղծուին: Գիտութիւնը կը յառաջդիմէ, նոր գիւտեր, նոր բառեր կը ստեղծուին: Այսօր մէկ ժամէն կրնանք Զահլէ հասնիլ, փոխանակ օրերով ճամբորդելու: Երկու-երեք ժամէն օդանաւը զիս կը տանի աշխարհի միւս ծայրը, մինչ դար մը առաջ պիտի տրամադրէի ամիսներ, տարիներ՝ նոյն տարածութիւնը ճեղքելու համար: Առնենք նաեւ ելեկտրականութեան օրինակը. բաղդատենք ելեկտրական լամպն ու քարիւղի լապտերը: Առաջինը անմիջական է, նաեւ առողջապահական, զօրաւոր լոյսով, գեղեցիկ՝ վերջապէս: Այսօր ո՞վ պիտի ուզէր հրաժարիլ ելեկտրական լոյսէն եւ գործածել քարիւղի լապտերը: Ուրեմն՝ պէտք է յարմարիլ գիտնանք նորին: Պէտք է թարգմանենք միջազգային գլոխ-գործոցներ ու փոխադարձաբար՝ ծանօթացնենք մեր մշակութիւնը, մատչելի լեզուով, որպէսզի գիւրաւ հասկցուի նաեւ օտարէն:

ԳԻՐԵՐՈՒ ԵՒ ԼԵԶՈՒԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ

-Ինչո՞ւ ընտրած էք լատինական տառերը...

-Լատիներէն գիրը համաշխարհային ճանաչում գտած գիր մըն է: Դիւրին է եւ մատչելի՝ բոլորին, ուրեմն՝ տրամաբանական: Իմ տառերս տրամաբանական են, լո՞ծի՛ք են հարիւր առ հարիւր: Ինչ որ կը գրես, կը կարդաս նոյնութեամբ: Անպաշտօն, աւելորդ տառեր չկան: Ձայնաւորներու հարցը լուծած եմ: Արաբերէնի մէջ շատ քիչ է անոնց թիւը, հազիւ՝ երեք, ինչ որ մեծ դժուարութիւն կը ստեղծէ արտասանելու համար տուեալ օտար բառ մը: Իմ տառերս թիւերու նման են, յստակ ու ճշգրիտ: Պզտիկ փոփոխակներով հնարած եմ նոր տառեր, որոնք կու տան արաբերէնին մէջ գտնուող եւ կոկորդային հնչականութիւն ունեցող ձայնաւորներն ու բաղաձայնները: Օրինակ, X տառը լատիներէն ի՞նչ տառով որ «անգործ» է, ունեցաւ իր պաշտօնը, որ կոկորդային Հ գիրն է: «Սին» եւ «Սատ» գիրերու տարբերութիւնը գտայ լատիներէն S /էս/ գիրը ենթարկելով փոքր փոփոխութեան: Օրինակ, «Սին» գիրը կը գրուի ճիշդ ֆրանսերէն «էս»ի պէս, իսկ «Սատ»ը այս S գիրին վերի կտր մասը քիչ մը փոքր ոլորուած է, եւ վարի մասէն պզտիկ կլորութիւն ունի:

ՔԱՌՈՐԴ ԺԱՄԷՆ ՍՈՐՎԵՑԱՅ ԼԻՐԱՆԵՐԷՆԸ

Որպէսզի իր բացատրութիւնները շօշափելի դարձնէ, բանաստեղծը զիս առաջնորդեց զիմացի պատէն կախուած մեծ ցուցատախտակի մը զիմաց, որ իր հնարած նոր այբենարանն էր: /Այս լեզուն փիւնիկերէն կը կոչուի, ըստ Սաիտ Աքլի/:

-Ըգրա՛, ես պնդի... (կարդա՛, աղջիկս),- ըսաւ բանաստեղծը:

Դիւրին էր կարդալ լատիներէն գիրերը: Կը շարունակէի կարդալ հեղասահ, յանկարծ «կանգ առ» ըսաւ բանաստեղծը տառի մը զիմաց, որ X /իքս/ տառն էր:

-Այս գիրը պէտք է հնչես Հ, կոկորդային հնչիւնով: Ապա շարունակեց մէկ առ մէկ բացատրել արաբերէն տուեալ բառով մը փոխարինուած իւրաքանչիւր տառին դերը:

Բացատրողական խօսքի աւարտին անդադար կը կրկնէր.
-Մի՛ մոռնար, նորէն կարդա՛... Այո, կարդա՛...
Հինգ տողերու մէջ ամփոփած էր կարգախօսը, որ հետեւեալն էր.

«Քառորդ ժամէն կրնաս սորվիլ փիւնիկերէն, ու կարդալ առանց ոեւէ մէկուն օգնութեան, աշխարհի գեղեցկագոյն գիրքերը, ինչպէս՝ Հոմերոսի, Թալիսի, Կէօթէի, Թակորի եւ միւս մեծերուն գործերը»:

Իր հնարած յիշեալ հինգ տողերը կը կարդամ լիբաներէնով: Նախ՝ քիչ մը կը կմկմամ. կրկնել կու տայ: Երկրորդ անգամ կը կարդամ սահուն:

-Տեսա՞ր, վերջացաւ...: Այս է ամէնը...: Դիւրին է, չէ՞:

-Դժուար չէ:

Վերագառնալով իր ամբողջ, ապահով ըլլալէ ետք, թէ սորվեցայ փիւնիկերէնը տասնհինգ վայրկեանէն, ըսաւ.

-Լատինական տառերը ընտրելուս գլխաւոր պատճառն ալ այն է, որ աշխարհի վրայ գտնուող քաղաքակիրթ երկիրներու եւ ժողովուրդներու գիրերը սեռած են Պիպլոսի լեզուէն, փիւնիկերէնէն...

Կը զարմանամ այս հաստատումին ու կ'ըսեմ.

-Ինչե՛ր կ'ըսէք...

-Այո: Եւ կը շեշտեմ: Աշխարհի բոլոր գիրերը գաւազններն են մեր հին փիւնիկերէն լեզուին: Թող աշխարհը իմանայ...

-Հայերէ՞նն ալ,- կը հարցնեմ զարմացած:

-Այո, հայերէնն ալ,- կը հաստատէ ինքնավստահ:

Իսկ ես կը մտածեմ մեր Սուրբ Մաշտոցին մասին...: Քիչ ետք կը հարցնեմ իր նոր ալբուրէնով հպարտ մեծ լիբանանցիին.

-Դպրոցները ի՞նչ ձեւով դիմաւորեցին ձեր նոր գիւտը:

-Հետաքրքրութիւնը շատ է ներկայիս. պէտք է ըսեմ, որ քմայք մը չէ մշակութային յեղափոխութիւնս: Ան կը վերաբերի ժողովուրդի մը կեանքին ու մահուան հարցին: Այս յեղափոխութիւնը հիմնուած է երկու կարեւոր իրականութիւններու վրայ: Առաջին՝ յեղափոխութիւն գիրի, երկրորդ՝ յեղափոխութիւն լեզուի: Այս յեղափոխութիւնը իր կարգին ծնունդ պիտի տայ բազմաթիւ այլ յեղափոխութիւններու: Այդ գեռ սկիզբն է: Պէտք է անոր հետեւիլ ուշադրութեամբ: Հարցին քաղաքական երեսը ընաւ զիս չի հետաքրքրեր: Ապագային, առանց ինծի ալ կրնայ գործը շարունակուիլ: Բայց ես մղիչ ուժն եմ, իմանողը, յեղափոխութեան իրականացումը արագացնողը: Պէտք է գիտնալ, որ այս բոլորին մէջ գիրի յեղափոխութիւնը երկրորդական գիծի վրայ կու գայ. կարեւորն ու կենսականը լեզուի հարցն է. օրինաւոր խօսքին,- մարդ մը կրնայ իր զգեստը փոխել իր ուզած պահուն, բայց մարմինը, իր ֆիզիքական եւ հոգեկան ըմբռնումով՝ ոչ: Ուրեմն՝ գիրը

հազուստն է, տարազը, իսկ լեզուն՝ մարմինը, կենսաբանական գրությունը՝ եթէ կ'ուզէք: Այս յեղափոխութեան է, որ կը սպասէ ամբողջ Արեւելքը:

☆☆☆

Իր նորահնար այբուբենը ծանօթացնելու բազում առիթներ ունեցաւ Սաիտ Աքլ. գրքոյկներ հրատարակեց, մամուլով յօդուածագրեց, դասախօսական հանդիպումներ եւ հարցազրոյցներ ունեցաւ դպրոցներու աշակերտութեանց հետ, լրագրողներու հետ: Ինք հաւատաց, թէ որոշ ճամբայ կտրած է արդէն, բայց վրայ հասաւ լիբանանեան աղէտը /1975 Ապրիլ/, ինքնարեւարար Սաիտ Աքլի հետապնդած նպատակը կիսատ մնաց: Պատերազմը եղաւ երկարատեւ, աւելի քան 17 տարի, հետեւաբար անիմաստ էր լեզուական հարցերու մասին խօսիլը, որովհետեւ հայրենիքն էր, որ խնդրոյ առարկայ էր, Լիբանանը ռազմական վիճակի մէջ էր...

☆☆☆

Սաիտ Աքլ ծնած է Զահլէ՝ 1911ին: Ներկայիս կը շարունակէ գրական իր գործունէութիւնը: Յաճախ ելոյթներ կ'ունենայ պատկերասփիւռէն, ձայնասփիւռէն: Անոր միակ ու գլխաւոր թեման Լիբանանն է, իր հայրենիքին գերիշխանութիւնը, որուն սիրոյն երբեք չեղաւ երկմիտ կամ դիւանագիտական լուծումներ չգտաւ Լիբանանի գերիշխանութիւնը պահպանելու: Պաղեստինեան հարցը զինք հետաքրքրեց իբրեւ մարդասիրական իրաւունք, բայց երբ պաղեստինցիները ոտնձգութիւններ կատարեցին Լիբանանի գերիշխանութեան դէմ, մասնաւորաբար 1975էն մինչեւ 1980ական թուականներու ժամանակամիջոցին, բանաստեղծը իր գայրոյթը չճածկեց, ծառացաւ Լիբանանը երկփեղկուած տեսնել ուզողներուն դէմ, ու գոչեց. «Լիբանանը՝ լիբանանցիներուն...»:

☆☆☆

Սաիտ Աքլ ո՛րքան զգայուն, նո՛յնքան իմաստասէր բանաստեղծ է, ծայրայեղական պոռթկումներով: Ինք կը դաւանի սկզբունք մը կամ համոզում մը, թէ Լիբանան աշխարհի քաղաքակրթութեան կեդրոնն է, անկէ ծագում առած են

բոլոր արուեստները, քաղաքակրթությունները, նոյնիսկ աշխարհի միևնույն ազգերուն այրուքները հիմնուած են փիւնիկեան այրուքներին վրայ: Ըստ իրեն, թուարանութիւնը ծագում առած է Լիբանանէն, այսինքն՝ հին դարերու Փիւնիկէն: Աստուածային առաքինութիւններ կը բաշխէ իր հայրենիքին, զոր կը նկատէ բացառիկ երկիր, ուր շրջած է Յիսուս եւ կատարած է հրաշքներ: Լիբանանի արգ (մայրի) ծառերը նկատած է սրբութեան ու յաւերժութեան խորհրդանիշ:

Իր բանաստեղծութիւնները հիմնուած են գլխաւորաբար վերը նշուած ժառանգութեան, կամ բնական հարստութեան վրայ: Անոր քերթուածները վերածուած են երգերու: Ֆէյրուզ երգած է իր գրած բառերու հիման վրայ հայրենասիրական երգեր: Ռահպանի եղբայրները /երաժիշտ-յօրինողներ/ բարձր գնահատած են իր արուեստը:

☆☆☆

Սաիտ Աբլ սերտած է նաեւ Հայոց պատմութիւնը: Ան առիթներ ունեցած է խօսելու բեմերէն, նաեւ գրելու Հայոց մասին, մասնաւորաբար Լիբանանի հայերու մասին, զորս կը նկատէ Լիբանանի կարեւոր լծակներէն մէկը, Լիբանանի բանակին ու պետութեան կողքին: «Հայերը ազնուական ժողովուրդ են: Անոնք քաջ են ու հերոսական, ստեղծագործ ու հանճարեղ: Լիբանանի սիւներէն են հայերը: Ձուներն ոչ մէկ մուրացկան: Իրենց հացը կը շահին իրենց քրտինքով: Ինչ բանի որ ձեռնարկեն, լաւագոյն ձեռով կ'ընեն, նոյնիսկ եթէ պիտի ահաբեկեն՝ լաւ կ'ահաբեկեն», ու կը յիշեցնէ Թալաւթ փաշան...

Մեր հանդիպումներուն ընթացքին բանաստեղծ Սաիտ Աբլ ոգեւորութեամբ կը խօսէր ամէն տեսակ հարցերու մասին: Այդ իր խօսելու կերպն էր: Իրեն համար աշխարհը կը սկսէր Լիբանանով, ու անոր սիրտին ձօնած է տաղեր: Գեղեցիկին հանդէպ պաշտամունք ունի, այդ գեղեցիկը ըլլայ արուեստ, կին կամ ազնիւ վերարբերում: Իր չափերը գերազանց եղած են միշտ: Իր չափը մեծն էր, անսահմանը: Փոքր իրողութիւններ չկային իրեն համար: Նոյնիսկ փոքր նկատուած, անտեսուած գոյութիւն մը կ'ըլլար մեծութիւն, որուն ոչ ոք անդրադարձած էր...

Արուեստները եւ արուեստագէտը արժեւորելու շօշափելի արտայայտութիւն եղաւ իր ստեղծած «Սաիտ Աբլ» արուեստի ամէնամասնայ մրցանակը: Լիբանանցի բազմաթիւ արուեստագէտներ արժանացան այս մրցանակին: Հոս պատշաճ ու տեղի կը նկատենք յիշել քանի մը հայ արուեստագէտներու անուններ, որոնք արժանացան «Սաիտ Աբլ» մրցանակին:

երգչուհի-դաշնակահարուհի Արփինէ Փեկլանեան, երաժիշտ, յօրինող-երգահան ու դաշնակահար Պօղոս Ճելալեան, երգչուհի Վիքի Կարապետեան:

☆☆☆

Երբ գրեցի Լիբանանի նուիրուած գիրքս, «Սաճճիմէն քուր խմեցիմ», ու թարգմանուեցաւ արաբերէնի («Շերիպնէ միմ միյէ Սաճճիմ»), զինք տեղեակ պահեցի, ցոյց տուի Հայերէն օրինակը, բացատրութիւններ տուի իրեն, ուրախացաւ, եւ ինքնարուեստ արտայայտութեամբ ըսաւ.

-Ես պիտի գրեմ քեզի Համար քանի մը տող, որպէսզի կարենամ նուագագոյն չափով գնահատել նուիրումդ՝ Հանդէպ Լիբանանի:

Սաիտ Աբլ խոստումը կատարեց: Էջ մը յառաջարան գրեց ու յանձնեց ինծի, աւելցնելով.

-Հայերը ուրիշ ժողովուրդ են, արժանի են յարգանքի...

☆☆☆

Սաիտ Աբլ Համբաւի տիրացած անուն մըն է Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա: Իր գործերը թարգմանուած են քանի մը լեզուներու:

Լիբանանի Հայերս կը ճանչնանք զինք, հրաւիրած ենք կարգ մը հանդիսութիւններու ու մեծարած ենք Լիբանանի այս արժանաւոր զաւակը...

ՇԱՀԱՆԴՈՒՄՏ



Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

ԱՆՅԱՅՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ



Հայ ընթերցողին ֆիչ թէ շատ ծանօթ է Կոստան Զարեանի ու անգլիացի նշանավոր վիպասան ու բանաստեղծ Լորենս Տը-նէլի (1912-1990) յարաբերութիւնը։ Առաջինը իր անգլիացի բարեկամը գլխաւոր հերոսներէն մէկը դարձուցած է «Կղզին եւ մի մարդ» վիպակին մէջ («Հայրենիք» ամսագիր, 1955), որ տակաւին կը սպասէ գիրքով հրատարակուելու րախտին (գիրքով արդէն լոյս տեսած է անգլերէն Արա Պալիօզեան, 1983, յունա-րէն Իսմէնէ Մովսէսեան, 1984- եւ ֆրանսերէն լեզուներով - Փիէռ Տէր Սարգիսեան, 1997-)։ Հոն որոշ վիպական զգեստաւորումով անդրադարձած է 1950 թուականի Յուլիսին իտալական Իսկիա կղզիին մէջ իրենց հանդիպումին։ Նախ ինչ, Զարեան գլխաւոր կերպարներէն մէկը եղած է Տընէլի ուղեգրութեան՝ «Պրոսպերոսի խուցը» ("Prospero's Cell", 1945), թարգմանուած՝ բազմաթիւ լեզուներու (տե՛ս Շաբէ Մինասեանի հայերէնի թարգմանութիւնը՝ «Պրոսպերոսի կղզին», «Յառաջ» օրաթեր-թի թերթօն, 1995), որ կը վերաբերի իրենց առաջին ծանօթու-թեան՝ յունական Գորֆու կղզին, 1935-36 թուականներուն։ Ասկէ զատ, Զարեան ու Տընէլ մամակագրական երկարամեայ կապ մը պահած են, որմէ ցարդ գտած ու հրատարակութեան յանձնած ենք ("Journal of the Society for Armenian Studies", vol. 8, 1995) Տընէլի կողմէ գրուած 25 մամակներ. ասոնցմէ երկու մեռյշ ալ լոյս ընծայած ենք հայերէն թարգմանութեամբ («Յառաջ-Միտք եւ Արուեստ», Փետրուար 1995)։ Տընէլ գրած է փորձագրութիւն մը՝ «Կոստան Զարեան՝ երիցս ախտը» ("Constant Zarian: Triple Exile", 1952, հայերէն թարգմանու-թիւն՝ «Գրական թերթ», 10 Մայիս 1991) եւ Զարեանի մասին շահեկան ակնարկներ ունի իր բանաստեղծութիւններուն, ինչ-պէս եւ ամերիկացի նշանավոր վիպասան Հենրի Միլլըրին աւղ-ուած մամակներուն մէջ։

Ծանօթ չէ, սակայն, Տընէլի կրտսեր եղբոր՝ բնագէտ ու գրագէտ ձերբլոյ Տընէլի (1925-1995) համեմատաբար պատահա-

կան վկայությունը Ջարեանի մասին, որ նշյալ գրուած է հայ գրողի Դորֆու ապրած տարիներում առիթով: Անիկա արձանագրուած է ձ. Տըռէլի ամէնէն ծանօթ հատորներէն մէկուն մէջ՝ «*Ընտանիքս եւ ուրիշ կենդանիներ*» ("My Family and Other Animals". 1957), ուր ամ կը նկարագրէ իր մանկութեան տարիներու փորձառութիւնները՝ իր ընտանիքին թէ կենդանական աշխարհի հետ: Տարօրինակ կերպով, Ջարեանի անունը արձանագրուած է Ջաթփէլ կերպով ձ. Տըռէլի կողմէ, հակառակ որ արդէն գոյութիւն ունէր իր աւագ եղբոր յուշագրութիւնը: Արդեօք 12-ամեայ ձերբլտի մէջ այդպէ՞ս տպաւորուած է հայ գրագէտին անունը, թէ գիտակցաբար որոշած է ծածկել անոր ինքնութիւնը. դժուար է ստոյգ քան մը ըսել ներկայ պարագաներում տակ:

Բնագրէն թարգմանաբար կը ներկայացնենք Ջարեանի վերաբերող Տըռէլի էջերը, որոնք թեթեւ երգիծամբով պարտուած ու միաժամանակ քանի մը հաւաստի գիծեր կու տան Ջարեանին, քաւական համահնչուն՝ Լ. Տըռէլի Դորֆուի տարիներուն գրած տողերուն: Լառին՝ Լօրընս Տըռէլն է, Լեւիին ու Մարկոն՝ միւս երկու եղբայրները (Մարկո Տըռէլ 1996ին հրատարակած է իր յուշերը եղբայրներուն մասին), իսկ Թէռտորը՝ Թէռտոր Ստեփանիտէսը, «*Պրոսպերոսի կղզին*»ի եերուսներէն մէկը, յոյն բժիշկ ու վիպագիր:

Պուէնտս-Այրէս

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ



ԺԵՐԸԼՏ ՏԸՌԻՆ

ԸՆՏԱՆԻՔՍ ԵՒ ՈՒՐՈՇ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ (Հաղտամ)

Գարնան եւ վաղ ամրան ընթացքին, մինչ ես կրիաներու սիրային բարքերը կ'ուսումնասիրէի, վիլյան լեցունեցաւ Լաոիի բարեկամներու կարծես անվերջանալի հոսքով մը: Հազիւ թէ հրաժեշտ տուած էինք խումբի մը եւ հառաչած՝ շունչ մը քաշելով, երբ ուրիշ շոգենաւ մը կը հասնէր, վարձակառքերու եւ սալներու հերթը կ'աղմկէր գառիվեր, եւ տունը նորէն կը լեցուէր: Երբեմն հիւրերու թարմ բեռը երեւան կու գար, մինչ նախորդ խումբէն դեռ ազատած չէիք, եւ քառսր աննկարագրելի էր: Բանաստեղծներ, գրողներ, արուեստագէտներ եւ թատերագիրներ տունն ու պարտէզը կը խճողէին, վիճելով, նկարելով, խմելով, մեքենագրելով ու յօրինելով: Լաոիի խոստացած սովորական, հրապուրիչ մարդիկը ըլլալէ հետո, բոլորն ալ յայտնուեցան իրրեւ ամէնէն արտակարգ ու արտակեղծ մարդիկը, այնքան գիտասիկ, որ դժուարութիւն ունէին գիրար հասկնալու:

Առաջին ժամանողներէն էր Զաթոպէքը (Zatopek), հայ բանաստեղծ մը, կարճ ու լեցունկեկ մարդ մը՝ արծուի քիթով, մինչեւ ուսերը հասնող արծաթաբաշ մազով եւ հանդուցաւոր ձեռքերով՝ յօդացաւէ ծռած: Երբ հասաւ, կը կրէր վիթխարի, խառն ի խուռն սեւ վերարկու մը եւ սեւ, լայնեզր գլխարկ մը, ու գինիով լեփ-լեցուն կառք մը կը քշէր: Իր ձայնը սիրողքբոյի պէս տունը սասանեց, երբ ներս խուփեց, ծփացող վերարկուով, ձեռքերը շիշերով լի: Իր ամբողջ կեցութեան ընթացքին հազիւ թէ դադրեցաւ խօսելէ: Առաւօտէն մինչեւ իրիկուն խօսեցաւ, գինիի արտակարգ քանակ խմելով, քուն մը քաշելով ուր որ հանդիպէր եւ հազիւ թէ անկողին մտնելով: Իր յառաջացած տարիքին հակառակ, հակառակ սեռին հանդէպ իր խանդավառութիւնը բնաւ չէր կորսնցուցած, եւ, մինչդեռ Մամային ու Մարկոյին հանդէպ տեսակ մը հնարճ քաղաքավարութեամբ կը վարուէր, շրջակայքի ո՛չ մէկ գեղջկուհի իր

ուշադրութենէն զերծ էր: Զիջենքինքնուն մէջէն կաղալով անոնց ետեւէն կ'երթար, բարձրաձայն ծիծաղելով եւ հաճելի խօսքեր պոռալով: Վերադառնալուն կը ծփար, գինիի շիշ մը գրպանին: Նոյնիսկ Լուկարեմիան ազատ չէր, եւ իր յետոյքը կսմիթ մը ստացաւ թիկնաթոռին տակը աւելու պահուն: Ասիկա ձեւով մը օրհնութիւն էր, որովհետեւ քանի մը օրով իր ցաւերը մոռցնել տուաւ իրեն, եւ կը կարմրէր ու երեսայի պէս կը խնդար, երբ Զաթոփէքը կ'երեւէր: Զաթոփէք վերջապէս մեկնեցաւ ինչպէս որ եկած էր, արքայաբար բազմած կառքի մը մէջ, վերադառնալուն մէջ փաթեցուած, սիրալիր խօսքեր պոռալով մեզի փողոցն ի վար, խոստանալով շուտով վերադառնալ Պոսնիայէն եւ աւելի գինի բերել:

*

* *

Թաղորդ արշաւանքը երեք արուեստագէտներ էին. Ճոն-քել, Տուրնաթ եւ Մայքըլ: (...) Մինչ այս երեքին տակէն կ'ելլէինք, ուրիշ հիւր մը ժամանեց՝ Թոռոյի կոմսուհի Մելանիի կերպարանքին տակ: Բարձրահասակ էր, նիհար, հին ձիու նմանող դէմքով, ագռաւի պէս սեւ յոնքերով եւ գլխուն վրայ կարմիր մազերու հսկայ բարձ մը: Տունը հազիւ հինգ վայրկեան անցուցած, տաքէն գանգատեցաւ, եւ ի սարսափ մօրս ու ի հաճութիւն ինծի, իր կարմիր կեղծամը հանեց, ցոյց տալով սունկի պէս ճաղատ գլուխ մը: Մամայի զարմացական հայեացքը տեսնելով, կոմսուհին իր խռպոտ ու կռնչող ձայնով բացատրեց. «Հազիւ ապաքինած եմ օձացաւէ», ըսաւ, «ամբողջ մազս կորսնցուցի... Միլանոյի մէջ յարմար յոնք ու կեղծամ չգտայ... Թերեւս Աթէնքի մէջ բան մը գտնեմ»:

Դժբախտաբար, իր կեղծ ատամներուն անյարմար դիրքին պատճառով, կոմսուհին հակած էր բառերը ծամծմելու, եւ Մամանայն տպաւորութեան տակ մնաց, թէ այդ հիւանդութիւնը կնոջ համար շատ աւելի անպատշաճ բնոյթ ունէր: Առաջին պատեհ առիթին, անիկա Լառին անկիւն մը տարաւ: «Պժգալի», ըսաւ կենսունակ շշուկով: Լսեցի՞ր ինչ է ունեցածը: Իսկ դուն զայն բարեկամ կը կոչես:

«Բարեկամ», ըսաւ Լառի անակնկալի եկած: Ինչո՞ւ, հազիւ կը ճանչնամ զինք... Սա կինը չեմ կրնար հանդուրժել, բայց հետաքրքրական խառնուածք մը ունի եւ ուզեցի ձեռքի տակ ունենալ զայն ուսումնասիրելու համար:

«Այդ էր պակաս», ըսաւ Մաման, իրար անցած: Ուրեմն հոս կը հրաւիրես այդ արարծը եւ բոլորս ինչ-որ պժգալի

Հիւանդութեամբ կը վարակուինք, մինչդուռ նշումներ կ'ընես։
Ձէ, կը ներես, Լառի, բայց ան պէտք է երթայ։

-Ապուշ մի՛ ըլլար, Մամա,- ըսաւ Լառի բարկացած։- Չես
կրնար վարակուիլ իրմէ, բացի եթէ ուզես իր հետ անկողին մը
կիսել։

-Նողկալի մի՛ ըլլար,- ըսաւ Մաման, չանթ ու կայծակ
արձակելով։- Պիտի չհանդուրժեմ այդ լպիրշ անձը այս տան
մէջ։

Շշուկներով վիճեցան ամբողջ օրը, բայց Մաման յամառ
էր։ Վերջապէս, Լառին թելադրեց կանչել Թէոտորը եւ անոր
կարծիքը ուզել։ Մաման համաձայնեցաւ։ Հետեւաբար, երկ-
տող մը դրկուեցաւ, խնդրելով Թէոտորէն, որ մեր մօտ գար
օրը անցընելու համար։ Իր դրական պատասխանը բերաւ
կառք մը, ուր Ջաթփէքի՝ վերարկուի մէջ փաթեցուած կեր-
պարը կը բաժնէր։ Դուրս եկաւ, որ ան հսկայածաւալ «հրաժեշտ»
մը խմած էր Գորֆուին կենացը, սխալ նաւը առած եւ ինքզին-
քը գտած՝ Աթէնք։ Եւ քանի որ արդէն փախցուցած էր Պոսնիոյ
մէջ իր ժամագրութիւնը, փիլիսոփայականօրէն Գորֆու վե-
րադարձող յաջորդ նաւը բարձրացած էր, իրեն հետ բերելով
գինիի քանի մը տուփ։ Թէոտորը յաջորդ օրը երեւցաւ, անամա
գլխարկ մը կրելով իր սովորական գլխարկին տեղ, իբրեւ
գիշրում ամրան եղանակին։ Նախ քան Մաման առիթ ունենար
մեր անմազ Հիւրին մասին խօսք բանալու, Լառին, ներկայա-
ցուցած էր զանոնք։

-Բժիշկ մը,- ըսաւ Թոռոյի կոմսուհի Մելանին, փայա-
տակող աչքերով։- Ի՞նչ հետաքրքրական։ Թերեւս դուք կրնաք
խորհուրդ տալ ինծի...։ Նոր-նոր օճացաւ ունեցայ։

-Ահա՛։ Իսկապէ՞ս,- ըսաւ Թէոտոր, ուշադրութեամբ նա-
յելով իրեն։- Ի՞նչ...ը...բուժումի հետեւեցաք։

Խանդավառօրէն ձեռնարկեցինք երկար ու մասնագի-
տական քննարկումի մը, եւ միայն Մամայի ամենավճռական
ջանքերը գիրենք բաժնեցին նիւթէ մը, զոր ան տակաւին
անյարմար կը նկատէր։

-Իսկապէս, Թէոտորը այդ կնոջ չափ գէշ է,- ըսաւ Լա-
ռին,- կը փորձեմ ու լայնամիտ եմ, բայց սահման մը կայ, եւ
չեմ կարծեր որ նման բաներ թէյի ժամուն պէտք է խօսուին։

Աւելի ուշ, Մաման առանձին հանդիպում ունեցաւ Թէո-
տորի հետ, եւ կոմսուհիի Հիւանդութեան բնութեւնը բացատրուե-
ցաւ իրեն։ Մաման այնուհետեւ խղճի խայթ ունեցաւ կինը
թիւրմբունած ըլլալուն համար, եւ անվերապահ գուրգու-
րանքով վերաբերեցաւ անոր հանդէպ օրուան մնացեալ պահե-
րուն, մինչեւ իսկ թելադրելով կեղծամը հանել, եթէ տաք կը
զգար։

Այդ գիշեր ընթերցելով գունագեղ ու արտակարգ եղանակով, եւ ես այնքան հրապուրուած էի նկարագիրներով, որ չէի գիտեր ո՞ր մէկուն հետեւիլ յատուկ ուշադրութեամբ: Լամբերը թեթեւօրէն ծխացին եւ ջերմ ու մեղրածորան լոյս մը սփռեցին սեղանին վրայ, շողշողացնելով յախճապակին ու բիւրեղը, եւ կրակ հանելով կարմիր գինիէն, երբ կը թափուէր գաւաթներուն մէջ:

-Բայց, սիրելի տղաս, դուն ասոր իմաստը չես հասկցած, այո, այո, չես հասկցած,- Զաթոփէքի ձայնը կը պայթէր, քիթը ծռած իր գինիի գաւաթին վրայ:- Չես կրնար քննարկել բանաստեղծութիւնը տան ներկարարութեան պէս...

-...ուրեմն կ'ըսեմ իրեն. «Մէկ սատկելիք գծանկար չեմ ընել տասը հազարէն պակաս դրամով, այդ ալ շատ աժան է», կ'ըսեմ...

-...եւ յաջորդ առաւօտ շքմած էի, ապշած... Հազարաւոր ծիւղեր, ջարդուած ու կոտորուած... կ'ըսեմ, որ այլեւս պիտի չնկարեմ... ջիւղերս ցնցուած էին... ամբողջ այգին գացած էր... Ֆիւլթ... ասոր պէս... եւ ես հոն էի...

-...եւ յետոյ, հարկաւ, ծծումբի լոգանքները ունէի:
-Ահ, այո... ըմ... թէեւ, մի նեղանաք, կը կարծեմ, որ լոգանքով բուժումը... ը... քիչ մը... ը... դուք գիտէք... քիչ մը անցած-գացած է: Կը խորհիմ, որ տառապողներու իննսունը-երկու առ հարիւրը...

Կերակուրի պնակները, հրաբուխներու դիզուած, թեթեւօրէն շոգի արձակելով. կեդրոնական ափսէին վրայ՝ հասուն պտուղը մաքուր դրուած. Լուկարեճիան սեղանին շուրջ բոլորը դառնալով՝ ինքն իրեն մըթմըթալով. Թէոտորի մօրուքը փայլելով լամբի լոյսին տակ. Լեւի, որ հացի գնդիկներ կը պատրաստէր խնամքով՝ լամբերուն շուրջ դարձող ցեցի մը դէմ արձակելու. Մաման, կերակուրը դալով խառնելով, բոլորին ժպտելով տրամօրէն, մինչ Լուկարեճիային ուշադրութեամբ կը հետեւէր. սեղանին տակ, Ռոճըրի պաղ քիթը ծունկիս վրայ սեղմուած էր լուռ կանչով:

Մարկօ եւ դեռ Հեւացող Մայքլը արուեստի շուրջ կը խօսին. «...բայց ուրեմն կը կարծեմ, որ Լօրընս այդ բաները շատ աւելի լաւ կ'ընէ: Տեսակ մը հարուստ թարմութիւն ունի, կարծես ըլլար... չէ՞ք կարծեր: Այսինքն, առնենք Լէյտի Զաթըրլին, է՞հ:

-Օհ, այո, բաւական: Եւ յետոյ, հրաշալի բաներ ըրաւ անապակին մէջ, այդպէս չէ՞... եւ գրելով այդ հրաշալի գիրքը...ը... "The Seven Pillows of Wisdom"¹ կամ ինչպէս որ կոչուի...

Լառի եւ կոմսուհին արուեստի շուրջ կը խօսին. «...բայց դուք պէտք է մանուկի մը աչքերուն ուղղակի պարզութիւնը, յստակութիւնը ունենաք... Ամենայաւ հիմնական բանաստեղծութիւնը առէք... Humpty Dumptyն առէք... Ահա, առիկա բանաստեղծութիւն է... կաղապարներէ եւ ժամանակավրէպ խորհուրդներէ ազատութիւնն ու պարզութիւնը...»

«...բայց ուրեմն անօգուտ է բանաստեղծութեան հանդէպ պարզ մօտեցումի մը մասին ճառել, երբ պիտի արտադրէք բաներ, որոնք այնքան ուղղակի եւ պարզ են, որքան ուղիւի մը ստամոքսը...»

Մաման եւ Տուրանթ. «...եւ կրնաք երեւակայել իմ վրաս գործած ազդեցութիւնը... Շչմած էի»:

«Այո, անշուշտ: Ամօթ էր, այդ բոլոր հարցերէն ետք: Քիչ մը աւելի բրինձ կ'ուզէ՞ք»:

Ճոնքիլ եւ Թէոտոր. «...եւ լիթուանացի գիւղացին... լաւ, ես երբեք նման բան տեսած չեմ...»

«Այո, հոս Գորֆուի մէջ եւ...ը... կը կարծեմ... Ալպանիոյ որոշ մասերու մէջ, գիւղացիները շատ նման...ը... նման օոփորութիւն մը ունին...»

Դուրսը, լուսնին դէմքը որթատունկերու մէջէն կը լրտեսէր, եւ բուերը իրենց տարօրինակ կանչերը կ'արձակէին: Սուրճն ու գինին սպասարկուեցան պատշգամբին մէջ, որթերով ծածկուած սիւներուն միջեւ: Լառի նուագեց կիթառը եւ էլիզապէթեան երգ մը երգեց: Ասիկա Թէոտորին յուշեց Գորֆուի իր քմածին, բայց իրական մանրամասնութիւններէն մէկը, զոր մեզի պատմեց անխառն հաճոյքով:

«Ինչպէս գիտէք, հոս Գորֆուի մէջ բան չկայ, որ ճիշդ կերպով կատարուի: Ամէն ինչ կը սկսի... ը... լաւագոյն նպատակներով, բայց միշտ բան մը սխալ կ'երեւի: Երբ յոյն թագաւորը քանի մը տարի առաջ կղզին այցելեց...ը... իր շրջապատը տին բարձրակէտը պիտի ըլլար...ը... տեսակ մը բեմադրութիւն... Թատերախաղ մը: Տրամին բարձրակէտը Թերմոփիլէի ճակատամարտն էր եւ, երբ վարազոյրը գոցուէր, յոյն բանակը պիտի որ քշէր...ը... պարսիկ բանակը յաղթականօրէն դէպի... ինչպէ՞ս կը կոչէք... ահ, այո, թեւերը: Լաւ, կ'երեւի որ պարսիկները դերը խաղացող մարդիկը քիչ մը յուսախաբ էին թագաւորին առջեւ նահանջ ընելու գաղափարէն, եւ պարսիկներու դերը խաղալու պարագան ալ... գիտէք... բարկութեան առիթ էր: Միայն պզտիկ դէպք մը բաւարար էր ամէն ինչ խառնելու: Դժբախտաբար, ճակատամարտի տեսարանի ընթացքին յոյն բանակի ղեկավարը...ը... հեռաւորութիւնը սխալ չափեց եւ պարսիկ բանակի ղեկավարին բաւական ուժեղ հարձակած մը տուաւ իր փայտէ սուրով: Ասիկա, անշուշտ, արկած

մըն էր: Կ'ուզեմ ըսել, խեղճ մարդը երբեք չմտածեց նման բան ընել: Բայց այնուամենայնիւ բաւարար եղաւ...ը... պարսիկ բանակը այնպէս մը հրահրելու, որ փոխանակ...ը... նահանջի, իրենք յառաջացան: Տեսարանին կեդրոնը վերածուեցաւ գրա-հապատ գինուորներու ամբոխի մը, որ մահացու կռիւի լծուած էր: Իրենցմէ երկուքը նետուեցան նուազախումբին փոսը առաջ որ մէկը խելքը ունենար վարագոյրը գոցելու: Աւելի ուշ, թագաւորը դիտել տուաւ, թէ խորապէս տպաւորուած էր...ը... ճակատամարտի տեսարանին մէջ ցուցադրուած իրապաշտու-թենէն:

Միծաղը պայթեցաւ, ու տժգոյն մողէսները ահազանդի մատնուած պատն ի վեր փախուստի դիմեցին:

-Թէոտոր,- Լաուին խնդաց կուշտ ու կուռ,- վստահ եմ, որ ատիկա դուն չինած ես:

-Ո՛հ, ո՛հ,- Թէոտորը բողոքեց,- իրաւ է... Անձամբ տեսայ:

-Ամէնէն անհաւանական պատմութեան պէս կը հնչէ:

-Հոս, Գորֆուի մէջ,- ըսաւ Թէոտոր, հպարտօրէն փայ-լող աչքերով,- ամէն բան կրնայ պատահիլ:

Լուսնի լոյսով կիսուած ծովը փայլեցաւ ձիթենիներէն անդին: Գորտերը իրարու կռնչեցին աշխուժօրէն ջրափոսե-րուն մէջ: Երկու բուեր մրցումի մէջ էին վերանտալին ներքեւ գտնուող ծառին վրայ: Մեր գլուխներուն վրայ գտնուող որթատունկին մողէսները ճիւղերուն վրայ բազմած էին, անձկութեամբ դիտելով միջատներու փունջերը, գորս լամբի լոյսը, կոհակի պէս, դէպի իրեն կը քաշէր:

Անգլերէնէ թարգմանեց՝
Վարդան Մատթոսեան

ՃՆՐԸԼՏ ՏԸՌԵԼ



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1) Կը շփոթէ արաբմերու անկախութեան պայքարին մասնակցող քրիստոնէական զինուորական թոմար Լորընսը, հեղինակ՝ "The Seven Pillars of Wisdom"-ի, քրիստոնէական վիպագիր Տ.Հ. Լորընսի: "Lady Chatterley's Lover"-ի հեղինակին հետ:

2) Լուիս Գառսի "Alice in Wonderland" վեպին մէջ գործող անձերէն մէկը՝ հաւկիթ մը:

Ս. Ռ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՓԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ԽՈՐՀՈՒՐԴԸ ԾՈՎՈՒՆ...

Սարափեան իր «Միջերկրական» ֆերթագիրքով մեզի կը փոխանցէ խորհուրդը ծովուն, որով կ'ամրոջանայ բանաստեղծին իտալականացումը տեսիլքը:

Դիրքը կը բաղկանայ 40 էջերէ եւ կը բովանդակէ եօթը ֆերթումներ, որոնց առաջին երեքը՝ «Յառաջարան», «Ալիքներ» եւ «Ժայթք» կը կազմեն «Միջերկրական»ի բանաստեղծութիւնը, որով կը կոչուի ամբողջ հատորը: Միւս չորս կտորները կը կոչուին «Լուսածագ՝ ծովային արպեաններու», «Անտառին մէջ», «Լուսնի լոյս», «Վերացումի նաւը»: Հատորը գրի առնուած է 1957էն 1970, բայց եւ այնպէս կը կազմէ միասարք ամբողջութիւն՝ եւ ներշնչման, եւ յօրինումի տեսակէտէ:

«Միջերկրական»ը ուղղակիօրէն շարունակութիւնն է ֆերթոյին «Անջրպետի մը գրաւումը», գործով սկսող եւ «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» գիրքով շարունակուող հոգեվիճակին, ախորեալ, գաղթածին մարդու ներքին փառսի պատկերման:

«Մակընթացութիւն» պոեմին մէջ ծովուն դիմաց մերկ կանգնած ու վերածնած Սարափեան, «Միջերկրական»ին մէջ կը խորացնէ մարդուն, հա՛յ մարդուն ապրումները՝ քնութեան աւտիեզերքին առջեւ: Քառսին բերրիութիւնը գովերգող բանաստեղծը՝ «հետաքրքրական շրջումով մը, եւր ինքզինք առաւելագոյն չափով մը մօտիկցած կը գգայ երկրին, մարդոց, հայութեան»¹, որովհետեւ, ինչպէս կ'ըսէ ինք՝ Սարափեան. «կը հաւա-

1) Ե. Տառնապետեան. «Ն. Սարափեանը եւ սփռութեան իրաւունքի պատկերը», Ըմբիւրեան, գրականութեան հարցեր, Երեւան, 1969, էջ 34:

տամ յեղաշրջումի մեծ օրէնքին: Յեղաշրջումով միւթը կը փոխակերպուի լոյսի, իմացականութեան: Տիեզերքի միակ մեծ հրաշքը այս է: Այս յեղաշրջումին մաս կը կազմեն պայթարն ու տառապանքը²: Արդ, ինչպիսի՞ յեղաշրջում տեղի կ'ունենայ «Միջերկրական»ին մէջ:

Առաջին հերթին, հատորը մեզի կը յուշէ բնութեան ամէնէն շարժուն եւ ինքզինքն նորոգող վայրի մը ներկայութիւնը, որ Միջերկրական ծովն է: Ծովը ջուրն է, այն հսկայ տարածութիւնը արեւու գոյնեղումն, գեղեցկութեան եւ կեանքի, որ Միջերկրական կոչուելով տարրեր ու աւելի խոր իմաստ կը զգենու: Միջերկրականը ո՛չ միայն ենթակայական, այլեւ մշակութային իմաստ ունի Սարաֆեանի համար: Անիկա բանաստեղծին քաղաքէն քաղաք քաղաքական կեանքին տեսակ մը առանցքն է կարծես՝ Պոլկարիայէն Պոլիս, ապա՝ Վառնա, Ռումանիա, մինչեւ Փարիզ եւ այլ քաղաքներ: Մանկութիւն, պատանութիւն, երիտասարդութիւն մը ամբողջ, որոնք ապրուեցան այս ծովուն ջուրերուն եզրին, միեւնոյն ատեն իրարու զօդելով Արեւելքն ու Արեւմուտքը, որոնց քաղաքակրթութիւններուն հանդիպման վայրն է Միջերկրականը, ըլլալով մարդկային դարաւոր պատմութեան հայելին. «Միջերկրական. Արեւելք՝ Արեւմուտքի մէջ, երկիր...»:

«Եկեր եմ ծով՝ կարօտով, եւ կապոյտ ծով է անհուն» մախաղասութեամբ սկսող «Միջերկրական»ը մեզի ծանօթ սարաֆեանական տրամը կը բանայ նորէն, քայց այս անգամ քերթողը հարցադրումներու, նոր երկրամաս մը պնդելու միգով չէ, որ կը յառաջանայ, այլ իր կեանքին անցած ուղին հանգրուան առ հանգրուան ծովուն առջեւ պարզելու ներուժ գորութեամբ կը շարժի, քանի որ հոս ո՛չ «Գնացք»ի սրարշաւ ընթացքը կայ, ոչ ալ «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» գործին հակասութիւնները, այլ՝ այդ բոլորին քիւրեղացուցած հոգեվիճակը: Աւելի՛ն. ծովն է, որ մոռցնել կու տայ բանաստեղծին՝ մեծ քաղաքներու ցուրտ ու միապաղաղ առօրեան, անակութիւնները, որովհետեւ Միջերկրականին շուրջ կը տիրէ խիճ ու ծիծաղ. «Առաւօտուն. ճիշդ, խայտաւոր՝ ծիծառներու, ափաղաղ»։ Հոս է, որ անցեալը յարութիւն կ'առնէ, կը տողանցեն քաղաքակրթութիւնները, ալիքները կը շարժին եւ «գերբնային ճեղքներու պէս կու տան լոյս»։ Լոյսի՛, պայծառութեան ու իմացական բարձունքներու ձգտող քերթողը՝ «Միշտ ծովին առջեւ լոյսին կը սպասեմ...» պիտի ըսէ քիչ հտի, որովհետեւ այդ լոյսն է յեղաշրջման տանող նամբան: Լոյսը՝ յուշերու յարութիւն,

2) Կ. Փօլաւտեան. «Զրոյց՝ բանաստեղծ Ե. Սարաֆեանի հետ», «Քաղիւն», 2րդ տարի, 1963, թիւ 3, էջ 66.

ապրուած կեանքի ու ներկայի ընդհարում. «նոր երազներ կան, սա-կայն ես երազել չեմ կրնար»... «Անցեալ, գալիք կ'ընեն դառն, անբաղձալի՝ հոս իրար»: Ապա կը խորանան խորհրդածու-թիւնները բանաստեղծին, որ կը տուայտի դարուն տառապանք-ներով, քայքայուած մարդկութեան նսապաշտական մոլուցքնե-րով: Ասեմք կը միանան քերթողին ազգային ցաւը, ջարդերէն լսուող նիշերն ու գաղթածին հայու ախտորական վիճակը: Բայց, ծովը իր բնական հունով, ալիքներու եռեւեփումով անտարբեր է բանաստեղծին ապրումներուն. «Գիշերն՝ արեւն ալ օտար կ'երթամ կտրած ամէն կապ/Աշխարհիս ծայրն եմ նետուած: Եւ միւնչդեռ գիս իմ խորքէս/Հայրենիքիս, մարդկութեան աւելի մօտ կը գգամ ես/Աւելի շատ հեռացած՝ գիս անոցմէ ես կը գգամ»: Հեռանալով-մօտենալով իր ինքնութեան, ներքին երկուտութեան մը ամբողջ տրամին յանձնուած ըլլալով հանդերձ, «Միջերկրա-կան» ի երկրորդ բաժինը՝ «Արեւիք»-ը կը փակուի ներքին սպառ-ման ու անուրի միջեւ տարուբերող կշռոյթով. «բառեր» չըս-ւած... Գրուած է, որ անկով ըսպառիմ, /Ըսպառելով անիմ՝ միշտ՝ այս ծովին պէս տարուբեր», որուն ալիքներուն անձնա-տուր, բանաստեղծը ինքզինք կը գգայ «Անվերջ կապուած, կտրուած, հզօր, անզօր միանգամայն»:

«Ժայռ» կոչուող երրորդ բաժինը այս յուսահատ եւ անզօր վիճակէն դուրս կը բերէ քերթողը՝ յուսաբացի քերտով, «որով-հետեւ լոյսը, խորհրդաւոր մագնիսի պէս գինք միշտ վեր կը քաշէ, եւ ան՝ մոխիրներէն վերածնող փիւնիկին պէս կը խոյանայ դէպի վեր, դէպի անհունը, դէպի յաւիտեանականը, դէպի ուրա-խութիւնը»³⁾: «Ձիս յուսաբացն է քացած լայն, կապոյտ ծով է անհուն. /Արեւ, ու կեանք, անսահման փեր, բերկրանք, եւ երբ ես/Կը դիտեմ այս վերացմամբ՝ Միջերկրական այս, խորէս /Կը ժայթքի ճիչ մը խիւղի՝ աղօթքներու այս պահուն»:

Ծովուն ջուրերուն միախառնելով ինքզինք, Սարափեան իր անձը կ'ենթարկէ ինքնամաքման եւ ինքնաօծումի, ապա՝ հագի-ին մէջ ծնող լոյսը իրեն կը բերէ յայտը՝ նորաստեղծ մարդկու-թեան եւ հայուն, որ տառապելով կը կերտէ անձն իր հակասու-թիւններու մոյմ ոլորապտոյտին մէջ, այս անգամ, սակայն, գիտակցօրէ՛ն եւ հաւատով, որովհետեւ «Ազգային աւանդէն հեռաւորութիւն առնել գիտցող եւ, միւս կողմէ՝ օտարին ու անոր արժէքներուն հանդէպ վերապահ մնացող, քաց, «յայնարաց», սակայն իր անհատական իսկութեան նախանձախնդիր եռգի՛ն միայն կրնայ փրկել իր մէջ Անձը՝ անհատէն անդին ու, միւս կողմէ՝ ապահովել ստեղծումը հայու նոր տեսակի մը՝ ժամանա-

3) Ն. Զարխուտեան. «Ն. Սարափեան եւ «Միջերկրական», «Քաղին», Պէյրութ, 1975, 12րդ տարի, թիւ 3, էջ 70:

կակից հայուն»⁴:

Ներքին ապրումներու նոր հուն տուող ծովը, մաքրաջրման այս խորհրդանիշը՝ է՛ նաեւ խորհուրդը դարերէ եկող քաղաքակրթեանց, որոնց պիտի միանայ նա՛րը, բանաստեղծի՛ն ժամանակակից մարդկութիւնը՝ իր ներքին լոյսով, արարելու կարողութեամբ եւ կեանքը դէպի պայծառ գալիքը առաջնորդող իմաստութեամբ:

Հատորին մէջ ամփոփուած «*Լուսածագ՝ ծովային Ալպեան-ներու*» երկարաշունչ բանաստեղծութիւնը շեշտուած հայրենասիրութեամբ է թաթաւում, ուր բանաստեղծը ազգային պատրանքներ սնուցանելու միտքը կը զարգացնէ՝ ի խնդիր հաւաքական կեանքի գոյատեւման:

«*Անտառին մէջ*» քերթուածը նոյնպիսի մտորումներու շարունակութիւնը կը մատնէ, աւելի քնարական եւ անտառային միջավայրի մը մէջ, ուր լոյսը նոր խորութիւն կը ստանայ. «Լոյս է, տեսիլ գերբնական, յաներժութիւն անսահման/Հետաւոր կեանքն այդ քարի»:

«*Միջերկրական*»-ին մէջ ծովու թեմային կողքին նոյնքան իմաստալից լոյսը, որ յատկապէս այս գործով իր ոգեղէն արտայայտութիւնը կ'ունենայ, կը յեղաշրջէ բանաստեղծին հար, որ քառսին ընդմէջէն կ'երթայ դէպի վերածնունդի վայրը, ծովը, որ բնօրրանն է մարդկութեան, սկիզբը մարդկային գոյութեան. «*Միջերկրական*»-ի բոլոր իմաստները շրջելով, բանաստեղծը վերադառնում է բուն, մախնական իմաստին՝ ծովին, որպէս զու ծնունդի վայր, որպէս մարդկութեան բնօրրանի, ի վերջոյ՝ Միջերկրականը իր, բանաստեղծի, սկիզբն է, եւ ահա նա իւրատեսակ վերադարձ է կատարում դէպի սկիզբն, սակայն արդէն աստուածային լոյսին մերձեցնելուց յետոյ»⁵: Ոգեղէն լոյսի յայտնագործումով ան կը յօրինէ «*Լոյսի լոյս*» քերթուածը, ուր գիշերային պահու մը սեւեռումին ու քնութեան տարրերու շարժումներում պատկերման հետ, քերթողը այդ լոյսը կը սեւեռէ իր ներսը ու ինքզինք կը դիտէ: Ինքնահայեցման ու ինքնաքննադատման գործընթացին մէջ, ան կը թռնէ շարժումը, փոփոխութիւնը, փախուստը եւ վերալայնումը լոյսին, իւրաքանչիւրին հետ ընդգծելով իր հոգեմտաւոր էութեան փոփոխութիւնները. «Միշտ կը փոխուիս: Նայմն ես միշտ: Կ'ուզես արդար, ճիշդ ուղիւ/ Ձեռ կրնար գայն ունենալ»: Հոգիին հետ զրոյցի թռնուած քերթողը լոյսը կ'ըմբռնէ իրրեւ իր խորհրդածութիւններում, ապրումներում, կենսափորձին աղբիւրը. «Օ՛,

4) Յ. Բիւրճեան. *Շէ. Սարգսեան, Պաշտօն երկեր*, Պէտրոս, 1983, էջ 506:

5) Ա. Բովսեան. *Շէ. Սարգսեան, Երկեր*, Երևան, 1988, էջ 12:

Հոգի, ռուր այսպես՝ երբ, ըզգալով քեզ երկնահաս, /Հոմ՝ ուր կարծես կ'անհետի/ Զարիքներն ու բարիքներն անդորրութեամբ կ'անհունանա/ Անսահմանիմ մէջ մթին»։ «Հոգին», արդարեւ, անդորրութեամբ կ'անհունանայ անսահմանիմ մէջ մթին. կը ծաւալի, կ'ըլլայ ցամուցիւր, կ'անցնի անդին՝ ծովու աղեղէն, ապա այդ անհունէն կը վերադառնայ ասի, կարօտ՝ այդ ասիին, կը փշրուի, բաժան-բաժան կ'ըլլայ անոր վրայ, կ'ողջակիզուի։ Եւ ազատ է ան, այդ հոգին, եւ անազատ, մի'շտ կը փոխուի, մի'շտ նոյնն է, կը փնտռէ ճամբան, ինքզինք, իր ազատութիւնը. եւ չի գտներ զանոնք»⁶։ Ինչո՞ւ, որովհետեւ «ժայռը ինքը չէ՛, այլ՝ ծռ'վը, յաւերժական, գոյութեան կամ Շարժումի սկզբունքը, որուն վրայ՝ ինք հլու երազն է անոր»⁷։

«Միջերկրական»ը կը փակուի «Վերացումի նաւը» բանաստեղծութեամբ, յարանորոգ Սարափեանի շարժումութիւնն ու ուղեւորութիւնը բացայայտելով՝ եւ ներքին, եւ արտաքին աշխարհներու մէջ։ Միջերկրականի շուրջը վրայ մատկ կը թափառի ան՝ ետին ձգելով Փարիզն ու անցեալի յիշատակները, որոնք, սակայն, կը խռովեն զինք միմակութեամբ զգացումով. «Այն պահն է՝ երբ ես ոտքի՝ վհատամբով, ամայի/ Տարածութեան մէջ միմակ ու տաքագիր գիւ կը զգամ»։ Բայց ասիւսանմ չէ, ոչ ալ աւաղում՝ անցած-գացած օրերու, այլ՝ ներքին խաղաղութեան հասած եւ տիեզերքի, անհունի ոգիին թափանցած մարդու հասուն գիտակցութիւն. «Այստեղ, վերը, կ'երևայ ծովը ներքին, մարդկային/ Տիեզերքի եւ Տիրոջ խորհուրդներուն՝ միասին»։ Կեանքին դիմաց մերկ ու թեթեւացած հագնով կանգնած Սարափեանին համար էական է յարատեւ շարժումի եւ ուղեւորութեան մէջ ըլլալ, քանի որ մէջ գտնել ինքզինք, քեզմնաւորուիլ մտքով, արարել ու նորոգելու, «Տալ տալիք բերքս, ազատիլ եւ գոհ ըլլալ ինէ, կամ/ Տեսնել շնորհն աշխարհին եւ շնորհներն երկնատուր»։ Մէկ խօսքով՝ գոյութիւն ունենալ.

*Համայնական, անձնական լինելութեան, կատարեալ
Եւ սրբացեալ դառնալու ուղեւորումն է կարծես
Այս նաւով՝ որ յայտնութեան պէս է, դուրսէն եւ ներսէն
Կեցած՝ կ'ուզեմ երկիւղած խանդով նայիլ եւ փառք տալ*

Այս առաւօտ, անձկարեր այս խաւարին մէջ՝ դարձեալ...:

Այսպէս, ինքզինք յայտնագործող բանաստեղծը կը վերանայ մահու «մերսէն», խառնուելու համար կեանքի մեծ իմաստին,

6) Թ. Զիւրաբեան. «Ե. Սարափեան, Զափառելի երկեր», Պէտք, 1982, էջ 807.

7) Նոյն տեղը.

գոյութեան գաղտնիքին եւ իրրեւ հայ ու իրրեւ մարդ՝ կատարելութեան ու սրբացեալ արարչագործութեան մատնանին մէջ իր տաղերով անմահամալու մեծ խորհուրդին...



Ն. Սարափեանի ստեղծագործութիւնը կարելի է սեւեռել երկու կողմէն՝ արտաքին և ներքին։ Արտաքին կողմէն՝ ինչպէս յիշուած է տեղ մը։

Մարդը՝ որուն հիմնահարցն է մարդկային գոյութիւնը՝ տարածութեան եւ ժամանակի մէջ, ուր կը մամրորէ ան դարերէ ի վեր՝ իր ներքին քառու կազմակերպելով, ժամանակի շունչը ըլլալով։

Դոյապաշտ քանաստեղծ է Սարափեան, որ կը հաւատայ մահուրէն անդին կեանքին մէջ ապրելու գաղափարին՝ իր գործով, ստեղծագործութեամբ։

Հայը՝ իր ազգային-հաւաքական պատկանելիութեամբ, մշակութային արժէքներով։ Հայրենասէր քանաստեղծ է Սարափեան, որ կը տուայտի, կ'արիւնի իր ազգին ճակատագիրով, կ'ապրի ու կը ստեղծագործէ՝ հայ գրականութեան գանձարանին իր լուսնի ներդրելու համար։ Սարափեանի համար, հայը սոսկական ապրում կամ արեան ժառանգ չէ լոկ, այլ՝ հայրենիք է ու պատմութիւն, սփիւռքեան իրավիճակ ու գայն յաղթահարելու անկում կամբ։

Արուեստագէտը՝ որ գիտէ իր ապրումներուն տալ իւրաքանչեւ ու մարմին, խորութիւն եւ տարածութիւն։ Արուեստագէտը վերածելու համար, հարկ է անդրադառնալ անոր թեքմանին, լեզուին, պատկերներուն, ռեին եւ օգտագործած միջոցներուն, որոնք ամբողջ հատոր մը կը լեցնեն, որով՝ ներկայ աշխատասիրութեան ծիրէն դուրս կ'ըլլայ անոնց ուսումնասիրութիւնը։ Անհրաժեշտ է շեշտել, որ Սարափեան իր խոհերուն եւ ապրումներուն հետ քերաւ մահ լեզուի, ռեի ինքնատարութիւն։ Անոր քանաստեղծութիւնը իմացական է, հիմնուած՝ գաղափարներու վրայ, ըլլալէ առաջ զգացական եւ քնարական։ Զուսպ ու սեղմ ռե, գերիրապաշտ պատկերներ, փոխաբերութիւններու եւ համեմատութիւններու հարուստ օգտագործում, չորութեան հասնող խստապահանջ լեզու, որ աւելի մտածել կու տայ, քան կ'առթէ յուզում ու զգացում։



Սարափեան կարգալը իմացական հայնոյք է, որ կը ծնի. հեղինակին զգայնութիւններէն, անոր ուղեւորութենէն, մեզ կը հրավառէ «Տասնչորս»ի համանուագով, ապա կը տարուրերէ

ծովումն հոռու առաջ շարժումով, «Հրահաւ»ով քափ կու տայ մեր
երեսակայութեան, «Մասունցի Դաւիթ»ը կ'արթնցնէ մեր ռգե-
կան աշխարհին մէջ, որպէսզի իրեն պէս մենք ալ մաքրաջրուինք
«Միջերկրական»ի ջուրերով, ապա երկիւղածութեամբ համ-
րուենք երկինքէն ցաթող ռգեղէն լոյսը:

Ն. Սարափեան սփիւռֆառայ առաջին սերունդին վաւերա-
կան բանաստեղծն է:

(Շար. 4 եւ վերջ)

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

Գիշերն՝ փէն այս օտար՝ կ'երթամ կտրած ամէն կապ:
Աշխարհին ծայրն եմ մտնում: Եւ մինչդեռ գիւ իմ խորքէս,
Հայրենիքիս, մարդկութեան աւելի մօտ կը գգամ ես,
Աւելի շատ եռոցած՝ գիւ անոնցմէ ես կը գգամ:

Գրում եմ շարունակ, անվերջ տեսնեմ թեր ու դէմ,
Եւ Արեւելք, Արեւմուտք քաժենն իրենց միջեւ գիւ,
Մանկութեմէս՝ միշտ մայիմ օտար փէն՝ իմ երկրիս,
Եւ ըլլամ խորթ, իրրեւ հայ՝ խորթ՝ աշխարհին մոյմ ատեն:

Ի՞նչ ընել պէտք էր, որ ես չըրի, որ գիւ ընդունէր
Լոյսն ու տայի լոյս: Տաղերս են յարաշարժ ծովին պէս:
Երկիրս է միշտ երկու, գիւ՝ իր հետ երկու կը գգամ ես
Եւ միմակ եմ. ո՛չ մէկ տեղ կրցայ մտնել արմատներ:

Խաբե՞լ, խաբուի՞... Ի՞նչ ընել, որ տայի լոյս, փերեզակ
Զգգայի գիւ՝ տալով գայն՝ ունեց մեան, մինչ ունեց
Անկեղծ յոյսին, հաւատքին մերթ կը մայիմ ես սրտանց,
Թափառելով իմացման համբոյս վրայ շարունակ:

Ինչպէ՞ս եղբայր մեզ ծախող օտարներուն ըսեմ ես:
Ճամբուս վրայ քափառման իմ վհատանքս է աներ:
Ինչպէ՞ս հաւտամ մարդկութեան, երբ մարդկութիւն չեմ տեսներ,
Մինչ կը խորհիմ հաւատալ պէտք է անոր՝ երկրիս պէս:

Եկեր եմ հոս, մի՞նչեւ հոս, Թարակոմա: Պէտք էր ես
Երջանկութիւն ըսէի, քայց խոտմանք է կրկին:
Գրում եմ, որ ես մայիմ միշտ կասկածով աշխարհին:
Միջերկրականն այս դիտեմ յոյսով, յուզով խորներէս:

(Հատուած)

Ն. ՍԱՐԱՓԵԱՆ

Գ. ՄԱՊԵԱՆ

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ»Ի ՈԴԻՍԱԿԱՆԸ

-Գ-

Նոր գրուած բանաստեղծութիւններով կազմուած «Գիրք մանապաղի»-ի երկրորդ տարբերակին հրատարակութենէն (1934) ետք, Պետհրատը նոյն տարին Չարենցէն յոյս ընծայեց «Բոքիս Զնալաճէ»ն եւ «Երկիր Նայիրի»ն, իսկ 1936ին՝ «Մաճկալ Սափոյի պատմութիւնը» եւ «Պոեմներ» անուն հատորը:

Վերջինէն ետք, ամբողջ տասնութ տարի, Չարենցէն այլ-լեւս հատոր յոյս չտեսաւ խորհրդային երկինքին տակ:

Առաջինը հանդիսացաւ յարութեան վաղորդային, 1954, վեցհարիւր տասնութ էջ հաշուող ստուար հատոր մը, 15 հազար տպաքանակով, որուն 48րդ էջին վրայ տեղաւորուած էր նաեւ «Ես իմ ամուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը:

Թիշեալ հատորը ունի մանրատառ 24 էջնոց յառաջաբան մը, որ կը կրէ էդ. Թոփչեանի եւ Յ. Սալախեանի միացեալ ստորագրութիւնը:

Այդ 24 էջնոց յառաջաբանին մէջ, էդ. Թոփչեան եւ Յ. Սալախեան՝

Քսանչորսէն աւելի անգամներ մեծարած են Հոկտեմբեր-եան յեղափոխութիւնը,

Նոյնքան անգամ խուսկ ծխած են կոմունիստական պարտիան,

Տասնհինգէն աւելի անգամ նիզակ ճօճած են «Դաշնակցական ջարդարարներին» դէմ,

Երեսունէ աւելի անգամ փառաբանած են Լենինը:

Տարբեր էջերու մէջ Լենինի հետ հիւրընկալած են Ալին, Մուսիկն ու անոր կօշիկները, Ստամբուլն ու կոմունարներու պատերը, որոնց առնթեր չեն մոռցուած անշուշտ իմպերիալիստները, կապիալիստները, պրոլետարիատը, դասակարգայինը, նացիոնալիստականը, «Մայիսեան ապստամբութիւն»ն ու «Փետրուարեան աւանտուրա»ն, բայց զոյգ քննադատները ոչ իսկ մէկ անգամ յիշատակութեան արժանի համարած են «Ես իմ ամուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը:

Նոյն դասարանին մէջ իրենց սորվածները դասարանէն

դուրս նոյնութեամբ կրկնող ոճին մասին բազմիցս կրկնուած տպաւորութիւնը անգամ մը եւս ուշադրութեան յանձնելու համար, մատնանշենք էդ. Թոփչեանի եւ Յ. Սալախեանի վերաբերումին յար եւ նման երկրորդ պարագայ մը:

«Ձարեմ» խորագրեալ վերոյիշեալ ստուար հատորէն տարի մը ետք, «Միջնակարգ դպրոցի 10րդ դասարանի համար» կազմուած «Հայ գրականութիւն» անուն դասադիրք մը կազմուեցաւ Հայաստանի մէջ, ուր Ձարեմը ներկայացնելու պատիւը շնորհուած էր «Հսկայ պոետ»ին առաջին դաստիարակներէն Նորայր Դարադեանին:

Երկար ատեն պրոլետկուտին սպասարկած այս մաքրակրօնը Ձարեմը ներկայացուցած է միջին ծաւալ ունեցող շուրջ երեսուն էջերու վրայ, ուր, ինչպէս ըսուեցաւ, էդ. Թոփչեանի եւ Յ. Սալախեանի յառաջաքանին օրինակով եւ թուական առատութեամբ, իրար կը հրմշտկեն իմպերիալիստականը, սոցիալիստականը, կոմունիստականը, նացիոնալիստական ատելութիւնը եւ սովետական հայրենասիրութիւնը, ռեւոլյուցիոն բոլշեւիզմը եւ «կոնտրռեւոլյուցիոն Դաշնակցութիւնը», «Մայիսեան ապստամբութիւնը» եւ «Փետրուարեան աւանտուրան», Լենինը, որ ներկայ է էջերուն թիւին չափ, Լենինի կողքին՝ արխատաշ Ալին, մուծիկը նորէն ու իր կօշիկները եւ գրականօրէն կօշիկներուն մերձ արժէքով ազգի-ազգի խոտաններ:

Ասոնք հանդէս բերուած են Նորայր Դարադեանի տեսութեան մէջ, փառաբանուած կամ հայհոյուած են ասոնք, բայց հոս եւս ոչ իսկ մէկ անգամ չի յատակութեան արժանի համարուած է «Սո իմ ամուշ Հայաստանին»:

Հայաստանի 10րդ դասարանի աշակերտները այս բոլորին պէտք ունէին արդեօք, որ հանգուցեալ քննադատները այդքան եռանդ վատնած են իրենց գրասեղաններուն առջեւ:

Երեւի:

էդ. Թոփչեանի, Յ. Սալախեանի ու Ն. Դարադեանի խնդրոյ առարկայ գրութիւններուն մէջ, կրկնենք, կան իրենց օրին անգամ ժամանակավրէպ եւ ուրիշ անհեթեթութիւններ, պատուիրուած մեծաքանակ խունկ ու զրպարտչական ահագին թոյն, բայց Ձարեմը յաւերժութեան սահմանող կամ Ձարեմի յաւերժութիւնը երաշխաւորող հրաբորբ ապրումներն ու կիզիչ մտածումները համարեա՛ւ ամբողջութեամբ անտեսուած են, ի թիւս որոնց, ինչպէս յիշուեցաւ, «Սո իմ ամուշ Հայաստանին»:

Մոռցուող չեն ու երբեք պիտի չմոռցուին այն ժամանակները, երբ պաշտօնական մարդիկ «անուշ» սնունդներու փոխարէն՝ դժպէի բաներ հոլովել տուին բազմութիւններուն ու նորահաս սերունդներուն, երբ հոգիներուն ու մտքներուն մէջ բնաւ տեղ չկար անոնց համար:

Յետ յարութեան՝ Ձարեմի գրականութեամբ զբաղած

առաջին երեք քննադատներէն երրորդը, Նորայր Դաբաղեան, անդրադարձած է անշուշտ, որ պէ՛տք է անդրադառնալ նաեւ Չարենցի հայրենասիրական լարին ու առ այդ արձանագրած է հետեւեալը.

«Ինտերնացիոնալիզմով եւ սովետական հայրենասիրութեամբ է ներթափանցուած քանաստեղծի սովետական շրջանի ողջ ստեղծագործութիւնը:

«Սակայն հայրենիքի ու հայրենասիրութեան թեման յատուկ տեղ է գրաւել Չարենցի ստեղծագործութեան բոլոր շրջաններուն: Սէր դէպի ժողովուրդը, դէպի նրա պատմութիւնը, դէպի նրա կուլտուրան, հայրենի բնութեան գովքը հանդիսացել են նրա ստեղծագործութեան հիմնական մոտիւր: Բայց հայրենասիրութիւնը նրա ստեղծագործութեան տարրեր էտապներում գաղափարական տարրեր երանգներով է արտայայտուել:

«Նախառնուիցիոն շրջանում քանաստեղծը, աղեկտուր մորմոճով ողբալով իր ժողովրդի ծանր վիճակը, երազում էր նրա փրկութիւնը, սակայն նրա համար դեռեւս անորոշ էին ժողովրդի ազատութեան իսկական ուղիներ: Ստեղծագործութեան ռեալիցիոն շրջանում Չարենցի հայրենասիրութեան քննարկը հնչում է նոր ուժգնութեամբ ու թափով: Բանաստեղծը Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ ռեալիցիայի մէջ տեսնում է ողջ աշխատանքի մարդկութեան, ինչպէս եւ իր ժողովրդի ազատութիւնը:

Այդ շրջանում Չարենցի հայրենասիրական պոեզիան հարստանում է իր ժողովրդի ազատագրական ուղու նկարագրութեամբ: Ստեղծագործութեան այս էտապում հայրենիքի գաղափարը եւ հայրենասիրութիւնը նրա ստեղծագործութեան մէջ միաձուլուում է Հոկտեմբերեան ռեալիցիայի, սոցիալիզմի գաղափարի հետ: Հոկտեմբերեան ռեալիցիան, լինելով հայ ժողովրդին ցոյց են տալիս նրա լուսաւոր ուղին, նրան պայքարի են կոչում «հայրենի» եւ օտար շահագործողների դէմ» (էջ 114-115):

Եղիշէ Չարենցի հայրենասիրութեան անդրադարձող տեսութեան մէջ «Նա իմ ամուշ Հայաստանի» բանաստեղծութեան անսեսումը ըմբռնելի վերաբերում մը չէ, բայց ընթերցողը ինչն էր չկրցաւ ըմբռնել ու դեռեւս կը շարունակէ չըմբռնել այն անըմբռնելի կարմիրին աշկերտած մարդոց թուղթերուն ու կեցուածքներուն մէջ:



էդ. Թովման, Յ. Սալախեան, Ն. Դաբաղեան:
1954ին երեքն ալ բերան չառին «Նա իմ ամուշ Հայաստանի»ն:

Բանաստեղծին ծննդեան 80ամեակին (1957), այսինքն՝ քիչ առաջ յիշատակուած նշանաւոր յառաջարանէն ընդամէնը երեք տարի ետք, յառաջարանին մէջ բոլորովին մոռցուած «Ես իմ ամուշ»ը, յառաջարանին հեղինակակից էր. Թովհեանի կողմէ պաշտօնապէս յայտարարուեցաւ Եղիշէ Չարենցի «յաւագոյն բանաստեղծութիւններէ մէկը», որ գրուած էր «հայ ժողովրդի պատմութեան այդ մռայլ օրերին»:

Այսինքն՝ Հայաստանի խորհրդայնացումէն առաջ, 1920ին:

Այդ մասին հեղ մը խօսուած է կանխող էջերուն մէջ:

Անցնինք:

«Ես իմ ամուշ»ը բոլորովին անտեսած յառաջարանին միւս հեղինակակիցը՝ Յ. Սալախեան, Թովհեանի արտասանած ճառին օրօք եւ Թովհեանի պէս ինք եւս անդրադարձաւ «Ես իմ ամուշ Հայաստանի» բանաստեղծութեան, իր «Եղիշէ Չարենց» անուն մենագրութեան (1957) մէջ, արտագրելով զայն ամբողջութեամբ, արտագրելէ առաջ գրելով:

«Բանաստեղծի քաղաք մտքումնեղի արդիւնքն է հանդիսանում նրա «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծութիւնը, որը գրուած է «Տաղարան»ի վերջում: Դա Չարենցի լաւագոյն ստեղծագործութիւններից մէկն է, նրա տաղանդի ազգային իւրայատկութեամբ ամկրկնելի վկայութիւնը» (էջ 56):

Նոյն իրականութեան առջեւ օր մը լուութիւն եւ ուրիշ օր չունդալից խօսք:

Երբեմն այնպէս կը թուի, որ «Ես իմ ամուշ»ի հանդէպ ցոյց տրուած երկուութիւնը այնքան ողբերգական չէ, որքան ողբալի են այս մարդոց մտաւորական կենսագրութեանց կամակոր ելեւէջները:

●

Յետ յարութեան՝ Չարենցի գրականութեամբ զբաղած առաջին երեք քննադատներէն երրորդին անգամ մը եւս հանդիպելով լսենք, եւ անշուշտ մեծ զարմացմամբ լսենք, թէ ան՝ Նորայր Դաբաղեան, նոյն տարին լոյս ընծայած «Եղիշէ Չարենց» մենագրութեան մէջ յանդգնած էր ընթերցող լայն հասարակութեան յիշեցնել «Ես իմ ամուշ Հայաստանի»ի գոյութիւնը, գոր տարի մը ետք նախամեծար համարած էր խնամքով գաղտնի պահել աշակերտներէն, ինչպէս պարզուեցաւ քիչ առաջ յիշատակուած տեսութեան երկայնքին:

Արտագրենք 142 էջոց մենագրութեան մէջ Չարենցի հայրենասիրութեան ու «Ես իմ ամուշ Հայաստանի»ի մասին իր մեկնարանութեան ամբողջութիւնը, որպէսզի որեւէ մուկ կէտ չմնայ հետաքրքիրներուն համար:—

«1920-1921 քուակաճներին Չարենցը Սայաթ-Նովայի մամ-

նուրբամբ գրում է իր «Տաղարան»ը, որը գուրկ է նրա ստեղծագործությանը յատուկ ունիվերսիտետ տարերից, չունի իմֆունդում էդելոգիական նշանակություն, սակայն գրուած է մեծ արուեստով եւ ցոյց է տալիս, որ Զարեմցը նմանուելու դէպքում էլ պահպանում է իր ստեղծագործական իմֆնատիպութիւնը: «Տաղարան»ում գետեղուած «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը Զարեմցի ուշագրաւ գործերից մէկն է:

«Զիշտ է այն, որ այս բանաստեղծութեան մէջ պետք դեռեւս հայրենիքի եւ հայրենասիրութեան գաղափարը չի միաձուլել սոցիալիզմի գաղափարին. այդ նա կատարում է եւնց այս եւ հետագայ շրջանում գրած բազմաթիւ այլ բանաստեղծութիւններում: Ձեռնած դրան, բանաստեղծութիւնը հայրենասիրական ազնիւ զգացումների իմֆնարուիս պոթկում է: Պետք կարողացել է այստեղ «Հայաստանի արեւահամ բառ»ը, «մեր հին, լացակումած սագի նուագը», «արմանման վարդերի բոյրը», «Լուսէ լմերի» գոյները միաձուլել իրար: Այդ բանաստեղծութեան մէջ մեմֆ տեսնում ենք նաեւ Հայաստանի ամառուայ արեւի շողերը, ձմեռուայ «վսեմ, վիշապաձայն բուբը», այստեղ խօսում են նաեւ մեր հագարամեայ քաղաքների քարերը, «մթնում կորած խրեթների սեւ, անհիւրընկալ պատերը», որոնք պատմում են մեր աշխատաւոր ժողովրդի անցեալ թշուառ կեանքի մասին:

«Բանաստեղծութիւնը գրուած է բարձր արուեստով, հայրենասիրական շերտ զգացմունքներով եւ ոչ մի կապ չունի նացիոնալիզմի հետ» («Եղիշէ Զարեմց», *Երեւան*, 1954, էջ 84-85):

Եթէ նացիոնալիզմի հետ կապ չունի, որո՞ւ հետ կապ ունի ուրեմն «Ես իմ անուշ Հայաստանի»:

Կոմունիզմի՞ հետ:

Սովետական հայրենասիրութեան հետ:

Որո՞ւ:

Առաջ, երբ կարմիր խորշակները տարբեր մարզերու կարգին սաստկօրէն կը փչէին նաեւ գրական կալուածներէն ներս, ըստ Նորայր Դարաղեանի, «Ես իմ անուշ»ը սերտօրէն կապ ունէր «նացիոնալիզմի» հետ, այն ալ «մանր բուրժուական յղուած ազգայնական հոգեբանութեան հետ»:

Կարդանք պարբերութեան ամբողջութիւնը.

«Ես իմ անուշ»ի «իմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հեֆիաթ չկայ» եւ յաջորդ տողերում բացարձակապէս Զարեմցը հանգէս է եկել մանր բուրժուական յղուած ազգայնական հոգեբանութեան ու աշխարհայեցութեան մի վարիանտ» («Գրական դիրքերում», 1927, թիւ 3-4):

Երեսուն տարի առաջ «Ես իմ անուշ»ի դէմ սարքուած խաչակրութիւնը եւ երեսուն տարի ետք անոր շնորհուած մեծարանքը նոյնարժէք վերաբերումներ են անշուշտ, այ-

սինքն՝ ոչ մէկ արժէք ունին ու աւելորդ է յիշեցնել, որ հոս կը յիշատակուին նշանաւոր բանաստեղծութեան պատմութիւնը հնարաւոր չափով մը ամբողջ տեսնելու համար պարզապէս:



Ինչպէս կ'երեւի, էդ. Թոփչեան, Յ. Սալախեան, Ն. Դարադեան եւ այլք բարեփոխեցին իրենց կեցուածքները՝ «Սո իմ անուշ»-ի նկատմամբ, ոմանք վերցուցին բանաստեղծութեան վրայէն լուսնի տեսքը, ուրիշներ տրամագծօրէն հակառակ կարծիքներ բանաձեւեցին անոր մասին եւ երրորդ խումբ մը չարենցեան գոհարը ինքն իր մէջ զնահատելով հանդերձ, նոր վարկածներով մթագնեցին անոր ծննդոցը:

Եղած են ու կան անշուշտ հարցեր ու երեւոյթներ, որոնց բարդ հանգամանքին բերումով օրին դժուար ընկալուած են, այլ աստիճանաբար բացայայտած են իրենց գաղտնիքները ու ընտրանիին հետ մեծարուած են նաեւ խոնարհ դասուն կողմէ:

Բայց արեւու լոյսին պէս պայծառ «Սո իմ անուշ Հայաստան»-ն բանաստեղծութեան պարագային կարելի չէ նման չքմեղանքներով մեղմել ամբողջ երեսնամեակ մը ու աւելի ժամանակ անոր հանդէպ բուրժ վերաբերումներով հանդէս եկած մարդոց բթութիւնը:

*
* *

Փակագիծ մը եւս.-«Կարմիր պոետ»էն հատոր մը լոյս ընծայելու կարմիր իշխանութիւններուն պաշտօնական թոյլտուութեան վաղորդայնին, պաշտօնական քննադատները, ինչպէս պարզուեցաւ վերը, ատեն մը լուրեայն ուրացան «Սո իմ անուշ Հայաստան»-ն եւ կարճ ժամանակ մը ետք բարձրաձայն մեծարեցին անոր խորհուրդը, բայց մտքի սպասարկու ուրիշ տարրեր, պատմաբանները այս անգամ, շարունակեցին անոր առջեւ ձեռնպահ մընալ երկար ժամանակ: Ակնարկուած «ձեռնպահութիւնը» բացայայտ դարձաւ ի մասնաւորի «Հայ ժողովրդի պատմութիւն» շարքի եօթներորդ հատորին մէջ, որ լոյս տեսաւ 1967ին:

Եօթներորդ ալդ հատորը իր հինգերորդ բաժինը (410-497) նուիրած է Սովետական Հայաստանի մշակութային բնագաւառի գրական ճիւղի առաջին քսան տարիներուն: Չարենցի յատկացուած էջերուն վրայ ընթերցողը կը հանդիպի «Ժամանակի շունչով» գրուած անոր ժամանակավրէպ բոլոր անհեթեթութիւններուն՝ զուր փնտելով յաւերժաշունչ այն մէկը, որ ամէնէն աւելի իրաւունք ունէր տեղ գրաւելու «Հայ Ժողովրդի պատմութիւն» շարքի եօթներորդ հատորին մէջ, որ լոյս տեսաւ 1967ին:

պատմութիւն» հատորին մէջ,- «Եւ իմ ամուշ Հայաստանի»ն:

*
* *

Կանխող էջերուն մէջ, էդ. Թոփչեանի եւ Վարդգէս Պետրոսեանի գրիչներուն տակ, ընթերցողը անգամ մը տեսաւ «Եւ իմ ամուշ»ի ծննդոցը այլասերող անհեթեթութիւնները, ուր առաջինը՝ էդ. Թոփչեան, Դաշնակցութեան դէմ գրուած ըլլալու շարժառիթ մը կը շնորհէր անոր, իսկ երկրորդը՝ Վ. Պետրոսեան, Հոկտեմբերեան աղբիւր մը:

Առաջինը, որքան գիտենք, իր մեկնարանութեան մէջ, դաշնակից չունեցաւ, մինչ Վ. Պետրոսեան մինակ չմնաց իր կարծիքին հետ, թէ՛ ինք հետեւեցաւ ուրիշներուն եւ թէ հետեւորդներ ունեցաւ «Եւ իմ ամուշ»ը Հոկտեմբերեան գոյներով պճնազարդելու եռանդին մէջ:

Յիշենք միայն մէկը, 1967ին լոյս տեսած «Զարեմցը եւ Հոկտեմբերը» անուն աշխատութեան հեղինակ Արշալոյս Բաբայանը, որ առանց աջ եւ ահակ նայելու, կը գրէր.

«Հայ պոեզիայի ամթառամ ծաղիկներէց մէկը «Եւ իմ անուշ Հայաստանի» ամմամ քանաստեղծութիւնն է, որ կարող էր գրել Հոկտեմբերի կրակով ջերմացած քանաստեղծը, որն այլեւս չի գոգում իր հայրենիքի նախադրի համար, կարող է փառաքանել չքնաղ աղբիւնների «հեզամկում պարը», քայց երբեք չտագմապել նրանց քախտի համար» (էջ 53):

Ի լուր Հայաստանի վերահաստատուած անկախութեան, երբ 1919ին Թիֆլիսէն Կարս կը փութար Զարեմց եւ յետնկեալ գիւղերէն մէկուն մէջ ուսուցչական պաշտօն մը կը ստանձնէր, Հոկտեմբերեան յոյսեր փայփայելու միջոցորտի մը մէջ չէր գտնուեր, իսկ երբ Հայաստանի մայրաքաղաքին մէջ իր մասին տրուած դասախօսութեան հաճոյքը վայելելու համար կը շտապէր դէպի իր փառքը, Երեւանը ցարիցիներէն արկածախնդրութիւններով լուսաւորելու միտք մը չէր փայփայեր հարկաւ, այլ կը ցնծար ազատ Հայրենիքի մէջ իր գործը աննախապաշար ոգիով գնահատած մարդերը ողջունելու պապակով:

Հոգեկան այս միջոցորտին արդիւնք պէտք է համարել նաեւ Հարենցեան շարք մը անխառն բանաստեղծութիւններու ծնունդը, ի շարս որոնց՝ նաեւ «Եւ իմ ամուշ Հայաստանի»ն:

Ըսել, որ՝ «Եւ իմ ամուշ Հայաստանի»ն օտար ուժի մը թելադրած վստահութեամբ գրուած բանաստեղծութիւն է, սրբապղծութեան համազօր պնդում մը կը թուի ըլլալ: Ըստ մեր Հոկտեմբերեաններուն, ուրեմն, եթէ Հոկտեմբերը չպայ-

Թէ՛ր Մոսկուայի մէջ ու «ամբողջները» յաղթանակներ չարձանագրէին ցարիցիներէն հարթապայքերուն ու հեռու-հեռաւոր սառցադաշտերուն վրայ, Չարենց իր հոգիին մէջ երբեք պիտի չզգար մեր «արեւահամ բառ»երուն հրաշագործ սաղմերը, պիտի չհնչեցնէր «մեր հին սագի ողբանուագ լացակուծած լար»երը, պիտի չզգար Հայաստանի «ծաղիկների ու վարդերի բոյրը վառման» եւ աչքերը յաւիտեանս գոց պիտի պահէր «նայիրեան աղջիկներէ հեղանկուն պար»ին դիմաց:

Անհրաժեշտ չէ բոլոր «սիրում»ներուն թւումընել, աւելցընել պէտք է միայն, որ խառնուածք, ժառանգութիւն, մասնաւորութեամբ էութիւն ու բնական բխում ըստած ուժեր կան, որոնց հիմամբ դրսեւորուած գեղեցկութիւնները ճիշդ չէ օտար իրադարձութիւններու կապել կամ առնչել ժամանակաւոր երեւոյթներու, վառնգի, ինչպէս անգամ մը եւս կը հաստատուի՝ ժամանակաւոր իրադարձութիւններուն ու առհասարակ բնոյթներուն միջեւ ընդհանրութիւններ տեսնելու ածապարնքը երբեք պայծառ արդիւնքներու չէ յանգած:

Մեր Հոկտեմբերեանները պէտք է բաւարարուէին Հոկտեմբերեան խառնափնթոր տարիներու ուղղակի հետեւանքը եղած Չարենցի կապկազեան թամաշաներով եւ իրեն «անգին ժամեր» արժած միւս հաշմանդամները խնկարկելու եռանդով, որոնց շարքին սրբապղծութիւն պիտի ըլլար Հոկտեմբերեան պատճառներ վերագրել «Սո իմ անուշ»ի ծննդոցին:

Արշալոյս Բարայեան չէ բաւարարուած նոյնիսկ երեք տարւան հասակ ունեցող Հոկտեմբերով, այլ բաժին հանած է նոյնիսկ «Սո իմ անուշ»ի ծննդեան օրերուն դեռ չծնած... Սովետական Հայաստանին:

«Չարենցի քանաստեղծութեան մէջ զգացում եմ պոետի սրտի թրթիռները, քայց ոչ տագնապները: Կայ անասեման հայրենասիրութիւն, քայց ոչ վախ. սիրածին կորցնելու, վտանգի ու ահի արտայայտութիւն չկայ այնտեղ, կայ հաւատ ու համոզմունք, կայ մեծ, համապարփակ սէր: Իսկ այդ բոլորը նրան տուել էր Հոկտեմբերեան յեղափոխութիւնը, ոգեշնչել՝ Սովետական Հայաստանը» (էջ 54-55):

«Չարենցը եւ Հոկտեմբերը» գիրքին հեղինակը երեւի արդէն ընդունած է, որ «Սո իմ անուշ Հայաստանի»ն գրուած է 2 Դեկտեմբեր 1920էն ետք, Հայաստանի խորհրդայնացման օրերուն, ինչ որ ճիշդ չէ բնաւ, ու հարկ չկայ այդ մասին կրկին խօսք բանալու...

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ



(Յեղիմակ՝ Սուրեն Դանիելյան)
Իսթանպուլ-1996

Հայ մամուլին մօտեն հետադարձվող մեկտառ ըլլալու հմ հաւա-
մարար, թէ վերջին քանի մը տարիներուն անմախքաց ու անօրի-
նակ հետաքրքրութիւն մը արթնցած ըլլալ կը թուի ժամանակակից
պոլսահայ գրականութեան մկատմամբ: Հայաստան թէ Սփիւռք,
հաւասար չափով, սեւեռումի կ'ենթարկեն վերջին 40ամեակին Վոս-
փորի ւսումնին ծաղկած ու առ այսօր իր խանդը առկայծ պահող
գրական բազմանդամ «չոկատ»ի մը ստեղծագործական արգասիքը,
մերթ յօդուածաշարքեր մուրեւելով անոնց, վերլուծելով այնտեղ
մշակուած գրականութիւնը, մերթ առանձին հատորով վերահաս-
տատելով անոնց տեղը սփիւռքահայ գրական անդամատանին մէջ
(յիշեղ Սեղա Մաղիկեան-Տէմիրճեանի մտաւորաւ մատենան-1994),
մամուլի բացառիկ թիւերով ողջունելով անոնց վաստակը (Պէյրութի
«Շիրակ»ը ի մօտայ լոյս կ'ընծայէ մեամ թիւ մը), եւ տակաւին
գրական մրցանակներ շնորհելով, տարբեր գաղութներու մէջ յօրե-
լեմական ճեռնարկներ կազմակերպելով կամ պատուելով հոն այցե-
լող պոլսահայ գրչի մշակները:

Հետաքրքրութիւններու անող ու գնահատելի այս թափը, եթէ
մէկ կողմէ արդար հատուցում մը կը մկատուի անբարեկամատ
պայմաններու մէջ արեւմտահայ գրականութեան մայր ուղին հար-
թեալ պահող բոռ մը գրագէտներու խիզախ միգրում մկատմամբ,
միւս կողմէ սակայն, թերեւս, անուղղակի արդիւնքն է սփիւռքեան
այլ ցամաքամասերու վրայ գրական տարողունակ շարժումի մը
չգոյութեան, մեր գրականութեան վիճակուած հոգեկումնի երեւոյ-
թին, կենսատրող, շնչող, բարձրակէտեր մուսնող ու տիրական
մերկայութիւն մը զգացնող գրական ալիքի մը բացակայութեան,
յա՛տկապէս վերջին երկու տասնամեակներուն: Այլ խօսքով, Պոլսէն
դուրս (մեր անուամուով մը՝ Իսթանպուլ), Սփիւռքի բոլոր գօտի-

Ներում մէջ Ամերիկայէն Փարիզ, Պէյրութ, Հալէպ ու Թեհրան– հայ գրականութիւնը աստիճանական ընկրկում մը կ'ապրի այսօր, մասնաւորաբար որակի տեսակէտէն:

Հիմա, բոլորին աչքերը յառած են կրկին դէպի Պոլիս, արեւմը– տանայ գրականութեան երբեմնի մշակութային ոստանը, որ կորսընցուցած Ելլալով հանդերձ իր մանանչող փայլքն ու փառքը, յաջողապէս ու անընդմէջ կրցեր է վառ պահել կամբողջ Միսրոպին, թերթ, գիրք ու մատնան անպակաս է ձգեր իր սեղանէն, անհամար պատմը–ւածքներ է գրեր, վէպեր է հրատարակեր ու քերթողական կայունածին մէջ ալ բարձրագիւր ամպիռներ է գրաւեր: Մնձուրի, Պիպեռեան, Ջանեռաւ, Խրախունի, Հատտէնեան, Շիկաներ, Կոմիկեան, Կոպէլեան, Սարըասլան եւ տասնեակ այլ գրիչներ ճանաչում գտած սիրելի անուններ են հայ ընթերցողին:

Փաղանգ մը անա, որ մօր–մօր սկսած է հետաքրքրութիւն առթել մանաւ Արաքսի միւս ափին, հայրենի մեր գրագէտներուն մօտ: Սփիւռքի տարագիր գրականութիւնը անաչառ ակնոցով քննարկելու իր փորձերուն մէջ, Երեսն մասնաշատուկ ուշադրութիւն սկսած է սեւեռել պոլսահայ մերօրեայ գրական ածուին վրայ. մօյնիսկ «մասնագէտ»ներ ի յայտ եկած են այդ կայունածին մէջ:

Բնիկ երեսանցի Փրոֆ. Սուրէն Դանիէլեան մէկն է անոնցմէ: Տարիներէ ի վեր հայ գրականութիւն կը դասաւանդէ Երեսնի «Խ. Արովեան» մանկավարժական հիմնարկին եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ձեմարանին մէջ: Իր գրչին կը պատկանին «Ամերիկահայ վիպագիրներ» (1990, Երեսն) եւ «Միջուռքահայ վէպը» (1992, Անթիլիաս) ծաւալուն երկասիրութիւնները, բացառաբար առընչուած՝ արտասահմանի հայ գրականութեան: Իրեն կը վերաբերի այն հաստատումը, թէ «վերջին տասը տարիների ընթացքում մի առանձին սիրով է կապուած պոլսահայ նորագոյն գրական ընթացքին: Առաջին հերթին մա զա բացատրում է Սփիւռքի մէջ այդ գրականութեան հզօր շնչադրութեամբ, մրանով, որ Պոլսոյ ոստանի յարատեւութիւնը, խոշորագոյն անհատականութիւնների առկայութիւնը այնտեղ՝ Հայոց Կեցութեան խորհուրդն են պահում ժամանակի մէջ»:

Այս հաստատումին որպէս անմիջական արդիւն՝ հրապարակի վրայ է անա պոլսահայ գրականութեան ամէնէն վաւերական դէմքերէն մէկուն՝ Սուրբուսի հատոր մը՝ «Ռուպէր Հատտէնեան– ներաշխարհի գեղարուեստական քննութիւն» խորագրով:

Անմիջապէս դիտել տանք, թէ Հատտէնեան համափիւռեան առումով ալ լայն ժողովրդականութիւն վայելող ու շատ կարգաւորող ոսկեգրիչ արձակագիր մըն է՝ Արամ Հայկազի, Վահրամ Մալեանի եւ Անդրանիկ Մատուկեանի մօտ: Հեղինակն է թատերգութիւններէ, պատմուածքներէ, խոհագրութիւններէ, վէպէ, յուշագրութիւններէ եւ տպաւորապաշտ էջերէ կազմուած բազմաթիւ հատորներու: Եւս առաւել, 30 տարիէ ի վեր խմբագիրն է «Մարմարա» օրաթերթին, որուն էջերուն մէջ կատարելապէս յաջողած է գուգակցել գրագէտի

ու լրագրողի իր բնատուր շնորհքները՝ հաւասարակշռեալ դաշինք-
 քով մը: Արագ ու առատ արտագրող գրող մը ըլլալով, որ ամենօրեայ
 ներկայութիւն մըն է իր իսկ դիեցուցած *«Մարմարա»*ի *«Յուշա-
 տետր»* սիւնակին մէջ, Ռ. Հատտէճեան դարձած է տեսակ մը
 խորհրդանշող պոլսաեայ ժամանակակից գրականութեան, *«առանց
 որի մասնակցութեան՝ Պոլսում զժուար է պատկերացնել հոգե-
 ւոր-մշակութային որեւէ ձեռնարկ կամ նախաձեռնութիւն»*, ինչ-
 պէս կ'ըսէ Գորատիպ Գրէին եեղիմակը:

Բանասէր Սուրէն Դանիէլեանի ներկայ հատորը կը քաղկամայ
 168 էջէ, յոյսին եկած՝ *«Մարմարա»*ի սեփական տպարանէն:

Առաջին 50 էջերու տարածքին, կը բնութագրուի Ռ. Հատտէճե-
 անի դիմանկարը՝ կենսագրական տուեալներու ընդմէջէն, համեմ-
 ւած՝ ենթակային յուշագրական նոթերէն վերցուած հետաքրքրական
 ինչ-ինչ տուեալներով:

Ծնած 1926ին, Պոլիս, Հատտէճեան շրջանաւարտ կ'ըլլայ Բան-
 կալքի Միփթարեան վարժարանէն (1944), դասընկեր ունենալով
 ապագայ գրողներ Վարդ Շիկահերն ու Գեղամ Սեւանը: Այս վերջինը,
 որ Հայաստան պիտի ներգաղթէր հետագային, գաւառապիտան
 պիտի զլանար իր վաղեմի ընկերը *«գրող ճանաչել մինչեւ առնը-
 ւազն 80ական թթ. երկրորդ կէսը»*: Այս խորթացումը երկու
 դասընկերներուն միջեւ, որ ի յայտ կու գայ քառական կանուխ, Ս.
 Դանիէլեան կը մեկնաբանէ գաղափարական գումարումով ու
 հայեացքներու տարբերութեամբ. *«Ռուպէրն «անտարբեր» է ընկե-
 րային-քաղաքական, ազգային պայքարի հանդէպ, հայեցող է,
 փիլիսոփայ, մինչդեռ ինքը գաղափարապաշտ է, «ձախակողմ-
 եան»։ ...Յաւային այն է, որ դպրոցական պարզ յարաբերութիւն-
 ների մէջ Գ. Սեւանը բերում է դասակարգային գատիչ շերտը՝
 ընկերութիւնը իմաստաւորելով հէնց այս տեսակէտից»*:

Հատտէճեանի գրական առաջին երկչոտ Քայլերը Բաղնիքողմե-
 րը կ'ըլլան արձակագիր Վարուժան Անեմեանն ու խմբագիր Խաչիկ
 Ամիրեանը: Այս վերջինն էր, որ երիտասարդ Ռուպէրին մէկ պատմը-
 ւածքը պիտի տպէր իր խմբագրած *«Լէւի»* ամսագրին մէջ, 1946ին:
 Տարիներ յետոյ, արդէն փայլուն գրագետ, Ռ. Հ. հարց պիտի տար,
 թէ *«այդ շարժումով հայ գրականութիւնը ի՞նչ շահեցաւ, չեմ
 գիտեր, բայց գիտեմ, թէ ես շահեցայ հայ գրականութիւնը»*
 (*«Սան»*, 1968, քիւ 1-2):

1950ին Հատտէճեան կ'աւարտէ Պոլսոյ համալսարանի գրական
 ամպիոնի փիլիսոփայութեան ճիւղը: *«Մարմարա»* օրաթերթը, դեռ
 այդ օրերէն, կը դառնայ իր գրական իսկական աւագանը: Տեսակ մը
 դպրոց, որուն երդիքին տակ կը թրծուի ապագայ գրագետը: 1967ին,
 երբ կը երաւիքուէր ստանձնելու նոյն այդ թերթին խմբագրապետու-
 թիւնը, տեղ մը կը գրէր. *«Ներկայիս՝ չատեր, նոյնիսկ մտերիմ
 բարեկամներ, կը խորհին, թէ հայ գրականութեան դաւաճանած
 եմ՝ ստանձնելով «Մարմարա» օրաթերթի պատասխանատու տնօ-*

րհնութիւնը Սա չեմ ձայնակցիր անոնց եւ կ'ուզեմ որ, ընդհակառակն, այդ նուիրումիս մէջ տեսնուի հայ գիրին հանդէպ անշահախնդիր եւ անխառն սիրոյ մը անհերքելի ապացոյցը» («Սամ», Նշեալ թիւը):

Դանիէլեան դիտել կու տայ, թէ «Մարմարա»ի նոր խմբագիրը «թերթի ուղղութիւնը զուգակցեց իր ըմբռնումներին եւ ճաշակին (...) եւ որ տարօրինակն է, խմբագրապետ դառնալուց յետոյ Ռ. Հատտէճեանը ապրում է գեղարուեստական աւելի արդիւնաւէտ կեանքով: Գրում է անհամեմատ շատ, գրում է որակով, գրիչ հեղինակութիւնն ստիպում է իրեն սթափ լինել բոլոր իրավիճակներում»:

Ակնարկելով Հատտէճեանի ծանօթ «Թուշտետր»երուն, որոնք 1981էն ի վեր ամսափամ լոյս կը տեսնեն «Մարմարա»ի Ա. Էջով, Դանիէլեան իրաւացիօրէն կը շեշտէ, թէ ատոմէ աղերս չունին չոր ու ցամաք հրապարակագրութեան հետ, այլ «խոր փելիսոփայական, գրական-հասարակական, անտարակոյս գեղարուեստական դրոշմով, հայեացքով մտորումներ են՝ ապրած ժամանակի, կեանքի, անհատի եւ միջավայրի, մարդու ներաշխարհի հզօր տրոփի մասին»:

Գրքին երկրորդ բաժնով, հեղինակը կատարելապէս մուտք կը գործէ իր հերոսին «ներաշխարհ»էն ներս, կատարելու համար «գեղարուեստական բնութիւն» մը: Բնական-տեսական այս փորձը մկատի չունի Հատտէճեանի վաստակին ամբողջութիւնը (որ հատորներու միւթ կընայ ծառայել հասնաբար), այլ կը սահմանափակուի լոկ անոր պատմութեան ժողովածուներուն, միակ վէպին ու թատերական չորս գործերուն ընդհանուր մթնոլորտով:

Այսպէս, դեգերելով Հատտէճեանի «Բառասխալ» (1972) ու «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» (1979) պատմը-ւածքներու ժողովածուներուն շուրջ, Ա. Դանիէլեան նախ կ'ընդգծէ, թէ այնպէս ինչպէս իր միւս գործերուն պարագային, ասոնց մէջ եւս՝ հեղինակին «գրական կայուն մտածութիւնը» հոգեվերլուծութիւնն է, որուն թիրախ են հաւասարապէս մեր ընկերութեան բոլոր զասակարգերը անխորհրդ: Հատտէճեան չի հետեւիր զասական գրականութեան մէջ մկատելի այն ուղեգիծին, որ սեւեռումի տակ կ'առնէ միայն «հզօր լիցքի տէր հերոսների հոգեբանական դաշտը», ինչպէս պատահած էր, օրինակ, Միրվանգադէի «Քառս» վէպին մէջ: Ընդհակառակն, ան հարուստին թէ աղքատին կը նայի միեւնոյն հեռաւորութենէն, անոնց հոգին կը պնդէ նշդրակի միեւնոյն հարւածով:

Այս նոյն մերձեցումը առկայ է նաեւ գրագետին «Առաստաղ» վէպին մէջ (1983, վերջերս լոյս տեսաւ նաեւ Քրէքլէն թարգմանութեամբ), որ կը մկատուի իր «ստեղծագործական բարձրակէտը», ու նաեւ՝ երկրորդ կարեւոր վիպային նուաճումը պոլսահայ արդի գրականութեան մէջ, Արեգ Տիրազանի «Փորձիկաւ»էն յետոյ (1979):

Այսուհանդերձ Դանիելեան կը մշէ, որ փիլիսոփայական խորքի գերակշռութիւնը այնտեղ՝ երբեմն կը վնասէ «գեղարուեստական պատումի ծաւալման հնարաւորութիւններուն» ու վիպային մթնոլորտը կ'առաջնորդէ միապաղատութեան:

Հատտէճեանի հոգեբանական սուգումները զգալի են անշուշտ իր թատերգութիւններուն մէջ ալ:— «Վաստակը» (1976), «Կեանքի մը երեք կիրակիները» (1959), «Կիրականօրեայ Հաշուեփակ» (1973) եւ «Մահը ա՛յս է արդեօք»: Բայց աստուծոյ այնքան մը քորով ու ճարտարութեամբ մերմուծուած են թատերական յիշեալ երկերուն մէջ, որ «չեն մնշում քեմական գործողութեան ընթացքի վրայ»:

Դանիելեանի հգրակացութիւնը այն է, թէ Ռ.Հ. «աշխարհի վրայ պահուած է առնուազն երկու լուսաւոր ուժ՝ յանձնառութեան գիտակցութիւնը, որ տարրալուծուած է գրեթէ բարձր առաքելութեան մէջ, եւ անանձնականութեան վեհութիւնը, երբ հոգիդ վերածուած է ուրիշ հոգիների ու սրտերի հանդիպավայրի, սիրոյ անմնացորդ խառնարանի»:

*
* *
*

Նորատիպ այս հատորը, որ հայրենի քանաւորի մը քերած արժեւորումն է սփիւռֆառայ գրագէտի մը վաստակին մկատմամբ, ճանաչողական իմաստով կարեւոր է այլ մըն է մոյնիմէն հայրենի գրականագիտութեան համար: Գործը զերծ չէ սակայն քանի մը վերբերէ, որոնք գրանցին մեր ուշադրութիւնը:—

Ա) Օտար եւ դժուարահունչ քառերու առատ գործածութիւնը խախտած է պատշաճութեան սահմանները: *Կոմպոզիցիոն, ստերիօտիպ, էկզիստենցիալիստական, սուբյէկտիւ, մետաֆիզիկա, նատուրալիստական, էտիկոզ, ֆաբուլային*, եւայլն, եւայլն, հայերէն հոմանիշներ չունի՞ն: Անբուժելի այս ախտը, որ դժբախտաբար հասարակաց երեսոյթ մը դարձած է արեւելահայ մեր գրչեղբայրներուն մօտ, եւ որմէ ձերբագատուելու դժուարութիւնն ունին կ'երեւի, կրնայ խոչեցուցած ըլլալ առաջին հերթին... Ռ. Հատտէճեանը, որ իր լեռնակուտակ վաստակին մէջ միշտ ալ հեռու մնացած է օտարոտի քառերէ, հայերէն լեզուն գործածելով իր ամէնէն մաքրամաքուր, մախանձելի ու յարդագերծ հանդերձանքին մէջ:

Բ) Բարդ ու խրթին (հետեւաբար՝ անորոշ) տասնեակ մախադասութիւններ տեղ-տեղ շնչահեղձ ընելու աստիճան խեղդած են շարադրուած գաղափարները: Օրինակ՝ «Հոգեբոյժի եւ մտազարների աշխարհը գեղարուեստական շնչառութիւն է ձեռք բերում ո՛չ թէ պատալագիտի բացառիկ օրինակների նպատակադրութեամբ, այլ գուտ փիլիսոփայական խորքով՝ աշխարհի գոյարանական առեղծուածը անհատին կլանում է ինչունների պատճառային անլուծելիութեամբ» (էջ 54): Կամ՝ «առօրէական մտքի անսպա-

սելի դարձնալով, մեռաֆիլիք, հայեցողական մտադրոյթները համաչափուամ են, ստուգուամ ներանձնական ընդջրհայ շերտերում» (էջ 97)։

Զքնա՛ղ ճախդասութիւններ...

Բայց որպէսզի վերադարձած ըլլամք մեր բարի տրամադրութեամբ ու այդպէս աւարտեմք գրական այս ակնարկը, ստորեւ անպաճնոյմ ու պարզօրէն վսեմ հատուած մը Խ.Հ.-ի գրիչէն, ուր պոյսանայ արժէքաւոր գրագէտը կը բնութագրէ Հայրենի Հողին վրայ գոյատեւման պայքար տանող իր հարագաւ ժողովուրդը։

«Ի հեմուկս երկրագումտին վրայ իրեն վիճակուած խիստ ու խոժոռ մէկ հողաշերտին եւ ի հեմուկս իր դիմաց ցցուած պատմական շատ աննպաստ պայմաններու՝ հայ ժողովուրդը կը ցած է ինքզինք պահել որպէս քաղաքակիրթ ժողովուրդ մը։ Քարքարոտ լեռան կողին յանկարծ յայտնուող ծաղիկ մըն է ան, որուն երբ կը մայիս, կը զարմանաս, թէ այս ծաղիկը ինչպէ՞ս կը ցեր է ծնունդ առնել այդտեղ։ Բերրի ու անծայրածիր դաշտերու վրայ բիրաւոր ծաղիկներ կը հասնին, ու այդ ծաղիկներուն երեսն անգամ չես մայիր։ Բայց երբ ծաղիկի մը, մէկ հատիկ ծաղիկի մը կը համդիպիս հոն, ուր չէիր սպասեր, հոն, ուր գիտես, թէ այդ ծաղիկը շատ ծանր պայքար տարած ըլլալու է՝ գոյութիւն ունենալու համար, այն ատեն ծունկի կու գաս պահ մը այդ ծաղիկին քով ու կը շոյես զայն, կը գորգուրաս անոր վրայ» (*«Մարմարա»*, 18 Յունուար 1989)։

Հայէպ

ԼԵՒԴՆ ՇԱՌՈՅԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

*) Աւելորդ չէ յիշեցնել թերեւս, որ Գեղամ Սեւան (1926-1991) սփիւռքահայ գրականութեան մասնագէտ մը կը նկատուէր սովետական ժամանակաշրջանին, պատրաստած ըլլալով *«Սփիւռքահայ գրականութեան պատմութեան ուղուաքժէր»* ծաւալուն աշխատասիրութիւնը, որուն Ա. հատորը յոյսին եկաւ 1980ին, իսկ երկրորդը՝ բոլորովին վերջերս, 1997ին, Երևան։ Երկու հատորներն ալ յստակ ցոյացումն են իր այստեղու ու անարդար կեցուածքին՝ տարագիր հայ գրականութեան շատ մը դէմքերուն նկատմամբ Ա. Մ.։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



«ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ.
ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ»

(Յեղիմակ՝ Սամուել Մուրադեան)



Այս է խորագիրը սփիւռ-
բահայ գրական շրջանակներում
շատ քիչ ծանօթ հայրենի երի-
տասարդ գրականագէտ Սամուել
Մուրադեանի հետաքրքրական
աշխատութեան, որ լոյս տեսած
է 1996ին, Երեւանի «Հայագի-
տակ» հրատարակչութեանէն: Հա-
տորիմ կողմից վրայ տեղ գրա-

ւած հակիրճ կենսագրականէն կ'իմանանք, որ 1984ին «Թեկ-
նածուական դիսերտացիա»ն պաշտպանած Սամուել Մուրադ-
եան այդ թուականէն սկսեալ իր ամբողջ ժամանակը նուիրած
է կրթական, խմբագրական եւ գրականագիտական աշխա-
տանքներու: Երեւանի համալսարանի հայ գրականութեան
ամփոփող դասախօսի իր աշխատանքին զուգահեռ՝ ստորագ-
րած է գրականութեան եւ մշակութային զանազան հարցերու
նուիրուած յօդուածներ, հրատարակած՝ «Յարութիւն Սուր-
խաթեան» մեմագրութիւնը եւ խմբագրած՝ «Հայ տեղանուն-
ների բառարան»ի Ա. հատորն ու այլ գիրքեր, իսկ 1995ին,
«Երուանդ Օտեան. կեանքն ու գործը» աշխատութիւնը պաշտ-
պանելով՝ արժանացած է «բանասիրութեան դոկտոր»ի գի-
տական աստիճանին:

Տարի մը ետք հատորի տեսքով հրատարակուած վերո-
յիշեալ աւարտածառը, որ կը բաղկանայ եօթը գլուխէ, կը
փորձէ առարկայական տուեալներով, նորայայտ փաստերով
եւ բանասիրական գիտութեան արդի չափանիշներով բնօրինակ
վերագնահատել Երուանդ Օտեանի կեանքն ու գրական բազ-
մասեռ վաստակը: Այս աշխատութեան տուն տուած պատմա-
ներում, օգտագործած աղբիւրներում, անոնց կարգ մը թե-
րութիւններում եւ իր որդեգրած գիտական չափանիշներում
անդրադարձող «Ներածութիւն» խորագրեալ մուտքի վերջին

տողերով՝ Սամուել Մուրադեան կ'եզրափակեմ։ «Այս ձեռնարկումով հեղինակը նպատակ ունի համայնքի Օտեանի կեանքի եւ ստեղծագործութեան պատմութիւնը, նորովի բնութագրել Օտեան երեւոյթը, նրա գեղարուեստական մտածողութեան իւրայատկութիւնները, գնահատել ու արժեւորել նրա երգիծաբանական, վիպագրական ու թատերագրական ժառանգութիւնը»։

Սամուել Մուրադեանի աշխատութիւնը կը սկսի «Եւլանդ Օտեանի կեանքը եւ դարաշրջանը» խորագրեալ առաջին գլուխով, որ 62 էջերու երկայնքին, փաստացի մանրամասնութիւններով, կը կազմէ ամբողջական համապատկերը Ե. Օտեանի կեանքին իրերայաջորդ համգրուաններում եւ անոնց վրայ խոր անդրադարձ ունեցած ժամանակաշրջանի իրադարձութեանց։ Ժամանակի մամուլի հաւաքածոներում, ժամանակակիցներու՝ Ալեքսանդր Ծիրվանցադէի, Յակոբ Սիրունիի, Արամ Անտոնեանի, Միքայէլ Կիրեանի, Թեոդիկի, Յակոբ Օշականի, Վահագն Թէքեանի, Լեւոն Բաշալեանի յուշագրական հարուստ ժառանգութեան, արխիւային նոր միութեան եւ նշաններն Ե. Օտեանի կարգ մը գործերում վրայ հիմնուելով՝ Սամուել Մուրադեան ա՛յ միայն օրացուցային թշուարներով կը ներկայացնէ մեծանուն գրագետին ողորդական կեանքին ժաշաւէնը, այլեւ՝ 1896-1926 տարիներում հայ հասարակական, քաղաքական եւ մշակութային իրադարձութիւններում ամբողջութիւնը, որում քաղաքի նրեաները «կարող են լուսաբանուել Օտեանի ընկալումներով ու գնահատումներով»։

Բազմափաստակ արձակագիրին կեանքն ու դարաշրջանը իր ամբողջական գոյներով ու մանրամասնութիւններով ներկայացնելէ ետք, Սամուել Մուրադեան կը լծուի Ե. Օտեանի գրականութիւնը ուսումնասիրելու աշխատանքին։

Օտեանի գրական ժառանգութիւնը ուսումնասիրած սփիւռքահայ ու խորհրդահայ գրականագէտներու աշխատութիւնները գնահատելով հանդերձ՝ Սամուել Մուրադեան գիտել կու տայ, որ «նրանց գործերն անխուսափելիօրէն կրում են իրենց ժամանակի պարտադրանքներէ, մեթոտաբանութեան ու գրականագիտական մտածողութեան կնիքը, ուստի եւ չափ տեսակէտներ, մեկնութիւններ այսօր բռնագրօսիկ են, հնացած ու անընդունելի»։

Հետեւաբար, ծայրայեղութիւններն ու միտումնաւոր եւ կանխորոշուած ուսումնասիրութիւններու պարագայական եզրակացութիւնները մերժելով՝ Ս. Մուրադեան կ'որոշէ Ե. Օտեանի գրական ժառանգութիւնը հեթաբեկ նորովի, առարկայական եւ գրականագիտական արդի չափանիշներու հիմամբ կատարուած վերլուծման։

«Գրական մտածողութեան իւրայատկութիւնները, ստեղծագործութեան ընդհանուր բնութագիրը», «Գրական

Հասունացման ընթացքը: Պատմուհիներ, նորավիպեր», «Յեղափոխության մակարոններ» շարքը եւ նրա վաւերական հիմքերը», «Քաղաքական երգիծանքի գլուխ-գործոցը՝ «Ընկեր փանջունին», «Դիմանկարների ու կերպարների պատկերասրահ» եւ «Օտեանի թատերագույնները» խորագրեալ գլուխները, որոնք շղթայի մը օղակներու միւս իրարու կ'ազդեցնեն Ե. Օտեանի գրական ժառանգութեան իրերայաբոյժ համգրուանները, գիտական ճշգրտումներով, խորաթափանց վերլուծումներով եւ ակադեմական բժախնդրութեամբ համապարփակ վերլուծման կ'ենթարկեն արձակի գրեթէ բոլոր սեռերը մշակած մեծանուն գրագէտին հարուստ վաստակը եւ ըստ արժանւոյն կ'արժեւորեն Ե. Օտեանի գրականութեան բովանդակային հարստութիւնն ու արդիական մշակակութիւնը:

«ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԷՆ ԿՈՒ ԳԱՄ»



գրական ճկարագրով եւ ոգիով աշխարհ մը վիպականացուցած «Վկաները ոտքի ելան խօսելու» անուն հատորը, վեր

1997ին, «Համագգային»ի «Վահէ Սէքեան» տպարանէն լոյս տեսած Շահանդուխտի «Պուրն Համուտէն կու գամ» անուն հատորը, որ 17րդ տպագիր գործն է լիբանանահայ գրագիտուհիին, 160 էջերու երկայնքին կը փորձէ ներկայացնել «հայակերտ քաղաքի մը ծննդոցը եւ կազմաւորումը՝ 1930-1955 թուականներուն»:

Սարգիս Սմբատ Սարգիսեանի մեկնասութեամբ լոյս տեսած «Պուրն Համուտէն կու գամ»ը կը քացուի Կարօ Յովհաննէսեանի «17րդը» խորագրեալ ներածականով, որ յայտնելէ ետք, թէ Շահանդուխտի նորագոյն աշխատութիւնը կու գայ ամբողջացնելու

կ'առնէ լրագրական մօտեցումով գրուած «Պուրճ Համուտէն կու գամ»-ին տեղեկագրական-պատմական գործ մը ըլլալու արժէքը՝ իբրեւ «ներշնչման աղբիւր ու մղիչ ուժ բոլոր անոնց, որոնք կ'ուզեն խորացնել Պուրճ Համուտ գաղութի ուսումնասիրութիւնը՝ գիտական եւ ակադեմական աւելի մանրամասն հատոր մը ներկայացնելու մտասեւեռումով»:

Կը յաջորդէ հեղինակին «Ինչո՞ւ գրեցի այս գիրքը» սրտի խօսքը, որուն առաջին քաժինով, զինք եւ Պուրճ Համուտը իրարու կապած եւ գրեթէ երկուորեակներու վերածած հասարակ յայտարարները մշտէ հոգի, կը կեդրոնանայ զինք, իր սերունդը եւ անոնց զաւակները հայ պահած այս հայակերտ քաղաքին քարոյական, հոգեմտաւոր ու ազգային արժէքը եւ դերակատարութիւնը ընդգծելու աշխատանքին վրայ: Ապա, առաջին հերթին դիտել կու տայ, որ իր ձգտումը հղած է կորուստէ փրկել յետ եղեռնեան սփիւռքահայ պատմութեան շատ կարեւոր օւղէկ էջը՝ ոչինչէն ստեղծուած Պուրճ Համուտի հիմնադրութեան ու կազմաւորումին արդէն իսկ մոռցուած պատմութիւնը:

Հեղինակին իսկ քննութեամբով՝ «ապագային իրագործելի առաւել լայնահուն աշխատութեան, վկայութեան մը» մտաւարտակը փոխանցող «Պուրճ Համուտէն կու գամ»ը, իրերայաջորդ հիմք մասերով, ընթերցողին կը ներկայացնէ ամփոփ պատկերը ո՛չ միայն Պուրճ Համուտի հիմնադրութեան եւ կազմաւորումին, այլեւ՝ աշխարհագրական այս տարածքին վրայ ծաւալած առաջին 25 տարիներու ընկերային, ազգագրական, եկեղեցական, կրթական, միութենական, կուսակցական, գեղարուեստական եւ այլազան գործունէութիւններուն:

«Պատմական-աշխարհագրական» խորագրեալ առաջին 50 էջերով Պուրճ Համուտի քաղերուն, հիւղատաճներուն, գերեզմանատան, ազգային կեդրոններուն, Երկրորդ աշխարհամարտի անդրադարձներուն, Պուրճ Համուտի հայ ազգաբնակչութեան կարիքներն ու ցաւերը մեղմացուցած օտար միսիոնարներուն եւ անհետացած հիւղատաճներու մասին պատմական խիստ կարեւորութիւն ունեցող տեղեկութիւններ փոխանցելէ ետք, «Ընկերային կեանք, բարքեր, աւանդուածութիւններ» անուն երկրորդ մասով Շահանդուխտ կը ներկայացնէ վերոնշեալ ժամանակաշրջանի առօրեան: Արեւստեղծէն, աւանդոյթներէն եւ ազգային տօնակատարութիւններէն հարսանեկան խրախմանքներուն անցնելով՝ ընթերցողը ամփոփ գաղափար մը կը կազմէ Պուրճ Համուտի առաջին տարիներուն ընկերային-ազգային իրաւատուկ մթնոլորտին մասին, որ կ'ամբողջանայ եկեղեցական ու կրթական կեանքին իրերայաջորդ հանգրուանները պատկերող հատորին երրորդ քաժինով:

«Միութենական եւ կուսակցական կառույցներ» մաս-

խավերջին մասը ընթերցողին դիմաց լայն կը պարզէ պատկերը Պուրն Համուտի մէջ հիմնուած եւ ցարդ գործող քարեսիրական, հայրենակցական, մարզական, յարամուսնական միութիւններուն եւ Հ.Յ.Դաշնակցութեան ակումբներուն: Հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցող «Պուրն Համուտէն կու գամ»ը կ'ամբողջանայ «Գեղարուեստ» խորագրեալ հատորին վերջին քաժինով, որուն 44 էջերուն միջոցաւ արդար շրտինքով եւ վճռականութեամբ ժառ ատ ժառ կերտըւած անցեալ մը մոռացութենէն փրկած հեղինակը կը խօսի Պուրն Համուտի թատերական առաջին փորձերուն, շարժակարի սրահներուն, առաջին եւ գլխաւոր գրատան, մանկապարտէզներուն, «Մեր Հայրենիք»ով սկսող եւ սիրայիմ ու յեղափոխական երգերով շերմացող հարսանիքներուն, աղջիկ տեսի հանդիպումներուն եւ Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ կենսագրութենէն բաղուած յուզիչ դրուագի մը մասին:

Այս մթնոլորտով ալ կը փակուի պարզ, կենդանի եւ անմիջական հաղորդակցութեամբ յատկանշուող «Պուրն Համուտէն կու գամ» աշխատասիրութիւնը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԷՆՔԻՆ ՄԻՋԻ»

(Գեղիճակ՝ Նաթալի Արրահամ Տէտեան)

Հայ Դատն ու անոր առընչուող յարակից այլեւայլ հարցերն ու նիւթերը արար ժողովուրդին ծանօթացնելու նպատակով վերջին տասնամեակին լոյս տեսած փաստագրական եւ ակադեմական հրատարակութիւններու ցանկին վրայ, 1997ին, աւելցան երեք հատորներ եւս, առաջինը՝ Նաթալի Արրահամ Տէտեանի «Հայկական Հարցը՝ քաղաքականութեան եւ օրէնքին միջեւ», երկրորդը՝ Խարահիմ ալ-Խալիլի «Արիւնոտ ժառանգը», իսկ երրորդը՝ Տոք. Նա'իմ էլ-Եաֆիի եւ Մահեր էլ-Մումնէտի միացեալ ստորագրութիւնը կրող «Թուրքին պատկերը՝ արաբական արդի բանաստեղծութեան մէջ» անուն ուսումնասիրութիւնը:

Արարերէն 34 եւ ֆրանսերէն ու անգլերէն 11 աղբիւրներու վրայ հիմնուած Նաթալի Արրահամ Տէտեանի «Հայկական Հարցը՝ քաղաքականութեան եւ օրէնքին միջեւ» երկը, որ կը քաղկամայ 113 էջերէ կազմուած ութ մասերէ, կը բացուի

ներում, ազգակամներում և ժողովուրդի գաւակներում 1915ի Յեղասպանութիւնը ոգեկոչող դրուագներում շուրջ զարգացող գրոյցին, ապա՝ սեւեռարիք կը հետեւի ծաղկեփումը ներսի հայկական գերեզմանատուն ուղղուող իր հօր, մօր, եղբայրներում ու դրացիներում յամբաժան տառապանքին, որոնք, նահատակներու յիշատակը ոգեկոչող աղօթքներ արտասանել ետք, տուն կը վերադառնան՝ ծանր սուգի արտայայտութիւնները իրենց դէմքերում:

Մանկական գրականութեան անսփռելիք ու պարզ ոմը յիշեցնող այս մուտքը, այնուհետեւ, կը կեդրոնացայ հատորին գլխաւոր հերոսը դառնալու կոչուած և պահը բնագոյրէն ապրող հետաքրքիր Արամի վրայ: Անոր հարցումները մեղի կը մատնեն մեծ մայրը: «Երբ մեռել չկար, ինչո՞ւ բոլորը գերեզման գացին» հետաքրքրասէր մանուկին հարցումը կը ստանայ թախամտազին շեշտ: Արտասուաթոր աչքերով մեծ մայրը, Արամը կուրծքին սեղմել ետք, «Ի՞նչ ըսի քեզի, որ կու լաս, մեծ մայրիկ», «Ներողութիւն, եթէ անգիտակցաբար արժանապատուութիւնդ և զգացումներդ վիրաւորեցի» ու անոնց յաջորդող Արամի աղաչական արտայայտութիւններէն յուզուած՝ կը պատասխանէ, թէ իր աչքերէն ուրախութեան և գոհունակութեան արցունքներ են, որ կը կաթկթին, որովհետեւ «հարցումներդ ընդմէջէն զգացի, թէ հասուն երիտասարդ մը դարձած ես և այլեւս փոքրիկ մանուկ մը չես»:

Նահատակներու սերունդը մերկայացնող մեծ մօր և անոնց արեան ու դատի ժառանգորդներու խորհրդանշիչ Արամի մտերմացումով սկսած գրոյցը կը զարգանայ: Արամ շարունակ մեծ մօրը կ'ուղղէ իր միտքը և ներաշխարհը ալեկոծող հարցերը: Մեծ մայրը կը դառնայ Յշմարտութեան ճայմը, որուն միջոցաւ Արամ կը յայտնագործէ իր ինքնութիւնը և ամբողջական գաղափար մը կը կազմէ Սուրբան Ապտուլ Համիտի, Թուրանականութեան, Յեղասպանութեան ծրագրերէն ոմիքի ծաղկերուն, «Թեշվիլաթ մախսուսէ»ի և հայկական կոտորածներուն, միջազգային օրէնքին և Հայ Դատին, դահիճները հաշուեյարդարի ենթարկած հայ արդարահատօյցներուն, ժողովուրդներու Մնայուն Ատեանի արդար դատաւիճիւնին, Աթաթուրքի և իր գործադրած բարբարոսութիւններուն, արաբ ժողովուրդի տապնչական կեցուածքին ու Հայ Դատը պաշտպանած արաբ պատմագէտներուն, և տակաւին՝ Հայոց պատմութեան հետ առնչուող այլեւայլ մանրամասնութիւններու մասին, որոնք կը կոչուին Մեսրոպ Մաշտոց, Արցախ, Լեփսիս, Մոսկոյնթաու, Միլվան Զատէ Ռիֆաթ, Շերիֆ Հիւսէյն Պըմ Ալի, Ֆայէզ Էլ-Ղուսէյն, Եւայլմ:

Փաստագրական տուեալներու վրայ հիմնուած Նաթալի Արաքիւմ Տէտեանի հատորը կը յաջողի իր բովանդակութիւնը մերկայացնել պարզ, հեզասահ և հաղորդական երկխօսութեամբ մը:

Նշաններ

«ՏՊԱԳՐԻՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ»

Խմբագրատուններում մեջ ամենից յարգի միտքերն մեկը եղած է ու կը շարունակէ մնալ անտիպ գրութիւնը, մանաւանդ երբ անկաւ ստորագրուած ըլլայ մտաւարական դեմքերուն հետ մանաւանդ զոտ յօշոտած թրքական հարադանին կամ բաշխիկեան մուրճին զոտ դեմքերուն կողմէ:

Իրենց շահեկանութեան հետ, անտիպները ստեղծած են յաճախ ու կը շարունակեն ստեղծել թուրքականացիներ, որոնք մեծաւ մասամբ հետեւանք են հաւաքական կեանքէ գուրկ Սփիւռքի մեր պայմաններում մէկ կողմէ եւ, միւս կողմէ՝ հայրենիքի մէջ ամբողջ երեք քառորդ դար կիրարկուած «Երկաթէ վարագոյր»ներուն:

Այս թուցիկ խորհրդածութեան առիթ տուողը Վազգէն Շուշանեանն է մորէն, ու այս անգամ անտիպ գործի մը կապուած, — «Ջաւէն Մանկունիի սէրերը»:

Շուշանի կարգ մը միւս գործերում պէս, պատիկ պատմութիւն մը ունի մանաւանդ «Ջաւէն Մանկունիի սէրերը» անուն այս վիպակը:

Շուրջ կէս դար առաջ, 1950ին, Փարիզ հրատարակուող «Ներկայ» ամսագիրը, իր 9-10 միացեալ համարին մէջ, անկէ հատուած մը լոյս ընծայելով՝ կը յիշեցնէր ընթերցողին, թէ՝

«Այս անունը կրող անտիպ մէկ վէպին վերջին հատուածն է այս արտագրուած մասը»:

«Ներկայ» լոյս ընծայած այդ հատուածին ուղիղ եօթը տարի ետք, 1957ին, «Նախիր» շաբաթաթերթը ծանոյց.

«...Քանի մը թիւէն պիտի սկսինք հրատարակել Վազգէն Շուշանեանի ուրիշ ԱՆՏԻՊ մէկ գործը, որ պիտի կարդացուի այն միջոցին հաճոյքով, ինչպէս կը կարդացուի Շուշանեան»... (թիւ 27, էջ 2):

Այսինքն ժամանակ մը անց, այս անգամ մամուլային մթնոլորտի մը մէջ, նոյն «Նախիր» կը կրկնէր.

«Ինչպէս ծանուցած ենք արդէն, յաջորդ թիւով իսկ կը սկսիք կարդալ Վ. Շուշանեանի մէկ ԱՆՏԻՊ վէպը, որ գրուած է ճիշդ այն օրերուն, երբ Վազգէն Շուշանեան ունէր... ձեր տարիքը եւ ապրումները» (թիւ 30, էջ 45):

Ու ծանուցուածին պէս «Նախիր» մէջ սկսաւ տպուիլ անտիպ վէպը, «Ջաւէն Մանկունիի սէրերը», ամբողջ 15 թիւերու վրայ (թիւ 31-45):

Սփիւռքի ընթերցողները, ուրեմն, տասնամակներ առաջ թէ՛ առանձին հատուած մը կարդացած էին «Ջաւէն Մանկունիի սէրերը»-ն եւ թէ անոր ամբողջութիւնը, որ ըստ երեւոյթին անծանօթ

մնացած է «Երկաթէ վարագոյր»-ին հտին այն օրերուն տառապած հայրենի ընթերցողներուն, եւ նոյն պատմառով իրենց տրամադրութեանց տակ դրուած ձեռագիրը անտիպ կարծած են:

Ահաւասիկ այդ մէկուն արձանագրեալ փաստը:

Հայաստանի գրողներու օրգան «Նորք»-ի կողմէն, 1995ին Արգար Ափիմեանի խմբագրութեամբ սկսաւ լոյս տեսնել նոյն միութեան անունով երկրորդ պաշտօնաթերթ մը, «Նոր-Դար», որուն երկրորդ տարուան առաջին թիւին մէջ տրուեցաւ Վազգէն Շուշանեանի խնդրոյ առարկայ վիպակը, քառասունութ էջերու վրայ (8-56):

Վերջին էջին վրայ ընթերցողին հաղորդուած է սա ծանօթութիւնը.

«Վազգէն Շուշանեանի «Զաւէն Մանկունիի սերերը» վիպակը գրուել է Ռուսիոյ մէջ 1930 թուականին: Ձեռագիրը պահուած է Ե. Զարենցի անունան գրականութեան եւ արուեստի թանգարանում: Տպագրուած է առաջին անգամ»:

Մեր պայմաններուն մէջ, ձեռագրի մը առկայութիւնը երբեք պէտք չէ անպայման կարծել տալ մեզի, որ անիկա անտիպ մնացած ըլլալու կմիւ մը կը կրէ: Շուշանեանի գործերէն շատեր ձեռագիր կրկնօրինակներ ունին, ոմանք հեղինակին գրիչով, ոմանք լուսապատմէն: Կրկնութեան գնով ըսեմք, որ քաժան-քաժան ապրած ըլլալու եւ ապրելու մեր իրականութիւնը շատ մը ստուգութիւններէ զրկած է մեզ եւ զգոյշ ըլլալու հրամայականը կը շարունակէ դեռեւս ի գորտու մնալ:

Ռոբիշ խնդիր մը՝ նոյն առիթով:

Հայաստանի վերանորոգած երկրորդ անկախութենէն ետք, հայրենի մեր մամուլին անդամներէն ոմանք սկսան ամբողջութեամբ կիրարկել մեքսիկեան ուղղագրութիւնը, իսկ ուրիշներ մեքսիկեան ուղղագրութեամբ իրենց հասած գրութիւններ լուս տեսնուածով մը յանձնեցին համակարգիչին:

Մեր դիտակցիւմէն՝ երեւոյթը դրական էր: Օր մը անպայման յաղթանակելու կոչուած մեքսիկեան ուղղագրութիւնը, ուրեմն, նուազեցած անկախութեան հետ սկսած էր առողջութեան մշտնջենք յայտնաւորել, միաժամանակ քաջայայտելով Լուսաւորչի աստղին տակ մեր մտաւորականներուն եօթանասունամեայ տառապանքն ու նուիրագործուած արքութեան վերադառնալու կիզիչ կարօտը...

Եւստի սրտի, սակայն, վերադարձի այդ քաբեղէպ փորձերէն ոչ մէկը ամստուր պատկերով մերկայացաւ ընթերցողին: Խօսքը, ի հարկէ, չի վերաբերիր պատահական զգիւններու սարճած թուղթերուն, կը վերաբերի ըսելիք ունեցող ու ասացուածքի վայելչութեամբ կմեղած գրութիւններուն, որոնց համարեա՛ւ ամբողջութիւնը կը տառապէր խնամքի պակասէ: Անխմաւորութեան նոյն հարուածներէն զերծ չէր մնացած նաեւ «Նոր-Դար»-ի էջերուն մեքսիկեան ուղղագրութեամբ տրուած Վազգէն Շուշանեանի «Զաւէն Մանկունիի սէրերը»: Այդ քառասունութ էջերուն մէջ չկայ էջ մը, որ վերաւորած չըլլայ ուղղագրական կամ լեզուական անթիւ-անհամար վրէպներով:

Նըքայրութեան ժամն է ու նման երեւոյթներ երբեք չեն մպաստեր փայփայուած հրազներուն...

ԱՆՏԻՊԻ ՊԷՍ...

Ամտիպնեքու առաջացուցած հետաքրքրականութեամբ ու շահեկանութեամբ դիմաւորուեցաւ մանաւանդ թերթի թերթ քափառող տեսակ-
ցութիւն մը, արեւելեան թէ արեւմտեան աշխարհներուն մէջ, արեւելահայե-
րէն՝ «Հայ գրողներէ գրողը Ա. Ի. Միկոյեանի հետ», իսկ արեւմտահայերէն՝
«Ա. Միկոյեանի հանդիպումը Հայաստանի գրողներու հետ»:

Փարիզի «Յաւաջ» օրաթերթէն կ'իմացուի, որ հանդիպումը լոյս
տեսած է Երեսնի «Հայր» օրաթերթի անցեալ տարուան Դեկտեմբեր 11, 12 եւ
13 թուակիր համարներուն մէջ, ծանօթ մտաւորական Սարգիս Յարութեան-
եանի նախաձեռնութեամբ: Կ'իմացուի նաեւ, որ հանդիպումին սղագրու-
թիւնը օրին ծածուկ պահուած է ժողովուրդէն եւ Սարգիս Յարութեան
անկէ օրինակ մը իր մէկ ընկերոջը տուած ըլլալու յանձնարարէն համար եղած
է հետապնդումի առարկայ:

«Հայր»-ի խմբագրական մոթին բովանդակութեան իր ընթերցողները
իրագնի դարձնելէ ետք, «Յաւաջ»-ի Փետրուար 13, 14 եւ 17 թիւերուն մէջ
երատարակութեան տուած է հանդիպումը, իսկ Պէյրութի «Կառն» շաբաթա-
թերթը, Փարիզի յիշեալ աղբիւրէն առնելով՝ 4 Ապրիլ թիւէն սկսեալ իր
ընթերցողներուն ներկայացուց ամբողջութիւնը:

Այս է «Ա. Միկոյեանի հանդիպումը Հայաստանի գրողներու հետ»
գրողցիին մօտ պատմութեան ամփոփումը, իսկ մոյն հանդիպումին սղագրու-
թիւնը ունի հին պատմութիւն մը եւս, որ, անշուշտ մեր ծանօթութեան
սահմաններուն մէջ, կ'անցնի երկու հանգրուաններէ:

Առաջինը՝ «Բազին»-ի էջերուն, ուր 11 տարի առաջ, Միւնիխի մէջ
քննակութիւն հաստատած մեր երկարամեայ աշխատակիցներէն Լեւոն
Մկրտչեանի չորս էջոց յառաջարկով լոյս տեսաւ ամիկա, իսկ երկրորդ-
անգամ ընթերցողը մոյն հանդիպումին հանդիպեցաւ Երեսնի «Գրական
թերթ»-ին մէջ, 1992 տարեշրջանի թիւ 2 համարի տասը սիւնակներուն վրայ:

Կարելի չէ հարկաւ Երկաթէ վարագոյրի տարիներուն հոն ապրած
մտաւորականները մեղադրել այն յանցանքով, որ «Բազին»-ի էջերուն չեն
տեսած խնդրոյ առարկայ գրողը, ոչ ալ մոյն մեղադրանքը ուղղել Սփիւտէի
թերթերու պատասխանատուներուն: Առաջին խումբին համար արտօնուած
ամսագիր չէր «Բազին»-ը, իսկ Սփիւտէի մտաւորականներուն համար մոյն
տարիներուն մատչելի չէր ամիկա՝ ծանօթ պատմաւորներով: Պատերազմ էր,
մթազմած էին մեր փոխարարներութիւնները:

Զարմանալին կը մնայ միւս փաստը, անկասկածեան օրօք հրատա-
րակուած «Գրական թերթ»-ին բովանդակութեան անտեղեկ մնացած ըլլա-
լու հայրենի մեր մտաւորականներուն պարագան, «Հայր»-ի աշխատակից-
ներուն ու խմբագիրներուն պարզած պատկերը, որ իրրեւ մորութիւն լոյս

կ'ընծայեն *Հանդիպում* մը, որ ընդամենը վեց տարի առաջ լոյս տեսած էր իրենց աչքին առջեւ հրատարկուող *Գրական թերթ* ի էջերում, խմբագրական սա նոթով։

Տասնամեակներ Վաղեմութիւն ունեցող այս Հանդիպումը, որի նախաձեռնումով համարձակ ու ճշմարիտ առաջադրմամբ եւ աներկբայ վկայում այն իրողութիւնը, որ ազգային ինքնագիտակցութեան, զարթոնքի ու անկախութեան ուղին հեռուներից է հասնում 1988ի սահմանագիծ։ Ճիշտ է, զրոյցի մասնակիցներն իրենց տուրքն են տալիս սոստալիտարիզմի դադափարախոսութեանը եւ այդ «տուրքի» առիւծի բաժինը, ի հարկէ, դաշնակցութեանն է հասնում, բայց, այդուհանդերձ, մեր մշակութային ու հասարակական կեանքում որոշակի դեր խաղաց այդ Հանդիպումը, որի անմիջական արձագանգը պիտի համարել Շանթի ստուարածաւալ Հատորի յոյս ընծայումը, ազգային-ազատագրական պայքարի, Զօրավար Անդրանիկի մասին առաջին անկանխակալ հրապարակումները։

Հանդիպման սղագրութիւնը, որ մեզանում առաջին անգամ է հրապարակոււմ, կարծում ենք, ընթերցողը չի ընդունի որպէս մեր օրերի հետ աղերսները կորցրած զուտ պատմական վաւերագիր։

Խնդիրը կը տարբերէր հարկաւ, եթէ, ըստ հոն ընդհանրացած գրական բարձրունի, երկու կամ աւելի տարբերակներ ունեցած ըլլար *Հանդիպումը*, առաջին անգամ տպուածը եւ միւսները, բայց այդպէս չէ իրականութիւնը, *«Բազին»* ի եւ *«Գրական թերթ»* ի մէջ նրեցածներուն համարեալ՝ կրկնութիւնն է *«Հալը»* ի մտաուցածը, բառային, հոլովական ու շարադասական շատ անցանց տարբերութիւններով եւ նոյնքան անցանց մէկ-երկու պարբերութիւններու յապաւումներով։ Հասկնալի պիտի ըլլար դարձեալ, եթէ *«Հալը»* թերթը *«Գրական թերթ»* էն ետք խմբագրական ծաւալում մեկնաբանութիւններով լոյս ընծայէր հանդիպումը։

Սակայն այդ ալ չէ պարագան։

Առանց տրամաբանական մէկ կամ միւս պատճառին, բոլորովին անհեթեթ կը դառնայ ընթերցողը նոր գրութեան մը հաղորդակից դարձնելու *«Հալը»* նաեւ ձեռնարկը։ Միւս կողմէ՝ դժուար է հասկնալ, թէ հարցին այդքան մօտ ու մէջ եղած, սղագրումներու դիմած, ուրիշը մասնակից դարձուցած եւ առ այդ հալածամի բնթարկուած մտաւորականը, Սարգիս Յարութիւնեան, ինչպէս անտեղեակ մնացած կրնայ ըլլալ *Հանդիպում* ինքնէջներուն, երբ անիկա, հանդիպումը, նոյնիսկ *«Գրական թերթ»* ին մէջ լոյս տեսնելէն առաջ անգամ անծանօթ իրականութիւն մը չէր Հայաստանի մէջ, ինչպէս կը նշէր հայաստանեան հարցներուն քաջատեղեակ *«Բազին»* ի աշխատակիցը՝ *«Ըստ կողմնակի տեղեկութիւնների, միայն այժմ հրատարակուող այս արձանագրութիւնը ժամանակին անյայտ չի եղել երեւանեան հասարակութեան որոշ խաւերի համար։ Այսինքն՝ ինքնագործ միջոցներով ընդօրինակուել կամ լուսանկարուել եւ ապա ձեռքից ձեռք փոխանակուելով մտել է շրջանառութեան մէջ»* (1987, թիւ 9, էջ 42)։

Նրբուի դեռեւս կը գտնուիմք այն կացութեան մէջ, որ վերապահութեամբ պիտի է դիմաւորենք անկէ թէ ասկէ բարձրացած որոշ ճայները եւ նորոգութիւններ հանդիպած ըլլալու անապարանքով արդէն տպագրուած բաներ չենրկայացնենք ընթերցողին, երբ անոնց մասին առանձին ըսելիքներ կը պակսին մեզի...

ԱՆՊԱՏԵՂ «ԱՊՏԱԿ»...

«Զակերտում» անտիպներու քաւական ճոխ մթերքի մը ակա-
նատես ըրաւ ընթերցողը մաւս հայրենի քննադատներէն Դաւիթ
Դասապարեան, «Նորայայտ էջեր» խորագրուած չափանցեան իր 1996ի
հատորին առիթով, ուր իբրեւ «Ուրայայտ» ներկայացած էջերուն
մէկ մասը ընթերցողին ծանօթ էր երեսնամեակ մը առաջ՝ թերթերէն,
միւս մասը՝ փաստաւեակ մը առաջ, Անահիտ Զարեանցի «Անտիպ եւ
չհրատարակուած երկեր» հատորէն, իսկ երրորդ խումբէն մաս մը՝
տասնամեակ մը առաջ, «Արեգնացեալ կացին»-ին գոն «Կարմիր
պոետ»-ին նուիրուած մոյնիմէն Դաւիթ Դասապարեանի տարբեր աշխա-
տասիրութիւններէն:

Արդէն շատոնց անտիպութենէ դուրս եկած տունայ կտորնե-
րուն քննադատական, մեկնաբանական թէ վերծանման որոշ վար-
կածներու առիթով, աւելի ուշ հրապարակ եկած եւ աւելի երիտա-
սարդ քննադատ մը, Սէյրան Դրիգորեան, «Պսակագերծում» ամու-
նին տակ պարզեց քննադատական տեսութիւն մը, որ 1997ին լոյս
տեսաւ առանձին գրեթէ չորս էջ, խմբագիր՝ իր կարգին քննադատ
ու տեսարան Սուրբի խաչատրեան:

«Նորայայտ էջեր»-ու հեղինակը «Ապտակ» խորագիրով 44
էջոց տնտրուած մը պատասխանեց «Պսակագերծում»-ին, թիրախ
ունենալով ո՛չ միայն ամոր հեղինակը, այլեւ՝ առաջին հերթին,
խմբագիրը:

Փութանք ըսել, որ «Ապտակ»-ը երբեք չի կրեր հայրենի թէ
Սփիւռքի ընթերցողին ծանօթ Դաւիթ Դասապարեանի լրջութեան
կնիքը, աւելի շուտ՝ կը յիշեցնէ շուրջ վաթսուն տարիներ առաջ
հայրենի սահմաններուն մէջ մոլեգնած գործօններուն սանձաքնկ
մոլեգնութիւնը, «Պսակագերծում»-ի հեղինակին ու հեղինակութեան
խմբագիրին շռայլելով այնպիսի որակումներ, որոնց երբեք պիտի
չուզէինք հանդիպիլ «խոհով ծանրացած» քննադատի մը գրիչին
տակ:

Կայ գրական քարոյական ըսուած բան մը, որուն մասին դեռ
անցեալ տարուան «Բազին»-ի առաջին թիւին մէջ, Մահան Մահմուրի
առիթով գրուած Վազգէն Մուշանեան «Մարդ մը, որ Արարատ
չունի իր հոգւոյն խորը» գործին կապակցաբար գրուեցաւ քանի մը
տող, կրկնենք՝ արմատական սկզբունք մը աւելի շօշափելի դարձնե-
լու համար:—

«...Գրական բարոյականը ախոր թոյլ չի տար մերկապարա-
նոց որակութիւններով վարուիլ գիմացի անձին ու գաղափարներուն»

Հետեւ կիրքի մթնոլորտին մէջ ջանալ հաստատել մեր ճշմարտութիւնը: Երեսնական թուականներուն հրապարակ եկած *Շահ-նուրները*, *Շուշանեանները* եւ ասոնց սերնդակիցները անպատշաճ այդ տարրերով վիրաւորեցին իրենց հրապարակագրական ու քննադական լեզուն, որ հազիւ թէ հետեւորդներ ունեցաւ Հետագայ տասնամեակներուն:

«Յաւ է հաստատել, որ ըսելիքներու իր հարստութեան վստահելու փոխարէն, *Շուշանեան* իր դատած հերոսը գերազանցող չափով մը «չաղ տուած» է անբարեկիրթ որակումներ, «որոնք կիրքը կ'արտայայտեն, բայց մտածումը չեն զօրացներ», ինչպէս պիտի ըսէր Օչական»:

Այս է:

Ոչ ոք կրնայ Դաւիթ Գասպարեանին կամ ուրիշի մը զրանալ իր հեղինակութիւնը պաշտպանելու իրաւունքը, բայց պարկեշտութեան սահմաններում մէջ, արժանաւորութեան մակարդակներու վրայ, տրամաբանական դիրքերէն: Գրական հարցերու ճշգրտութիւն հաստատելու ու ճշմարտութիւնը թուիրագործելու համար մարդիկ այդպէս կը վարուին քաղաքակիրթ աշխարհին մէջ եւ հաշուի չեն առնիր դիմացիին անձնական կեանքին ելեւէջները, եւ ոչ ալ կը յենում ամռան մասին հիստուած մոր անսպասելիքներու վրայ:

Դաւիթ Գասպարեան, ցաւօք, անելի տուրք տուած է *«Պսակազերծում»* ի հեղինակն ու ամոր խմբագիրը ոչ-քարեկիրթ տրակումներով հարուածելու կանխակալ տրամադրութեան մը, փոխանակ քուականներով ու էջաթիւերով իրենց հղած դիտողութիւնները թելա-կաններով ու էջաթիւերով հերքելու իրաւունքին, որմէ քիչ անգամ միայն օգտուած է:

Ձի հասկցուիր մանաւանդ, թէ ինչու *«Պսակազերծում»* ի հեղինակին հանդէպ ցոյց տուած կիրքին չափ Գասպարեան կրճտած է նաեւ *«Պսակազերծում»* ի խմբագիրին հանդէպ, երբ ինք քաջ գիտէ, որ գիրքի մը խմբագրական աշխատանքներում հսկելու կոչուած ամձը իրեն յանձնուած ձեռագիրը մոյմութեամբ հրատարակելու պարտականութենէն զատ ուրիշ դեր չունի տուեալ պաշտօնին մէջ:

Կողմնակի յիշեցում մը —

Չհաշուած 47էն մինչեւ 59րդ էջը երկարող բաժինը, *«Պսակազերծում»* ընդունութեամբ լոյս տեսաւ Հայաստանի Գրողներու միութեան պաշտօնաթերթ *«Նորք»* ամսագիրի 1997 տարեշրջանի թիւ 4ին մէջ, 32 էջերու վրայ (68-99): Եւ *«Նորք»* ի խմբագիրը արձակագիր Ռուբէն Յովսէփեանն է:

Ի՞նչ է, Ռուբէն Յովսէփեանի դէմ ալ *«Ապտակ»* ու մը հանդէս պիտի գայ Դաւիթ Գասպարեան: Անհեթեթ է մտածել այդպէս:

«Ապտակ» ին մէջ կիրարկուած ռեին մասին մեր ըրած ակնարկութիւնները բոլորովին ենթադրութեան սահմաններում մէջ չձգելու համար, ուշադրութեան յանձնեմք միակ մաթադասութիւն մը, երկու բնագիտներում հասցեագրուած, Սէյրան Գրիգորեանին ու Եւրի Խաչատրեանին:

«Իսկ ձեր նմանների մասին ասուել ու կրկնուել են այսպիսի խոսքեր՝ սեւ դաւերի մուկ գործակալներ, նախանձիկ պրէհնոցներ, ապականութեան մոլախոտեր, Յուդայի ժառանգներ, ամբլոթեան կենդանի մարմնացումներ»:

Ասոցմէաւելի մութ հարիւրաւոր որակումներու իր դատը վստահած ու ասոց ոգին մատնող նշանակով մը իր պաշտպանութիւնը յանձն առած Դաւիթ Գասպարեան, զարմանալի իմ քննադատականութեամբ եւ աւելի քան զարմանալի հեղինակութեամբ գոյութեան իրաւունքէն թոյրոնվիմ գրկած կը կարծէ երկու քննադատները, պնդելով մոյմ ատեն, թէ «միւրաց «ստեղծագործութիւնը» տապաւնաբար է հէնց իրենց վրայ, իսկ էտիտաֆիան այս է.

ԱՍՏ ՀԱՆԳՁԵՆ
ԵՐԿՈՒ
ԱՄՈՒՆԵՐ
ԿԱՄ
ԳՐ-ԱՄՈՒՆԵՐ
ՄԻ ՍՐԻԿԱՅ ՍԷՅՐԱՆ
ԵԻ ՆՐԱՆ ՀԷՅՐԱՆ
ՄԻ ԶԱՐԱԳՈՐԾ ԵՈՒՐԻ
ԵՐԿՈՒՍԻՆ ԷԼ
ՄԻ ԲԱՐՁՐ ՎՐԱՅ
ՈՂՈՐ-ՄԻ...

Ընդամէնը վերջին տասնամեակին՝ «Նորք»ի, «Գրական թերթ»ի, «Վարուժան»ի, «Գարուն»ի ու «Աւանգարդ»ի մէջ Եւրի Նաչատրեանի եւ Սէյրան Գրիգորեանի ստորագրած գրութիւնները հաշուի առնելով, Դաւիթ Գասպարեան պարտաւոր էր քիչ մը սանձ քննել իր կիրքներուն եւ այնքան առաջ չեքքար գանձմէ արդէն գերեզմանացած ըլլալու մոլորութեան մէջ: Ըսել կ'ուզենք՝ վերոյիշեալ թերթերուն մէջ ստորագրուած յօդուածներու հեղինակներուն կարելի է հայեոյել, մգովի կարդալ ի պէտս յանպէտս, ամենց կենցաղային գիծերը գրական հարցերու մէջ խառնելու չափ թոյլատու ըլլալ ինքզինքնին հանդէպ, բայց տապաւնաբար սարքել եւ աստ հանգչի կարդալ անոնց՝ հմարաւոր չէ, ինչպէս կարծած է մեման «կարծիքներու» բնաւ պէտք չունեցող վաստակաւոր մտաւորակամը ինք, Դաւիթ Գասպարեան:

Եւրի Նաչատրեան եւ Սէյրան Գրիգորեան կրնան վաղը նոր յօդուածներ ու գիրքերու ծաւալով գրութիւններ ստորագրել մոյմ ամսագիրներուն մէջ, ամենց խմբագիրներուն գրկաբաց ընդունելութեամբ, ու Դաւիթ Գասպարեան չի կրնար հաշուի չառնել անոնց... յարութիւնը:

Ապտակը պէտք է շառաչում դառնայ ստացողներու երեսնեւորում, այլապէս պէտք է զգուշանալ անոր դիմելու փորձութենէն...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԱՆԾԱՆՕԹ ԲԱՆԵՐ...

Ողբացեալ Բնագրատ Սարգիս Փանոսեանի պատրաստութեամբ, 1993ին, Պէյրութի «Շիրակ» գրական ամսագիրին մէջ սկսաւ լոյս տեսնել տարաբախտ Վազգէն Շուշանեանի «Ներքին դաշտանկար» անուն անտիպ գործը:

Յաջորդ տարի, ցաւօք, «Շիրակ» լոյս չտեսաւ ու ընթերցողը «Ներքին դաշտանկար»ի շարունակութեան կրցաւ հետեւիլ միայն 1995ի համարներու էջերուն:

Այդ մոյմ տարին (1995), Շուշանեանի խնդրոյ առարկայ անտիպը Երեսմի մէջ լոյս տեսաւ ման հատորով, միջին ծաւալով 311 էջ, հազար տպագրանկով: «Շիրակ»ի մէջ ընդհատումներով լոյս տեսածը մէկշունչով կարդալու հնարաւորութիւն մը ստեղծելով հայրենի թէ Սփիւռքի ընթերցողին:

Բառային Բանի մը թիրիմացութիւններու առիթով, անգամ մը անդրադարձած էինք «Շիրակ»ի մէջ երեւցած «Ներքին դաշտանկար»ի առաջին հատուածներուն, բայց, ինչպէս լռելեայն ըսուեցաւ, գործին ամբողջութեան վերահասու եղանք միայն վերջերս, երբ երեսմեան հատորը վերջապէս կրցանք ունենալ մեր տրամադրութեան տակ:

«Շիրակ»ին տրամադրուած օրինակին Սարգիս Փանոսեան կցած էր կարեւոր ծանօթագրութիւն մը.

«Ասենք նաեւ, որ այն գրուել է 1931-1933 թուականներին, Փարիզում: Մի հատուած՝ «Տեսակէտ Ա.», կը պարսաւեմ քառերը» խորագրով, ժամանակին տպագրուել է «Մենք» պարբերականում՝ յապաւումներով եւ փոփոխութիւններով» («Շիրակ», 1993, թիւ 4-5-6, էջ 3):

Երեսմեան հատորէն կը պարզուի, որ Վազգէն Շուշանեան անձամբ ինք կատարած է «յապաւումներն ու փոփոխութիւնները»: Էջ 43ի վրայ ան կը ծանօթագրէ.

«Մոյն հատուածը լոյս տեսած է «Մենք» գրական պարբերականին Ա. տարի Ա. թիւին մէջ «Տեսակէտ Ա.», կը պարսաւեմ քառերը» խորագիրներուն տակ: «Մենք»ի մէջ հրատարակւածին ու սոյն բնագիրին մէջ կան որոշ փոփոխութիւններ ու յապաւումներ: Հոս արտագրուածը գրութեան սկզբնական ձեւն է (Վ. Շուշանեան):»

Այսինքն՝ եռս տրուածը մախաւեմնքեան տարբերակն է:

լաւ:

«Ներքին դաշտանկար»ը ունի շուշանեանական մոյմաքնոյթ երկրորդ ծանօթագրութիւն մը եւս, էջ՝ 68.

«Սոյն հատուածը լոյս տեսած է «Մենք» պարբերականի Ա. թիւին մէջ «Տեսակէտ Ա., կը ջատագովեմ բռնութիւնը» գոյգ խորագիրներուն տակ: Հոս արտագրուածը գրութեան սկզբնական ձեւն է» (Վ. Շ.):

«Ներքին դաշտանկար»ին մէջ հեղինակային կամ խմբագրական ուրիշ ծանօթագրութիւն չկայ, բայց կան ծանօթագրութեան կարօտ ուրիշ հատուածներ, որոնց «Կը պարսաւեմ բառերը» եւ «Կը ջատագովեմ բռնութիւնը» հատուածներուն պէս լոյս տեսած են Շուշանեանի ողջուցը, երկուքն՝ նոյն «Մենք»ի մէջ (Բ. Թիւ), դարձեալ գոյգ խորագիրներու տակ, «Տեսակէտ Բ., Վասն տարածութեան եւ յաղթանակի» եւ... «Ու ներկայութեան ընդդէմ բոլոր փախուստներուն»:

Դժուար է կռահել, թէ ինչու Շուշանեան «Ներքին դաշտանկար»ին մէջ արտագրած իր «Մենք»եան չորս տեսակետներէն առաջին երկուքը ծանօթագրած է, իսկ միւս երկուքը, որոնք «Ոտքի, մաքրելով ծունկերս (198) եւ «Եւ արդ ջլապիրկ» (205) բառերով կը սկսին հոս, գրկած է մոյմ լոյսէն:

«Ներքին դաշտանկար»ին մէջ ծանօթագրութեան լոյսէն գրկուածները «Մենք»էն արտագրուած այս երկու կտորները չեն միայն, կան եւ ուրիշներ, մեծ կը յիշեմք առնուազն երկուքը, այս անգամ «Մարտկոց»էն արտագրուած, «Մեռելներուն արդար իրաւունքը» եւ գոյգ խորագիրներու տակ երեցած «Դաշնակցական տղերքը-Իրենց ակնարկը», որոնք, իրենց խորագիրներէն անշատուած՝ հոս սկսած են իրենց առաջին տողերուն առաջին բառերով, յաջորդաբար՝ «Կարծիր ու հրացայտ» (էջ 136) եւ «Գիշերուան պէս սեւ» (163):

Զեաշուած խորագիրներուն հասկնալի յապատումները, ըստ էութեան հիմնական փոփոխութիւններու ու յապատումներու չեն. ենթարկուած անոնք: Մէկը միայն կը տառապի վերջին հպումներէն, «Իրենց ակնարկը»:

«Մի՛ սրտու՛մ ու քիչ մը խորունկ, ո՛վ սեւ, քիչ մը մռայլ ու քիչ մը վիրաւոր ակնարկը ընկեր տղու՝ որքան ալ զարմանալի թուի ասիկա, քու տիրորէն հոսող ջրերուդ մէջ է որ կը գգամ առաւելագոյն հայրենիքը» (էջ 166):

Այս պարբերութիւնը կը գտնուի «Դաշնակցական տղերքը» ընդհանուր խորագիրին տակ Քնարեգրուած «Իրենց ակնարկը» անուն հատուածին մէջ, որ ստորագրուեցաւ կուսակցական մեքին պայքարներուն Շուշանեանի կրած պարտութեան վաղբարձայնին, «Մարտկոց» թերթի 1932 թուակիր թիւ 9 համարին մէջ: Աւելցնելով ըսեմք, որ իրեն ժամանակակից ընթերցողներէն ետք, «Իրենց ակ-

նարկը՝ դարձաւ նաեւ սեփականութիւնը մօր սերունդներուն, «Ազգակ» օրաթերթի էջերէն, վաթսուական թուականներու երկրորդ կիսուն, Երեսնի հրատարակութեան ու Պէյրութի «Շիրակ»ի էջերէն վերը մէջըրեւած նախադասութեան սկզբնական կառոյցով:

«Մ'վ տրտում ու քիչ մը խորունկ, ո'վ սեւ ու քիչ մը մուլլ ու քիչ մը վերաւոր ակնարկը դաշնակցական տղու, ինչքան ալ զարմանալի թուի ասիկա, ես քու տխրօրէն հոսող ջրերուդ մէջ է, որ կը զգամ առաւելագոյն հայրենիքը»:

«Մարտկոց»ին մէջ տպագրուածին ու երեսնեան հատորին թէ «Շիրակ»ի էջերուն վրայ երեւցածին միջեւ տարբերութիւնը, ինչպէս կ'երեւի, ընդամենը քառ մըն է, պարզապէս *դաշնակցական*ը փոխարինուած է *ընկեր* բառով:

Միայն մէկ քառ, որ սակայն մախկիմ պայծառութեան փոխարէն ահաւոր տարտամութեամբ մը կը խոցէ ամբողջութիւնը:

Երեսնի հրատարակութեան եւ նոյն բովանդակութեամբ «Շիրակ»ի մէջ լոյս տեսած նոյն հատուածին ընթերցողները, «դաշնակցական տղու»ն տեղ՝ «ընկեր տղու» ակնարկին ի տես, պիտի մտածեն, որ Շաշանեան կը մար *առաւելագոյն հայրենիք* տեսնելու նաեւ այն միւսներուն դիպցուցած տղուն ակնարկին մէջ, դրօշակ չունեցող վատասերածներու աչքերուն մէջ ալ:

Այն *մէկուն* ակնարկին եւ այս *միւսին* ակնարկին միջեւ կայ սակայն տարբերութիւն մը, զոր կարելի չէ անտես առնել:

Որքան ալ ուզեմք գրութիւն մը ինքն իր մէջ առնել ու դատել, չենք կրնար գայն բոլորովին անջատել իր ժամանակէն: «*Իրենց ակնարկը*» գրուած է, ինչպէս ըսուեցաւ 1932ին, այն օրերուն, երբ Հայաստանի մէջ *առաւելագոյն հայրենիքի* տեսիլքը անգամ մտքին մէջ հոլոված կամ հոլովող հայրենասէրը բանտ կը նետուէր կամ թաւալ-գլոր կը հասներ Սիպերիա, իսկ հոն հաստատուած բռնակարգերուն ուղեկից արտասահմանի գորտերը առաւելագոյն հայրենիքի փոխարէն մրցակազմի մէջ էին սովետակա՞ն հայրենասիրութեան զափնին խելու: Առաւելագոյն հայրենիքի կարօտով տոչորոք ու տեսիլքով մրկող տղան քացառաքար միւսն էր, պարտադիր ու պարագայական սէրերը մերժող ու յաւերժականին ուխտադիր հոգին, իր հայրենական անխառն ուխտին ամբօրէն կառչած հոգին:

Որքան գիտեմք, *դիմորոշ* դաշնակցականը եւ *անորոշ* ընկերը նոյն բաները չեն եւ, մեղմ ասած, ամորոշ ընկերը պարզապէս գրութիւնը կը պարպէ իր սկզբնական տարբերէն ու մուսնած խորհուրդէն:

Բոլոր պարագաներուն, մենք պիտի ուզէինք, որ «*Ներքին դաշտանկար*»ին խնդրոյ առարկայ այդ հատուածը կարդացուէր իր առաջին թիւումով, մարտկոցեան օրինակին վրայ...

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՈՒՐՈՒՄԱԳԻՏ

«ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏՂԵՐՔԸ»

«Ու թերեւս ճամբուն վրայ
հիմ մեռելներ ոտքի ելլեն...»:

1-ԻՐԵՆՑ ԱԿՆԱՐԿԸ

Գ իշերուան պէս սեւ ու տղմուտ գեղեցկութեամբ,
որ կը ծածկէ գրկանքն ու սուգը, մռայլ քիչ մը
եւ քիչ մը խորունկ, իրենց անձրեւային ու մա-
ռախապատ ակնարկներուն մէջ, դժուար է ստուգօրէն որո-
շել, թէ ո՛ւր կը սկսի ցեղին անհերքելի եւ ժառանգական
վիշտն ու իրենց ընթացիկ կեանքին բնական տխրութիւնը:
Նժդեհ, տարահալած քաղաքներու լուսերուն տակ, փո-
ղոցին մէջ եւ այլուր, ուրախութեան սեղանին շուրջ թէ
տօնակատարութեանց տենդահար մթնոլորտին մէջ, երբ բո-
ւիշ մը յուզումով կանգ առնես նայելու համար իրենց խո-
շոր ու սեւ աչքերուն, չես գիտեր, թէ ինչո՞ւ համար այդ
տղոց ակնարկները կը հոսին սակաւիկ մը քիչ մը պղտոր ու
քիչ մը դաժան ջրերու պէս:

Թերեւս հին ու վիրաւոր մեռելներն են, ինչպէս կ'ըսէ
քերթողը, որ ոգեւորութեան եւ տառապանքի ջերմ օրերուն,
իրենց դժուար ճամբուն վրայ կ'արթննան երկարատեւ քու-
նէ մը ու կը նային աղապատանք հայցող ու ցաւէ թրջուած
մեռեալի հայեացքով, կը թօթուեն իրենց ոսկեայ ուսերէն
մոռացութեան եղեամբ եւ ցած ու արտասուայեղ կը հայցեն
միշտակի իրենց անժխտելի իրաւունքը,—նաչի՛հ եւ սնունդ
վաղախարչամ մեռելներու: Թերեւս հեռաւոր ու կորուսեալ
մրմունջն է խարտիչագեղ կամ թխազանգուր մանկուհինե-

րու, որոնց աչքերուն մէջ մահուան պահուն սուգի շեղք մը կամ արիւնոտ մահակի մը ստուերը ցոլաց: Թերեւս նման դարաւոր ու խորունկ տխրութիւնն է Հայոց բարձրաւանդակին, իր կապոյտ ու արագընթաց գետերուն, լեռան կողերուն մէջ, խորունկը՝ զսպուած ու զօրաւոր լիճերուն եւ մրրիկին, որ կը գոռայ Քսենոփոնեան գիւղերու խարխուլ տուներուն շուրջ:

Թերեւս անձնուրաց ու կտրիճ գինուորներու եւ հերոս տղոց անակնկալ յիշատակն է, որ կը պղտորէ իրենց աչքերուն մուկ եւ թաւշեայ խաղաղութիւնը: Հին երգի մը մնացորդը, որ կը փչրուէր Հայրենի ծառի մը շուրջ կամ ջրի մը յատակի քարին վրայ: Գուցէ դաշտանկարի բեկոր մըն է, նորընձիւղ ծառ մը, որ հարսանեկան ու ծաղկափրփուր բազուկները կը բանար, գրկելու համար վարդագեղ առաւօտը, գուցէ համբուրելի մօր մը լաչակի կտոր մըն է, որ կը վարագուրէ պայծառութիւնը իրենց հայեացքներուն:

Ու քիչ մը խորունկ ու քիչ մը մռայլ են միշտ այդ հայեացքները, հոս արեւմտեան կապոյտ ու ծփուն ծովերուն դիմաց, սալայատակներու ոսկեփայլ ու յորդագեղ լոյսերուն տակ, թրջելով, լուսնալով քիչ մը գուցէ՝ կապուտաչւի եւ սլացիկ օտար աղջիկներու նայուածքներէն, բայց յանցապարտ ու տրտում վերադառնալով հայոց դանդաղ ու տխրադէմ կիներու սեւ աչքերուն:

Ո՛վ չի գիտեր այս տղոց տրտում ու խուլ հայեացքներուն գեղեցկութիւնը, երբեք չի կրնար սիրել հայոց ազգը: Թրջուած՝ պէտք է տեսնել զանոնք: Երբ կը թաւալի սրահին մէջ վշտահար Հայրենակարօտ երգի մը, «Մեր հայրենիք»ին ցաւարեկ եղանակը: Տաք ու տխուր նոյն ատեն՝ պէտք է զգալ այդ աչքերուն առողջ բոցը, երբ կը բանաձեւեն իրենց յոյսն ու զայրոյթը, երբ իրենց անյաղթելի ու անընկճելի հաւատքը կը զարթնու ու կ'ասպատակէ ասդին-անդին: Վայրագ՝ հարկ է կրել վիշտը իրենց հոգւոյն, երբ մէկը խօսի մեր ցեղին դարաւոր ստրկանքին ու անօրինակ նուաստութեան մասին:

Ո՛վ է, որ կը նայի ինձ, առաւօտեան այս ժամուն խախտելով հոգիս իր արմատէն, պղտորելով յուզումներու անօթը: Այդ դո՛ւն ես, երիտասարդ ընկեր, որուն աչքերուն մէջ կը զգամ ստոյգ ներկայութիւնը մեր վիրաւոր ժողովուրդին, որուն ակնարկը գոռ ու տրտում երգ մըն է, միշտ վտակի մը պէս երգեցիկ ու քաղցրաւաչ, մերթ հերոսական հրաւերի մը պէս պատերազմական, մերթ վշտով թաթաւուն, բայց միշտ հպարտութեամբ խոյացող: Ո՛վ է, որ կը նայի ինձ, երբ տխուր է երկիրը ու դէշ: օրը, որ կը ծագի. այդ

դունես, կրտսեր կամ երէց ընկեր ու քու աչքերուդ մէջ, ամբողջ հայոց արիւննաները երկիրն է, որ վշտով կը սահի ու կը տեւէ: Կը մթնէ կամ լուսաւորուի:

Ո՛վ կրնայ պնդել, որ չկան պահեր, երբ քու աչքերուդ մէջ կարելի է ստուգութեամբ զգալ հայոց ողբերգական պատմութիւնը: Ո՛վ չկարի ու անուպայ յանդգնութիւնը ունի դուրս հանելու իր աղտոտ լեզուն, կրնայ ծաղրել զիս, բայց ես պիտի պնդեմ, որ բազմաթիւ անգամներ պատահած է, տրտմութեան, ոգեւորութեան եւ յուզումի պահերուն, վասպուրականցի ընկերներու աչքերուն մէջ որոնեմ մեծ ու քաղցրաբարբառ նարեկացիին ակնարկին խաժ գեղեցկութիւնը: Գիտե՞մ միթէ, տեսա՞՞ծ եմ միթէ վանայ ծովու կապոյտ ու ծփուն ու գիշերային տրտմութիւնը, աղջամղջային պահերու, բայց երբ վանեցի ընկեր մը կ'արտասուէր օր մը, իր կապոյտ աչքերուն վրայ ձգելով այրած թարթիչներուն շուքը, կարծես թէ հեղ մը տեսայ հինաւուրց ու ծաւի լիճը, ուր, անշուշտ դարերու մշուշին մէջ, լողցած են հայոց աղջիկները:

Ո՛վ տրտում ու քիչ մը խորունկ, ո՛վ սեւ ու քիչ մը մուլլ ու քիչ մը վիրաւոր ակնարկը դաշնակցական տղու, ինչքան ալ զարմանալի թուի ասիկա, ես քու տխրօրէն հոսող ջրերուն մէջ է, որ կը զգամ առաւելագոյն հայրենիքը: Այսօր երբ օրերը գէշ են, երբ մեր երիկամունքներուն մէջ ծուարած ուրիշ խուլ ցաւերուն վրայ աւելցաւ նաեւ ուրիշ մը, այն է՝ զգալ, որ տմարդի ու նեպտոնական ընկերներ կ'ուզեն մեզմէ խել նոյնիսկ քեզ սիրելու իրաւունքը, երբ առանց ստոր գիտութեան ու վարձկան ստրկութեան քեզի հետ միշտդ բաժնելու հպարտութիւնը մարդիկ կը փորձեն մերժել մեզի, կրկին քու ալիքներուդ մէջը չէ մի՛թէ, որ կը խեղդենք մեր բարձրացող վիշտը:

Ահա՛ կը հոսիս վրաս, ահա՛ կ'ողողես զիս, ահա՛ կ'որոգես հոգիս քու ջրերուդ մութ գեղեցկութեամբը, ո՛վ ընկեր տղու քաղցր հայեացքը: Ահա՛ գեղուղէշ ու աղուոր հասակներ, որ կ'աշտանակուին քու մթութեանդ մէջ, ահա՛ առիւծի գեղեցիկ գլուխներ, որ պատկանած են հերոսներու, զինուորներու եւ չարքաշ շինական ընկերներու, որ կը ցլան կիսալոյսիդ մէջ: Տեսա՞՞ծ եմ միթէ, ո՛վ Սեբաստացի քաջը Մուրատ քու քիչ մը դաժան ու քիչ մը սեւ, այլ կտրիճ ու խիզախ տղամարդու երկաթէ գլուխը: Կ'ըսեն, թէ արեանդ մէջ վտառանդի ու յաւերժ աստանդական գնչուի արեան կաթիլներ կային: Եթէ իրաւ է, ասիկա տարածութեան ու կիզիչ տափաստաններու արիւնն է, ասիկա մրկածուփ, արկածներու վայրի ծարաւն է, ասիկա արձակագէն ու սրընթաց

երկվարներու ակնարկին բոցն է՝ որ ես յուզումով տեսած եմ սերաստացի ընկերներու հայեացքին մէջ:

Այս առաւօտ արիւնս կ'եփի, կը թնդայ, կ'ուրախանայ ու կը խնդայ քու ջերմութեամբ, ո՛վ ընկեր տղու ջերմ հայեացք: Քիչ մը յետոյ պիտի զգամ կրկին քու կրակոյ ճակտիս վրայ, քու ջիւղերուդ մէջ պիտի լուամ ամիսներէ ի վեր խոնջ ու վիրաւոր հոգիս ու քու մշուշիդ մէջ պիտի ծփան հայրենի դաշտանկարներու կտորներ: Եթէ հիւսիս բարձրանամ, պիտի տեսնեմ Գեղամայ լեռներու ձիւնն ու սպիտակ ցարասիները, որ կը գողան ձմեռը մերկ ու հասակագեղ, եթէ հարաւ իջնեմ, կիւմնոսի քարավազ ջրերուն վրայ պիտի տեսնեմ Ռուբինեանց թուխ դէմքերը, այրած հարաւի արեւէն: Թարթիչներուդ տակ՝ որքա՛ն անծիր ու անեզր է հորիզոնը, անյիշատակ անցեալը ու յղի ապագան:

Յոյ՛ա՛ ու բացուէ՛ ուրեմն, ու դեռ դարերով պահէ՛ ջրերուդ մէջ ամբողջ գեղեցկութիւնը հայրենի դէմքերու եւ թող վաղը, ուրիշներ եւս, զգան հոն արու փայլատակումը Անդրանիկի աչքերուն, ուր վազրին ոխերիմ վրէժխնդրութեան հետ իր սահմանները կը վճռէր Գայր Վահանի խրոխտ յանդգնութիւնը: Պահէ՛ նոյն սիրով Վարուժանի քիչ մը քաղցրօրէն շիւ, այլ արարչական ակնարկին կանացի եւ հեթանոս շնորհը, Ռուբէն Սեւակի թուխ դէմքին յղկուած ու գիտուն գեղեցկութիւնը: Պահէ՛ Քեռիի հայրական, այլ հանդարտ քաջութեամբ ոռոգուած ակնարկին ջերմ անդորրութիւնը ու հայոց մատաղի աղջիկներու, մանուկներու, կոյսերու, վիրաւոր ինկած գինուորներու եւ քաջերու աչքերուն ազնիւ հարազատութիւնը:

Գիշերուան պէս սեւ ու տղմուտ գեղեցկութեամբ, որ կը ծածկէ զրկանքն ու սուգը, մռայլ քիչ մը, ու քիչ մը խորունկ, ո՛վ քաղցր ակնարկը ընկեր տղու, հրաշքին, ու դիւթանքին կտոր մը բիւրեղը եղիր, ուր յաւիտենապէս պիտի ցոլայ առաւելագոյն հայրենիքը, իր կործանած եկեղեցիներով, զրահապատ հերոսներով, ուռենիներով ու աւերակներով:

Ընկեր տղու հայեացք: («Մարտկոց», 8 Հոկտեմբեր 1932, թիւ 9):

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Հակառակ ի դուրս դրած մեր հետեւողական բնախնդրութեան, թաճախ կ'իշխանք թիւրիմացութեան թակարդը: Նոյնը պատահեցաւ մեզի վերջերս, «Բագին»-ի անցեալ տարւան թիւ 3-Ամառին առիթով, որ Նիւ Եորքի «Նոր դիմ»-ի Աշուն 1942 թիւէն պատճենահանած կոստան Զարեանի բանաստեղծութիւններուն վերջին էջին (137) վրայ գտնուող Յակոբ Ասատուրեանի «Դեպք» խորագրուած բանաստեղծութիւնը եւս մտած էր մեքենային մէջ ու լոյս տեսած կոստան Զարեանի անունով:

Խոստովանինք, որ չէինք անդրադարձած թիւրիմացութեան մինչեւ այն պահին, երբ ստացանք ծերունազարդ հեղինակին նամակը, զոր ինդրոյ առաջնայ բանաստեղծութեան հետ կը ներկայացնենք սուրբեւ, խնդրելով միաժամանակ իր եւ ընթերցողին ներողամտութիւնը:

1 Դեկտեմբեր 1997

Թէնիֆլայ

«Բագին»-ի խմբագրութեան,

«Բագին»-ի 3/Ամառ 1997 թիւին մէջ «Կոստան Զարեան եւ Բենիամին Նուրիկեան նամակներ» խորագրին տակ, Վարդան Մատթէոսեան կը ներկայացնէ երկու գրողներուն միջեւ փոխանակուած հինգ նամակներ:

Նամակներուն կը հետեւի խմբագրին կողմէ անցընւած հինգ քերթուած Զարեանի ստորագրութեան տակ, որուն հինգերորդը՝ ԳԻԻՏԸ, սակայն, Յակոբ Ասատուրեանի կտորն է եւ դժբախտ անուշադրութեամբ մը վերագրուել է Զարեանին: Արդարեւ, ԳԻԻՏԸ «ՆՈՐ ԳԻՐ»-ի Աշուն 1942 թիւին մէջ երեւնալէ ետք անցած է նաեւ Ասատուրեանի «Անդաստան» հատորին, լոյս տեսած՝ 1946ին Պոսթընի Հայրենիքի տպարանէն:

Յետոյ, հանդէսիդ 124րդ էջատակին դրուած խմբագրական ծանօթագրութեամբ մը, ակնարկելով Նուրիկեանէն ետ պահանջուած Զարեանի մէկ բանաստեղծութեան, կ'ըսուի թէ «այդ քերթուածը լոյս տեսած չէ «ՆՈՐ ԳԻՐ»-ի մէջ»: Ակնարկուած քերթուածը ՉԻՆ է եւ յետագային լոյս տեսած է նոյն հանդէսին Գարուն թիւին մէջ:

ՅԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ԳԻՒՏԸ

Ու Մերունին սպիտակափառ, ամխոռվ,
Յոգնատարած զգաց թմրիր մը թաշնայ-
նի բունի պէս բան մ'հաշիշի հեշտամեով,
Համբուն, թուլցուց կռակերն աչքին ինք իր վրայ:

Մշուշն աղօտ որ մշուշի նման չէր՝
Երկի՛նքն յդի յանկարծ ցրուեց հովերուն
Երբ ոսկեթել երագով մ'ան կ'աղօթէր
Դոց աչքին մէջ բաց աչքը վեր սեւեռուն:

«Մերս'պ, երագն որ հայրօրէն յղացար
Լոյսին համար հայրենիքիդ անձամբիր,
Մարմին առաւ տախտակին վրայ, ահա՛, ա՛ն,
Ոսկետիպ է, տուր դարերուն ու անցիր»:


Տեսաւ Մերսպ երկնային դէմք մը փաղփում,
Եւ թռիմ վրայ՝ տախտակն ու ծա՛ռը լոյսէ
Որով կ'հեղեն անմահ բուռ իմ լեզուն-
Ու, ապշագին, օրհնեց՝ կարդաց Ա. Ե. Է...:

Բացաւ աչքերն արդ երաշքով լուսաշող,
Խաչակնքեց, ոտքի ելաւ նա հանդարտ
Ու սեւեռեց թիթերն հեռա՛նն այգորոզ
Նոր դարերուն՝ ուր կը նայի՛ դեռ անթարթ...

ՅԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

«ՇԻՐԱԿ» 40 ՏԱՐԵԿԱՆ



Թէ՛քէնան Մշակութային Միութեան «Շիրակ» ամսագիրի հիմնադրութեան եւ հրատարակութեան 40ամեակին առիթով, Կիրակի, 2 Նոյեմբեր 1997ին, Թէ՛քէնան Կեդրոնի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ յօրհանական հանդիսութիւն մը, գրասէր հոծ հասարակութեան մը ներկայութեամբ:

Լիբանանի եւ Հայաստանի պետական քայլերգներուն յոտընկայս ունկնդրութենէն հտէ, բացման խօսքը ներկայացուց «Շիրակ»-ի խմբագրապետ Պր. Ժիրայր Դաժիէյեան, որ բառասուն

տարին նուիրումի եւ ծառայութեան հանգրուան մըն է միայն յայտարարել հտէ, աւելցուց. «Եկած ենք միասնաբար նշելու եւ արժեւորելու այդ հանգրուանը, անցած քառասնամեայ ժամանակամիջոցը՝ իր իրագործումներով: Եկած ենք միասնաբար հրախտիքի եւ սիրոյ խօսք ըսելու անգարձ մեկնողներուն մասին, խոնարհելու յիշատակին ու վաստակին անոնց»:

Ապա, ան երախտագիտութեամբ գնահատել հտէ վաստակը հիմնադիր եւ անոնց գործը շարունակած խմբագիրներուն, իր խօսքը հզօրացնելով՝ ըսաւ, թէ նոյն համագումով եւ միեւնոյն հաւատով «Շիրակ» կը դիմագրասէ գալիք հանգրուանները:

Հանդիսութեան առաջին խօսք առնողը եղաւ «Շիրակ»-ի խմբագրական կազմի երիցագոյն անդամը՝ քանաստեղծ եւ արձակագիր Պր. Սրուանդ Պարսումեան, որ անցնելէն քաղուած յուշերու ճամբով քարձր գնահատեց «Շիրակ»-ի բառասնամեայ ուղին:

Գեղարուեստական կոկիկ յայտագիրէ մը հտէ, քեմ քարձրացաւ «Շիրակ»-ի երաւէրով Լիբանան ժամանած պոլսահայ քանաստեղծ Ջարեհ Խրախունի: Ան նաեւ քարձր գնահատեց «Շիրակ»-ի բառասնամեայ վաստա-

կը, ամսագիրին վերելին սատարած խմբագիրներուն եւ աշխատակիցներուն նուիրումը, յարգամբ մատուցեց անդարձ մեկնածներու յիշատակին եւ իր խօսքը եզրափակեց իր զգացումները արտայայտող բարեմադրութիւններով:

Նրբորդ խօսք առնողը եղաւ արձակագիր եւ «Շիրակ»ի խմբագրութեան անդամ Պր. Արամ Սեփեքեան, որ անդրադառնալով ազգերու պատմութեան մէջ մշակոյթին վերապահուած դերին՝ վեր առաւ «Շիրակ»ի ֆառասուն տարիներու մշակութային ազգօգուտ ներդրումը, խմբագիրներուն նուիրումը, աշխատակիցներուն հաւատարմութիւնը եւ բարի երբ ու առաւել վերելք մաղթեց «Շիրակ»ի:

Յօդակցական հանդիսութիւնը վերջ գտաւ Պր. Ժիրայր Դանիէլեանի փակման խօսքով:



Եւ գրասէր հոծ հասարակութեան մը:

Բացման խօսքով՝ Պր. Պէպօ Սիմոնեան ամփոփ գիծերով ներկայացուց մեծարեալ բանաստեղծին գրական-մշակութային 50ամեայ ծառայութիւնն ու վաստակը, զայն նկատելով սփիւռնահայ բանաստեղծութեան մէջ նոր ուղղութիւն մը քացած եւ իր բանաստեղծի դէմքը նուաճած «տաղանդաւոր ներկայացուցիչ մը»:

Բացման խօսքէն ետք, քեմ հրաւիրուեցաւ Պր. Գրիգոր Շահինեան՝ ներկայացնելու «Զարեհ իրախունի գրականութիւնը»: Զարեհ իրախունի մարդուն կենցաղավար, ծառայատէր եւ մարդկային արժանիքները ըստ արժանւոյն գնահատելէ ետք, բանաստեղծին գեղատեսիլ կարեւորութեամբ ծանրացաւ մեծարեալ բանաստեղծին մշակութային եւ գրական քեզուն գործունէութեան վրայ: Ապա, իր խօսքին երկրորդ բաժնով, ան մասնաւորաբար անդրադարձաւ Զարեհ իրախունիի ինքնուրոյն քերթողու-

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻԻ

«Շիրակ» ամսագրի հրաւերով Պէյրութ ժամանած պոյսահայ բանաստեղծ Զարեհ իրախունիի ծննդեան 70ամեակին եւ գրական գործունէութեան 50ամեակին առիթով, մեծարանքի հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Կիրակի, 25 Հոկտեմբեր 1997ին, Թէթեան Մշակութային Միութեան Կեդրոնին մէջ, ի ներկայութեան լիրանահայ գրողներու, մտաւորականներու, արւեստագէտներու, միութեանական կրօնական ներկայացուցիչներու

բեամ արդիական արժեքի՝ քրեւ ազգային ու մաթղկային քարգմշումով տաղարանած տաղանդի մը ստեղծագործական ներուժի խօսքը:

Գեղարուեստական ժառանգումէ մը ետք, «Ջարեհ խրախուշի» մարդն ու վաստակը բեմայով ելոյթ ունեցաւ Պր. Ժիրայր Խանիէլեան, որ մեքեաները հազոդդակից դարձուց բանաստեղծին հոգեկան-ստեղծագործական վաստակին: Այնուհետեւ, ան յուշերով աւելի տեսանելի դարձուց Ջարեհ Խրախուշի մարդուն եւ մտաւորականին դիմանկարը, մշեց Ջ. Քրախուշի սերունդակից գրչակիցները, յատկապէս արձակագիր Ռոպէր Հատտեհեանն ու բանաստեղծ Ջահրատը, որոնք «իրքեւ եռտանգի պոլսահայ գրականութեան» տիրապետող դէմքեր եղան եւ իրենց բնդուն ստեղծագործութիւններով կը շարունակեն հայ լեզուն հարստացնել մեր գեղեցկութիւններով:

Վերջին խօսքը տրուեցաւ մեծարեալ բանաստեղծին, որ իր շնորհակալական արտայայտութիւններուն միացուց իր սրտի խօսքը՝ ողջունելով Լիբանանի հայութիւնը, Թէքէեան Մշակութային Միութիւնը եւ «Շիրակ» ամսագիրը՝ իր այս գովելի մատակարարութեան համար: Ապա, ան քարճր գնահատեց իբրեւանահայ գաղութը, որ հակառակ արիւմտահեղ պատերազմին, յաջողեցաւ վերականգնել եւ անգամ մը եւս փաստել իր ազգային ու մշակութային առանցքային արժեքը՝ իրքեւ սփիւտահայութեան քարախում սիրտը:

Հանդիսութեան աւարտին բանաստեղծը գրասէրներուն մակագրեց «Կարպիս Նազարեան Հրատարակչական Փոնտի Մատենաշար»ի առաջին հրատարակութիւնը հանդիսացող իր «Ջար Հայաստանի» քերթողագիրքը:

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՀԸ



Անակնկալօրէն յայտնուած անողոճ հիւանդութեան դէմ բանի մը ամիս մաքարելէ ետք, Երեւանի միջնակարգ դպրոցի, 9 Դեկտեմբեր 1997ին, իր մահկանացուն կմենց լիբանանահայ կրթական մշակ, արձակագիր, բանաստեղծ, պատմաբան եւ մտաւորական Լեւոն Վարդան (աւագանի անունով՝ Լեւոն Պետիբեան):

1926ին Հալեպ ծնած Լեւոն Վարդան իր մաթակրթութիւնն ու միջնակարգ ուսումը կը ստանայ տեղւոյն Ուսումնասիրաց վարժարանին մէջ: Նիւթական պատճառներով կը մեծութի կեանքի ասպարէզ եւ չորս տարի ետք, 1946ին կը սկսի յաճախել Ալեքսիո Գուլեմ, ուրկէ 1950ին կը ատանայ իր Սոփոմոսի վկայականը: Այդ շարունակէ իր համալսարանական կրթութիւնը եւ 1952ին

կ'աւարտէ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի պատմագիտութեան բաժինը՝ Պսակաւոր Արեւստից աստիճանով: Կը մուրաւի ուսուցչական ասպարէզի եւ շուրջ տասնամեակ մը ետք կրկին կը վերադառնայ Ամերիկեան Համալսարան, ուրկէ 1962ի դարձեալ կը վկայուի՝ Մագիստրոս Արեւստից տիտղոսով:

Այդ բուռնացնէն մինչեւ իր մահը, Լեւոն Վարդան իր ամբողջ կեանքը կը մուրիւ գրական, խմբագրական ու մանկավարժական աշխատանքներու: Իրրեւ գրող՝ արձակ ու չափածոյ էջերով, ակնարկներով, գրականագիտական յօդուածներով եւ պատմագիտական ռուսամետսիրութիւններով կ'աշխատակցի «Շիրակ», «Հասկ», «Միւլուք», «Հայկազեան հայագիտական հանդէս», «Հասկ հայագիտական տարեգիրք», «Խօսնակ», «Ջանասէր», «Նոր Այնթապ», «Զարթօնք» եւ այլ հրատարակութիւններու, իսկ իրրեւ խմբագիր՝ մաս կը կազմէ «Շիրակ», «Խօսնակ», «Նոր Այնթապ» եւ «Հայկազեան հայագիտական հանդէս» խմբագրական կազմերու:

Լեւոն Վարդանի գրչին կը պատկանին «Գիրք Մենուսի», «Փիւնիկեան ակերուն վրայ»,

«Հիւն Հիւն բաներ» արձակ հատորները, «Ինքներգութիւն», «Ի խորոց սրտի» եւ «Կրկին Հեծութիւն» քերթողագիրքերը, «Հայկական տասնհինգը եւ հայերու լեռնալ գոյքերը», «Ժամանակագրութիւն հայկական տասնհինգրորդի 1915-1923», «Հայկական տասնհինգը թուրք մատենագիտութեան եւ մամուլին մէջ եւ մինք» պատմագիտական աշխատասիրութիւնը, «Մուշեղ Բշխան արձակագիրը» գրականագիտական հատորը եւ սփիւտահայ մամուլին մէջ ցրուած բազմաթիւ ռուսամետսիրութիւններ եւ յօդուածներ:

Մահէն քանի մը օր առաջ՝ 5 Դեկտեմբերին, Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ, Հ.Յ.Ը.ի Մշակութային Մարմինը Լեւոն Վարդան կրթական մշակը, գրագէտը եւ պատմագիրը պատուեց մեծաբանքի համդիտութեամբ մը: Իրրեւ բանաստեղծներ՝ Խօսք առին Երւանդ Գաւուրի եւ Պէյո Սիմոնեան, որոնք բարձր գնահատեցին Լեւոն Վարդանի բազմաթիւ եւ բազմամեայ վաստակը: Համդիտութեամբ աւարտին, բազմավաստակ գրողն ու կրթական մշակը պարգեւատրուեցաւ Արամ Ա. Վեհափառի կողմէ իրեն շնորհուած Մխրդայ Մաշտոցի անուան շքանշանով եւ Պատուոյ գիրով:

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ
Նոր շրջան, է.-Ը. տարի, 1995-1996
Հրատարակություն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան,
Անթիիաս, 1997, 679 մեծադիր էջ:

•

ՄԻՍՏԻԿ
-Բանաստեղծություններ-
Հեղինակ՝ ԾՈՒԾԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
Պէյրուք, 1997, 81 էջ:

•

ԱՆ-ԿԱՏԱՐ ՎԵՐ-ԵԱՆՈՒՄՆԵՐ
-Արձակ էջեր-
Հեղինակ՝ ՄՈՎՍԷՍ ՊԶԱՔՄԵԱՆ
Փարիզ, 1997, 335 էջ:

•

ՏԻՐԱՄԱՅՐ-2 եւ 3
-Աստուածաբանական ճառեր-
Կազմեց՝ ԹԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
ՏԻՐԱՄԱՅՐ-2՝ Պէյրուք, 1997, 87 էջ,
ՏԻՐԱՄԱՅՐ-3՝ Անթիիաս, 1997, 311 էջ:

•

ՄԱՅԹԵՐՈՒ ՎՐԱՅ
-Արձակ էջեր-
Հեղինակ՝ ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ
Լոս Անճելըս, 1997, 137 էջ:

•

ՖԱՐԱՏԱ
-Բանաստեղծություններ-
Հեղինակ՝ ԱՐԲԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ
Հրատարակություն՝ «Գէորգ Մեղիտինեցի» Գրական
Մրցանակի-թիւ 30, Անթիիաս, 1998, 183 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— * * *	Դեռ լրիւ չպեղումս մեծը
3.— Յ. ՕՇԱԿԱՆ	Աստուած կ'իջնէ
11.— Վ. ՕՇԱԿԱՆ	Յակոբ Օշական— քան տարեկան
28.— * * *	Մ. Իշխանի տնտրակէն
29.— Յ. ՕՇԱԿԱՆ	Նարեկը —ընդհանուր մկարագիր
61.— ՇԱՀԱՆԻՈՒԽՅ	Գիրքերը եւ մեմօ
66.— Յ. ՕՇԱԿԱՆ	Հայոց երկիր։ Աշխարհ Հայաստան
71.— Թ. ԹՈՐԱՆԵԱՆ	Օշականի երկրորդ կեանքի յիսուն տարին
81.— Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Ցիրուցան էջեր
91.— ՎԱՐԱՆԴ	Բանաստեղծութիւններ
97.— Հ. ՏԱՆՔԵՐ	Կարմիր թելը
111.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Բանաստեղծութիւններ
113.— Պ. ՄՆԱՊԵԱՆ	«Ես իմ անուշ»ի ռդիսականը
122.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Արձակագիր Մ. Պչաֆնեանի մերձ-գրական էջերը
127.— Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Փ. Ճերանեանի «Բեզ ինչպէս կոչեմ...» հատորը
135.— Լ. ՇԱՌՈՅԵԱՆ	«Հասկ» Հայագիտական տարեգիրք
145.— * * *	Լոյս տեսան
152.— * * *	Մշակութային յուրեր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԿԵԳՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ